Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԼԵՌՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆ--ԷԼԲԱ

ԵՐԵՎԱՆ 1991

АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. М. АКОПЯН

ОТ КАВКАЗСКИХ ПРЕДГОРИЙ ДО БЕРЛИНА—ЭЛЬБЫ

БОЕВОЙ ПУТЬ ТРИЖДЫ ОРДЕНОНОСНОЙ 89-ой ТАМАНСКОЙ АРМЯНСКОЙ СТРЕЛКОВОЙ ДИВИЗИИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1991

947.925.11/1991/1945

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԼԵՌՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՒԼԻՆ—ԷԼԲԱ

ԼՌԱԿԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՑՑ-ՐԴ ԹՄԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԶԴԱՅԻՆ ԳԻՒՂԻՆՅԻՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒԺԻՆ

II
Ա 82499



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1991

ԳՄԴ 63.3 (22) 722
Հ 177

Տպագրվում է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Հ. Բարսեղյան

Գիրքը հրատարակության են նրաշխավորել գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտոր Ա. Պ. Սիմոնյանը,
պատմ. գիտ. թեկնածու Կ. Ա. Հարությունյանը

Հակոբյան Ա. Մ.

Հ 177 *Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին-Էլբա [Պատ. խմբ. Խ. Հ. Բարսեղյան]., Հայաստանի ԳԱ. Պատմ. ին-տ.—Եր.: Հայաստանի ԳԱ Հրատ., 1991—349 էջ. 15 թ. նկ.*

Աշխատությունը նվիրված է Եռափի շքանշանակիր 89-րդ Թամանյան հայկական հրաձգային դիվիզիայի մարտական ուղու լուսաբանությանը 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ։

Նորահայտ արխիվային հարուստ փաստաթղթերի հիման վրա ցույց է տրված պատերազմի սկզբում, ի թիվս մյուս ազգային դիվիզիաների, նաև հայկական այս դիվիզիայի ձևավորումը, նրա ամբողջ անձնակազմի նվիրական ու բուռն աշխատանքը մարտական ուսուցման և առաջիկա ահեղ մարտերին պատրաստվելու համար։ Այնուհետև լուսաբանված է դիվիզիայի մարտերը ֆաշիստական հորդաների դեմ Կովկասում, այդ թվում Թամանում, Կերչի թերակղզում և Սևաստոպոլում, Լեհաստանում ու ֆաշիստական Գերմանիայում։

Նախատեսված է պատմաբանների և Հայրենական պատերազմի պատմության հարցերով հետաքրքրվողների համար։

0503020913
Հ. — — — — — —19—91 ԳՄԴ 63.3 (22) 722
703 (02)—91
ISBN 5—8080—0227—3
© Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991

Նվիրում եմ
89-րդ դիվիզիայի՝ Հայրենական մեծ
պատերազմում զոհված ռազմիկների
անմոռաց հիշատակին

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական բանակի ուխատարուժ հարձակումը Խորհրդային Միության վրա դաժան փորձություն էր մեր բազմազգ հայրենիքի համար: Կարմիր բանակն ու ամբողջ ժողովուրդը ոտքի եկան կատաղի ու վճռակամ թշնամու դեմ:

Սկսվեց Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը: Դա սրբազան պատերազմ էր: Հնդիր դրվեց կանգնեցնել թշնամու առաջխաղացումը, հետ մղել նրան և ոչնչացնել ֆաշիստական բանակն ու պետությունը:

Պատերազմի ծանրությունն իր ուսերի վրա տանող ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ Խորհրդային բոլոր ազգերն ու ժողովուրդները կուռ շարքերով հերոսաբար կանգնեցին ուժեղ և նենգ թշնամու դեմ՝ կրծքով պաշտպանելով սրբազան հայրենիքը:

1941—1942 թթ. Կարմիր բանակի շարքերում ձևավորվեցին ազգային դիվիզիաներ, որոնք առանց ուշացման մեկնեցին ռազմաճակատ: Թե ռազմաճակատում և թե թիկունքում նրանք անում էին առավելագույնը թշնամու հաղթանակը կոփելու համար:

Ֆաշիզմի դեմ այդ համաժողովրդական պատերազմին ակտիվ մասնակցություն ցույց տվեց նաև հայ ժողովուրդը: Իր զավակներից նա ռազմաճակատ ուղարկեց մոտ 600 հազար մարդ: Ստեղծվեցին հայկական հինգ դիվիզիաներ: Մեկն էլ կար դեռևս 1920 թվականից: Բոլոր այդ դիվիզիա-

ները թշնամու դեմ մղած հերոսամարտերում իրենց դրոշները փառքով պահեցին։

Պատերազմի կրակների ու բոցերի մեջ, հերոսական Կարմիր բանակի շարքերում մեծ սխրանքներ է կատարել և փառավոր մարտական ուղի անցել նաև Կարմիր դրոշի, Կուտուզովի երկրորդ աստիճանի ու Կարմիր աստղի շքանշանակիր 89-րդ հրաձգային Բաթանյան հայկական դիվիզիան։

Առաջին անգամ նա մարտերի մեջ է մտել 1942 թ. օգոստոսին՝ Դրոզնու մատույցներում։ Իր մարտական ուղին շարունակել է Թամանում, Ղրիմում, Լեհաստանում և Գերմանիայում։ Ակտիվ մասնակցություն է ունեցել Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքի գրավմանը և Բեռլինի գրոհին։

Դիվիզիայի 7333 ռազմիկներ արժանացել են կառավարական շքանշանների ու մեդալների, ըստ որում նրանց մեծ մասը պարգևատրվել է մի քանի անգամ։ Նրա շարքերում աճել են Խորհրդային Միության 9 հերոսներ և փառքի III, II ու I աստիճանի շքանշանի 8 ասպետներ։

Դիվիզիան պատվով է կատարել հայ ժողովրդի պատվիրանը՝ առանց հաղթանակի տուն չվերադառնալ։ Դա իր արբազան պարտքն էր Հայրենիքին։

Դժվարին է եղել հաղթանակի մեր ուղին։

Այդ հաղթանակի ճանապարհին դիվիզիան ունեցել է մեծ թվով զոհեր, որոնք չտեսան հաղթանակի պայծառ օրը և որոնց անմար հիշատակը միշտ վառ է պահում երախտապարտ ժողովուրդը։

Այս լեգենդար դիվիզիայի մարտական ուղու լուսաբանության գործում կարևոր ավանդ են հանդիսանում նրա վետերաններ Ս. Նալբանդյանի, Զ. Դալլաքյանի, Ե. Կարապետյանի, Խ. Բարսեղյանի և Գ. Ղուկասյանի գրքերը։ Նրանցում հարուստ փաստական նյութերի հիման վրա ճշմարտացի տրված է դիվիզիայի անցած մարտական ուղին։

Սակայն, դրանով հարցը սպառված համարել ճիշտ չի լինի։ Դեռևս շատ անելիքներ կան։

Անհրաժեշտ է շարունակել աշխատանքը դիվիզիայի պատմությունն ուսումնասիրելու ուղղությամբ, նպատակ ունենալով նորանոր փաստերով և տվյալներով ավելի ու ավելի հարստացնել այն։ Իսկ այդպիսի փաստեր դեռևս շատ կան, որոնց մի զգալի մասը գտնվում է ռազմական տարբեր արխիվներում, հատկապես Պաշտպանության մինիստերության Պոդոլսկու— կենտրոնական արխիվում, ինչպես նաև հանրապետական ու ռազմական մամուլում, այդ թվում դիվիզիայի «Կարմիր դինվոր» թերթում։

Այս առումով ուշագրավ է, որ Հայաստանի նախարարների խորհրդին առընթեր Գլխավոր Արխիվային Վարչության «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1985 թ. 2(72)—3(73) համարներում հրապարակվեցին 89-րդ դիվիզիայի մարտական ուղուն վերաբերող ծավալուն և արժեքավոր արխիվային նոր նյութեր (ռուսերեն լեզվով, 1064 փաստաթուղթ 42 մամուլ)[1]։

Մանրթանալով այդ նյութերին, նպատակահարմար գտանք նորից անդրադառնալ 89-րդ դիվիզիայի պատմությանը, օգտագործել այդ նոր փաստերը, թեկուզ որոշ չափով լրացնել այդ ուղղությամբ եղած բացը։ Այդ նպատակին է հետապնդում սույն աշխատությունը։ Այստեղ օգտագործել ենք նաև մեր «Հերոսական մարտերում» գրքի (1975 թ.) որոշ գլուխները, որոնք վերամշակվել և լրացվել են։

Դիվիզիայի պատմությունը շարադրված է համապատասխան ռազմաճակատների, բանակների ու դիվիզիաների մարտական գործողությունների սերտ առնչությամբ։

Հարկ եմ համարում նշել, որ պատերազմի ժամանակ ինձ բախտ է վիճակվել, որպես քաղաքական աշխատող, ծառայել այս դիվիզիայում՝ սկզբում քաղբաժնի ագիտատոր, ապա 526-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով

---

[1] Այդ նյութերը Պոդոլսկի արխիվից հավաքել է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Կ. Ա. Հարությունյանը, ժողովածուն կազմել են Ա. Հ. Հարությունյանը (հեղինակային կոլեկտիվի ղեկավար), Կ. Ա. Հարությունյանը, Օ. Ս. Բալիկյանը և Է. Գ. Սարգսյանը։

տեղակալ։ Երկու դեպքում էլ ծառայության բերումով համարյա մշտապես եղել եմ դիվիզիայի, նրա այդ ընդի տարբեր ստորաբաժանումներում, շփվել, հաճախակի զրույցներ ունեցել նրանց հրամանատարների ու ռազմիկների հետ։ Մարտերի ֆիժ պահերին եղել եմ նրանց մարտակարգերում, տեսել նրանց քաջագործությունները։ Ինչքան հնարավոր է եղել, տեսածս ու ապրածս գրի եմ առել։ Այժմ էլ, ավելի քան 46—47 տարի հետո, դեռ լավ հիշում եմ քաջարի շատ ռազմիկների՝ հրամանատարների ու շարքայիններին, քաղաքական ու կուսակցական, կոմերիտական աշխատողների, որոնց մեծ մասի հետ շարունակվում է մեր՝ ռազմաճակատում սկսած մտերմությունը։ Այդ բոլորն ինձ շատ բան են տվել, որոնք ամփոփված են իմ գրառումներում և վառ են մնացել հիշողությանս մեջ։

Բացի դրանից, ինչպես պատերազմի ժամանակ, նույնպես և նրանից հետո զրույցներ եմ ունեցել շատ թիմանցիների հետ, լսել նրանց պատմածն ստորաբաժանումների և անձամբ իրենց մարտական գործերի ու սխրանքների մասին։ Հատկապես կուզենայի ընդգծել, որ պատերազմից հետո, երբ դիվիզիայի հրամանատար, մեր սիրելի գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանն աղատված էր զինվորական ծառայությունից, հաճախակի հանդիպել եմ նրա հետ և զրույցներ ունեցել դիվիզիայի մարտական ուղու տարբեր հարցերի շուրջը։ Բոլոր կարևոր ճակատամարտերի մասին նա հետաքրքիր հուշեր է պատմել։

Եվ ահա, երբ արդեն ավարտել եմ սույն աշխատությունը, հարկ եմ համարում ընդգծել, որ այդ բոլորը զգալիորեն նպաստել են նրա պատրաստմանը։

Հիշողություններից բացի, գրքում մեծ չափով օգտագործվել են դիվիզիայի մարտական ուղուն վերաբերող արխիվային նոր նյութերը, որոնք ինչպես նշեցինք, տպագրված են «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի վերոհիշյալ համարներում։

Գրքում լուսաբանված են 89-րդ դիվիզիայի մարտական ուղու հիմնական նշանաձողերը։ Այնտեղ հիշատակ-

ված են մարտական քաջագործությունները ու սխրանքները կատարած բազմաթիվ շարքային ռազմիկների, հրամանատարների և քաղաքական-կուսակցական աշխատողների անունները։ Պետք է նշեմ, որ այդ բնում է թեմայի առանձնահատկությունից։ Ուստի թող տպավորություն չստացվի, թե փաստագրությունը շատ է։ Տվյալ դեպքում այդ նույնիսկ անհրաժեշտ է։

Գրքում հիշատակվածների շարքում չկան նաև շատ ու շատ ուրիշ թամանցիների անուններ, որոնք զոհվել են կամ հաղթանակով տուն վերադարձել։ Հնարավոր չէ բոլորին հիշատակել։ Չէ որ պատերազմի տարիներին դիվիզիայի շարքերից անցել է ավելի քան 30 հազար մարդ։ Նրանք բոլորն էլ արժանի են համաժողովրդական փառքի ու պատվի։

23 ապրիլի, 1989 թ.

ԳԼՈՒԽ Ա. ՌԱԶՄԻՆ

ԴԻՎԻԶԻԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Արդեն 6 ամիս էր, ինչ շարունակվում էր հայրենական մեծ պատերազմը։ Այդ օրերին՝ 1941 թվականի վերջին մեր երկիրը գտնվում էր ծանր վիճակում։ Թշնամին գրավել էր Խորհրդային Միության ղգալի տերիտորիան, գավթել էր Բելոռուսիան, Ուկրաինան, Մերձբալթյան հանրապետությունները, շրջապատել էր Լենինգրադը։ Դժվարին պաշտպանական մարտեր էին մղվում Մոսկվայի համար։ Այստեղ նա պարտություն կրեց։ Մոսկվայի տակ ֆաշիստական զորքերի չախչախումը թշնամու առաջին խոշոր պարտությունն էր երկրորդ համաշխարհային պատերազմում։ Դա կարմիր բանակի փայլուն հաղթանակն էր։ Բայց դրությունը մեր երկրի համար շարունակում էր մնալ բարդ ու դժվարին, քանի որ թշնամին դեռ ուժեղ էր և մեր բանակի դեմ նորանոր խոշոր հարձակումների պլաններ էր մշակում և իրագործում։

Ահա այդ ծանր օրերին մեր երկրում սկսեցին ձևավորվել աղգային դիվիզիաները, դրանց թվում նաև 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան։ Աղգային զորամիավորումների առջև հրամայական խնդիր էր դրված՝ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում տիրապետել ռազմական տեխնիկային, տակտիկային, ռազմաճակատի զորամասերի փորձին և մեկնել մարտական գործողություններին։ Դրան ղգալի չափով նպաստում էր այն հանգամանքը, որ աղգային զորամասերում ռազմական ու քաղաքական պարապմունքներն իրականացվում էին աղգային լեզուներով։

Պատերազմը սկսվելուց հետո, Երևանում ձևավորվել էր 474-րդ հրաձգային դիվիզիան, որը համազորային ինտերնացիոնալ դիվիզիա էր: Նրա վերջնական ձևավորումը և կոմպլեկտավորումը դեռևս չէր ավարտվել, երբ վերադաս ռազմական օրգանների կողմից հրաման եղավ 474-րդ հրաձգային դիվիզիան վերակազմել: Եվ 1941 թ. դեկտեմբերին սկսվեցին մի նոր հայկական դիվիզիայի ձևավորման աշխատանքները: 1942 թ. հունվարին 8-ին 474-րդ հրաձգային դիվիզիան վերակազմվեց 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի[1]:

Անհրաժեշտ էր արագ կերպով այս նոր դիվիզիան համալրել ազգությամբ հայ շարքային և սպայական կազմով, քաղաքական և կուսակցական աշխատողներով: Հանրապետության ռազմական կոմիսարիատը, շրջանային զինվորական կոմիսարիատները ծավալուն աշխատանքներ կատարեցին այս ուղղությամբ: Նրանց մեծ չափով օգնեցին հանրապետական և տեղական կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները: Մեծ թվով հայ զինվորներ, սպաներ ու քաղաքական-կուսակցական աշխատողներ նոր ստեղծվող դիվիզիան համալրելու կարմիր բանակի մյուս զորամիավորումներից ու ռազմական դպրոցներից:

Նրանք գալիս էին Հայաստանի տարբեր շրջաններից, Անդրկովկասյան հանրապետություններից՝ Վրաստանից ու Ադրբեջանից, խորհրդային Միության մյուս հայաբնակ վայրերից:

Դիվիզիայի ներկայացուցիչները նրա համալրակայաններում անդուլ աշխատում էին օր ու գիշեր: Նոր նկածների հետ նրանք մանրամասն զրուցում էին, նշանակում համապատասխան ստորաբաժանումներ և զորամասեր: Քանի որ նկածների հոսանքը բավական մեծ էր, կարճ ժամանակա-

---

[1] Боевой путь армянской таманской стрелковой дивизии 1942—1945 гг., сборник документов и материалов, Ереван, 1985, стр. 23 այսուհետև՝ Боевой путь...

միջոցում հիմնականում ավարտվեց դիվիզիայի ձևավորումն ըստ հատիքների։

Դիվիզիայի շտաբը և քաղբաժինը տեղավորված էին Երևանում, իսկ զորամասերը՝ բացի Երևանից, նաև նրա շրջակայքում։ Զորամասերի շենքերի տպահովման, դույքավորման և կարգավորման գործում մեծ օգնություն ցույց տվեցին հանրապետության խորհրդային մարմինները, մասնավորապես Երևանի քաղաքային խորհուրդը։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն կուսակցական ակտիվի շարքերից մոբիլիզացրեց և 89-րդ հրաձգային դիվիզիա կուսակցական-քաղաքական աշխատանքի ուղարկեց մեծ թվով լավագույն կոմունիստների։ Դրանց թվում էին Դուրգեն Հարությունյանը, Սիմոն Նալբանդյանը, Հովհաննես Ինճիկյանը, Դեղամ Ղուկասյանը, Նիկոլայ Մեժլումյանը, Սուրեն Բաղդասարյանը, Սիրակ Մանասյանը, Պապիկ Ավալյանը, Ներսես Կագրամանյանը, Համայակ Օհանյանը, Ռուբեն Հակոբյանը, Մամիկոն Հայրապետյանը և շատ ու շատ ուրիշներ։ Ինչպես մինչև դիվիզիայի ռազմաճակատ մեկնելը, նույնպես ռազմաճակատում նրանք խոշոր աշխատանք կատարեցին անձնակազմի մեջ, զինվորներին ոգեշնչում էին թշնամու դեմ մղվելիք ահեղ մարտերում։ Դիվիզիան ռազմաճակատ մեկնելուց հետո նույնպես ՀԿԿ Կենտրոնական Կոմիտեն իր ուշադրության կենտրոնումն էր պահում 89-րդ հրաձգային դիվիզիան, նրան օգնում ամեն ինչով, մասնավորապես քաղաքական-կուսակցական կադրերով, գրականությամբ պատգամավորների այցելությամբ և այլ միջոցներով։

ՀԿԿ Կենտրոնական Կոմիտեն իր նիստերից մեկում հատուկ քննության առարկա դարձրեց հանրապետության կուսակցական և խորհրդային մարմինների կողմից 89-րդ դիվիզիային ցույց տրվող և տրվելիք օգնության հարցը։ Որոշում ընդունվեց պարտավորեցնել համապատասխան բոլոր կազմակերպություններին օգնելու դիվիզիայի զորա-

մասերին՝ շենքերով, տրանսպորտային միջոցներով, գրականությամբ և այլն։

Դիվիզիայի առաջին հրամանատար նշանակվեց կադրային զինվորական, 1921 թ. քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակից, ռազմական հարուստ փիտելիքներով ու փորձով օժտված գնդապետ Սիմոն Զաքիյանը։ Առաջին իսկ ամիսներին նա խոշոր աշխատանք կատարեց դիվիզիայի կազմակերպչական ամրապնդման և մարտական-քաղաքական ուսուցման գործում։ Դիվիզիայի կոմիսարն էր նույնպես կադրային զինվորական, ավագ դումարտակային կոմիսար Վ. Ջումակովը, քաղբաժնի պետը՝ դումարտակային կոմիսար Ա. Կիրակոսյանը, շտաբի պետը՝ փոխգնդապետ Ա. Ղազարյանը։

Դիվիզիան մտնում էր Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի կազմի մեջ։ Այդ բանակը գտնվում էր Հայաստանում, պաշտպանում նրա սահմանները Թուրքիայից։

Դիվիզիայի ստեղծման առաջին իսկ օրերին սկսեց հրատարակվել նրա կարմիր բանակային «Կարմիր զինվոր» թերթը։ Թերթի առաջին համարը լույս տեսավ 1942 թ. հունվարի 12-ին՝ խմբագրի պաշտոնակատար կապիտան Ն. Ղահրամանյանի ստորագրությամբ։ Այնուհետև խմբագիրը դարձավ ավագ քաղղեկ Գուրգեն Հարությունյանը։ Թերթի աշխատակիցներն էին կապիտան Գեղամ Ղուկասյանը, լեյտենանտ Գրիգոր Զոհրաբյանը, մարտիկ Խիկար Բարսեղյանը։ 1942 թ. նոյեմբերին թերթի խմբագիր նշանակվեց ավագ քաղղեկ Սիմոն Նալբանդյանը։

Դիվիզիան ուներ երեք հրաձգային, մեկ հրանոթային գնդեր և տարբեր հատուկ ստորաբաժանումներ։ Հրաձգային գնդերն էին 390-րդը, 400-րդը և 526-րդը։ Հրանոթային գունդն էր 531-րդը։ 390-րդ գնդի հրամանատարն էր մայոր Մեխակ Սիրունյանը, կոմիսարը՝ դումարտակային կոմիսար Հովհաննես Ինճիկյանը։ 400-րդ գնդի հրամանատարն էր մայոր Կոստանդին Մելիքյանը, կոմիսարը՝ ավագ քաղղեկ Սուրեն Բաղդասարյանը։ 526-րդ գնդի հրամանատարն էր մայոր

Սեպուհ Խանջյանը, կոմիսարը՝ ավագ դումարտակային կոմիսար Մամիկոն Հայրապետյանը։ 531-րդ հրետանային գնդի հրամանատարն էր մայոր Գ. Բաղիրովը, կոմիսարը՝ դումարտակային կոմիսար Ա. Մուրադովը[2]։

Դիվիզիայի հրամանատարական-քաղաքական ու կուսակցական անձնակազմը, ինչպես նշված է 45-րդ բանակին ներկայացված նրա քաղբաժնի պետ Ա. Կիրակոսյանի զեկույցագրի մեջ, փորձված, կռփված, խորհրդային հայրենիքին նվիրված անձնակազմ էր, որն ընդունակ էր սովորեցնել և դաստիարակել դիվիզիայի ռազմիկներին, նրանց պատրաստել հետագա դժվարին մարտերում հաղթանակի հասնելու համար։ Դիվիզիայի անձնակազմը նույնպես ընտրված էր հայրենիքին նվիրված լավագույն երիտասարդությունից, որը մեծ եռանդով սկսել էր մարտական ու քաղաքական ուսուցումը։ Դիվիզիայի անձնակազմի 13,5 տոկոսը կոմունիստներ էին, 39,7 տոկոսը՝ կոմերիտմիության անդամներ[3]։

Կոմունիստների և կոմերիտականների տեղաբաշխումը այնպես էր կազմակերպված, որ բոլոր վաշտերում և հատուկ ստորաբաժանումներում ստեղծվել էին սկզբնական կազմակերպություններ։ Կոմունիստները և կոմերիտականները հանդիսանում էին մարտական և քաղաքական ուսուցման առաջավորներ։ Նրանք մեծ եռանդով օգնում էին անկուսակցականներին։ Հրամանատարական և քաղաքական-կուսակցական կազմի քրտնաջան աշխատանքի շնորհիվ օրըստօրե ամրապնդվում, բարձրանում էր դիվիզիայի անձնակազմի բարոյաքաղաքական մակարդակը։ Նրանք մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրում էին մարտական դեկրը, որպեսզի ավելի արագ պատրաստվեն ռազմաճակատ մեկ-

---

2 Հետագայում նա փոխադրվեց ուրիշ դիվիզիա և մարտերում ցուցաբերած սխրանքների համար արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման։

3 Նույն տեղում, էջ 26։

նելու։ Վաշտերում, դասակներում և ջոկերում ամենօրյա աշխատանք էին կատարում ագիտատորները։

Դիվիզիայի քաղաքական-կուսակցական ապարատը պլանային աշխատանք էր կատարում մասսայական-կուլտուրական գծով։ Ռազմիկները պարբերաբար խմբերով հաճախում էին կինո, թատրոն, կրկես, որոշ ստորաբաժանումներում գործում էին ինքնագործ խմբակներ։ Անձնակազմին քաղաքական ինֆորմացիա տալու գործում, բացի կենտրոնական մամուլից, մեծ աշխատանք էր կատարում «Կարմիր զինվոր» թերթը։ Դրա հետ միասին նա պարբերաբար լուսաբանում էր մարտական-քաղաքական ուսուցման ընթացքը, ցույց տալիս առաջավորների փորձը։ Թերթը հատկապես մեծ աշխատանք էր կատարում Հայրենական պատերազմի ռազմաճակատների վիճակը լուսաբանելու, Խորհրդային ինֆորմբյուրոյի հաղորդումները տարածելու, մեր ռազմիկների քաջագործությունները ցույց տալու համար։ Բոլոր ստորաբաժանումներն ունեին իրենց պատի թերթերը։

1942 թ. հունվարի վերջերին դիվիզիայում արդեն կազմակերպված և գործում էին 16 սկզբնական կուսակցական և 77 ստորին կազմակերպություն, կոմերիտական 16 սկզբնական և 90 ստորին կազմակերպություն։ Ղեկավար կուսակցական աշխատանք էին կատարում ակտիվ կուսակցականները և կոմերիտականները։ Ուսման առաջավոր և լավագույն ռազմիկների հաշվին աճում էին կուսակցության և կոմերիտմիության շարքերը։

Դիվիզիայի շարքերում դտնվում էին Հայրենական պատերազմին մասնակցած զգալի թվով ռազմիկներ, որոնք վերադարձել էին զինվորական հիվանդանոցներից և ֆիննական պատերազմից։

Դիվիզիայի, նրա զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարների և քաղաքական-կուսակցական ապարատի կողմից մեծ աշխատանք կազմակերպվեց անձնակազմի կողմից զինվորական երդում ընդունելու համար։ Ամե-

նուրբ բացատրվում էին այդ երդման բովանդակությունն ու կարևորությունը: 1942 թ. հունիսի 8-ին դիվիզիայի քաղբաժնի պետ, դումարտակային կոմիսար Ա. Կիրակոսյանը 45-րդ բանակի քաղբաժնին զեկուցագիր գրեց, որ արդեն ավարտվել է դիվիզիայի ամբողջ անձնակազմի կողմից զինվորական երդման ընդունումը:

Սկսած 1942 թ. հունվարից մեծ լարվածությամբ և լայն ծավալով դիվիզիայում ընթանում էին նրա ամբողջ անձնակազմի մարտական և քաղաքական ուսուցման աշխատանքները: Զորամասերի և ստորաբաժանումների բոլոր հրամանատարները, քաղաքական, կուսակցական ու կոմերիտական աշխատողները անդուլ աշխատանք էին կատարում անձնակազմի հետ: Վաղ առավոտից մինչև ուշ երեկոյան նրանք գտնվում էին ստորաբաժանումներում, զբաղվում պարապմունքներով, մարտիկներին սովորեցնում ռազմական գործը, տակտիկան, մարտը վարելու ձևերը: Մեծ ուշադրություն էր հատկացվում ռազմաճակատի փորձի ուսումնասիրությանը, զենքի տարբեր տեսակների նյութական մասին ծանոթանալուն: Զորամասերում կազմակերպվել և գործում էին սնայպերների 85, տանկեր ոչնչացողների 58 և ինքնաթիռներ ոչնչացնողների 45 խմբակներ, որոնցում ընդգրկված էր 2485 ռազմիկ[4]: Նրանք լուրջ կերպով ուսումնասիրում էին իրենց գործը և հասնում կարևոր արդյունքների:

Դասակներում, վաշտերում և դումարտակներում պարապմունքների ժամանակ ռազմիկները ուսումնասիրում էին զենքի նյութական մասը, կարմիր բանակի կանոնադրքերը, պատերազմի առաջին ամիսների փորձը:

Ամբողջ կուսակցական-քաղաքական աշխատանքի գլխավոր իմաստն այն էր, որ մարտիկների մեջ հավատ ներշնչվեր մեր հաղթանակի նկատմամբ, պարզաբանվեր, որ չնայած մեր բանակը պաշտպանական

---

4 Նույն տեղում, էջ 31:

մարտեր մղելով ետ է քաշվում, և Բշնամին գավթել է մեր տերիտորիայի զգալի մասը (որը որոշ մարտիկների մեջ թերահավատություն էր առաջացրել մեր հաղթանակի նկատմամբ), սակայն խորհրդային ժողովուրդը, նրա զինված ուժերը անպարտելի են, նրանք գլխովին կջախջախեն ֆաշիստական բանակը, որի հաջողությունները ժամանակավոր են։ Յուրաքանչյուր զրույցի, զեկուցման կամ պարապմունքի ժամանակ շեշտը դրվում էր այդ մտքի վրա։

Քաղաքական-պրոպագանդիստական աշխատանքի գլխավոր հարցերից մեկն էլ այն էր, որ հատուկ ուշադրություն էր դարձվում Հայրենական մեծ պատերազմում ռուս մեծ ժողովրդի վճռական դերի վրա, որը պատերազմի գլխավոր ծանրությունը տանում էր իր ուսերին և որի շուրջն էին համախմբված Բշնամու դեմ մահու և կենաց պայքարի ելած մեր մեծ հայրենիքի բոլոր ազգերն ու ժողովուրդները։

Օտար զավթիչների դեմ ռուս ժողովրդի հերոսական պայքարի դրվագները օգտագործելիս, քաղաշխատողները մշտապես ընդգծում էին, որ գերմանացիները ոչ մի պատերազմում չեն գավթել ոչ Պետերբուրգը և ոչ էլ Մոսկվան, իսկ ռուսական զորքերը 1756—1763 թթ. յոթնամյա պատերազմում գլխովին ջախջախել են գերմանական Ֆրիդրիխ II թագավորի բանակը և 1760 թ. հոկտեմբերի 9-ին հաղթականորեն մտել են Բեռլին, որի բանալիները բնակչությունը հանձնել էր նրանց և այժմ այդ բանալիները գտնվում են Լենինգրադի թանգարանում։ Քաղաշխատողները մարտիկներին պատմում էին, որ 1242 թ. ապրիլի 5-ին Ջուր լճի սառույցների վրա Ալեքսանդր Նևսկու գլխավորությամբ ռուսները ջախջախել են պրուսական զորքերին։

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, 1918—1921 թթ. քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի ու սոցիալիստական խաղաղ աշխատանքի տարիներին ռուս մեծ ժողովրդի հսկայական դերի վրա, որի շնորհիվ ապահովվեց մեր պատմական հաղթանակը, իրա-

2—84
Ա 11 82499
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

գործվեց Ռուսաստանի ժողովուրդների ազատագրումը կապիտալիզմի լծից և ձևոք բերվեց նրանց իրավահավասարությունը, հաստատվեց եղբայրական դաշինք և համագործակցություն նրանց միջև։

Դիվիզիայի «Կարմիր դինվոր» թերթը, որը լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ, անձնակազմի մեջ պրոպագանդում էր խորհրդային հայրենասիրություն, զինվորական երդման հավատարմություն, ռազմիկների մարտական և քաղաքական ուսուցման առաջավոր փորձը, վեր էր հանում և քննադատում նկատված թերություններ։ Իր էջերում զետեղելով խորհրդային ինֆորմբյուրոյի հաղորդագրությունները, նա դիվիզիայի անձնակազմին մշտապես տեղյակ էր պահում ռազմաճակատի և թիկունքի իրադրությանը, կարմիր բանակի և խորհրդային ժողովրդի հերոսական պայքարին և բրանաջան աշխատանքին։

Դիվիզիայի անձնակազմի հետ հետևողական աշխատանք էր տարվում թշնամու նկատմամբ անողոք առնելություն բորբոքելու ուղղությամբ։ Այդ նպատակով լայնորեն օգտագործվում էին պաշտոնական հաղորդագրությունները ֆաշիստների գազանությունների մասին օկուպացված շրջաններում խորհրդային բնակչության, կարմիր բանակի ռազմագերիների և պարտիզանների նկատմամբ։

1942 թ. հունվարի 6-ին մամուլում հրապարակվեց ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի նոտան այդ հարցի վերաբերյալ, ուր ցույց էին տրված ֆաշիստական զորքերի գազանությունները խորհրդային մարդկանց նկատմամբ։ Այդ կապակցությամբ դիվիզիայի զորամասերում և ստորաբաժանումներում գումարվեցին անձնակազմի միտինգներ։ Ամենուրեք ռազմիկները բուռն ցասումով իրենց զայրույթն էին արտահայտում ֆաշիստների գազանությունների նկատմամբ և խոստանում գերազանց կերպով տիրապետել ռազմական տեխնիկային ու տակտիկային, պատրաստվել արագությամբ մեկնել ռազմաճակատ՝ առելի թշնամուց վրեժ լուծելու համար։ Այդ մասին էր խոս-

վում սպաներ Ա. Քոչարյանի, Հ. Սիմոնյանի և շատ ուրիշ հրամանատարների առորակաժանումների ընդունած բանաձևերում, ռազմիկներ Շահրազյանի, Դոխոսանյանի, Խաչաթյանի, Թոխատյանի և մյուսների ելույթներում: Ավագ Սերժանտ Արշալույս Սարոյանը գրեց «Վրեժ» բանաստեղծությունը, որը տպագրվեց դիվիզիայի թերթում:

Փետրվարի 5-ին «Կարմիր զինվոր» թերթը ֆաշիստների նկատմամբ ատելություն բորբոքելու հարցին հատկացրեց հատուկ առաջնորդող: Այնտեղ ասված էր. «Այն անզուսպ ատելությունը անարգ թշնամու՝ գերմանական ֆաշիզմի դեմ, որը կուտակվել է մեր մարտիկների սրտերում, նրանց մեջ ծնել է մի անխորտակելի ցանկություն՝ օր առաջ տիրապետել ռազմական տեխնիկային, դուրս գալ թշնամու դեմ հեղոսական կռիվ մղելու համար»:

Ինչպես այդ ծանր օրերին, նույնպես և պատերազմի հետագա տարիներին դիվիզիայում կատարվող քաղաքական-դաստիարակչական աշխատանքի գլխավոր խնդիրն էր՝ ատել գերմանա-ֆաշիստական զավթիչներին՝ նշանակում է բնաջնջել նրանց անհաշիվ և առանց խնայելու, չպատանել թշնամու երեսուն, այլ փնտրել նրան, միշտ գտնվել մարտական ակտիվ վիճակում, մշտապես աներեր կերպով ձգտել հաղթանակի: Խփել գերմանական-օկուպանտներին մինչև նրանց լիակատար բնաջնջումը— ահա այս է ֆաշիզմի դեմ մարտնչող խորհրդային ռազմիկի արդարացի օրենքը: Ատել՝ նշանակում է հաղթել:

Դիվիզիայի անձնակազմի ռազմա-քաղաքական դաստիրակության գործում այս հարցը մշտապես ուշադրության կենտրոնում էր և տվեց իր խոշոր դրական արդյունքները: Դա փայլուն կերպով դրսևորվեց հետագա մարտերում:

Ինչպես նշեցինք, դիվիզիայի առջև կարևոր խնդիր էր դրված՝ արագ կերպով պատրաստվել ռազմաճակատ մեկնելու համար: Այդ նպատակով կարճ ժամանակամիջոցում նա պետք է տիրապետեր ռազմական գործին, ուսումնասիրեր համատոված ռազմական պլանները: Դրա համար պահանջ-

վում էր ամբողջ անձնակազմի — սկսած դիվիզիայի հրամանատարությունից մինչև շարքային զինվորը,— քրտնաջան անդադրում աշխատանքը։ Պահանջվում էր հաստատել ամուր կարգապահություն, տրված կարճ ժամանակի մատծված, կազմակերպված օգտագործում։

Այդ դժվարին խնդիրը իրագործվում էր դիվիզիայի փորձված և ռազմական գործին լավատեղյակ հրամանատար, գնդապետ Սիմոն Զաքիյանի ղեկավարությամբ։ Նա 1942 թ. փետրվարին նշանակվում է Ղրիմի ռազմաճակատ՝ այնտեղ նոր ձևավորվող հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար։ Ս. Զաքիյանին փոխարինում է փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանը, որը նույնպես կադրային զինվորական էր, ուներ հարուստ փորձ և ռազմական գիտելիքներ։ Նա դիվիզիա էր եկել ռազմաճակատից։ Ուսուցումը շարունակվում է նրա ղեկավարությամբ։

Մարտական և քաղաքական ուսուցման ծրագրերը հաջողությամբ յուրացնելու նպատակով դիվիզիայի նորասահդծ զորամասերում և ստորաբաժանումներում սկսվում և լայն ծավալ է ընդունում սոցիալիստական մրցությունը։ Այդ մրցությունը կարևոր ազդակ հանդիսացավ նոր հաջողությունների հասնելու համար։

Սոցիալիստական մրցությունն ավելի լայն ծավալ է ընդունում 1942 թ. փետրվարին՝ Կարմիր բանակի 24-րդ տարեդարձի կապակցությամբ։ Իրար հետ մրցման մեջ էին մտել ոչ միայն առանձին ստորաբաժանումներ, այլև բազմաթիվ շարքայիններ, սերժանտներ և հրամանատարներ ու քաղաշխատողներ։ Մրցության առաջավորներն էին կոմունիստները և կոմերիտականները, որոնք ոչ միայն իրենք էին լավ կատարում ուսումնական առաջադրանքները, այլև մեծ չափով օգնում էին նաև մնացողներին։ Այդպիսին էին սպա Բ. Հարությունյանի ստորաբաժանման կոմունիստներ Ա. Հովսեփյանը, Գ. Մկրտչյանը, Ս. Ղուկասյանը, Դ. Անտաշյանը, Մ. Հարությունյանը, Ս. Միրզոյանը և ուրիշներ։ Սպա Գրիգորյանի ստորաբաժանումում զենքի նյութական

մասը գերազանց էին յուրացրել մարտիկներ Գ. Վարդանյանը, Վ. Թումանյանը, Գ. Սարգսյանը, որոնք նույնպես օգնում էին ևս մնացորդներին: Պատերազմին մասնակցած շարքային մարտիկ Գ. Վիրաբյանի օգնությամբ կարճ ժամանակամիջոցում զենքի նյութական մասին գերազանց տիրապետեցին կարմիրբանակայիններ Մարտիրոսյանը, Հայրապետյանն ու Մնացականյանը:

Քաղղնկ Մուրգուկովի հրետանային զորամասում սոցիալիստական մրցության հաղթողներ և ուսման գերազանցիկներ էին սերժանտներ Յայլոյանի, Ասլանյանի, Գրիգորյանի, Էլբակյանի հրանոթային անձնակազմերը: Նույնպիսին էին կրասներ լեյտենանտ Լալայանի և լեյտենանտ Ադամովի ստորաբաժանումների ամբողջ անձնակազմը: Այս ստորաբաժանումում հրանոթային անձնակազմի հրամանատար էր ավագ սերժանտ Վ. Գրիգորյանը, որը 5 տարի ծառայել էր Կարմիր բանակում: Նրա հաշվարկի բոլոր մարտիկները գերազանց տիրապետում էին իրենց գործին և հարկ եղած դեպքում կարող էին մեկը մյուսին փոխարինել: Նրանք բոլորը հիանալի նշանառուներ էին, գերազանց տիրապետում էին սնայպերական և հակատանկային զենքին: Այդ հաշվարկի հրամանատար Գրիգորյանը և մարտիկներ Վ. Քոչոյանը, Ա. Սաֆարյանը, Մ. Սարգսյանը, Մարգարյանն ու մյուսները լիովին պատրաստ էին մարտ մղելու առելի բըշնամու դեմ:

Ուսման գերազանցիկների շարքերումն էր նաև սերժանտ Վաղարշակ Հովսեփյանը: «Կարմիր զինվոր» թերթի 1942 թ. մայիսի 3-ի համարում տպագրվել է նրա հետևյալ նամակը. «Զորս եղբայրներս՝ Սմբատը, Երվանդը, Սամսոնը և Աստուրը գտնվում են ռազմաճակատում և պայքարում մեր մեծ երկիրը գերմանա-ֆաշիստական ազատղուբյունից մաքրելու համար: ...Հայրենիքի առաջին իսկ կոչով կարմիր բանակ ենք եկել նաև ես ու մյուս եղբայրս՝ Մարտիրոսը: ...Հայրենքի պահանջով մենք կանենք ամեն ինչ գերմանա-

կան լկտի զավթիչների դեմ հաղթանակն ավելի արագացնելու համար»։

1942 թ. մայիսի 1-ի տոնակատարության կապակցությամբ դիվիզիայի հրամանատարությունը մի շարք սպաների, մարտական ու քաղաքական ուսուցման շատ գերազանցիկների շնորհակալություն հայտնեց։ Դրանց թվում էին Սագոյանը, Սարգսյանը, Կարապետյանը, Նալբանդյանը, Վարդապետյանը, Միանսարովը, Պողոսովը, Գրիգորյանը, Ամբարցումյանը, Ավետիսյանը, Հայրապետյանը, Յայլոյանը և ուրիշներ[5] (աղբյուրում չի հիշատակված անուններն և պինվորական կոչումները—Ա. Հ.)։

Դիվիզիայի հրամանատարության մեկ այլ հրամանով շնորհակալություն են արժանանում ուսման գերազանցիկներ՝ կուրսանտներ Ա. Կիրակոսյանը, Ս. Աղասարյանը, Գուլոյանը, Ավագյանը, կարմիրբանակայիններ Ն. Հարությունյանը, Միքաելյանը, Մ. Ազարյանը, Օ. Հովսեփյանը, Ս. Հաջյանը, Ա. Ասատրյանը, Բ. Խերխերովը, կապիտաններ Զ. Մինասյանը, Հարությունյանը, Սարգսյանը, լեյտենանտ Սիմոնյանը, ավագ քաղղեկներ Գ. Հարությունյանը, Բ. Հարությունյանը, քաղղեկ Սարգսյանը, III կարգի ինժեներ Մխիթարյանը, II կարգի պինվորական բժիշկ Կոստանյանը և ուրիշներ[6]։

Մարտական և քաղաքական ուսուցման ստորաբաժանումներից մեկը, որի հրամանատարներն էին սպաներ Մամաջանյանը և Կարապետյանը, դիվիզիայի անձնակազմին հաղորդեց իր անդուլ աշխատանքի արդյունքների մասին։ Այնտեղ ասված էր.

Ստորաբաժանման «...ամբողջ անձնակազմը տիրապետել է իրեն հանձնված զենքի նյութական մասերին։ Մարտիկները գիտեն լավ պահպանել իրենց զենքը։ Անձնակազմը մեծ աշխատանք է կատարել դիպուկ կրակողների թիվն

---

[5] «Կարմիր պինվոր», 1942 թ., մայիս 1։

[6] Նույն տեղում, 22 փետրվարի։

ավելացնելու համար։ Ստորաբաժանման մարտիկների 65 տոկոսը վերջին հրաձգության ժամանակ կրակեց գերազանց, իսկ 27 տոկոսը՝ լավ։

...Հրացանից գերազանց կրակելու գործում առանձնապես աչքի ընկան կոմունիստներ՝ սերժանտ Հ. Ավետիսյանը, քաղղևկի տեղակալ Ս. Վարդանյանը, կարմիրբանակայիններ Գ. Խաչատրյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Վերդյանը, անկուսակցական Հ. Մանսումովը և ուրիշներ, որոնք 30 հնարավորից խփեցին 28—30 միավոր։

...Անձնակազմի 54 տոկոսը քաղպարապմունքից ունի գերազանց, իսկ 40 տոկոսը՝ լավ գնահատական։ Քաղաքական-մասսայական աշխատանքը լավ կազմակերպելու համար ոչ մի ջանք չեն խնայում քաղղևկի տեղակալ Ս. Վարդանյանը, լեյտենանտ Ա. Պողոսյանը և սերժանտ Ռ. Կյուրեղյանը։

Սակայն մենք հաշիվ ենք տալիս մեզ, որ դեռևս պետք է շատ աշխատանք... Մենք այժմ ունենք ուսումից ետ մնացողներ և էլի ուրիշ թերություններ»[7]։

Ինչպես շարքային կազմի, նույնպես և՛ հրամանատարների և՛ քաղաքական կուսակցական աշխատողների շարքերում բազմաթիվ էին մարտական-քաղաքական ուսուցման գերազանցիկները, որոնց մասին դիվիզիայի թերթում պարբերաբար տպագրվում էին հոդվածներ և այլ նյութեր։ Տպագրվում էին նաև առանձին ռազմիկների նկարները։ Դիվիզիայի գոյության առաջին վեց ամիսների ընթացքում նրա թերթում տպագրվեցին վաթսունից ավելի այդպիսի նյութեր։ Բացի դրանից, հարյուրավոր հոդվածներ և հաղորդումներ տպագրվեցին առանձին զորամասերի ու ստորաբաժանումների մարտական և քաղաքական ուսուցման ընթացքի վերաբերյալ, ուր խոսվում էր նաև եղած բացերի ու թերությունների մասին։ Նման նյութերին մեծ տեղ էր տրվում հանրապետական՝ «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» (ռու-

---

7 «Կարմիր դինվոր», 1942 թ., հունիսի 6։

սերեն), «Ավանգարդ», «Երեկոյան Երևան» և այլ թերթերում, դրան զգալի տեղ էին տալիս շրջանային թերթերը։

Գնալով, ավելի էր աճում կոմունիստական կուսակցության հեղինակությունը ռազմիկների մեջ։ Նրանցից շատերը դիմում էին մտնել կուսակցության շարքերը, ռազմաճակատում մեկնել որպես կոմունիստ։ 526-րդ հրաձգային գնդի հրամանատարությունը՝ Ս. Խանջյանը և Մ. Հայրապետյանը դիվիզիայի քաղաժնին զրում էին, որ օրեցօր աճում է զորամասի կուսակցական կազմակերպությունը։ Մարտական և քաղաքական ուսուցման առաջավորները մեծ ոգևորությամբ դիմումներ էին ներկայացնում և ընդունվում մեր կուսակցության շարքերը։

Այս գործը բավական լավ հիմքերի վրա էր դրված քաղղեկ Ստ. Ստեփանյանի ստորաբաժանումում։ Միայն 1942 թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում այդ ստորաբաժանման կուսակցական կազմակերպությունն աճել էր 20 տոկոսով։ Մարտական և քաղաքական ուսուցման դերազանցիկներ, հրաձիգներ վաղարշակ և Անուշավան Նազարյաններն իրենց դիմումում գրել են՝ «Մենք միայն մի ցանկություն ունենք՝ ֆաշիստական իժերի դեմ մարտի գնալ որպես կոմունիստներ»[8]։

Ավագ քաղղեկ Հարությունյանի ստորաբաժանումում 1942 թ. փետրվար-մարտ ամիսներին կուսակցության շարքերն էին ընդունվել 11 ռազմիկ։ Քաղղեկ Գ. Հայրապետյանի ստորաբաժանման կուսակցական կազմակերպությունն աճել էր 10 հոգով։ Այստեղ կուսակցության շարքերն էին մտել ռազմիկներ Ռ. Մկրտչյանը, Ա. Սաֆարյանը, Հ. Ղումաշյանը և ուրիշներ։ Միայն ապրիլ ամսին քաղղեկ Բաբախանյանի ստորաբաժանումն աճել էր վեց նոր կոմունիստով։

Լավագույն ռազմիկների հաշվին աճում էին նաև զորամասերի և ստորաբաժանումների կոմերիտական կազմակերպությունները։

---

8 Նույն տեղում, 1942 թ., մարտի 13։

Պատերազմի հենց առաջին ամիսներին բազմաթիվ էին Կարմիր բանակի զինվորների, հրամանատարների, կուսակցական-քաղաքական աշխատողների և պարտիզանների սխրագործությունները ֆաշիստական բարբարոսների դեմ մղվող սրբազան պատերազմում: Յուրաքանչյուր սխրանքի հիմքում ընկած էր Կարմիր բանակի ռազմիկների անսահման հավատարմությունը զինվորական երդմանը, հավատարմությունն իր ժողովրդին, սոցիալիստական հայրենիքին:

Խորհրդային ռազմիկի այդ երդումը խիստ հակիրճ է ու պարզ: Բայց նրա յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր նախադասությունը բովանդակում է խորագույն իմաստ՝ անսահման նվիրվածությամբ թեկուզ կյանքի գնով, պաշտպանել խորհրդային հայրենիքը:

Պատերազմի անցած ամիսների ռազմական արդյունքները փայլուն կերպով ցույց էին տալիս, որ հերոսական Կարմիր բանակը, հավատարիմ մնալով այդ երդմանը, ուժեղ և ննջեք թշնամուն ջախջախիչ հարվածներ էր հասցնում բոլոր ռազմաճակատներում՝ և՛ ցամաքում, և՛ ծովում և՛ օդում: Իսկ պարտիզանները, որոնք նույնպես ունեին իրենց երդումը, թշնամուն հարվածում էին նրա թիկունքում:

Այստեղից էլ հասկանալի է, թե որքան մեծ նշանակություն ուներ նոր կազմակերպված դիվիզիայի անձնակազմի համար ռազմական երդման ընդունումը, որքան կարևոր էր այդ գործի լավ իրականացումը: Դիվիզիայի, նրա զորամասերի ու ստորաբաժանումների ամբողջ հրամանատարությունը, կուսակցական-քաղաքական ապարատը հենց սկզբից մեծ աշխատանք կատարեցին այդ ուղղությամբ: Զորամաս նկած նոր ռազմիկների համար և անհատական կարգով և խմբակային ձևով տեղի էին ունենում զրույցներ, զեկուցումներ և դասախոսություններ հատկապես զինվորական երդման շուրջը, բացատրվում նրա բովանդակությունը և կարևորությունը թշնամու դեմ մղվող պատերազմում, մեր հաղ-

թանակի զորձում: Մեծ տեղ էր տրվում ամուր կարգապահության հաստատման նշանակությանը:

Ըստ առանձին զորամասերի ու ստորաբաժանումների դիվիզիայում զինվորական երդումը սկսում են ընդունել 1942 թ. հունվար-փետրվար ամիսներին: Դրա համար պատրաստվում էին բոլոր ռազմիկները: Այդ մասին կարմիրբանակային Տ. Դուշուկյանն իր հիշողության մեջ գրում էր. «Երբ ինձ հայտնի դարձավ զինվորական սրբազան երդումն ընդունելու օրը, որոշեցի անպայման այդ օրը դիմավորել մարտական ուսուցման դերազանց դույգանիշներով: ...Արդյունքն այն եղավ, որ երեք փամփուշտ կրակելով, ձեռք բերեցի երեսուն միավոր (այսինքն կրակից դերազանց— Ա. Հ.), որի համար ստորաբաժանման հրամանատարությունից ստացա շնորհակալություն և պարգևատրվեցի երեսուն ռուբլի դրամով»[9]:

Այդպես էին դիմավորում զինվորական երդումն ընդունելուն դիվիզիայի ռազմիկներից շատերը:

1942 թ. փետրվարի կեսերին դիվիզիայի բոլոր զորամասերում և ստորաբաժանումներում արդեն ավարտվել էին զինվորական երդումն ընդունելու աշխատանքները: Փետրվարի 23-ին 45-րդ բանակի քաղբաժնին գրած զեկույցագրում դիվիզիայի քաղբաժնի պետ Ա. Կիրակոսյանը հաղորդում էր, որ դիվիզիայում այդ օրն արդեն ավարտված է զինվորական երդման ընդունումը[10]:

Հրամանատարները, կուսակցական-քաղաքական աշխատողները ապիտատորներն ամբողջ ժամանակ լինում էին ստորաբաժանումներում, զրուցում բանակայիններին հետ, նրանց ծանոթացնում օրվա կարևոր քաղաքական իրադարձություններին, պատմում ռազմաճակատում մեր զորքերի և առանձին մարտիկների և հրամանատարների հերոսական սխրանքների մասին, կոնկրետ փաստերով ցույց տալիս

9 Նույն տեղում, 1942 թ., փետրվարի 27:

10 Боевой путь... էջ 30:

թշնամու ննդ նպատակները և կատարած գաղանությունները։ Դիվիզիայի ստորաբաժանումների առանձին հրամանատարների և մարտիկների մասին քաղաշխատողները նամակներ էին գրում նրանց ծնողներին և աշխատանքային կոլեկտիվներին, որոնցից ստացված պատասխանները մեծ հետաքրքրությամբ էին ընթերցվում ստորաբաժանումներում։ Դա բանակի և թիկունքի միջև անխզելի կապի հետաքրքիր ձևերից մեկն էր, որը հետագայում, երբ դիվիզիան դանվում էր ռազմաճակատում, ավելի լայն ծավալ ընդունեց։ Քաղաքական աշխատանքի ժամանակ մեծ չափով օգտագործվում էին միութենական և հանրապետական մամուլում տպագրված հոդվածները, որոնք վերաբերվում էին թե՛ ռազմաճակատին և թե՛ թիկունքին, ինչպես նաև միջազգային դրությանը։

Քաղաքական-դաստիրակչական աշխատանքների կարևոր օղակներից մեկը ագիտացիոն աշխատանքն էր։ Ագիտատորների կազմը բաղկացած էր մեծ մասամբ կրտսեր հրամանատարներից և շարքայիններից։ Մշտապես դանվելով ստորաբաժանումներում և շփվելով անձնակազմի հետ, նրանք ավելի մոտիկից էին ճանաչում յուրաքանչյուր ռազմիկի, գիտեին նրա տրամադրությունն ու խոհերը։ Այդ հանգամանքը նրանց ագիտացիոն աշխատանքն ավելի նպատակասլաց էր դարձնում և լավ արդյունք տալիս։

Դիվիզիայի զորամասերում և ստորաբաժանումներում հաճախակի էին լինում հանրապետության գրողները, արվեստի և մշակույթի աշխատողները, նրանց ստեղծագործական կոլեկտիվները։ Նրանք պատմում էին Հայաստանի աշխատավորների քրտնաջան աշխատանքի և ռազմաճակատին բազմապիսի օգնության ցույց տալու մասին, հանդիպումներ ունենում ռազմիկների հետ, տալիս համերգներ։

Գրողներից պարբերաբար զորամասերում էին լինում Ավետիք Բահրամյանը, Գևորգ Գեմիրճյանը, Նաիրի Զարյանը, Գեղամ Սարյանը, Ազատ Վշտունին, Գևորգ Աբովը և ուրիշները։ Անձնակազմի հետ իրենց զրույցների ժամանակ

նրանք պատմում էին հայ ժողովրդի հերոսական անցյալի մասին, այն մասին, թե ինչպես են պայքարել օտար զավթիչների դեմ դյուցազնական հերոս Սասունցի Դավիթը, Դևվորգ Մարզպետունին, Դավիթ Բեկը, և ուրիշներ, այնուհետև ընթերցում էին իրենց ստեղծագործությունները, որոնք նվիրված էին Հայրենական պատերազմին, Կարմիր բանակի քաջագործություններին։

Հանդիպումներից մեկի ժամանակ Ավետիք Իսահակյանը խոսելով Ֆաշիստական Գերմանիայի կողմից Խորհրդային Միության դեմ պատերազմը սանձազերծելու մասին, համոզիչ կերպով ցույց տվեց, թե ինչպիսի նենգ նպատակներ է հետապնդում ֆաշիզմը։ Վարպետն ասաց, որ այդ կատաղի թշնամու դեմ հերոսական պայքար է տանում Խորհրդային ժողովուրդը և նրա քաջարի բանակը, որ երկրագնդի գրեթե բոլոր ազատասեր ժողովուրդներն իրենց դրոշները միացրել են մեր դրոշին, որ «լույսի և ազատության այս փրկարար և մեծագույն պայքարի իր արժանավոր մասնակցությունն է բերում հայ փոքրիկ ժողովուրդը, որը մեծ է իր քաջ որդիների հերոսությամբ, որոնք իրենց հայրենասիրությամբ, անձնազոհությամբ վերստին տալիս են իրենց մայր ժողովրդին աղնվության նորանոր վկայություններ»[11]։ Նա պատմեց հայ ժողովրդի դարավոր պայքարի ու մարտունակների մասին հանուն իր ֆիզիկական գոյության, ազգային ու սոցիալական ազատության, հիշատակեց այդ պայքարի բազմաթիվ նշանավոր գործիչներին ու հերոսներին։

Ավ. Իսահակյանը այդ ոգով ելույթներ ունեցավ նաև հայկական մյուս՝ 408-րդ հրաձգային դիվիզիայի ռազմիկների հետ հանդիպելիս։

Հայ ժողովրդի պատմական սովորույթները կապելով Հայրենական մեծ պատերազմի, նրա տարբեր ռազմաճակատներում հայ ժողովրդի զավակների քաջագործություններ

11 Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, էջ 427։

հետ, Վարպետը մասնավորապես ասաց. «Երբ պատերազմը ծագեց, հայ ժողովուրդը խորապես գիտակցեց պատմական վայրկյանի բախտորոշ էությունը՝ իր լինելու և չլինելու հարցը: Պետք է ուրեմն, կռվել և հաղթանակել հանուն իր նորանվաճ ազատության, հանուն իր հին հայրենիքի պահպանման, հանուն իր մեծ հայրենիքի՝ Սովետական Միության»[12]:

Խոսելով հայ ժողովրդի պատմական ճակատագրի մասին, վարպետը ընդգծել է, որ չնայած արևմտյան իմպերիալիստները հաճախ են խոսել հայերին օգնելու մասին, բայց գործնականում ոչինչ չեն արել, որ իրենց դատարկախոսությամբ նրանք փաստորեն հրահրել են Թուրքերին իրագործելու հայերի բնաջնջումը: Իսկ երբ արյունախում Աբդուլ Համիդի կազմակերպած բանակի և հրոսակախմբերի կողմից իրագործվեցին հայերի մասսայական ջարդերը և «Հայաստանի գյուղերն ու քաղաքները թաթախվեցին հայկական արյան մեջ, այլասերված Վիլհելմ II կայզերը ցինիկաբար հայտարարեց, որ հայերից պիտի Թողնել միմիայն մի մարդ՝ իբրև էթնոգրաֆիկ մուզեի օբեկտ...

Հայ ժողովրդի սրտի մեջ շիկացած երկաթով անջնջելիորեն գրված են այս ամենը:

Ահա այս պիտի դիտենա հայ դինվորը, երբ հանդիպի գերման զինվորին»[13]:

Վարպետի այդ ելույթը, երբ դիվիզիան պատրաստվում էր մեկնելու ռազմաճակատ, դարձավ զորամասերում կատարվող մասսայական-քաղաքական աշխատանքի հիմնական հարցերից մեկը:

Հանրապետության արվեստի և մշակույթի աշխատողները, որոնք ստանձնել էին տարբեր զորամասերի շեֆությունը, բացի անձնակազմի հետ հանդիպումներից, մշակույթի օջախներում պարբերաբար կազմակերպում էին հա-

12 Նույն տեղում, էջ 432—433:

13 Նույն տեղում, էջ 431:

մերգներ և ներկայացումներ։ Դրանցում հանդես էին գալիս ժողովրդական դերասաններ Հայկանուշ Դանիելյանը, Աբրուս Ոսկանյանը, Շարա Տալյանը, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը, և շատ ուրիշներ։

Դիվիզիայի անձնակազմը մշտապես ամուր կապերի մեջ է բանվորական կոլեկտիվների, կոլտնտեսականների և մտավորականության հետ, հիանում էր նրանց անձնուրաց, հայրենանվեր գործերով։ Նրա զորամասերում հաճախակի հյուր էին աշխատավորական տարբեր կոլեկտիվների ներկայացուցիչները։ Իր հերթին այդ կոլեկտիվներն էին այցելում դիվիզիայի, նրա տարբեր զորամասերի ներկայացուցիչները։ Նրանք պատմում էին զորամասերի ու ռազմիկների կյանքի, ռազմաճակատում Կարմիր բանակի հերոսական պայքարի, ֆաշիստների գազանությունների և այլ հարցերի մասին։

Դիվիզիան գոնվում էր հանրապետության կուսակցական, խորհրդային, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ Նրանք ամեն ինչով օգնում էին զորամասերին։ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գ. Ա. Հարությունյանը, Ժողկոմխորհի նախագահ Ա. Ս. Փիրուզյանը, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Պ. Պապյանը պարբերաբար լինում էին դիվիզիայում և նրա զորամասերում։

Զորամասերում կատարվող համառ ու բրտնաջան աշխատանքի շնորհիվ 1942 թ. կեսերին արդեն կարևոր արդյունքներ էին ձեռք բերվել դիվիզիայի զորամասերի մարտական ու քաղաքական ուսուցման, ամուր ռազմական կարգապահության հաստատման գործում։ Այդ էին հաստատում մի քանի անգամ կատարված համազորային տակտիկական վարժություններ։

Դիվիզիայի անձնակազմի բարոյական-քաղաքական վիճակի բարձրացմանն զգալի չափով նպաստեց պատերազմի մեկ տարվա արդյունքների մասին խորհրդային ինֆորմբյուրոյի հաղորդագրությունը և այդ մասին մամուլում հրապա-

նակված նյութերը: Դրանցում ցույց էր տրված, որ այդ մեկ տարում ռազմաճակատում կարմիր բանակը ձեռք է բերել կարևոր հաջողություններ: Մոսկվայի տակ ջախջախվել են թշնամու բանակի ընտիր ուժերը՝ 77 դիվիզիաները, որոնցից 23-ը տանկային և մոտորացված դիվիզիաներ էին: Հիտլերը նպատակ էր դրել այդ հարձակումով գավթել մայրաքաղաքը և հասնել հաղթանակի: Թշնամու դեմ անկուն կանգնեցին Մոսկվան պաշտպանող մեր զորքերը: Ոտքի ելավ ամբողջ բնակչությունը: Մոսկվայի պաշտպաններին օգնության եկան թիկունքի զորամասերը: Ջախջախելով ֆաշիստական այդ դիվիզիաները, մեր զորքերն անցան հակահարձակման: Հետապնդելով այդ դիվիզիաների մնացորդներին, մեր զորքերը ռազմաճակատի գիծը զգալի չափով՝ 400 կիլոմետրով հեռացրին Մոսկվայից: Դա ֆաշիստական բանակի առաջին խոշոր պարտություն էր երկրորդ համաշխարհային պատերազմում: Հաջողություններ էին ձեռք բերվել նաև մյուս ռազմաճակատներում:

Հաղթանակը Մոսկվայի տակ վերջնականապես վիժեցրեց «կայծակնային պատերազմի» ֆաշիստական պլանը: Այդ պատմական հաղթանակը հանդիսացավ արմատական շրջադարձի սկիզբը Հայրենական մեծ պատերազմում: Միաժամանակ այն ունեցավ ռազմա-քաղաքական ու միջազգային մեծ նշանակություն, քանի որ դա մեծ բեկում էր երկրորդ համաշխարհային պատերազմում:

Սակայն թշնամին դեռ ուժեղ էր: Չնայած ամբողջ ռազմաճակատով նոր հարձակում սկսել նա այլևս ի վիճակի չէր, բայց առանձին ռազմաճակատներում հարձակումների նոր պլաններ էր մշակում:

Դիվիզիայի զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարներն ու քաղաշխատողները անձնակազմի մեջ հսկա աշխատանք էին կատարում այդ հարցերի բացատրության համար:

Նրանք չէին մոռանում նաև նոր բաց թողնված 1942 թ.

ռազմական փոխառության, նրա նշանակության մասին, որը ստանալու համար զրվում էին բոլոր ռազմիկները։

Սրդեն հասել էր դիվիզիային մարտական դրոշներ հանձնելու ժամանակը։

1942 թ. հուլիսի 16-ին, հանդիսավոր պայմաններում դիվիզիայի բոլոր զորամասերը հավաքել էին Երևանի Լենինի անվան հրապարակում, մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի գրանիտե արձանի մոտ։ Բարձր ու մարտական տրամադրությամբ ամբողջ անձնակազմը սպասում էր միտինգն սկսվելուն։ Տրիբունայի վրա էին հանրապետության ղեկավարները, 45-րդ բանակի և մեր դիվիզիայի հրամանատարները։

Միտինգը բաց է անում դիվիզիայի քաղբաժնի պետ, ավագ դումարտակային կոմիսար Ա. Կիրակոսյանը և խոսքը տալիս է դիվիզիայի կոմիսար, ավագ դումարտակային կոմիսար Ս. Հայրապետյանին։ Նա ջերմորեն ողջունում է դիվիզիայի զորամասերին, նրա ամբողջ անձնակազմին և խոսում մարտական դրոշների, առաջիկա մարտերում նրանց մշտապես բարձր պահելու կարևորության մասին։

Դիվիզիայի կոմիսարն իր ճառն ավարտում է հետևյալ խոսքերով.

— Մարտական դրոշի ընդունումը պատասխանատու և պատվավոր գործ է։ Այդ դրոշի պատիվը մեր ժողովրդի և մեր հայրենիքի պատիվն է։ Ռազմաճակատում, պատերազմի բոցերի միջով, վճռական հակահարված տալով կատաղի թշնամուն, աներկյուղ կերպով մենք այն առաջ կտանենք և միշտ բարձր կպահենք[14]։

Մարտական դրոշները դիվիզիային ու նրա զորամասերին հանձնում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Պապյանը։ Խոսքը ուղղելով դիվիզիայի անձնակազմին, նա ասում է.

— Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կա-

14 Տես «Կարմիր դինվոր», 1942 թ., հուլիսի 17։

ստավարությունը, ձեզ հանձնելով մարտական դրոշը, համոզված են, որ դուք երբեք չեք արատավորի նրա վեհագույն պատիվը։ Նրանք շատ լավ գիտեն, թե դուք, թանկագին ռազմիկներ, որքան նվիրված ու մեծ եռանդով, սովորում եք ռազմական բարդ արվեստը, ուսումնասիրում պատերազմի փորձը, որ ջախջախիչ հարվածներ հասցնեք թշնամուն։ Բարձր պահեք մարտական դրոշը[15]։ Մ. Պապյանը կոչ արեց մարտական կարմիր դրոշը ամուր պահել և միշտ ավելի ու ավելի բարձր ծածանել, որպես մեր հաղթանակի խորհրդանիշ։

Կրակոտ խոսքեր ասացին կարմիրբանակայիններին, հրամանատարների և քաղաքական աշխատողների ներկայացուցիչները։

Դիվիզիայի անձնակազմը բարձր տրամադրության մեջ էր։ Վ. Ի. Լենինի արձանի առջև նա իր ժողովրդին երդվեց մինչև վերջին շունչը հավատարիմ մնալ հայրենիքին, կոմունիստական կուսակցությանն ու խորհրդային կառավարությանը, միշտ բարձր ծածանել մարտական դրոշը։ Անձնակազմը ծնկաչոք կրկնեց դիվիզիայի հրամանատարի երդման խոսքերը։

Հուլիսի 20-ին դիվիզիայի քաղբաժինը զեկուցագիր է ուղարկում 45-րդ բանակի քաղբաժին։ Այնտեղ ցույց է տրված թե մարտական դրոշների հանձնման անմիջական նախօրյակին և հանձնումից հետո առաջին օրերին ինչպիսի մարտական ու քաղաքական-մասսայական աշխատանք է կատարվել դիվիզիայում։ Այդ օրերին զգալի չափով աճել էին կուսակցության և կոմերիտմիության շարքերը։ Միայն հրեանային գնդում կուսակազմակերպությունն աճել էր 9 մարդով։ Աճ էր տեղի ունեցել նաև մյուս զորամասերի կազմակերպություններում։ Դիվիզիայի զորամասերում արդյունավետ աշխատանք էին կատարում անալյաերների, թշնամու տանկեր և ինքնաթիռներ ոչնչացնողների 203 խմբակները,

15 Տես նույն տեղում։

որոնց շարքերում ընդգրկված էր 2780 մարդ։ Դրանց 75 տոկոսը կոմունիստներ և կոմերիտականներ էին։

Բոլոր զորամասերում և ստորաբաժանումներում անց էին կացվել դեկուցումներ ու դասախոսություններ մարտական դրոշների վերաբերյալ։ Ամփոփվել էին այդ դրոշների ընդունման առիթով զումարված դնդերի և մյուս հատուկ զումարտակների հանդիսավոր միջոցառումների արդյունքները, ուր ամենից հաջող մասնակցություն էր ցուցաբերել 390-րդ գունդը[16]։

Մոտենում էին դիվիզիայի ռազմաճակատ մեկնելու օրերը։ Այդ կապակցությամբ տեղի ունեցան մի շարք ստուգողական տակտիկական պարապմունքներ, որոնց ընթացքում դիվիզիան հասավ լավ ցուցանիշների։

Օգոստոսի 6-ին դիվիզիան սանձում է 45-րդ բանակի հրամանատարության մարտական հրամանը՝ Գրոզնու պաշտպանական շրջանում դիրքեր գրավելու և առաջին հերթի պաշտպանական աշխատանքներ կատարելու մասին[17]։

Նույն բանակի հրամանատարության մի այլ հրամանով օգոստոսի սկզբին ստեղծում է 23 հոգուց բաղկացած մի հանձնաժողով՝ բանակի թիկունքի պետ գնդապետ Տիմոֆեևի նախագահությամբ։ Հանձնաժողովին խնդիր է տրվում պարզել 89-րդ դիվիզիայի կոմպլեկտավորումը անձնակազմով, ապահովվածությունը տրանսպորտային և մյուս անհրաժեշտ միջոցներով, զենքերով։ Օգոստոսի 5—8-ը հանձնաժողովը ուսումնասիրում է դիվիզիայի, նրա բոլոր զորամասերի ու ստորաբաժանումների վիճակը վերոհիշյալ հարցերի կապակցությամբ։ Օգոստոսի 9-ին նա զեկուցագիր է ներկայացնում 45-րդ բանակի հրամանատարությանը կատարված աշխատանքի արդյունքների մասին։

Զեկուցման մեջ նշված էր, որ դիվիզիան կոմպլեկտավորված է հրամանատարական կազմով 96,5, կրտսեր հրա-

---

16 Боевой путь... էջ 32—34։

17 Տես նույն տեղը, էջ 35—37։

մանատարական կազմով՝ 99, իսկ շարքային կազմով 88 տոկոսով։ Զինքերի որոշ տեսակների դեմս պակաս էր զգացվում։ Այսպես, դիվիզիան ձեռքի և հատուցային գնդացիրներով ապահովված էր 28, հակատանկային հրացաններով 50, ատրճանակներով 39 տոկոսով և այլն։ (Չնայած դիվիզիան հրացաններով ապահովված էր, բայց ավտոմատ չէին, որն էլ բերքը խիստ դժվարացնում էր և որը ստացվեց ռազմաճակատում, ամիսներ հետո։ Այն ժամանակ քիչ էին ավտոմատները։ Ա. Հ.)։ Որոշ պակաս էր զգացվում նաև հրանոթների, հատկապես 45 մմ հակատանկային հրանոթների, որոնցով դիվիզիան ապահովված էր 30 տոկոսով։ Զգացվում էր նաև կապի որոշ միջոցների պակաս (հեռախոսներ, ռադիո և այլն)։ Չէին բավարարում թիկնոցները, վրանները, սրանապարտային որոշ միջոցներ[18]։

Այդ պակասները լրացվելուն պես, երբ արդեն դիվիզիան գտնվում էր ռազմաճակատում։ Ոչ միայն լրացվելուն, այլև ստացվեցին դենքի նոր տեսակներ, ավտոմատ հրացաններ, նոր հրանոթներ, ականանետներ, գինապաշարներ։

Չնայած նշված թերություններին, հանձնաժողովը նշեց, որ դիվիզիան ավյալ վիճակում մարտունակ է և պատրաստ մեկնելու ռազմաճակատ։

Հանձնաժողովի ծավալուն գեկույցումն ավարտվում է այսպիսի եզրակացությամբ.

«Դիվիզիայի անձնակազմի քաղաքական-բարոյական վիճակը առողջ է։ Բոլոր մարտիկները, հրամանատարները և քաղաշխատողները ծանոթ են պաշտպանության ժողկոմի հրամանին[19]։

Դիվիզիայի նոր տեղաշարժման մասին հրամանը ընդունվեց մեծ ոգևորությամբ։

---

18 Տես նույն տեղը, էջ 37—40։

19 Խոսքը վերաբերում է այն հրամանին, ուր պահանջվում էր ավելի ամրապնդել կարգապահությունը կարմիր բանակի զորամասերում, ետ չքաշվել և ավելի ուժեղ հարվածել հարձակվող թշնամուն։

Դևպի բևռնավորման վայրը կատարվող շարժման և բևռնավորման ժամանակ բացասական երևույթներ չեն եղել։

Զինվորները, հրամանատարները և քաղաշխատողները ունեին առույգ տրամադրություն, զինվորական գնացքների մեկնումն ուղեկցվում էր ուրախ երգերով։

Ընդհանուր եղրակացություն.

Դիվիզիան մարտունակ է, պատրաստ մարտի։

Սակայն հրանոթային զենքով և կապի միջոցներով ոչ լրիվ ապահովվածությունն իջեցնում է դիվիզիայի կրակային հզորությունը և ոչ լիովին է ապահովում նրա ղեկավարությունը մարտի ժամանակ»[20]։

Հանձնաժողովի կազմած ակտը հաստատվում է 45-րդ բանակի հրամանատար, գեներալ լեյտենանտ Ռեմեզովի և ռազմական խորհրդի անդամ, բրիգադային կոմիսար Միխայլովի կողմից։

Դիվիզիան մեկնում էր ռազմաճակատ։ Իր գոյության առաջին 6—7 ամիսներին ստացած իր մարտական ու քաղաքական պատրաստականությունը, իր մարտունակությունը նա այժմ պետք է ցույց տար Կուվկասում ֆաշիզմի դեմ մղվող ծանր մարտերում։

Հայ ժողովուրդը սրտի մեծ բերկրանքով, սպասում էր իր սիրասուն զավակների քաջագործություններին, հանուն խորհրդային հայրենիքի նրանց անձնուրաց սխրանքներին։

Եվ նա չսխալվեց։

---

20 Боевой путь..., էջ 45—46։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴԻՎԻԶԻԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐԻՆ

1. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Հայրենական պատերազմը 1942 թ. ամառը թևակոխեց մի նոր շրջան, երբ մեր երկրի համար ստեղծվեց բարդ ու ծանր վիճակ։ Մոսկվայի տակ կրած պարտությունից հետո ֆաշիստական բանակն այդ ժամանակ ռազմաճակատի հարավային հատվածում պատրաստեց և սկսեց նոր հարձակում։ Այստեղ նա կենտրոնացրել էր մեծ ուժեր՝ մեկ միլիոն մարդուց ավելի ընտիր զորքեր և հակառական ռազմական տեխնիկա, որի խոշոր մասը նորագույն էր։ Ռազմաճակատի այս հատվածում մեր ունեցած ուժերի համեմատությամբ թշնամին ավելի ուներ՝ զորքի անձնակազմ՝ մեկ և կես անգամ, հրետանի՝ երկու, տանկեր՝ ինը, հրանոթներ և ականանետներ՝ երկու, ինքնաթիռներ՝ համարյա ութ անգամ[1]։

Ֆաշիստների այդ հարձակումը սկսվեց Վորոնեժի և Դոնի Ռոսոշի ուղղությամբ։ Հիտլերը այս անգամ ևս նպատակ էր դրել հասնել հաղթանակի, ավարտել Խորհրդային Միության և նրա զինված ուժերի ջախջախումը։

Կովկասը մեծ տեղ էր գրավում ֆաշիստական Գերմանիայի զավթողական պլաններում՝ որպես ստրատեգիական կարևոր հանգույց, դեպի Մերձավոր Արևելք և կենտրոնա-

[1] Великая Отечественная война Советского Союза 1941—1945гг., Краткая история, Воениздат МО СССР, Москва, 1965, էջ 466։

կան Ասիա տանող ուղի։ Նկատի էր առնվում, որ Կովկասը Խորհրդային Միության ամենահարուստ տնտեսական շրջաններից մեկն է, մասնավորապես նա հարուստ է վառելիքով, հանքային նյութերով և կենսամթերքներով։

Ֆաշիստների ղեկավարներից մեկը՝ Ռոզենբերգը, Հիտլերի հավանությամբ, հատուկ պլան էր մշակել Կովկասի վերաբերյալ։ Այնտեղ ցույց էին տրված Կովկասը իշխելու և կեղեքելու, ազգամիջյան ընդհարումներ կազմակերպելու միջոցառումները։

Թշնամին նկատի ուներ, որ իր կողմից Ստալինգրադի, Կովկասի և Անդրկովկասի գրավումով, Թուրքիան պատերազմի մեջ կմտնի Խորհրդային Միության դեմ։ Խոսելով այդ մասին, այն ժամանակվա Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Ի. Վ. Տյուլենևը գրել է.—

«Թշնամին հույս ուներ, որ հարձակման հաջողությունը կնպաստի Թուրքիային՝ Գերմանիայի կողմից պատերազմի մեջ մտնելուն...

Վերմախտը ենթադրում էր Անդրկովկասից առաջ շարժվել դեպի Իրան և Իրաք, սպառնալիք ստեղծել ամբողջ Միջին Արևելքի և Հնդկաստանի համար»[2]։

Այդ օրերին, այսպես կոչված չեզոքության քողի տակ ակտիվություն էին ցուցաբերում Թուրքիայի կառավարողները և պանթուրքիստները։ Անհամբեր սպասելով ֆաշիստների կողմից Ստալինգրադի գրավմանը, Թուրքիայի զինվորականները մոբիլիզացրել և Հայաստանի ու Վրաստանի սահմաններին էին մոտեցրել 26 դիվիզիա, որպեսզի Ստալինգրադի անկումից հետո հարձակվեն Խորհրդային Միության վրա։

Դեռևս պատերազմն ավարտից մեկ շաբաթ առաջ Թուրքիան բարեկամության պայմանագիր էր կնքել Գերմանիա-

---

2 *Մեջ է բերված քաո* Народный подвиг в битве за Кавказ *գրքի*, Москва *1961, էջ 3։*

չի հետ։ Իսկ երբ արդեն սկսվել էր պատերազմը, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը հայտարարեց, որ իր կառավարությունը շահագրգռված է բոլշևիկների և Ռուսաստանի պարտությամբ։ Իսկ պանթուրքիստները իրենց մամուլում գրում էին, որ «Թուրքերը կնվաճեն Կովկասն ու Ղրիմը և կքշեն Քշնամիներին», որ «կգա այն օրը, երբ թուրքական աղգը կավերի Կովկասի, Ղրիմի, Բուխարայի ամրոցները»[3]։

Ահա այդպիսի պլաններով էր հարձակվում ֆաշիստական Գերմանիան Կովկասի վրա։ Այդպիսի ձգտումներ ունեին Թուրքական կառավարության դեկավարներն ու պանթուրքիստները Կովկասի նկատմամբ։

Գերմանացիների հարձակումը հարավային ռազմաճակատում սկսվեց 1942 թ. հուլիսի 25-ին։ Հաջորդ օրը նրանք գրավեցին Դոնի Ռոստովը և մի շարք տեղերում անցան Դոնի ձախ ափը։ Նրանք շարժվում էին երկու ուղղությամբ՝ դեպի Ստալինգրադ և Կովկաս։ Օգոստոսի կեսերին Քշնամին մոտեցել է Ստալինգրադին։

Կովկասի ուղղությամբ հարձակվում էր ֆաշիստական զորքերի «Ա» խմբավորումը, որի կազմի մեջ էին տանկային 4-րդ բանակը, հետևակային 13, մեքենայացված 4, հեծյալ 3 դիվիզիաներ և այլ զորամասեր։ Ջավթելով մեծ տարածություն, տգալի թվով քաղաքներ և այլ բնակավայրեր, նրանք հասել էին Թերեք, Նովորոսիյսկ, Մայկոպ։

Բարդ իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասում։

Հարավային ռազմաճակատն իր վրա էր կենտրոնացրել Կարմիր բանակի գլխավոր հրամանատարության և ամբողջ խորհրդային ժողովրդի ուշադրությունը։ Անհրաժեշտ էր կանգնեցնել նենգ թշնամու առաջխաղացումը, ջախջախել և նրան ետ շպրտել։ Հուլիսի 28-ին արձակվեց գերագույն հրամանատարության № 227 հրամանը։ Նրանում ձևակերպվեց մեր զորքերին ներկայացվող կարուկ պահանջ՝ ոչ մի քայլ ետ։ Նշվեցին կարևոր միջոցառումներ այդ պահանջն իրա-

---

3 Տե՛ս «Большевик» ամսագիրը, 1944, № 10—11, Մոսկվա, էջ 83։

գործելու համար։ Խնդիր դրվեց ուժեղացնել պայքարը վախկոտների և խուճապահարների դեմ, ավելի ու ավելի ամրապընդել կարգապահությունը։

Նույն թվականի օգոստոսի 23-ին ընդունվեց Գերագույն գլխավոր հրամանատարության դիրեկտիվը Կովկասը պաշտպանելու միջոցառումների մասին։ Այնտեղ նշվեցին Անդրկովկասի հանրապետությունների կոնկրետ անելիքները Կարմիր բանակին օգնելու գործում։ Ստեղծվեցին պաշտպանական շրջաններ և վերադասավորվեցին ռազմական ուժերը։ Իսկ սեպտեմբերի 1-ին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատը վերակազմվեց։ Նրա զորքերը մտան Անդրկովկասյան ռազմաճակատի մեջ, Հյուսիսային խմբավորում անվան տակ։ Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերի հրամանատարն էր բանակի գեներալ Ի. Վ. Տյուլենևը։

Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերի առջև մարտական խնդիր դրվեց՝ ոչ միայն կանգնեցնել ֆաշիստական բանակի առաջխաղացումը, այլև համառ կերպով շարունակելով ակտիվ պաշտպանական մարտերը, ջլատել նրա ուժերը և անցնել հակահարձակման, գլխովին ջախջախել թշնամուն, աղատագրել Հյուսիսային Կովկասը։

Այդ ծանր օրերին, օգոստոսի 23-ին, Թբիլիսիում գումարվեց Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգը։ Դա համաժողովրդական մի հզոր ցույց էր, որն արտահայտեց երկրամասի ժողովուրդների անհողդողդ կամքը հարատատ Անդրկովկասը, ամբողջ խորհրդային երկիրը պաշտպանելու համար։ Երկրամասի ժողովուրդների անունից միտինգի մասնակիցներն երդվեցին Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ պայքարել ֆաշիստական հորդանների դեմ, գլխովին ջախջախել նրանց։

Արտահայտելով ոչ միայն հայ, այլև ամբողջ երկրամասի ժողովուրդների անհողդողդ կամքը գերմանական գավթիչներին հուժկու հակահարված տալու համար, միտինգում ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ասաց.

«Իմ հարազատներ, Կովկասի զավակներ, Կարմիր բանակի մարտիկներ, հիշեցնեք, որ ձեր կուրծքը պաշտպանում են Բաքուն և Գրոզնին՝ Սովետական մարտական տեխնիկայի մեծ ուժի աղբյուրները, և թող ձեր կուրծքը ամուր լինի ինչպես հայրենի լեռների ու կիրճերի ժայռերը։

Թող թշնամու դեմ ձեր գրոհն իր ճանապարհին ջնջի ու ոչնչացնի ամեն ինչ, ինչպես ջնջում ու ոչնչացնում են էլբրուսի ու Կազբեկի, ուժգայլի լանջերից հոսող հեղեղները, որոնք չգիտեն ոչ մի արգելք։ Թող ձեր սրընթաց գրոհը հասնի թշնամիների եռանդ և ջնջի, հողմացրիվ անի նրանց բոլորին մինչև վերջինը։

Դրանով դուք քայքայումից կպաշտպանեք ձեր օջախը, սարսուռյունից կփրկեք ձեզ, ձեր կանանց ու երեխաներին և դա կլինի մեծ վրեժխնդրություն մեր հայրենիքին պատճառած տառապանքների համար։ Դրան է կոչում ձեզ հայրենիքը»[4]։

Հուլիսի 25-ին սկսելով հարձակումը, կարճ ժամանակամիջոցում հակառակորդը հասավ տակտիկական կարևոր հաջողությունների։ Դոնի Ռոստովից հյուսիս ընկած հատվածում ճեղքելով մեր ռազմաճակատի դիծը, ֆաշիստական զորքերն առաջ շարժվեցին երկու ուղղությամբ՝ դեպի Ստալինգրադ և Կովկաս։ Դեպի Ստալինգրադ էին շարժվում ֆելդմարշալ Պաուլյուսի 6-րդ բնաիր բանակը և նրա հետ երկու իտալական բանակներ։ Դա «Բ» խմբավորումն էր։ Դեպի Կովկաս առաջ էր շարժվում, ինչպես տեսանք, «Ա» խմբավորումը, որի մեջ նույնպես մեծ ուժեր էին կենտրոնացած։

Կովկասը պաշտպանող մեր զորքերի առջև դժվարին խնդիր էր դրված՝ կանգնեցնել թշնամու առաջ շարժումը, պատրաստվել հակահարձակման և գլխովին ջախջախել նրան։

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմի պատմության մեջ կարևոր ճակատամարտերից մեկը, ճակատամարտ Կովկասի պաշտպանության համար։

---

4 «Սովետական Հայաստան», 1942, օգոստոսի 24։

Առաջին շրջանը համարվում է Կովկասում մեր զորքերի ժամանակավոր նահանջի և համառ պաշտպանողական մարտերի շրջան։ Այն ընդգրկում է 1942 թ. հուլիսի 25-ից մինչև 1943 թ. հունվարի սկիզբը։

Երկրորդ շրջանն ընդգրկում է 1943 թ. հունվարից մինչև հոկտեմբերի 9-ը։ Կովկասում մեր զորքերի հարձակողական մարտերի շրջանն էր այդ, երբ նրանց վճռական գրոհների շնորհիվ գլխովին ջախջախվեցին ֆաշիստական զորքերը։ Թամանյան թերակղզու ազատագրումով թշնամուց մաքրվեց ամբողջ Կովկասը։

Կովկասի ռազմաճակատը ձգվում էր Կասպից ծովից մինչև Սև ծովը։ Մարտերը տեղի էին ունենում Հյուսիսային Կովկասի տափաստաններում և Կովկասյան մեծ լեռնաշղթայի նախալեռներում։ Ամեն գնով թշնամին ձգտում էր լեռնանցքներով թափանցել Անդրկովկաս։

Կովկասի պաշտպանության համար Կարմիր բանակի գլխավոր հրամանատարությունն այս ռազմաճակատում կենտրոնացրել էր 10 հետևակային, երկու ռազմաօդային բանակներ, որոնք հերոսական մարտեր էին մղում հակառակորդի դեմ։ Նույնպիսի մարտեր էին մղում նաև Սև ծովյան, Կասպից ծովի նավատորմիները և Ազովյան ծովի նավատորմիղը։

1942 թ. օգոստոսի վերջերին ֆաշիստները հասել էին մինչև Թերեք գետը և Գրոզնու մատույցները։ Հենց այս ժամանակ էլ սկսվեց թշնամու պլանների ձախողումը Կովկասը գրավելու համար։

Ակտիվ մարտեր մղելով և նահ քաշվելով, մեր զորքերը թույլ չտվեցին, որ թշնամին Կովկասյան ռազմաճակատից զորքեր փոխադրի Ստալինգրադի ճակատ, ուր նրանք մեծ օգնության կարիք էին զգում։ Այդ ժամանակ նախաձեռնությունն անցել էր Կովկասը պաշտպանող մեր զորքերի ձեռքը։ Այդպես էլ մնաց մինչև Կովկասի լրիվ ազատագրումը։

Կովկասի համար մղված խոշոր ռազմական գործողություններից ու ճակատամարտերից հիշատակության արժանի

ևն Նովոռոսիյսկի, Թամանի և Տուապսեի համար մղված մարտերը, Դիվնոյե, Նալչիկ և Մոզդոկի ուղղությամբ ծավալված խոշոր ռազմական գործողությունները, որոնցում թշնամին մեծ կորուստներ տվեց և դառն կերպով համոզվեց, որ Կովկասը անառիկ ամրոց է:

Կովկասում կանգնեցնելով թշնամու առաջխաղացումը, մեր զորքերը դրանով իսկ ամուր հիմքեր դրեցին նրա ջախջախման համար:

Կոմունիստական կուսակցության, Խորհրդային երկրի բազմամիլիոն և բազմազգ ժողովրդի, նրա մի մասը հանդիսացող Անդրկովկասի ժողովուրդների միասնության ու հերոսական ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ հաղթահարել 1942 թվականի մեծ դժվարությունները և անհրաժեշտ պայմաններ ստեղծել թշնամու ջախջախման համար:

Նույն թվականի վերջերին կովկասյան ռազմաճակատի զորքերը պատրաստվում էին հարձակման՝ երկրամասի օկուպացված տերիտորիան լիովին ազատագրելու համար:

Կովկասի պաշտպանության համար ռազմական գործողություններին ակտիվ կերպով մասնակցել է նաև հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան:

Դիվիզիան ռազմաճակատ մեկնեց կազմավորումից 7 ամիս հետո 1942 թ. օգոստոսին: Իր առաջին մարտական գործողությունները սկսելով Կովկասի պաշտպանության ծանր օրերին՝ 1942 թվականի սեպտեմբերին, մեր հերոսական Կարմիր բանակի շարքերում նա անցել է փառավոր մարտական ուղի:

* * *

1942 թ. օգոստոսի 13-ին դիվիզիայի բոլոր դինվորականն էշելոններն արդեն հասել էին նշանակված վայրը՝ Գրոզնու մատույցները, ուր մեր զորքերը ծանր մարտեր էին մղում այդ քաղաքի պաշտպանության համար:

Մեծ էր Գրոզնու ստրատեգիական և տնտեսական նշանակությունը: Նա հանդիսանում էր նավթարդյունաբերու-

թյան խոշոր կենտրոն, հայտնի էր իր արտադրած բարձրորակ բենզինով, գտնվում էր դեպի Բաքու գնացող ճանապարհի վրա, ուներ 200 հազարից ավելի բնակչություն, որի զգալի մասը բանվոր դասակարգն էր։

Ֆաշիստական զորքերը գործադրում էին բոլոր ուժերը՝ որքան կարելի է շուտ գրավել Գրոզնին։ Իսկ մեր զորամասերը, քաղաքի բնակչության օգնությամբ հերոսաբար պաշտպանում էին քաղաքը։ Նրանք անխնա հարվածներ էին հասցնում ուժեղ հակառակորդին, մեծ վնասներ պատճառելով վերջինիս։

Անդրկովկասից Գրոզնի էին գալիս նորանոր գնացքներ, որոնք բեռնված էին զինվորներով, ռազմամթերքներով, հանդերձանքով, ամեն ինչով, որը պետք էր ռազմաճակատի համար։

Այստեղ առաջին իսկ օրերից դիվիզիան սկսեց անդադրում կերպով պատրաստվել մարտական վիճակի, կատարել բոլոր անհրաժեշտ պաշտպանական աշխատանքները։ Պատրաստվում էին խրամատներ և հետևատեղիներ, անցուդարձներ։ Գործադրվեցին անհրաժեշտ միջոցառումներ ռազմական տեխնիկան նորմալ պայմաններում պահպանելու և միշտ մարտական վիճակում պահելու համար։ Զորամասերն ապահովվեցին բոլոր անհրաժեշտ զինամթերքներով։ Կարգի բերվեցին տրանսպորտային միջոցները։ Կրակային բոլոր միջոցները դասավորվեցին համապատասխան տեղերում, որպեսզի միշտ պատրաստ լինեն հակահարված տալու թշնամու օդային ու ցամաքային զրոհներին։ Մշակվեցին կոնկրետ միջոցառումներ թշնամու գործակալներին հայտնաբերելու և ոչնչացնելու համար։ Հատուկ ցուցցներ էին տեղի ունենում վախկոտության և խուճապահարության վնասների մասին։

Հիշատակված և մյուս բոլոր կարևոր միջոցառումները դիվիզիայի զորամասերի հրամանատարական կազմը, կուսակցական-քաղաքական ապարատը և բոլոր ռազմիկները կատարում էին մեծ պատասխանատվությամբ և նվիրվա-

ծությամբ: Բարձր էր բոլորի մարտական տրամադրությունը:

Անդրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային խմբավորման քաղվարչության պետին օգոստոսի 14-ին գրած զեկուցագրում դիվիզիայի քաղբաժնի պետ, ավագ գումարտակային կոմիսար Ա. Կիրակոսյանը գրում էր, որ ամբողջ անձնակազմի քաղաքական-բարոյական վիճակը առողջ է և ամուր: Դիվիզիայի զորամասերը պատրաստ են առաջին իսկ հրամանով դուրս գալ կատարի թշնամու դեմ: Անձնակազմի մեջ ծավալուն աշխատանք է տարվում Գրոզնու մեծ նշանակությունը բացատրելու ուղղությամբ: Ստորաբաժանումներում վերադասավորվում են կուսակցական և կոմերիտական ուժերը: Քաղբաժնի ամբողջ ապարատը գտնվում է զորամասերում՝ օգնելու հրամանատարությանը[5]:

Այդ օրերին տեղի ունեցավ Գրոզնու աշխատավորության միտինգը, որին մասնակցում էին և այնտեղ ելույթ ունեցան 89-րդ դիվիզիայի ներկայացուցիչները: Դիվիզիայի դինվորական կոմիսար Ա. Հայրապետյանը ողջունելով Գրոզնու աշխատավորությանը, ասաց, որ դիվիզիան բոլոր ուժերով կհարվածի թշնամուն, կպաշտպանի հարազատ քաղաքը:

Շուտով դիվիզիան դիրքեր է գրավում Գրոզնու արտաքին պաշտպանության ոչ բևում: Այստեղ նույնպես կարճ ժամանակամիջոցում կատարվում են պաշտպանական մեծ աշխատանքներ: Ամեն ինչ արվեց ռազմաճակատի այս հատվածն ինչպես հարկն է ամրացնելու, անառիկ դարձնելու համար: Գրավելով իրենց մարտական դիրքերը, բոլոր զորամասերն ու ստորաբաժանումները պատրաստվում էին հակահարված տալու հակառակորդին: Բարձր էր անձնակազմի մարտական տրամադրությունը և զգոնությունը:

526-րդ հրաձգային գնդի 7-րդ վաշտի հրամանատար, կոմունիստ լեյտենանտ Ջորանյանն այդ օրերին ծնողներին գրում էր. «Թանկագին ծնողներ. գերմանական ֆաշիզմը վոխկրտում է մեր սրբազան հողը, սպանում է մեր մայրե-

5 Տե՛ս Боевой путь... էջ 49—51:

րին, հայրերին, անարգում է մեր քույրերին, ոչնչացնում մեր կուլտուրան։ Ձեր որդին շուտով մահացու մարտերի մեջ է մտնելու ֆաշիստական զավթիչների դեմ։ Թանկագին ծնողներ. Ձեզ խոսք եմ տալիս, որ իմ ստորաբաժանումը կլինի առաջին շարքերում և երբեք ֆաշիստներին չի տա իր դիրքերից ոչ մի թիզ։ Պայքարելու ենք մինչև գերմանական ֆաշիստների լիովին ոչնչացումը»[6]։ Շատ էին ռազմիկների այդպիսի կրակոտ խոսքերը։ Մարտիկների հետ զրույցի գլխավոր թեման էր՝ կայուն մնալ մարտում, անվիջում լինել թշնամու նկատմամբ։

Դիվիզիայի անձնակազմի մեջ հատուկ պարապմունքներ էին տեղի ունենում թշնամու տանկերը ոչնչացնելու համար։ Ստորաբաժանումներում առանձնացվում էին համարձակ ռազմիկներ, որոնք անդադրում ուսումնասիրում էին հակատանկային զենքը, մյուս ռազմաճակատներում մեր զինվորների փորձը։ Ամեն վաշտում կար այդպիսի 15 ռազմիկ։ Կազմակերպված էր նրանց ուսուցումը։ Հետագա մարտերում դրանք կարևոր դերը կատարեցին։

Դիվիզիային խնդիր էր տրված պաշտպանել Պետրոպավլովսկայա կայանի մոտ Սունժա գետի կամուրջը։ Այդ խնդիրը կատարվեց հաջողությամբ։

Օգոստոսի 28-ին դիվիզիան մարտերի մեջ է մտնում թշնամու հետ։ Իր դիպուկ կրակով նա ընդհատակորզի կրակային դիրքերը, ոչնչացնում մեկ տանկ և հնարավորություն տալիս մեր դրահաղնացքին Նիկոլաևկա բնակավայրի մոտ դուրս գալու իր մարտական դիրքերը։

526-րդ գնդից կապիտան Ա. Աբոյանի դումարտակը դանդաղում էր առաջխաղացումը։ Հետախուզությունը հաղորդում է, որ թշնամու տանկն առաջ է շարժվում գետի դումարտակի դիրքերը։ Կոմերիտական հնգյակ Գ. Գևորգյանի հրանոթի անձնակազմը հրաման է ստանում անհապաղ կրակ բացել առաջ շարժվող տանկի վրա։ Առաջին իսկ կրակոցից տանկը

---

6 Նույն տեղում, էջ 58։

կանգ է առնում, շարքից հանվում։ Մյուս տանկերը ետ են քաշվում։ Այս հատվածում թշնամու հարձակումը ձախողվում է[7]։

Բազմաճակատի մի այլ հատվածում, Թերեք բնակավայրի մոտ, թշնամու հարձակման պատճառով այնտեղ գտնվող մեր զորքերի համար դժվարին վիճակ էր ստեղծվել։ Անհրաժեշտ էր շտապ կերպով օգնել այդ զորամասերին, կանգնեցնել և ետ մղել թշնամու գրոհը։

Հյուսիսային խմբավորման հրամանատարության հրամանով 89-րդ դիվիզիային մարտական խնդիր է տրվում անմիջապես տեղաշարժվել դեպի ռազմաճակատի այդ հատվածը և օգնել այնտեղ գտնվող մեր զորամասերին։

1942 թ. սեպտեմբերի առաջին օրերին դիվիզիան Գրոզնու մոտից ուղղություն է վերցնում դեպի պաշտպանության նոր բնագիծ՝ Չեչնո-ինգուշական ինքնավար հանրապետության հայտահատիկային պետական տնտեսություն, Թերեքի աջ ափին, Բենո-Յուրտ, Թերեք, Բալաշովո բնակավայրերի շրջանում։

Դիվիզիան հաջողությամբ կատարում է տեղաշարժը և առանց կորուստների։ Կազմակերպված կերպով նա ժամանակին հասնում է նշանակված տեղը և անմիջապես գրավում նոր բնագիծը, առանց ուշացման կատարում պաշտպանական աշխատանքներ, օգնում այնտեղ գտնվող մեր զորամասերին։

Այդ բանը չի վրիպում Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային խմբավորման ռազմական խորհրդի ուշադրությունից։ Սեպտեմբերի 19-ին ընդունած հատուկ հրամանով նա բարձր գնահատական է տալիս 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատարության և ամբողջ անձնակազմի կատարած մարտական գործերին։

Հրամանում ասված է, որ դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ Ա. Սարգսյանը տեղաշարժը կազմակերպել է

---

7 Տե՛ս «Կարմիր դիվիզիա», 1942, սեպտեմբերի 7։

գերազանց և ժամանակին, ճիշտ իրագործել հետախուզության, այն կատարվել է քողարկման բոլոր կանոններին համապատասխան: Հաջող կազմակերպվածության շնորհիվ տեղաշարժն ավարտվել է մեկ օր շուտ: Սեպտեմբերի 19-ին դիվիզիան արդեն նոր տեղում էր:

Հաշվի առնելով վերոհիշյալը, Ռազմական խորհրդի այդ հրամանն եղրափակվում է այսպես.

«Օրինակելի եմ համարում Հյուսիսային խմբավորման զորքերի մեջ մտնող 89-րդ հրաձգային դիվիզիայի ամբողջ անձնակազմի բարձր կարգապահությունը, դիվիզիայի հրամանատարության և քաղաքական կազմի կողմից խնդրի հասկանալը: Ռազմական խորհուրդը համոզված է, որ 89-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը մարտերում նույնպես կցուցաբերի բարձր կարգապահություն, կազմակերպվածություն և օրինակելի կկատարի ցանկացած հրամանը ռազմաճակատում գերմանական զավթիչների դեմ, կցուցաբերի կայունություն, հերոսության, քաջության և անվեհերության օրինակներ և կձգտի դառնալու զվարդիական դիվիզիա»[8]:

...Տեղաշարժը գերազանց կազմակերպելու և անցկացնելու համար Հյուսիսային խմբավորման հրամանատարությունը շնորհակալություն է հայտնում դիվիզիայի հրամանատար փոխգնդապետ Ա. Սարգսյանին, կոմիսար, ավագ դումարտակային կոմիսար Ա. Հայրապետյանին և ամբողջ անձնակազմին:

Հրամանը ստորագրել էին Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային խմբավորման հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մասլենկովը և Ռազմական խորհրդի անդամ, կորպուսային կոմիսար Ֆոմինիխը:

Հրամանը ընթերցվում է դիվիզիայի բոլոր զորամասերում և ստորաբաժանումներում, որը մեծ չափով նպաստեց անձնակազմի մարտական ոգևորության բարձրացմանը: Իրենց ելույթներում բոլորը խոստանում էին, որ մարտերում

---

8 Боевой путь... էջ 65:

ամեն ինչ կանեն բարձր հրամանատարության հույսերն ու վստահությունն արդարացնելու համար:

Այդ տեղաշարժը կազմակերպված անցկացնելու համար սեպտեմբերի 20-ին, հատուկ հրամանով, դիվիզիայի հրամանատարը նույնպես շնորհակալություն է հայտնում ամբողջ անձնակազմին:

Կովկասի պաշտպանության այդ ծանր օրերին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Պ. Պապյանը հայ ժողովրդի անունից 89-րդ դիվիզիայի ռազմիկներին նամակ է ուղարկում, կոչ անելով հերոսաբար պաշտպանել հարազատ Կովկասը: Նամակում ասված էր.

«Հայ ժողովրդի անունից ջերմորեն ողջունում եմ ձեզ, մեր մայր հայրենիքի քաջարի զավակներիդ: Հպարտությամբ մենք իմացանք, որ ձեր միավորումը մտել է գործող բանակի կազմի մեջ և որ հրամանատարությունը վստահել է ձեզ պաշտպանության կարևոր հատվածներից մեկը՝ գերմանաֆաշիստական զորքերի գլխավոր հարվածի ուղղության վրա:

...Ընկեր մարտիկնե՛ր, հրամանատարնե՛ր քաղաշխատողնե՛ր, աղատ հայ ժողովրդի զինվորնե՛ր, կանգնեցրե՛ք կատաղաբար առաջ ձգտող թշնամուն: Արյունաքամ արե՛ք նրան: Նրա գլխին թափե՛ք ձեր ցասումնալի վրիժառությունը, արճիճի ու մետաղի հեղեղը: Բազմացրե՛ք ֆաշիստական շներին կատորելու արդեն բացված պանծալի հաշիվը:

...Հայ ժողովուրդը վստահ է, որ դուք, նրա քաջ զավակներդ, ցույց կտաք ձեզ, որպես խիզախ զինվորներ, սովետական դյուցազուններ, որոնցով մենք իրավունք ունենք հպարտանալու»[9]:

Այդ նամակը ամբողջությամբ տպագրվեց դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթում և լայնորեն տարածվեց զորամասերում: Զինվորներն այն ընթերցում էին հուզմունքով և ավելի ու ավելի էին զգում իրենց լուրջ պատասխանատվու-

9 «Կարմիր զինվոր», 1942 թ., սեպտեմբերի 16:

Բյուրը ժողովրդի և հայրենիքի առջև։ Այդ նամակը զգալի չափով նպաստեց առաջին անգամ մարտերի մեջ մտած ռազմիկների մարտական ոգու բարձրացմանը։

«Կարմիր դիվիզիայի» սեպտեմբերի 18-ի համարում տպագրվեց 89-րդ դիվիզիայի ռազմիկների պատասխանն այդ նամակին, որի տակ ստորագրել էին դիվիզիայի և նրա զորամասերի հրամանատարներն ու քաղաշխատողները։ Այնտեղ ասված էր.

...«Մենք, հայ ժողովրդի զավակներս, ռուս մեծ ժողովրդի, Անդրկովկասի ժողովուրդների՝ վրացիների, ադրբեջանցիների, օսեթինների, աղատ լեռնեցիների, խորհրդային ամբողջ ժողովրդի հետ ուս-ուսի տված, անհողդողդ կանգնած ենք մեր մեծ հայրենիքի պաշտպանության դիրքերում։ Յուրաքանչյուր մարտիկի կյանքի խորհուրդն է՝ խրոխտ կանգնել մայր հողի վրա, մնալ անսասան, չնայել հետ և կրակ ու շանթ թափել թշնամու գլխին։ Մեր յուրաքանչյուր մարտիկն արդեն բաց է արել իր համար արդար հաշիվ և այդ հաշիվը կփակի միմիայն ֆաշիզմի վերջնական բնաջրնջման հանրագումարով»։

Եվ իրոք, 89-րդ դիվիզիայի ռազմիկները հավատարիմ մնացին իրենց այդ խոստմանը։

Մ. Պապյանի վերոհիշյալ նամակի առթիվ զորամասերում և ստորաբաժանումներում տեղի ունեցան ժողովներ։

Ժողովներից մեկում կապիտան Ա. Աբոյանն ասաց. «Մեր հայրեր ու մայրեր, մեր քույրեր և եղբայրներ.

Ձեր զավակները կկռվեն այնպես, ինչպես հատուկ է հերոսական հայ ժողովրդի զավակներին։ Մենք անխնա կչախչախենք գերմանական զավթիչներին և նորից ու նորից փառքով ու պատվով կպսակենք հայ ժողովրդի անունը»։

Նույնպիսի ելույթներ ունեցան նաև կրտսեր քաղղեկ Ա. Ավետիսյանը, Ս. Բաղդասարյանը և ուրիշներ։

Ստորաբաժանումներում տեղի ունեցան այդպիսի շատ ժողովներ։

Նոր բնագծում իր մարտերը դիվիզիան սկսում է սեպտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը: Մի քանի օր տեղի են ունենում ծանր մարտեր: Թշնամին գրոհում է տանկերով: Նրան քաջարի դիմադրություն են ցույց տալիս 531-րդ հրետանային գնդի 1-ին և 5-րդ մարտկոցները: Նրանց դիպուկ կրակով թշնամու 7 տանկից երկուսը շարքից դուրս են գալիս, իսկ մնացած 5-ը ետ են քաշվում: Մեր հրետանավորների կրակով ճնշվում է հակառակորդի ականանետային մեկ մարտկոց: Արիաբար էր գործում լեյտենանտ Սիմոնյանը, որը բաց դիրքերից իր հրանոթով հարվածում էր թշնամուն, մեծ վնասներ պատճառելով նրան:

Լեյտենանտ Հակոբյանի դիվիզիայում կոմերիտականներ Սերգեյ Պողոսյանը, Աշխարհեկ Նուրբեկյանը, Բեգլար Բարսեղյանը հակառակորդի ուժեղ կրակի տակ հարձակվեցին թշնամու տանկի վրա, նռնակներով նրան շարքից հանեցին և այնտեղից վերցրին մեկ գնդացիր, 2 հրաչան և տարբեր փաստաթղթեր:

Լավ էին մարտնչում նաև մայոր Խաչատրյանի հրետանավորները: Դասակի հրամանատար Ուռումյանը և շարքային Մադատ Ավագյանն իրենց հրանոթի ուղիղ նշանառությամբ հարվածում էին թշնամու կրակային կետերին: 3-րդ մարտկոցի ավագ Արզումանյանը և վարորդ Մխիթար Թումանյանը հակառակորդի ուժեղ կրակի տակ կատարում էին իրենց մարտական առաջադրանքը և մարտից դուրս բերում վիրավոր ռազմիկներին:

Հատակ և քաջարար էին գործում դիվիզիայի կապի գումարտակի կապավորներ՝ շարքային Վաղարշակ Կարապետյանը, սերժանտ Լազար Սիմոնյանը, կոմունիստ, կրտսեր լեյտենանտ Արմենակ Ղազարյանը: Թշնամու ուժեղ կրակի տակ նրանք անխափան էին պահում կապը հրամանատարության և ստորաբաժանումների միջև:

Դիվիզիայի քաղբաժնի պրիտատոր, գումարտակային կոմիսար Պ. Ավալյանը և պետի օգնական ավագ քաղղեկ Բոյախչյանը, որոնք մարտի ժամանակ գտնվում էին 526-րդ գնդի 1-ին և 3-րդ գումարտակներում, իրենց անձնական

օրինակով ոգևորում էին ռազմիկներին։ Բոյախչյանը երկու անգամ վիրավորվում է, բայց շարքից դուրս չի գալիս մինչև ուժերի սպառումը։ Իր ուսերի վրա նրան մարտի դաշտից դուրս է բերում Պ. Ավալյանը[10]։

Սեպտեմբերի 26-ին և 27-ին 390-րդ և 526-րդ գնդերը մարտեր էին մղում Թերեքի բնակելի մի կետի համար։ Նրանք մեծ վնասներ են պատճառում կատաղի դիմադրող թշնամուն։ Ակտիվ և միասնաբար էին գործում սերժանտ Սուրեն Բադալյանի մարտիկները։ Նրանցից ոչ ոք նահ չքաշվեց իր դիրքերից, աններեր հարվածում էին թշնամուն։ Հերոսաբար էր մարտնչում դիվիզիայի ուսումնական գումարտակը, որի հրամանատարն էր մայոր Մ. Խաչանյանը։ Գումարտակի հետ էին նաև ականածիգները և գնդացրորդները։ Նրանց հաջողվեց ուժեղ հարվածել թևանցումի փորձ կատարող թշնամուն և մեծ վնասներ պատճառել նրան։ Այս մարտում ևս աչքի են ընկնում կապի գումարտակի ռազմիկները, որոնք ապահովեցին անխափան կապը։ Դրանց թվում էին լեյտենանտ Ա. Միխայիլովը, սերժանտ, կոմունիստ Մ. Մկրտչյանը, մարտիկ Վ. Կարապետյանը, լեյտենանտ Ղազարյանը և ուրիշներ։

Մարտում քաջության և սառնասրտության օրինակ էր տալիս քաղղեկ Մացակ Ստեփանյանը։ Իր ականանետային դիպուկ կրակով նա շարքից հանեց հակառակորդի ականանետային կրակակետը։ Մարտի առաջավոր գծումն էին գրաված սակրավոր վաշտի հրամանատար, կրտսեր լեյտենանտ կոմունիստ Աղասի Ստեփանյանը, դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Գևորգ Հովսեփյանը։ Այդ մարտում աչքի ընկան նաև շատ ուրիշ քաջ ռազմիկներ։ Նրանց մի մասը զոհվեց հերոսաբար։

Սպա Սահակյանի ռազմիկները ծանր մարտեր էին մղում հարձակվող թշնամու դեմ։ Կռվի ամենաթեժ պահին նրանք հարվածում էին ֆաշիստներին, կատարում հրամանները և գնում հրամանատարի հետևից։ Այստեղ աչքի ընկան

---

10 Боевой путь... էջ 71—72։

գնդացրորդներ Հ. Մկրտչյանը, Զ. Բոյախչյանը, Ա. Մարտիրոսյանը և ուրիշներ։ Կրտսեր հրամանատարներից իրենց անձնական օրինակով աչքի էին ընկնում Հ. Մկրտումյանը, Հ. Զաքարյանը։ Մարտում խիզախ մահով ընկավ ավագ սերժանտ Գ. Գասպարյանը։ Չնայած կրտսեր քաղղեկ Հ. Դավթյանը վիրավորվեց, բայց մարտից դուրս չեկավ։ Կոմերիտական Շահեն Շահինյանը դիմում էր գրել կուսակցության մեջ մտնելու համար և գրել, որ մարտի կգնա որպես կոմունիստ։ Եվ իրոք, նա խիզախորեն հարվածում էր ֆաշիստներին, նրանցից մի քանիսին սպանում և ինքն էլ զոհվում այդ մարտում։

Հրետանավորներից իրենց մարտական խնդիրը օրինակելիորեն էին կատարում լեյտենանտ Ռ. Գրիգորյանը, քաղղեկի տեղակալ Ա. Օհանջանյանը, որոնք ոչնչացրել էին թշնամու ականանետային մարտկոցը։ Քաջաբար կովողներից էին նաև Ա. Անդրիասյանը, Ա. Բաղդասարյանը, Կ. Հարությունյանը, հետախույզ Վ. Մելքոնյանը, նշանառուներ Ս. Պողոսյանը, Պ. Բարսեղյանը, Ա. Սերոբյանը, Գ. Քոչարյանը և ուրիշներ։ Խիզախ կոմերիտական Զ. Խաչատրյանը բաց դիրքերից իր հրանոթի դիպուկ կրակով անվրեպ հարվածում էր թշնամուն։ Իսկ քաղղեկ Գաբրիելյանի հրետանավորները շարքից հանել էին թշնամու մի քանի տանկ։

Իր դիպուկ կրակով թշնամուն մեծ կորուստներ պատճառեց ռուս ժողովրդի քաջարի զավակ, գնդացրորդ Իվանովը։ Հարմար կրակային դիրք ընդունելով, նա սպասում էր թշնամու հարձակմանը։ Այդ հատվածում չսպասելով մեր առորաբաժանման դիմադրությանը, գերմանացիները ամբողջ հասակով առաջ էին շարժվում։ Երբ նրանք բոլորովին մոտեցան, սկսեց գործել Իվանովի ծանր գնդացիրը։ Անվրեպ կրակով նա հնձում էր ֆաշիստներին։ Նրանցից 30 դիակ մնաց բացատում, իսկ կենդանի մնացածները փախան։

Գնալով դիվիզիան կատարելագործում էր իր առաջին մարտական փորձը։ Այդ մարտերում ունենալով զգալի մարդկային կորուստներ, դիվիզիան մարդկային և տեխնիկայի

մեծ կորուստներ է պատճառել թշնամուն։ Այդ մասին դիվիզիայի օպերատիվ բաժնի մարտական գործողությունների տեղեկագրի (ժուռնալի) մեջ ասված է. «Թերեքի տակ մղված 15-օրյա մարտերում դիվիզիան ոչնչացրել է թշնամու 500 զինվոր և սպա, 2 տանկ, 15 գնդացիր, 6 ականանետ, 22 ավտոմեքենա զինվորներով և բեռներով»[11]։

Սակայն այդ մարտերում դիվիզիայի առանձին զորամասեր ունեցան նաև անհաջողություն, որն առաջին հերթին արդյունք էր մարտական փորձի և զինքի պակասության։ Անհաջողություն էր ունեցել 390-րդ հետևակային գունդը, մասնավորապես նրա առաջին գումարտակը։ Նրանք ավելի էին համեմատաբար մեծ թվով զոհեր և չէին ապահովել մարտական խնդրի կատարումը։

Դիվիզիայի առաջին մարտերի արդյունքներն այդ օրերին ամփոփվեցին 9-րդ բանակի ռազմական խորհրդի նիստում։ Այնտեղ լավեցին դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ Ա. Սարգսյանի և կոմիսար, ավագ գումարտակային կոմիսար Ա. Հայրապետյանի զեկուցումները։

Դիվիզիայի զինավարությունն ամրապնդելու և հետագա մարտերում նոր հաջողությունների հասնելու համար նրա հրամանատար Ա. Սարգսյանի փոխարեն նշանակվեց գնդապետ Ա. Վասիլյանը, կոմիսար Ա. Հայրապետյանի փոխարեն՝ գնդային կոմիսար Ե. Հակոբջանյանը։ Շուտով քաղաքժնի պետ, ավագ գումարտակային կոմիսար Ա. Կիրակոսյանի փոխարեն նշանակվեց ավագ գումարտակային կոմիսար Ա. Կանանովը, նրանից հետո Բաբլումյանը, ապա Լ. Վարդանյանը, շտաբի պետ, փոխգնդապետ Ա. Ղազարյանի փոխարեն՝ փոխգնդապետ Ֆ. Պոլտավեցը։

Դրանից հետո կարճ ժամանակով դիվիզիան դուրս է բերվում առաջավոր գծից՝ համալրում ստանալու, մարտական ուսուցում կատարելու, մարտերի փորձն ամփոփելու և

---

11. Боевой путь... էջ 223։

ռազմական տեխնիկան կարգի բերելու համար։ Այդպես շարունակվում է մինչև 1942 թ. հոկտեմբերի կեսերը։

Իհարկե, հեշտ չէին մարտերը։ Ռազմիկները դեռևս չունեին անհրաժեշտ մարտական փորձ։ Ձենք և զինամթերքի որոշ պակաս էր զգացվում։ Թշնամին ուժեղ էր և կատաղաբար էր դիմադրում։

Անհրաժեշտ էր ավելի ու ավելի կատարելագործել մարտ վարելու ձևերը, լինել է՛լ ավելի համարձակ, թշնամուն հարվածել է՛լ ավելի դիպուկ։ Անհրաժեշտ էր ցուցաբերել ավելի ու ավելի կայունություն, ուժեղացնել սայքարը դեռևս նկատվող առանձին վախկոտների և խուճապահարների դեմ։ Դրանք հարցեր էին, որոնք զրված էին դիվիզիայի, նրա զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարների և կուսակցական-քաղաքական աշխատողների, ամբողջ անձնակազմի առջև։

Հանգստի համար տրված կարճ ժամանակամիջոցը արդյունավետ օգտագործվում էր այդ խնդիրների կենսագործման համար։

«Կարմիր զինվոր» կարմիրբանակային թերթի 1942 թ. հոկտեմբերի 1-ի համարում տպագրվում են առանձին հատվածներ ՆՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեի 1934 թ. հունիսի 8-ի որոշումից հայրենիքի դավաճանության մասին։ Թերթի նույն համարը տպագրում է առաջնորդող հոդված, «ոչ մի քայլ հետ, նահանջողը հայրենիքի թշնամի է» վերնագրով։ Ընդգծելով որ հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուր ռազմիկի սրբազան պարտքն է, այնտեղ միաժամանակ ասված էր, որ դասալքել, դերի հանձնվել թշնամուն այդ նշանակում է դավաճանել հայրենիքին։ Թերթը կոչ էր անում ռազմիկներին կռվել այնպես, ինչպես կռվում են քաղաշխատողներ Պ. Ավալյանը, Ս. Նալբանդյանը, Գ. Բոյախչյանը, լեյտենանտ Բ. Ղազարյանը, կրտսեր լեյտենանտ Մ. Գրիգորյանը, շարքային Կ. Կարապետյանը, բուժակ Կարախանյանը և շատ ուրիշներ։

Մեծ հառնդով ծավալուն աշխատանքներ են կատար-

վում այս և վերևում հիշատակված մյուս հարցերի կենսագործման ուղղությամբ։ Ռազմիկների և սոցրաբաժանումների միջև ծավալվում է սոցմրցություն մարտական փորձը և ռազմական տեխնիկան լավ ուսումնասիրելու, դիտելիքներն ավելի հարստացնելու, թշնամուն ավելի դիպուկ հարվածելու, վախկոտների ու խուճապահարների դեմ անհնա պայքարելու համար։ Հատուկ պարտավորություններ են ընդունվում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 25-րդ տարեդարձը լավ յուցանիշներով դիմավորելու համար։ Ռազմիկների հետ զրույցներ են անցկացվում զինվորական երդման, կարգապահության ամրապնդման կարևորության, պատերազմում ռուս մեծ ժողովրդի դերի, ժողովուրդների բարեկամության, Ստալինգրադի մարտերի և այլ հարցերի առթիվ։

Դիվիզիայի քաղբաժնի պետ, ավագ դումարտակային կոմիսար Ա. Կանանովը 9-րդ բանակի քաղբաժնին ուղարկած զեկուցագրում հաղորդում է, որ անձնակազմի մարտական ոգին բարձր է, քաղաքական-բարոյական վիճակը լավ[12]։

Այդ օրերին դիվիզիայի հյուրն էր Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի պատվիրակությունը՝ նրա առաջին քարտուղար, Անդրկովկասյան ռազմաճակատի Զինվորական խորհրդի անդամ Դ. Ա. Հարությունյանի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պրոպագանդի և ագիտացիայի բաժնի վարիչ Խաչիկ Իսկանդարյանը, Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի քարտուղար Արտաշես Գևորգյանը և Հայաստանի կոմերիտմիության Կիրովականի շրջկոմի քարտուղար Վազգեն Ամիրբեկյանը։

Պատվիրակությունը ջերմ հանդիպումներ է ունենում ռազմիկների հետ, նրանց հաղորդում մայր ժողովրդի ոզ-

---

12 Боевой путь... էջ 74—75։

ջուլհակները և պատվիրանը՝ տուն վերադառնալ միայն հաղթանակով։

Կենտկոմի առաջին քարտուղարը լինում է 400-րդ հրաձգային գնդում, նրա գումարտակներում։ Զրուցում է բազմաթիվ հրամանատարների, կուսակցական-քաղաքական աշխատողների և շարքայինների հետ, պատմում է Թբիլիսիում կայացած հակաֆաշիստական միտինգի, թիկունքում կատարվող նվիրական աշխատանքի, ամեն ինչով ռազմաճակատին օգնելու մասին։ Նա ռազմիկներին կոչ է անում բարձր պահել և հարստացնել հայ ժողովրդի մարտական սովորույթները, ավելի ուժգին հարվածել չարամիտ թշնամուն։

Առանձին զորամասերում և ստորաբաժանումներում հանդիպումներ են ունենում նաև պատվիրակության մյուս անդամները։ Նրանք միաժամանակ պատասխանում են թիկունքին վերաբերող շատ հարցերի[13]։

Պատվիրակության լինելը դիվիզիայում, նրա ղեկավարի և անդամների զրույցները ռազմիկների հետ, մեծ չափով նպաստում են նրա անձնակազմի մարտական ոգու և հարձակողական թափի ամրապնդմանը։

Հոկտեմբերի կեսերին դիվիզիան արդեն պատրաստ էր դուրս գալու առաջավոր գիծ։ Այդ օրերին նա առաջադրանք է ստանում մարտական դիրքեր գրավել Թերեք գետի աջ ափին, Մալգոբեկ քաղաքի մոտ, որը գտնվում էր թշնամու ձեռքին։ Եվ սկսվում են մարտերը այդ քաղաքի ազատագրման համար։ Ռազմաճակատի այդ հատվածում դիվիզիան մնում է մոտ երկու և կես ամիս, մինչև 1943 թ. հունվարի առաջին օրերը։ Այդ ամբողջ ժամանակամիջոցում նա համառ մարտեր է մղում թշնամու զորքերի դեմ։

Իմանալով այդ հատվածում նոր միավորման՝ 89-րդ դիվիզիայի գալու մասին, նրա զորամասերի տեղաբաշխումը պարզելու նպատակով, առանց ժամանակ կորցնելու, հակառակորդը դիվիզիայի աջ թևում կազմակերպում է ուժային հետախուզություն։

13 Նույն տեղում, էջ 74—76։

Ուժեղ հրանոթային և ականանետային կրակից հետո հոկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը թշնամու մի խոշոր ստորաբաժանում հարձակվում է 526-րդ գնդի առաջին և երկրորդ գումարտակների վրա։ Ռնկվում է ուժեղ մարտ, որի ընթացքում միայն մեր 5-րդ վաշտի զինվորները ոչնչացնում են 7 գաշհատ, հրանոթային կրակով՝ երեք կրակային կետ։ Թշնամու գրոհը ետ է մղվում։ Մերոնք էլ են կորուստներ ունենում, 14 ռազմիկներ վիրավորվում են, 6-ը՝ զոհվում։ Զոհվածների թվում էր հետախուզական դասակի քաղղեկ Ս. Մկրտչյանը։

400-րդ գնդի 8-րդ վաշտի ռազմիկները գաշհատներին ետ են շպրտում նրանց գրաված բարձունքից, ոչնչացնում կրակային կետերը։ Այդ մարտերում աչքի են ընկնում սերժանտ Բալաբեկ Մանուկյանը և շարքային Հակոբ Սարգսյանը, որը վիրավորվում է։ Մեր զինվորները ոչնչացնում են 3 գաշհատ[14]։

Այդ նույն հատվածում ավտոմատային մեկ վաշտով թշնամին հարձակում է կատարում նաև հոկտեմբերի 30-ին, սակայն ստանում է ուժեղ հակահարված և ետ շպրտվում։ Ետ մղելով թշնամու կատաղի գրոհները, մարդկային մեծ վնասներ պատճառելով նրան, մեր զորամասերն այստեղ ունենում են զգալի կորուստներ։ Երեք օրում՝ հոկտեմբերի 31-ից-նոյեմբերի 1-ը մերոնք ունենում են 28 վիրավոր, 30 սպանված և անհետ կորած[15]։ Հերոսաբար զոհվածների թվում էին կոմունիստներ Առաքել Հակոբյանը և Գրիգոր Զաքարյանը։ Մարտում քաջության օրինակներ էին դուրս տալիս էդվարդ Հովհաննիսյանը։ քաղղեկ Ասատուր Առաքելյանը, կապիտան Շախո Օհանյանը, քաղղեկ Սուրեն Մնացականյանը, սնայպեր Սարգսյանը և շատ ուրիշներ[16]։

Նոյեմբերի 1-ի մարտում զոհվում է 526-րդ գնդի հրամանատար մայոր Ս. Խանջյանը։ Սիրելի հրամանատարի զոհ-

---

14 Տե՛ս Боевой путь... էջ 79—80։

15 Նույն տեղում, էջ 85։

16 Նույն տեղում։

վելը է՛լ ավելի մեծ ատելություն է առաջացնում գնդի ռազմիկների մեջ։ Թշնամուց վրեժ լուծելու համար նրանք քաջաբար հարվածում են ֆաշիստներին։ Այդ մարտում գնդի ռազմիկներից զոհվում են 10-ը, վիրավորվում 15-ը[17]։ Ավելի մեծ կորուստներ է ունենում հակառակորդը, որը ետ է շպրտվում Լման դիրքերը։

Զոհի եղած թշնամուն ուժեղ հակահարված էին տալիս նաև 390-րդ հրաձգային և 531 հրանոթային գնդերի ռազմիկները։ Նրանցից հատկապես աչքի ընկան կոմերիտական շարքային Պետրոս Երանոսյանը, որը ոչնչացրեց 5 ֆաշիստ, Գուրգեն Ասրյանը և Ալեքսան Հարությունյանը։ Մարտը հմուտ էր ղեկավարում վաշտի հրամանատար լեյտենանտ Իվան Մկրտումյանը։

Այդ մարտերում դիվիզիայի թևերը, հատկապես աջը, անհրաժեշտ չափով չէր ամրապնդված մեր հարևան միավորման կողմից։ Օգտվելով դրանից, հակառակորդը հաճախակի հարձակում էր կատարում այս թևում։ Չնայած դրան հարձակումները ետ էին մղվում, անհրաժեշտ էր ամրապնդել աջ թևը։ Այդ մասին դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ա. Վասիլյանը նոյեմբերի 4-ին հատուկ զեկուցագիր է ուղարկում 9-րդ բանակի հրամանատարությանը։

Զեկուցագրում ասված էր, որ թշնամու այդ հաճախակի գրոհների հետևանքով հատկապես 526-րդ գունդը զգալի կորուստներ է ունեցել և ստիպված է անձնակազմի խիվը։ Այսպես, նույն գնդի 2-րդ և 3-րդ դումարտակների վաշտերում մնացել են 30-ից 60 մարդ։ Դիվիզիան այնքան հնարավորություն չուներ, որ աջ թևում եղած բացը լրացներ իր զորամասերով, որոնք մարտնչում էին կենտրոնական հատվածում։ Հակառակորդի դիրքերը համեմատաբար ավելի նպաստավոր էին։ Նա գտնվում էր Թերեք գետի ձախ ափի բարձունքների վրա, որտեղից հարվածում էր ցածր դիրքերում գտնվող մեր զորամասերին։

Շուտով 9-րդ բանակի հրամանատարությունն անհրա-

17 Նույն տեղում էջ 90։

ժեշտ միջոցառումներ կիրառեց 89-րդ դիվիզիայի թևերը, հատկապես աջ թևը ամրապնդելու համար։ Այնտեղ ուղարկեցին նոր զորամասեր։ Թշնամին այլևս դժվարանում էր այդ թևից հարձակում կատարել։

Դիվիզիայի ռազմիկները, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 25-րդ տարեդարձը դիմավորեցին առաջավոր գծում, մարտերի մեջ։ Այդ մեծ տոնը նշանավորելու համար նրանք ավելի ուժգին էին հարվածում նենգ թշնամուն։ Նոյեմբերի 6-ին դիվիզիան սառցալ Խորհրդային Հայաստանի աշխատավորության տոնական նվերը՝ 13 վագոն նվեր-ծանրոցներ։ Դրանք ուղարկվեցին առաջավոր գիծ և հասցվեցին յուրաքանչյուր ռազմիկի, որոնք զգում էին հարազատ ժողովրդի ջերմությունը, սերը և գուրգուրանքը, դա ավելի էր պարտավորեցնում։ Պետք էր բարձր պահել մայր ժողովրդի անունը, պատիվը, երբեք չմոռանալ նրա պատվիրանը։

526-րդ գնդի 4-րդ վաշտի շարքային կոմունիստ Սարգիս Ալավերդյանն ասում էր, որ հայ ժողովրդի նվերները մեզ պարտավորեցնում են ավելի ուժգին հարվածել գավթիչներին, դրանով իսկ արագացնել ֆաշիստական բանակի ջախջախումը։ Իսկ ուսումնական գումարտակի ականանետային վաշտի շարքային Մաթևոս Բարիկյանն իր մարտական ընկերների անունից ասաց, որ Հայաստանի աշխատավորության պատվիրանը ֆաշիստական ճիվաղներին ջախջախելու մասին անպայման կկատարենք[18]։

Ինչպես հայտնի է, 1942 թ. նոյեմբերի 19-ին Ստալինգրադի ճակատում սկսվել էր մեր զորքերի հարձակումը՝ շրջապատելու և ոչնչացնելու այդ ճակատում գտնվող գերմանական զորքերը, որոնց թիվը հասնում էր 300 հազարի։ Մեր զորքերի ռազմական գործողությունները առաջին իսկ օրերից ծավալված էին մեծ հաջողություններով։ Կատարելով Թշնամու կատաղի դիմադրությունը այդ ռազմաճակատի հարավային և հյուսիսային հատվածներում, մեր զորքերը

18 Տես նույն տեղում, էջ 102։

ճնդքեցին նրա պաշտպանության գիծը, մեծ վնասներ պատճառեցին։ Շարժվելով առաջ, նրանք ձգտում էին միանալ և իրականացնել Թշնամու շրջապատումը, ապա ոչնչացնել նրան։

Այդ մասին հաղորդեց Խորհրդային Ինֆորմացիոն բյուրոն, գրեցին կենտրոնական և ռազմական մամուլը։ Գրեց նաև «Կարմիր պինվոր» թերթը, որը ռազմիկների սիրելին էր։ Դրա մասին ռազմիկներին հաղորդելու համար մեծ աշխատանք կատարեցին հրամանատարները և կուսակցական-քաղաքական աշխատողները։

Եվ ռազմիկներն արդեն գիտեին այդ զգալի հաջողության մասին, որը մեծ չափով նպաստեց նրանց մարտական-հարձակողական տրամադրության բարձրացմանը։

89-րդ դիվիզիայի ամբողջ անձնակազմը լարված ուշադրությամբ հետևում էր Վլադիկավկազ (Օրջոնիկիձե) քաղաքի մոտ տեղի ունեցող կատաղի մարտերին, որոնք բռնկվել էին հոկտեմբերի 25-ին և շարունակվեցին մինչև նոյեմբերի կեսերը։ Փաստորեն այստեղ էր որոշվում Կովկասի պաշտպանության բախտը։

Հակառակորդը նպատակ էր դրել անպայման տիրանալ Վլադիկավկազ քաղաքին և ռազմավիրակական լեռնանցքով ճանապարհ բաց անել դեպի Անդրկովկաս։ Այդ նպատակով նա այստեղ կենտրոնացրել էր տանկային մեկ կորպուս և մեծ թվով այլ զորքեր։ Երկու կողմից մարտերին մասնակցում էին ավելի քան 70 հազար մարդ, 300 հրանոթ, 200 տանկ, 650 ականանետ, 1750 գնդացիր[19]։

Թշնամին հարձակումն սկսեց հոկտեմբերի 25-ին, գիղել բնակավայրի մոտ։ Հենց այստեղ էլ նա հանդիպեց մեր զորքերի համառ դիմադրությանը և ուժեղ հակահարվածին։ Նրանց գործողություններն անմիջականորեն ղեկավարում էր Անդրկովկասի ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Ի. Վ. Տյուլենևը, որն այստեղ էր եկել նկատի

19 «Մարտիկ», 1944, սեպտեմբերի 30։

ունենալով գործողության մեծ կարևորություն։ Կովկասի համար մղված ճակատամարտի պատմության մեջ այն հայտնի է Դիզելի ճակատամարտ անունով։

Մեր զորքերի կողմից գերմանացիներն այստեղ ևս ըստացան ջախջախիչ հարված և ետ շպրտվեցին։ Կործանվելուց նրանց հույսերը Կովկասյան լեռնաշղթայի վրայով Անդրկովկաս մտնելու մասին։

Մարտերի ավարտից հետո, նրա արդյունքների մասին հրապարակվեց Խորհրդային Ինֆորմբյուրոյի հաղորդագրությունը։ Հակառակորդը ունեցել էր մարդկային և ռազմական տեխնիկայի մեծ կորուստներ։

Այդ մարտում մեր զորքերը ջախջախեցին գերմանական 13-րդ տանկային դիվիզիան, «Բրանդենբուրգ» գունդը, հետևակային 45-րդ դիմադրական, սակրավորների 7-րդ դիմադրական, հակաօդային պաշտպանության 525-րդ դիվիզիոնը և մի շարք այլ զորամասեր։ Լուրջ կորուստներ էր կրել հակառակորդի 23-րդ տանկային դիվիզիան։

Մարտի դաշտում գերմանացիները թողել էին ավելի քան 5000 զինվորի և սպայի դիակ։ Վերցված էր մեծ ռազմավար՝ 140 տանկ, 7 զրահապատ մեքենա, 70 տարբեր տրամաչափի հրանոթ, այդ թվում 36 հետաձիգ, 84 գնդացիր, 2950 ավտոմեքենա, 183 մոտոցիկլետ, ռազմամթերքի 2 պահեստ և այլն։ Վիրավորների թիվը մի քանի անգամ ավելի էր սպանվածների թվից[20]։

Մեր զորքերի այդ կարևոր հաջողության առթիվ Հյուսիսային Կովկասի խմբավորման ռազմական խորհուրդը. ռազմաճակատի զորքերին հատուկ կոչ էր ուղարկել։

Այնտեղ ասված էր.

«Դիզելի շրջանի մարտերը հսկայական նշանակություն ունեն։

Վերջին երեք ամիսների ընթացքում անպատկառ թշնամին բազմիցս փորձել է հյուսիսից հեղքել, անցնել Կով-

---

20 Տես «Կարմիր զինվոր» 1942 թ. նոյեմբերի 21։

են եղել՝ հանդիպելով մեր զորքերի կայուն դիմադրությանը։

Կարմիր բանակի Դիզելի շրջանում կատարած հարձակողական մարտերը նոր փուլ են բաց անում Խորհրդային Կովկասի համար մղվող պայքարում։

...Թշնամին դեռ ուժեղ է... Մեր զորքերի խնդիրն է, որպեսզի սանձն կերպ զարգացնենք մեր սկսած հաջողությունը, կրնկակոխ հետապնդենք ֆաշիստական ստոր գազանին, քշենք նրան առանց կանգ առնելու, ոչնչացնենք նրա կենդանի ուժն ու տեխնիկան, թույլ չտանք նրան ամրանալ նոր գիրքերում։

Կովկասը գերեզման դարձնենք գերմանական օկուպանտների համար»[21]։

Խորհրդային Ինֆորմացիոն բյուրոյի հաղորդագրությունը Դիզելի ճակատամարտում մեր զորքերի ձեռք բերած հաջողությունների մասին և Հյուսիսային խմբավորման ռազմական խորհրդի կոչը մեծ խանդավառությամբ ընդունվեցին ռազմաճակատի բոլոր զորքերի, այդ թվում 89-րդ հայկական դիվիզիայի անձնակազմի կողմից։ Նրանք սկսեցին ավելի ուժգին կերպով հարվածել թշնամուն, ձեռք բերելով նոր հաջողություններ։

Այդ օրերին արագ կերպով աճում էին դիվիզիայի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները։ Նրա քաղբաժնի զեկուցագրում, որն ուղղված էր 9-րդ բանակի քաղբաժնին, ասված էր, որ 1942 թ. նոյեմբեր ամսին միայն 390-րդ հրաձգային և 531-րդ հրետանային գնդերում կոմունիստական կուսակցության մեջ ընդունված է 12, կոմերիտմիության մեջ՝ 11 ոգմիկ[22]։ Դիմում էին տալիս խիզախները, առաջավորները։

Դիվիզիայի շտաբի նոյեմբերի 25-ի օպերատիվ տեղեկագրի մեջ ամփոփված են անցած մեկ ամսվա մարտերի

---

21 Նույն տեղում։

22 Տես Боевой путь... էջ 107։

արդյունքները։ Այնտեղ նշված է, որ չնայած հակառակորդը տվյալ հատվածում փոխել է իր ուժերը, ավելի թարմացրել նոր զորամասերով, բայց դիվիզիան ամուր կերպով պաշտպանում է իր բնագծերը, ուժեղ հակահարված տալիս ֆաշիստների գրոհներին։ Այդ մեկ ամսում մեր զորամասերը ոչնչացրել են թշնամու երեք վաշտ, որից 348 զինվոր և սպա խփել են սնայպերները։ Քար ու քանդ են արվել մեկ դզոտ, գնդացրային 4 և ականանետային 4 կրակակետեր։ Ոչնչացվել է 4 ավտոմեքենա[23]։

Կապիտան Դանիլինի հրետանավորները նկատելով թշնամու կուտակումները, կրակ են բաց անում նրանց վրա և ոչնչացնում հետևակի մեծ խմբեր։ Իսկ լեյտենանտ Արզումանյանի ստորաբաժանման ականաձիգները մարտերի առաջին երկու տասնօրյակում ոչնչացրել են ֆաշիստական 65 զինվոր և սպա, հաստոցավոր գնդացրի մեկ կետ։ Այդ գործում առանձնապես աչքի են ընկել սերժանտներ Ի. Կարախանյանի և Հ. Բաբայանի ականաձիգները, մարտիկներ Մ. Միրզոյանը, Պ. Թումանյանը և Գ. Հովսեփյանը։ Իսկ սնայպեր Արտաշես Պողոսյանը միայն 20 օրվա ընթացքում ոչնչացրել է 17 ֆաշիստ։

Այդ մեկ ամսում (հոկտեմբերի 15—նոյեմբերի 15) մեծ են եղել նաև դիվիզիայի կորուստները։ Զոհվել են 102, վիրավորվել 336 մարդ[24]։ Կային նաև անհետ կորածներ։ Դեկտեմբեր ամսին նույնպես շարունակվում էին մարտերը։ Դիվիզիան ճակատի իր հատվածի տարբեր մասերում մի քանի անգամ հետ է մղել թշնամու գրոհները։

Նոյեմբերի վերջերին և դեկտեմբերի առաջին օրերին դիվիզիայի անձնակազմի մեջ զգալի աշխատանքներ կատարվեցին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 22-րդ տարեդարձի կապակցությամբ։ Զրույցներն անց էին կացվում մեծ մասամբ անհատապես, իսկ որտեղ հնարա-

---

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, էջ 108։

վոր էր, նաև խմբակային կարգով։ Յուլյ էին տրվում Խորհրդային Հայաստանի հաջողությունները և աշխատավորների հերոսական աշխատանքը թիկունքում, նրանց անգադրում օգնությունը ռազմաճակատին։

Եռանդուն աշխատում և հերոսաբար մարտնչում էր դիվիզիայի սակրավոր գումարտակը։ Դեկտեմբերի 12-ին նրա վաշտերից մեկը մարտական խնդիր է ստանում 390-րդ գնդի հատվածում մարտերի միջոցով պարզել թշնամու կրակակետերի տեղերը, փշալարերով հատվածները և ականապատված դաշտերը, ականազերծել դրանք։ Այս խնդրի կատարման ժամանակ համարձակություն և քաջություն է ցուցաբերում վաշտի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, քաղղեկ Վանիկ Պետրոսյանը։ Հակառակորդի ուժեղ կրակի տակ նա առաջ էր շարժվում, իր հետևից տանելով մարտիկներին։ Այսպես էր գործում նաև լեյտենանտ Իշխան Գևորգյանը։ Այս մարտում հատկապես աչքի ընկան շարքայիններ, կոմերիտականներ Ջահան Կարախանյանը, Սանդրո Փարսադանյանը, կոմունիստ Հովհաննես Աբրահամյանը և շատ ուրիշներ[25]։

Համառ մարտերը շարունակվեցին մինչև դեկտեմբերի վերջը։ Դրանց ընթացքում թշնամուն չհաջողվեց դիվիզիայի հատվածում առաջ շարժվել։ Ամեն անգամ նա ստանում էր ուժեղ հակահարված և ետ շպրտվում, տալով մեծ կորուստներ։

Դեկտեմբերի 29-ին դիվիզիայի քաղբաժնի պետ Լ. Վարդանյանն Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդին ծավալուն զեկուցագիր է գրում անձնակազմի քաղաքական-բարոյական վիճակի մասին։ Այնտեղ որոշ չափով տրված են նաև դեկտեմբերին մղված մարտերի արդյունքները։

Նշված է, որ դեկտեմբերի անցած 25 օրում դիվիզիան շարունակել է հարվածները թշնամուն և նրան մեծ վնասներ

---

25 Նույն տեղում, էջ 122։

պատճառել։ Այդ ժամանակամիջոցում ոչնչացվել է ֆաշիստական 247 զինվոր և սպա, ծանր գնդացրի 6 կրակակետ, 4 դզոտ և բլինդաժ, քար ու քանդ են արվել թշնամու ռազմամթերքի պահեստը և այլն։ Դիվիզիայի զորամասերում կառավարական մեդալներով պարգևատրվել են 101 ռազմիկ։ Շատերը ներկայացված են շքանշան ստանալու համար։

Նշված է, որ դիվիզիայի շարքերում կան 1796 կոմունիստներ և 3227 կոմերիտականներ, որոնք անցած մարտերում եղել են մարտնչողների առաջին շարքերում։

526-րդ գնդի գնդացրային 2-րդ վաշտի ջոկի հրամանատար, սերժանտ Օսիպովը թեժ մարտի ժամանակ փոխարինում է դասակի զոհված հրամանատարին և մարտն ավարտում հաջողությամբ։ Այդ մարտում նա սպանում է 3 ֆաշիստի։ 400-րդ գնդի 3-րդ վաշտի դասակի հրամանատար, կոմերիտական Հայրյանը մարտի ժամանակ երկու անգամ վիրավորվում է, բայց մարտից դուրս չի գալիս, շարունակում է դասակի հրամանատարությունը։ Թշնամու երրորդ գնդակով նա զոհվում է։ 400-րդ գնդի սնայպերներ, կոմունիստներ Անտոնյանը և Վարդանյանը, կոմերիտական Հակոբյանը մարտերում ոչնչացրել էին 106 հիտլերական։ Կոմերիտական Գուրգեն Հակոբյանը մարտի դաշտից հանել է 42 վիրավոր ռազմիկ։ Կարմիր բանակային Կիրակոսյանը կռիվների ամենաթեժ պահին, հակառակորդի ուժեղ կրակի տակ ապահովել է անխափան հեռախոսային կապը։

Շատ էին կոմունիստների և կոմերիտականների այդպիսի նվիրական օրինակները։ Մասնակից և ականատես լինելով դրանց, անկուսակցական ռազմիկները դիմումներ էին ներկայացնում ընդունվելու կոմունիստական կուսակցության և կոմերիտմիության շարքերը։ Դեկտեմբերի 25 օրում դիվիզիայում կուսակցության շարքերն են ընդունվել 93 և կոմերիտմիության շարքերը՝ 25 մարդ[26]։

---

[26] Боевой путь... էջ 128։

Ջեկուցագիրը եզրափակված է այսպես. «Դիվիզիայի անձնակազմի քաղաքական-բարոյական վիճակը կայուն է։ Դիվիզիան պատրաստ է կատարելու հետագա մարտական խնդիրները, բայց դրանց հաջող կատարման համար անհրաժեշտ է անձնակազմի համալրում»[27]։

Դեկտեմբերի վերջին ավարտվում է պաշտպանական մարտերի շրջանը։ 1943 թ. սկզբից դրան հաջորդում են հարձակողական մարտերը։

2. ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Հետախուզության տվյալները պարզորոշ ցույց էին տալիս, որ ֆաշիստական զորքերը Կովկասում պատրաստվում էին նահանջելու։ Ինչ խոսք, որ դա սերտորեն շաղկապված էր Ստալինգրադի ռազմաճակատում կարմիր բանակի ծավալվող հարձակողական գործողությունների, ձեռք բերված փայլուն հաջողությունների հետ։

Թշնամին վախենում էր այստեղ, Կովկասում ևս շրջապատման մեջ ընկնել։ Դրանից խուսափելու նպատակով նա 1943 թ. հունվարի առաջին օրերից սկսեց ետ քաշվել։ Բայց դա սովորական նահանջ չէր։ Սկսելով նահանջը, ֆաշիստներն իրենց հետևապահ զորքերով կատաղաբար դիմադրում էին։ Այրում և ոչնչացնում էին բնակավայրերը, ճանապարհները, կամուրջները քանդում էին, պայթեցնում երկաթ գիծը, ռազմական նշանակություն ունեցող բոլոր արժեքները, սննդի պահեստները և ինչ հնարավոր էր։ Նրանք գազանարար ոչնչացնում էին բնակչությանը, գերվածների մի մասին, որքան այդ կարող էին, քշում էին դեպի Գերմանիա։

Մեր զորքերին հրաման էր տրված սրընթաց հարձակումով ջախջախել նահանջող թշնամու դիմադրող զորամասերին, օգնության հասնել ազատության սպասող բնակչությանը, փրկել նյութական արժեքները։

---

27 Նույն տեղում, էջ 130։

Կովկասյան ռազմաճակատի զորքերն իրենց հարձակումն սկսեցին 1943 թ. հունվարի առաջին օրերին։ Նրանց թվումն էր նաև 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան։ Նա ընթանում էր ռազմաճակատի երրեմն առաջին, երբեմն երկրորդ գծում։

Իրեն հատկացված ամբողջ ճակատով դիվիզիան հարձակումն սկսում է հունվարի 2-ին։ Այդ մասին նրա հրամանատար գնդապետ Ա. Վասիլյանը զեկուցագիր է ուղարկում 58-րդ բանակի հրամանատարությանը։ Հարվածելով հակառակորդին, դիվիզիայի զորամասերը նույն օրը ազատագրում են Մալգոբեկ քաղաքը, որի մատույցներում, ինչպես նշվեց վերևում, երկար ժամանակ ուժեղ մարտեր էին գնում։ Այստեղ աչքի ընկան դիվիզիայի բոլոր զորամասերը, որոնք գտնվում էին առաջավոր գծում։ Մալգոբեկի ազատագրումը կարևոր հաղթանակ էր և նպաստեց մեր ռազմիկների մարտական ոգևորության բարձրացմանը։

Դիվիզիան շարունակեց առաջընթացը, բայց առաջին իսկ օրերից արդեն զգացվում էր, որ նրա թիկունքային ծառայություններն ետ էին մնում։ Դա արդեն սկսում էր դժվարություններ առաջ բերել։

Առաջ շարժվելով, դիվիզիայի զորամասերը հասել էին՝ հունվարի 4-ին Խամիդիա, 5-ին՝ Մկոս և Մայսկի, Պրիշիբսկայա, 7-ին Պրոխլադնի, 12-ին Նովո-Պավլովսկայա, իսկ 13-ին՝ Պոդգորնայա բնակավայրերին[28]։ Թիկունքային ծառայությունները շարունակում էին ավելի ետ մնալ։ Պակասում էր վառելիքը, անասնակերը՝ քաշող անասունների համար և այլն։ Իսկ առաջ շարժվող զորամասերի համար արդեն զգացվում էր սննդի, հագուստեղենի, կոշիկի և ռազմամթերքի պակասություն։ Ամեն ինչ արվում էր այդ դժվարությունները հաղթահարելու համար։ Ճանապարհների քայքայվածության և ձմեռային ուժեղ ցրտերի պայմաններում հեշտ չէր դրանք հաղթահարել։

---

28 Боевой путь... էջ 136—137։

Ինչպես ասված է դիվիզիայի օպերատիվ դեկուցագրի մեջ, հարձակման առաջին տաս օրում վերցված էր 9 գերի, ռազմավար՝ 3 տանկ, 1 ավտոմեքենա, 3 տրակտոր, տարբեր տրամաչափի 5 հրանոթ, 2 ականանետ, 1 գնդացիր, 200 հրացան և այլ ռազմամթերք։ Ոչնչացված էր ֆաշիստական 50 գինվոր և սպա[29]։

Առաջ շարժման այդ դժվարին պայմաններում դիվիզիայի զորամասերում չէին դադարում քաղաքական մասսայական աշխատանքները։ Ռազմիկների հետ շարունակվում էին զրույցներն օրվա հրատապ հարցերի, հատկապես Կարմիր բանակի հարձակողական գործողությունների մասին։ Հիմնական թեմաներն էին հարձակման արդյունքները և հետագա խնդիրները, ուշադիր վերաբերմունքը տեղական բնակչության, թույլ կամ հիվանդ ռազմիկների նկատմամբ, միջոցառումներ ցրտահարությունից պաշտպանելու համար, խորհրդային ինֆորմբյուրոյի հաղորդագրությունները և այլն։

Հունվարի 26-ին դիվիզիան հասել էր Նովո-Ալեքսանդրովկայա բնակավայրը։ Փետրվարի 8-ին նրա զորամասերն արդեն կենտրոնացել էին Կանևսկայա ստանիցայի շրջակայքը։ Նույն օրը դիվիզիայի հրամանատար Ա. Վասիլյանը զեկուցագիր է գրում 58-րդ բանակի հրամանատարությանը։ Այնտեղ հաղորդված էր, որ Բշնամին ետ է քաշվում դեպի Կերչի նեղուցը և դիվիզիան, հետապնդելով նրան, պատրաստվում է առաջ շարժվել ու կենտրոնանալ Գարբուզովո-Բալկայի շրջակայքում։ Ավանգարդում շարժվում էր 390-րդ գունդը, որը կանգ էր առնելու Ռուգաչ բնակավայրի մոտ, 400-րդ գունդը՝ Գարբուզովո-Բալկայի հարավ-արևմտյան ծայրամասում, 526-րդը՝ նույն բնակավայրի հյուսիս-արևելյան ծայրամասում։ Համապատասխան տեղեր էին նախատեսված նաև մյուս զորամասերի և ստորաբաժանումների համար։

---

29 Նույն տեղում, էջ 138։

Դիվիզիայի հրամանատարական կետը լինելու էր Նովո-Զևտեինսկայա վայրում[30]։

Դիվիզիայի հրամանատար Ա. Վասիլյանը շարժվում էր ավանգարդի՝ 390-րդ գնդի հետ։ Փետրվարի 8-ին, ժամը 23 անց 10 րոպեին նա նոր զեկուցագիր է գրում 58-րդ բանակի հրամանատարությանն այն մասին, որ դիվիզիայի զորամասերն արդեն հասել են նշանակված վայրը՝ Գարբուզովո-Բալկա և պատրաստ են կատարելու նոր մարտական խնդիր։ Յավոք պետք է նշել, որ դա հայ ժողովրդի պանծալի զավակ, գնդապետ Ա. Վասիլյանի վերջին զեկուցագիրն էր։

Փետրվարի 9-ին դիվիզիայի զորամասերն այդտեղից շարժվում են դեպի նոր բնագիծ՝ Նովո-Ջերիլովսկայա։ Նրանք պետք է շարժվեին երկու ճանապարհներով՝ 400-րդ և 526-րդ գնդերը՝ Վերխնիե Պոդի խուտորի միջով, իսկ 390-ը՝ այդ խուտորից աջ գնացող ճանապարհով։ Յուրաքանչյուր գնդին տրված էր 531-րդ հրետանային գնդի մեկ դիվիզիոն։ Այդ շարժման ժամանակ Վերխնիե Պոդիում և նրանից աջ գնացող ճանապարհին գնդերը հանդիպում են նահանջող թշնամու զորամասերին։ Իր հրանոթային, տանկային և գնդացրային կրակոցներով թշնամին խանգարում էր մեր զորամասերի շարժմանը։ Բռնկվում են ուժեղ մարտեր։

Հարվածելով հակառակորդին, 400-րդ գունդը մեծ վնասներ է հասցնում թշնամուն և նրան դուրս մղում Վերխնիե Պոդի խուտորից։ Դրանից հետո հակառակորդը վերադասավորում է ուժերը և գրոհում 400-րդ գնդի վրա։ Մեր ռազմիկները հերոսաբար դիմադրում էին, ուժգին հարվածներ հասցնում թշնամուն, նրան պատճառելով տեխնիկայի և մարդկային մեծ վնասներ։ 400-րդ գնդին օգնության է հասնում 526-րդ գունդը։ Թշնամին նորից դուրս է մղվում այդ բնակավայրից և պաշտպանական դիրքեր գրավում։

---

30 Боевой путь... էջ 141—142։

Մարտում այս գունդը ևս մեծ վնասներ է պատճառում թշնամուն, ետ մղելով նրա հարձակումը։

Փակված էր ֆաշիստների ճանապարհը դեպի Թամանյան թերակղզին։ Բայց նա չէր ուզում հաշտվել դրա հետ։ Նորից վերադասավորելով իր ուժերը, փետրվարի 9-ի լուսադեմին նա սկսում է հարձակումը՝ այս անգամ 390-րդ գնդի վրա, որը գտնվում էր Նովո-Ջերիլովսկայի մոտերքը և հանգստանում էր։ Ութ տանկով, գնդացիրներով և մեծ թվով զինվորներով նա հարձակվում է 390-րդ գնդի վրա։ Այդ գնդի հետ էր նաև դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ա. Վասիլյանը։ Հանկարծակիի եկած ռազմիկներին նա մարտի է տանում, ոգևորելով իր անձնական օրինակով։ Դրժվարին վիճակում նրանք բոլոր ուժերով դիմադրում էին թշնամուն։ Այդ մարտում Ա. Վասիլյանը հերոսաբար զոհվում է։ Գունդը տալիս է մարդկային մեծ կորուստներ։ Հերոսաբար զոհվում է նաև գնդի հրամանատար մայոր Գ. Խախանյանը։

Թշնամուն հաջողվում է դուրս գալ շրջապատումից և իր ջախջախված ուժերի մնացորդներով փախչել դեպի Թամանյան թերակղզի։

Վերխնիե Պոդի խուտորի և Նովո-Ջերլովսկայի մոտ տեղի ունեցած մարտերում իրենց խիզախությամբ աչքի են ընկնում շատերը։ Դրանց թվումն էին 526-րդ գնդի հրամանատար, մայոր Դ. Հակոբյանը, քաղաքական գծով նրա տեղակալ կապիտան Սարգսյանը, նույն գնդի 3-րդ դումարտակի հրամանատար կապիտան Գևորգյանը, քաղաքական գծով նրա տեղակալ լեյտենանտ Ղազարյանը, 2-րդ վաշտի հրամանատար լեյտենանտ Շահրազյանը, գնդացրային վաշտի դասակի հրամանատար լեյտենանտ Մամյանը, լեյտենանտ Մատուրյանը, 1-ին դումարտակի հրամանատար Մ. Խաչանյանը և ուրիշներ։

Թշնամու դեմ հերոսաբար էր պայքարում 400-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Ս. Բաղդասարյանը։ Վերխնիե Պոդիում մղված մարտում, երբ ծանր

կացութիւն էր ստեղծված գնդի համար, նա հասնում է մարտի դժվարին տեղը, զինվորներին գրոհի տանում և թշնամուն նա շպրտում: Այդ մարտում նա ծանր վիրավորվում է: Երբ գնդի կոմերիամիութեան քարտուղար լեյտենանտ Խ. Բարսեղյանը նրան դուրս էր բերում մարտի դաշտից, թշնամու երկրորդ գնդակով Ս. Բաղդասարյանը մահացու վիրավորվում է:

Այդ մարտում ցուցաբերած խիզախութեան համար 400-րդ գնդի կոմերիամիութեան քարտուղար լեյտենանտ Խիկար Բարսեղյանի պարգևատրման թերթիկում ասված է, որ նա գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Սուրեն Բաղդասարյանի հետ միասին առաջավոր գծում ակտիվ մասնակցութիւն է ցույց տվել մարտին: Իսկ երբ Բաղդասարյանը վիրավորվել է, Խ. Բարսեղյանն անմիջապես կազմակերպել է նրա դուրս բերումը կրակի գծից, բայց դեռ չհասցած, երկրորդ գնդակով Բաղդասարյանը զոհվում է: Թշնամու ուժեղ գնդացրային կրակի տակ Խ. Բարսեղյանը նրա դիակը դուրս է բերում կռվի դաշտից[31]: Զոհվածների թվում էր նաև դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ մայոր Ա. Կիրակոսյանը:

Այդ մարտում աչքի ընկածների թվումն էին դիվիզիայի կուսակցական հանձնաժողովի քարտուղար, կապիտան Հ. Դոնոյանը, ավագ լեյտենանտներ Արզումանյանը, Վորոնցովը, Մամյանը, մայորներ Կիրակոսյանը, Մարտոյանը, լեյտենանտ Գասպարյանն ու շատ ուրիշներ[32]:

Այսպիսով, ձմեռային դժվարին պայմաններում, հաղթահարելով թշնամու դիմադրութիւնը և օրական անցնելով 35—40 կիլոմետր, դիվիզիան, ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին, 58-րդ բանակի կազմում, փետրվարի առաջին տասնօրյակին արդեն հասել էր Ազովի ծովին: Մեկ ամիս 10 օրում Հյուսիսային Կովկասի տափաստաններով

---

31 Տես Боевой путь... էջ 150:

32 Նույն տեղում, էջ 144:

նա անցել էր մոտ 800 կիլոմետր տարածություն։ Մարդկային և նյութական մեծ վնասներ պատճառելով հակառակորդին, դիվիզիան մասնակցեց բազմաթիվ բնակավայրերի և տասնյակ հազարավոր խորհրդային քաղաքացիների ազատագրմանը։

Թշնամու դեմ մղած մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար դիվիզիայի անձնակազմից պարգևատրվեցին 176 ոազմիկ, որից 168-ը հայ, 8-ը ռուս։ Մարտական կարմիր դրոշով պարգևատրվել էին 2-ը, Կարմիր աստղի շքանշանով՝ 16-ը՝ Հայրենական պատերազմի շքանշանով՝ 3-ը, խիզախության համար մեդալով՝ 49-ը, մարտական ծառայության համար մեդալով՝ 85-ը։ Պարգևատրվածներից կոմունիստներ էին 68-ը, կոմերիտականներ՝ 66-ը, շարքայիններ՝ 69-ը, սերժանտներ՝ 61-ը, հրամանատարներ՝ 46-ը, քաղաշխատողներ՝ 5-ը[33]։

Փետրվարի կեսերին դիվիզիայի զորամասերը կենտրոնացել էին Նյակ քաղաքի շրջանում։ Պաշտպանական դիրքեր գրավելով Ազով ծովի ափին, նա միաժամանակ սկսեց պատրաստվել հետագա մարտերի համար։

1943 թ. փետրվարի 13-ին դիվիզիայի նոր հրամանատար է նշանակվում գնդապետ Նվեր Գևորգի Սաֆարյանը։ Այդ ժամանակ նա արդեն ուներ մարտերի հարուստ փորձ։ Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից եղել էր գործող բանակում։ Թշնամու դեմ կռվել էր որպես 218 հրաձգային դիվիզիայի 658 գնդի շտաբի պետ, ապա հրամանատար։ Այդ գունդը ակտիվ մասնակցություն էր ունեցել Դնեպրոպետրովսկ քաղաքի պաշտպանական մարտերին, հատկապես աչքի էր ընկել Վորոշիլովգրադ քաղաքի համար մղված մարտերում։ 1942 թ. հունիսին գնդապետ Հ. Սաֆարյանը նշանակվում է 59-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար։ Նրա ղեկավարած դիվիզիան ակտիվ մարտեր էր մղել Կովկասի պաշտպանության համար։

---

33 Боевой путь... էջ 167։

Եվ ահա, 89-րդ դիվիզիայի հրամանատարությունը վըստահվում է այդպիսի փորձված մարդուն, ռազմիկին։ Դա իրենց նշանակություն ունեցավ դիվիզիայի բախտի համար։

Դիվիզիայի բաղադմնի նոր պետ նշանակվեց փոխգնդապետ Գրիգոր Սարգսի Հակոբյանը։ Նշանակվեցին նաև առանձին գնդերի նոր հրամանատարներ։ 390-րդ գնդի հրամանատար նշանակվեց մայոր Ջհանգիր Բարայանը, 400-րդ գնդի հրամանատար գնդապետ Միխաել Օսիպենկոն, 531-րդ հրետանային գնդի հրամանատար մայոր Սուրեն Հակոբջանյանը։ Նոր հրամանատարներ նշանակվեցին նաև առանձին հատուկ դումարտակների համար։ Ամրապնդվեց ստորաբաժանումների հրամանատարական և կուսակցական քաղաքական աշխատողների կազմը։

Քանի որ անցած մարտերի ժամանակ դիվիզիան ունեցել էր զգալի մարդկային կորուստներ, այստեղ, Ազովի ծովի ափերին սկսվեց նրա անձնակազմի համալրումը։ Տարբեր զորամասերից մեծ թվով հայ ռազմիկներ էին գալիս 89-րդ դիվիզիա։ Գալիս էին նաև թիկունքից։

Դիվիզիայում սկսվեցին ծավալուն և լարված մարտական-քաղաքական ուսուցման աշխատանքները, անցած մարտերի և մյուս ռազմաճակատների մարտական փորձի ուսումնասիրությունը։ Պարապմունքները ընթանում էին օր ու գիշեր, քանի որ դիվիզիայի առջև խնդիր էր դրված կարճ ժամանակամիջոցում պատրաստվել նոր մարտերի։

Դրանում խոշոր դեր կատարեց հայ ժողովրդի պատմական նամակը ռազմաճակատում գտնվող իր զավակներին, որը 1943 թ.՝ փետրվարին 29-ին տպագրվեց «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերում, այնուհետև մամուլի մյուս օրգաններում և լայն տարածում գտավ ամբողջ ռազմաճակատում։

Այդ նամակը մի կրակոտ և մարտաշունչ կոչ էր մայր ժողովրդից ֆաշիստական հորդաների դեմ հերոսաբար պայքարող իր զավակներին։ Նրա տակ, ժողովրդի անունից ստո-

բագրել էին 'Հանրապետության 335.016 աշխատավորներ՝ բանվորներ, գյուղացիներ և մտավորականներ:

Անհուն սիրով լցված դեպի խորհրդային մեծ հայրենիքը, դեպի նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող և բարգավաճող Հայաստանը, հայ ժողովուրդը իր ռազմիկ զավակներին հիշեցնում էր նրանց վեհ և սրբազան պարտքը, վերհիշում ժողովրդի մարտական սովորույթները: Նա նորից ու նորից վերհիշում էր մեր սոցիալիստական հայրենիքի համար ստեղծված ծանր փորձությունը և իր ռազմիկներին կոչ էր անում հերոսական կարմիր բանակի շարքերում, խորհրդային եղբայրական ժողովուրդների զավակների հետ միասին, ավելի ու ավելի ուժգին հարվածել թշնամուն, կատարել նորանոր սխրանքներ: Առանց անհունորենատելու թշնամուն, հնարավոր չէ նրան հաղթել: Անողոքաբար ոչնչացրեք նրան: Վրեժ լուծեք: Օգնության ձեռք մեկնեք ֆաշիստների լծի տակ տառապող մեր եղբայրներին և քույրերին: Առանց հաղթանակի տուն չվերադառնաք: Այդ էր մայր ժողովրդի գըլխավոր պատվիրանը: Նամակում ասված էր.

«Մենք սպասում ենք այն երջանիկ օրվան, երբ դուք հաղթանակով հետ կդառնաք տուն և մեր չքնաղ, քաղցր մայր Հայաստանը իր ջերմ կրծքին կսեղմի Ձեզ՝ իր քաջ որդիներին:

Մենք՝ ձեր հայրերն ու մայրերը և ձեր սիրելիներն ու հարազատները, սպասում ենք այն երջանիկ օրվան, երբ դուք հաղթանակից հետո նորից ոտք կդնեք ձեր հայրական օջախը, որպեսզի ձեր հպարտ ճակատին դրոշմենք մեր ջերմագին համբույրը:

Իսկ մինչ այդ, քանի գերմանա-ֆաշիստական թեկուզ մեկ զավթիչ դեռ գտնվում է մեր հայրենի հողի վրա՝ ռազմադաշտը լքող ամեն մի հայ մարտիկի առաջ փակ են մեր դռները: Նրանց իր հարկի տակ չի ընդունի անգամ հարա-

պատ մայրը: Հայոց հողը տեղ չի տա ոչ մի վախկոտի ու դասալքի»[34]:

Հայ ժողովրդի այդ պատմական նամակը խոշոր դեր ուներ կատարելու և իրոք կատարեց մեր ռազմիկների մարտական ոգին բարձրացնելու և նրանց նորանոր քաջագործություններ մղելու համար:

Անցնելով առաջ, ասենք, որ հետագա մարտերի ընթացքում — Կուրանում, Ղրիմում և առաջին Բելոռուսական ռազմաճակատում,— մեր հետազոտություններով պարզեցինք, որ հայ ռազմիկներից շատերը, ինչպես մեր, նույնպես և մյուս ռազմաճակատային թերթերից, հայ ժողովրդի նամակը կարել և պահում էին իրենց ամենակարևոր փաստաթղթերի՝ կուսակցական, կոմերիտական տոմսերի կամ զինվորական անձնական վկայականի հետ: Այդ նշանակում էր, որ նրանք հաճախ էին կարդում ու միշտ վերհիշում մայր ժողովրդի պատվիրանները և ազնվորեն պայքարում նրանց կատարման համար: Այդ նամակը գտնվեց նաև 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի, Թամանում, Կերչում և Սևաստոպոլում զոհված մի շարք ռազմիկների փաստաթղթերի մեջ: Նրանց մի մասը արյունոտված էր:

Նամակի մասսայականացումը մեծ չափով բարձրացրեց անձնակազմի մարտական ոգին: Յուրաքանչյուրը ձգտում էր ինչ գնով էլ լինի, պատվով կատարել մայր ժողովրդի սրբազան առաջադրանքը և միայն հաղթանակով տուն վերադառնալ: Այդ օրերին 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայում լայն տարածում գտավ հետևյալ թևավոր դարձվածքը՝ «Տուն վերադարձի ամենակարճ ճանապարհը Բեռլինի վրայով է»: Իհարկե, դա աներևակայելի դժվարին ճանապարհ էր: Կարմիր բանակի մյուս զորամասերի հետ միասին, դիվիզիան նրա յուրաքանչյուր մետրը պետք է անց-

---

34 «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին», Հայպետհրատ, Երևան, 1943, էջ 17—18:

ներ ծանր մարտերով, որոնք չէին կարող առանց զոհերի լինել։

Բայց հայ ժողովրդի դյուցազունները ընտրել էին միայն և միայն այդ ճանապարհը։ Այդ էր պահանջում հայրենիքը, այդ էր պահանջում ժողովուրդը։

Ի պատասխան հայ ժողովրդի նամակի, գնդապետ Ն. Գ. Սաֆարյանի դիվիզիայի ռազմիկները ընդունեցին իրենց պատասխան-երդումը, ուր ասված էր.

«Մենք երդվում ենք մեր պատվով, մեր զոհված ընկերների արյամբ, բարբարոս ֆաշիստների կողմից անարդված ու խոշտանգված մայրերի, քույրերի, մանուկների արցունքով ու արյամբ, որ վրիժառու կլինենք դահիճ հիտլերականների նկատմամբ։ Մենք մեր երդումը միացնում ենք մեր շարքերում կռվող երիտասարդ բանաստեղծ Արշալույս Սարոյանի տողերին։

Վրեժի արյուն թափել թշնամուց.
Երկուսի տեղ տաս, տասի տեղ հարյուր,
Մարտերում ահեղ մահու և կենաց
Ու չխնայել ոչ կյանք, ոչ արյուն։

Թե չկատարեմ երդումս պատվով,
Թող փակվեն իմ դեմ դռներն հայրենի,
Թող հողը ճեղքվի բացած երախով
Դժոխքը հոգուս կուլ տա կենդանի։

Մեր աղբյուրների ջուրը հավերժաբուխ
Ու մորս կաթը՝ հյուվեն արյունի՝
Թե չկատարեմ երդումս փառքով
Երակներումս թող փոխվեն թույնի։

Այո, հայրենիք մենք կվերադառնանք մեր երդումը կատարելով, հաղթանակն ապահովելով։

...Մահ գերմանական զավթիչներին»[35]։

Այսպիսին էր 89-րդ դիվիզիայի ռազմիկների պատասխանը մայր ժողովրդին։

«Պրավդա» թերթը հատուկ առաջնորդող հոդված նվիրեց հայ ժողովրդի այդ նամակին, բարձր գնահատելով այն մեծ ուշադրությունը, որ ժողովուրդը ցույց էր տալիս իր ռազմիկների նկատմամբ, ռազմաճակատում մեր բանակի հաջողությունների կարևորության նկատմամբ։ Այն գնահատվում էր որպես թիկունքի և ռազմաճակատի ամուր կապի ձևերից մեկը։

Հյուսիսային Կովկասում կարմիր բանակի հարձակողական մարտերի ժամանակ, 1943 թ. փետրվար-մարտին, ավելի քան մեկ ամիս, հայ գրողների պատվիրակությունը գրանվում էր 89-րդ դիվիզիայում։ Նրա կազմում էին պոետներ Նաիրի Զարյանը (ղեկավար), Ազատ Վշտունին, Սողոմոն Տարոնցին, գրականագետներ Գևորգ Աբովը և Տիգրան Հախումյանը։ Մեր գրողները բանակայիններին, հրամանատարների ու քաղաշխատողների հետ ունեցան մի շարք ջերմ հանդիպումներ։ Այդ հանդիպումների ժամանակ նրանք պատմում էին այն մասին, թե ինչպես են ապրում և ռազմաճակատին օգնում թիկունքի աշխատավորները, ամբողջ հայ ժողովուրդը։ Մարտիկների առջև կարդացում իրենց ստեղծագործություններ, նրանք մեր ռազմիկներին ողևորում էին նորանոր հաղթանակների։ Այդ պատվիրակության անդամները դրեցին մի շարք հոդվածներ դիվիզիայի առանձին ռազմիկների և ստորաբաժանումների քաջագործությունների մասին, որոնք տպագրվեցին ինչպես դիվիզիայի «Կարմիր զինվոր», նույնպես և ռազմաճակատի «Առաջ հանուն հայրենիքի» հայկական թերթում։

Ն. Զարյանի թղթակցություններից մեկը վերնագրված էր «Ոչնչացրեց 42 ֆաշիստ», ուր պատմում էր դիվիզիայի

---

35 «Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին», Նյութերի ժողովածու, Հայպետհրատ, Երևան, 1944, էջ 24—26։

ազմիկ, Իջևանի Ծաղկավան գյուղի բնակիչ Ապրես Վարդանյանի քաջագործությունների մասին[36], իսկ մյուսը՝ «Հոգուտ մեռնեմ...», ուր պատմում էր հայկական զորամասում ծառայող վրաց ժողովրդի զավակ, վիրաբույժ Ռաժդին Մախաշվիլիու հայրենանվեր գործերի մասին։

Քանի որ այն գրված էր շատ սեղմ և Ն. Զարյանին հատուկ գեղեցիկ ոճով, հարկ եմ համարում մեջ բերել փոքր կրճատումներով։

«—Հոգուդ մեռնեմ ...

Այս խոսքերով է դիմում բոլորին, թեկուզ ամենազայրացած ժամանակ, սանիտարական ստորաբաժանման վիրաբույժ Ռաժդին Մախաշվիլին։

Մոտ 35 տարեկան, խոշոր ու փայլուն աչքերով արծվաքիթ մի վրացի է մեր վիրաբույժը։ Սկզբում, երբ նոր էր նշանակված, մի քիչ խորթ էր զգում իրեն, ցանկանում էր դնալ վրացական մի որևէ զորամաս։ Բայց շուտով զգաց, որ հայկական զորամասում ինքը շրջապատված է ընդհանուր սիրով ու հարգանքով։

Սիրում են անխոնջ ու ժպտադեմ վիրաբույժին ստորաբաժանման բոլոր մարտիկներն ու քույրերը, մանավանդ վիրավորները ...

— Դե մի հուսահատվիր, հոգուդ մեռնեմ ... ես քեզ կլավացնեմ,— սրտապնդում է նա ծանր վիրավորներին։ Իսկ վիրահատությունը հաջող կատարելուց հետո նա մի վայրկյան ազատ շունչ է քաշում, փշում է իր աջ ձեռքի մատները, համբուրում է ու բացականչում.

— Սրանք մատներ չեն, այլ ոսկի են...

Մախաշվիլու այդ կատակի մեջ կա խորունկ և անկեղծ ինքնահիացում։ Նա գոհ է ինքն իրենից, իր մատներից՝ վիրահատության հաջողության համար։ Չէ որ նա կյանքեր է փրկում, երիտասարդ և ապագայի հույսերով լեցուն կյանքեր...

---

36 «Առաջ հանուն հայրենիքի», 1943, մարտի 9։

Զորամասի մարտիկները բնավ չեն մոռանա իրենց անձնուրաց և արագաշարժ վիրաբույժին, որ իր մարտական համագործակցությամբ երկու ժողովուրդների դարավոր եղբայրության մարմնացումն է հանդիսանում»[37]:

Երրորդ հոդվածը Ն. Զարյանը նվիրել էր դիվիզիայի 400-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Սուրեն Բաղդասարյանին, որը ինչպես տեսանք հերոսաբար զոհվել էր Ջերիլովկա բնակավայրի մոտ թշնամու դեմ մղած մարտում:

Բացի այդ հոդվածներից, Ն. Զարյանը գրեց «Ողջերը դրած ճանապարհին» բանաստեղծությունը, որը հայրենասիրական մի մարտական կոչ էր ուղղված նենգ թշնամու դեմ հերոսաբար մարտնչող մեր ռազմիկներին:

Ս. Տարոնցին ռազմաճակատային թերթին գրեց երեք թղթակցություն: Ընդանցից մեկում, որը վերնագրված էր «Քույր Վարդուշը» պատմում էր զինվորական բժիշկ Լ. Ներսիսյանի սաորաբաժանման սանիտարական քույր Վարդուշի բարեխիղճ ծառայության, վիրավոր մարտիկների նկատմամբ նրա ցուցաբերած հոգատարության մասին[38]: Մյուս թղթակցությունը վերնագրված էր «Անվեհեր ականաձիգը»: Այն նվիրված էր Դյուզքանդ (այժմ Ախուրյան) գյուղի բնակիչ, 89-րդ հայկական դիվիզիայի զորամասերից մեկի ականաձիգ Վալոդյա Ծատուրյանի մարտական գործերին:

Ս. Տարոնցու երրորդ թղթակցությունը պատմում էր դասակի հրամանատար, լեյտենանտ Դարեգին Մամյանի ու նրա դասակի մարտիկների քաջագործությունների մասին մեր զորքերի հարձակման ժամանակ[39]:

Այսպիսով, ռազմաճակատ եկած մեր գրողները ոչ միայն բազմաթիվ մտերմական զրույցներ էին ունենում ռազմիկների հետ, պատմում թիկունքի աշխատավորների հայրենա-

---

37 Նույն տեղում:

38 «Առաջ հանուն հայրենիքի», 1943 թ. մարտի 9:

39 Նույն տեղում, 1943 թ. մարտի 21:

նվեր աշխատանքի մասին, նաև իրենց բանաստեղծություններով ոգևորում էին նրանց, կատարում զինվորական թշնամակի դեր։

Հյուսիսային Կովկասում հարձակման ժամանակ, 1943 թ. հունվար-փետրվարին, մեր զորքերը, ինչպես նշեցինք, անցան 800 կիլոմետր տարածություն։ Կոտրելով հակառակորդի կատաղի դիմադրությունը, նրանք հաղթականորեն առաջ էին շարժվում և ազատագրեցին ֆաշիստների օկուպացրած ամբողջ տարածությունը Կովկասում։ Նրանք ոչնչացրին մոտ 275 հազար ֆաշիստական զինվոր ու սպա, վերցրին ավելի քան 6000 գերի, ոչնչացրին 890 տանկ, 2000 ինքնաթիռ, 3500 հրանոթ և ականանետ, ռազմական շատ ուրիշ տեխնիկա։

Հարկ է նշել, որ մեր զորքերի այդ հաջողություններն իրագործվեցին այն ժամանակ, երբ Ստալինգրադում ձեռք բերված պատմական հաղթանակով արմատական բեկում էր կատարվել Հայրենական մեծ պատերազմում, երբ ամբողջ նախաձեռնությունն անցել էր Կարմիր բանակի ձեռքը։

Կովկասում ֆաշիստական զորքերի ջախջախման գործում մեծ դեր խաղացին վրացական, ադրբեջանական և հայկական ազգային դիվիզիաները, որոնց թիվը հասնում էր 11-ի։ Դրանցից 3-ը հայկական էին, 4-ը վրացական և 4-ը՝ ադրբեջանական։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինը «Ճակատամարտ Կովկասի համար» հոդվածում դեռևս 1942 թվականի հոկտեմբերի 31-ին «Զարյա Վոստոկա» թերթում գրել էր. «Կարմիր բանակի մարտակարգերում գտնվող վրացական, ադրբեջանական և հայկական զորամասերը դաժան հարվածներ են հասցնում ֆաշիստական զորքերին»։ Թշնամու դեմ ազգային զորամասերի հերոսական պայքարին բարձր գնահատական է տվել այն ժամանակ Կովկասի պաշտպանության դեկավարներից մեկը՝ հետագայում Խորհրդային Միության մարշալ, պաշտպանության մինիստր Ա. Ա. Գրեչկոն։

Ջեռնամուխ լինելով Կովկասը գրավելու «էդելվեյս» պլանի կատարմանը, ֆաշիստական զեկավարները հույս ունեին հեշտությամբ հասնել հաղթանակի։ Սակայն ինչպես շատ հարցերում, այստեղ ևս նրանք խորապես սխալվեցին։ Խորհրդային Միության մյուս ժողովուրդների հետ միասին, Կովկասի ժողովուրդները, ոուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, կուռ շարքերով կանգնեցին նենգ թշնամու դեմ և ջախջախեցին նրա ուժերը։ Կարևոր դեր կատարեցին, Խորհրդային Վրաստանի, Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի թիկունքի աշխատավորները։

Մեծ է Կովկասում մեր զորքերի տարած հաղթանակի նշանակությունը։

Այդ հաղթանակով Կարմիր բանակը փակեց թշնամու ճանապարհը դեպի հարավ-արևելյան և կենտրոնական Ասիա, դեպի Մերձավոր Արևելք, դրանով իսկ օգնեց աշխարհի այդ մասի ժողովուրդներին՝ իրենց ազատագրական պայքարում։ Այդ հաղթանակը հանդիսացավ Խորհրդային ժողովուրդների բարեկամության, ինտերնացիոնալիզմի և հայրենասիրության փայլուն արդյունքը։ Կովկասում ֆաշիստական զորքերի ջախջախումից հետո Կարմիր բանակի մեծ թվով զորքեր փոխադրվեցին այլ ռազմաճակատներ։ Կովկասում ստանալով ուժեղ հարվածներ, ֆաշիստները չկարողացան այստեղից զորքեր փոխադրել Ստալինգրադի ճակատ՝ ծանր վիճակում գտնվող իրենց զորքերին օգնելու համար։ Կարմիր բանակի հաղթանակները Ստալինգրադում և Կովկասում արգելակեցին Թուրքիայի և Ճապոնիայի նենգ նպատակների իրագործումը մեր երկրի վրա հարձակվելու համար։

Կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային կառավարությունը բարձր են գնահատել մեր զորքերի հերոսական գործերը Հյուսիսային Կովկասի համար մղած մարտերում։ Բազմաթիվ ռազմիկներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման, տասնյակ հազարավորներ պարգևատրվել են կառավարական շքանշաններով և մե-

դալներով։ Թիկունքի տասնյակ հազարավոր աշխատավորներ արժանացել են «Կովկասի պաշտպանության համար» մեդալի։

Հյուսիսային Կովկասում գործող հերոսական Կարմիր բանակի զորամասերը՝ պանծալի հեծյալները, տանկիստները, հետևակայինները, սակրավորները և խորհրդային հզոր զենքի բոլոր տեսակները կրողները, հետ շպրտելով ֆաշիստական հրոսակախմբերին, ոչնչացնելով նրանց ուժն ու տեխնիկան, արբնթաց առաջ էին շարժվում դեպի արևմուտք, ազատագրելով մեր հարազատ քաղաքներն ու մյուս բնակավայրերը, ֆաշիստական գերության մեջ տառապող խորհրդային մարդկանց։

Ամբողջ խորհրդային ժողովրդի հետ միասին Հյուսիսային Կովկասի ժողովուրդները ցնծության օրեր էին ապրում։ Ազատագրված գյուղերի և քաղաքների, ստանիցաների ու աուլների բնակիչներն իրենց ազատարարներին, Կարմիր բանակի ռազմիկներին դիմավորում էին անսահման ոգևորությամբ, բերկրանքի և ուրախության արցունքներն աչքերին։ Այդ մեծ ուրախությանը մասնակցում էին նաև ազատագրված բնակավայրերի հայ աշխատավորները։ Նրանցից շատերը ընդհատակյա աշխատանք էին կատարում ֆաշիզմի դեմ։

Ազատագրված քաղաքներն ու գյուղերը տոնական տեսք էին ընդունել։ Մարդիկ դուրս գալով ներքնահարկերից ու թաքստոցներից, աշխուժացնում էին օկուպացիայի ժամանակ ամայացած փողոցները։ Նրանք խնդալից բացականչություններով ողջունում էին Կարմիր բանակի քաջարի ռազմիկներին, ողջագուրվում նրանց հետ։ Նրանք իրենց աչքերով տեսել և զգացել էին ֆաշիստական վանդալների բարբարոսությունները։ Նրանց մեջ լեռնացել էր ատելությունը դեպի այդ արյունախում երկոտանիները։ Ահա թե ինչու ազատագրված մեր քաղաքացիներից յուրաքանչյուրը իր ծառայությունն էր առաջարկում Կարմիր բանակին՝ անիծյալ ֆաշիզմի դեմ վերջնական հաղթանակը կոփելու համար։

Ամենուրեք աչքի էին ընկնում ֆաշիստների բարբարոսությունների հետքերը։ Իրենց նահանջի ճանապարհին նրբանք ավերել, ոչնչացրել էին այն ամենը, ինչ ստեղծված էր խորհրդային մարդու աշխատանքի շնորհիվ։ Ֆաշիստները անողոքաբար մորթոտել ու կոտորել էին բազմաթիվ խորհրդային քաղաքացիների։ Խորհրդային իշխանության տարիներին ստեղծված Մալգոբեկ քաղաքը ֆաշիստները վեր էին ածել ավերակների։ Նրանք հրդեհել էին «Մալգոբեկնեվթի» վարչության նորակառույց գեղեցիկ շենքը, քաղաքի կուլտուրայի պալատը, հյուրանոցը, դպրոցները։ Բազմաթիվ այլ շենքեր վեր էին ածվել փլատակների։ Ամբողջովին ավերված էր Պրոխլոդնի քաղաքը։ Նույնպիսի վիճակումն էին նաև մյուս քաղաքներն ու բնակավայրերը, որոնք բռնակչության մի զգալի մասը ֆաշիստները քշել տարել էին գերության։

Հարձակվող Կարմիր բանակի զորամասերը Սովետսկոյե գյուղի մոտ հայտնաբերել էին երեք մեծ փոսեր, որոնք լցված էին ֆաշիստների կողմից խոշտանգված և սպանված խորհրդային քաղաքացիների՝ կանանց, երեխաների, ծերունիների և գերի կարմիր բանակայինների դիակներով։ Միայն Պյատիգորսկ քաղաքում օկուպացիայի ժամանակ ֆաշիստները սպանել էին ավելի քան 5000 խորհրդային քաղաքացու։ Քաղաքը գրավելու առաջին իսկ օրերին ֆաշիստները հավաքել ու քաղաքից դուրս էին տարել բոլոր հրեաներին։ Նրանց մի մասին գնդակահարել էին քաղաքի ծայրամասում, իսկ մնացածներին տարել և խոշտանգել էին ուրիշ տեղերում։ Ֆաշիստական ճիվաղները սպանել էին բժիշկ Ֆրանկին, նրա կնոջն ու 4 երեխաներին, գնդակահարել և ոչնչացրել էին բազմաթիվ ընտանիքների։

Իրենց փախուստի օրերին ֆաշիստները Պյատիգորսկում ոչնչացրել էին կուլտուրայի բոլոր օջախները, սանատորիաները և կարևոր շենքերը։

Ազատագրված մեր քաղաքներում ու մյուս բնակավայրերում իր հունի մեջ էր մտնում նորմալ կյանքը։ Ամենու-

րեք ծավալուն աշխատանք էր սկսված քայքայված տնտեսությունը կարգի բերելու համար: Մարդիկ աշխատում էին օր ու գիշեր և հոգնածություն չէին զգում: Նրանք լիովին համոզված էին, որ շուտով կարմիր դրոշները կծածանվեն նաև դեռևս ֆաշիզմի լծի տակ հեծող մեր մյուս քաղաքների ու գյուղերի վրա, որ արյունարբու ֆաշիզմը գլխովին կջախջախվի:

Անդրկովկասյան ռազմաճակատի «Առաջ հանուն հայրենիքի» հայկական թերթը Հյուսիսային Կովկասի հարձակողական մարտերի ընթացքում մի քանի անգամ հատուկ էջեր է հատկացրել ֆաշիստների բարբարոսությունների մերկացմանը, կոչ անելով մեր ռազմիկներին թշնամուց վրեժ լուծելու: Թերթը լայնորեն տարածվում էր նաև 89-րդ դիվիզիայի ռազմիկների մեջ: Թերթի 1943 թ. մարտի համարներից մեկում զետեղված են մի շարք փաստաթղթեր և լուսանկարներ Կրասնոդարի մարզում ֆաշիստների գազանությունների վերաբերյալ: Այնտեղ ասված է. «Կրասնոդարի տակ, Պրոլետարական պուրակի հետևում, հակատանկային փոսերում գերմանական գազանները թաղել են իրենց կողմից տանջամահ արված ու խոշտանգված Կարմիրբանակայիններին ու անպաշտպան խաղաղ բնակիչներին, ծերունիներին, կանանց ու երեխաներին: Այստեղ արդեն գտնվել են հազարավոր դիակներ: Այդ նրանք են, ովքեր չեն հասկացել ֆաշիստական Գերմանիա սարկական աշխատանքի գնալ, ում նկատմամբ հիտլերյան բանդիտները կասկածել են պարտիզաններին օգնություն ցույց տալու խնդրում: Կարմիր բանակի նկատմամբ համակրանք ունենալու խնդրում, դեպի խորհրդային հայրենիքն ունեցած սիրո մեջ ....

Եվ այդ միայն Կրասնոդարում:

Իսկ ի՞նչ են կատարել գերմանական մարդասպանները Կուբանի ծաղկող ստանիցաներում»[40]:

---

40 «Առաջ հանուն հայրենիքի», 1943, մարտի 14:

Այնուհետև թերթում տպագրված են մի շարք արձանագրություններ ֆաշիստների գազանությունների մասին։ Նրանցից մեկում ասված է. որ Նովո-Ալեքսեեվսկայա գյուղում ֆաշիստները գազանաբար հոշոտել են գերի ընկած 15 կարմիրբանակայինի, կտրել են նրանց քթերը, ականջները, սեռական օրգանները, ծեծել են խզակոթով և ապա սվինահարել, որ Բելոռեչինսկայա կայարանի մոտ հայտնաբերված է ֆաշիստների կողմից տանջված ու գնդակահարված 50 մարդու դիակ, որից 13-ը երեխայի, որ Վեսելկովյան շրջանի Բերեզինսկի բնակավայրի հիվանդանոցում փակ ավտոմեքենայի մեջ թունավոր գազերով ֆաշիստները խեղդամահ են արել 460 մարդու և այլն։

Բազմաթիվ էին ֆաշիստների բարբարոսությունների փաստերը։ Այդ բոլորին ռազմիկներին ծանոթացնում էին հրամանատարները և կուսակցական-քաղաքական աշխատողները, նրանց մեջ բորբոքելով ատելություն թշնամու նկատմամբ։

Այդ ժամանակ Կրասնոդարից արևմուտք և Նովոռոսիյսկի մոտ համառ կռիվներ էին գնում Թամանի թերակղզին ազատագրելու համար։ Այստեղ թշնամին ստեղծել էր իր պաշտպանության կապույտ գիծը և մեծ քանակությամբ զորքեր կենտրոնացնելով, բոլոր ուժերով ձգտում էր այն պահել իր ձեռքում՝ որպես հուսալի հենակետ Կովկասում հետագա հարձակումների համար։

1943 թ. ապրիլ-հուլիսին Կուբանում տեղի ունեցան ուժեղ ճակատամարտեր, մասնավորապես օդային։ Մեր զորքերի մարտակարգերը, նրա թիկունքային հաղորդակցության հանգույցներն ու բնակավայրերը ռմբակոծելու նպատակով համարյա ամեն օր թշնամու սավառնակները մեծ խմբերով բարձրանում էին օդ, որոնց դիմավորում էին մեր սավառնակները և զենիթային կրակը։ Թշնամուն հազվագյուտ էր հաջողվում ճեղքել մեր օդային պաշտպանության պատնեշը։ Իսկ դրա փոխարեն մեր սավառնակները հաճախ էին ռմբակոծում թշնամու թիկունքային կարևոր կետերը։ Գնա-

ցով զգացվում էր մեր օդային ուժերի առավելությունը։ Այն ավելի ու ավելի էր ոգևորում ռազմիկներին։ Այդ օրերին այստեղ էին գործում խորհրդային հռչակված օդաչուներ Պոկրիշկինը և Գլինկա եղբայրները, որոնք սարսափ էին պատճառում թշնամուն և մեծ վնասներ հասցնում նրան։

1943 թ. հուլիսի սկզբներին ուժեղ մարտեր սկսվեցին Հայրենական պատերազմի ռազմաճակատներից մեկի՝ Կուրսկ-Օրյոլ-Բելգորոդ ազեղում։ Ֆաշիստական զորքերը նպատակ էին դրել շրջապատել և ոչնչացնել այնտեղ գտնվող մեր զորքերի մեծ խմբավորումը։

Հուլիսի 12-ից խորհրդային ինֆորմբյուրոն սկսեց օրըստօրե հաղորդել գերմանական զորքերի հարձակման կասեցման և Կարմիր բանակի հուժկու հակահարձակման ծավալման, Կուրսկի, Օրյոլի, Բելգորոդի և մի շարք այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման, գերմանական զորքերին հասցրած մարդկային ու տեխնիկայի մեծ վնասների մասին։

Ինչպես այս, նույնպես և մյուս ռազմաճակատներում մեր զորքերի ձեռք բերած հաջողությունները մեծ չափով օգնում էին դիվիզիայի ռազմիկների մարտական կորովի բարձրացմանը։ Նրանք ամեն ինչ անում էին որքան կարելի է շուտ պատրաստ լինելու ռազմաճակատի առաջավոր գիծ մեկնելու համար։

Հաջողությամբ իրագործվում էր մեկ կողմից Ազով ծովի ափերի պաշտպանությունը, մյուս կողմից մարտական-քաղաքական ուսուցումը, անցած մարտերի փորձի ուսումնասիրումը։

Հունիս ամսին 58-րդ բանակի ռազմական խորհրդի հրամանով անց է կացվում 89-րդ դիվիզիայի 390-րդ և 526-րդ հրաձգային գնդերի տեսչական ստուգում, որը կատարվեց գեներալ-լեյտենանտ Պետրովի ղեկավարած հատուկ հանձնաժողովի կողմից։ Ստուգումը ցույց տվեց, որ այդ գնդերը, նրանց ստորաբաժանումները հաջողությամբ են

կատարում մարտական առաջադրանքները։ Առաջադրված մարտական խնդիրները գերազանց կատարելու համար 390-րդ գնդի ամբողջ անձնակազմը արժանանում է շնորհակալության[41]։

Տեսչական ստուգման արդյունքները քննարկվում են զորամասերի կուսակցական և կոմերիտական ժողովներում, որոնք կոնկրետ միջոցառումներ են մշակում հրամանատարությանը ցույց տրվող օգնությունն ավելի ուժեղացնելու, նոր հաջողությունների հասցնելու համար։

1943 թ. օգոստոսի վերջերին 89-րդ դիվիզիան, նրա բոլոր զորամասերն արդեն լրիվ պատրաստ էին մարտական գործողություններին։ Այդ էին ապացուցում կատարված տեսչական ստուգումները։ Մանավանդ, որ նրա ամբողջ անձնակազմը բուռն ցանկություն էր ցուցաբերում մեկնելու առաջավոր գիծ, մարտի բռնվելու առելի շշնամու հետ, մասնակցելու նրա ջախջախմանը։

Օգոստոսի 24-ին դիվիզիայի զորամասերը Ազովի ափից սկսում են շարժվել դեպի Ստարո-Շչերբինսկայա կայարանը։ Նրանք այստեղ նստում են գինվորական գնացքները և մեկնում դեպի արևմուտք, միանալու 18-րդ բանակին, որի հրամանատարն էր հեղբայրական վրաց ժողովրդի պանծալի զավակ, գեներալ-լեյտենանտ Կ. Ն. Լեսելիձեն։

1943 թ. սեպտեմբերին Թամանի թերակղզում իրենց հարձակումն սկսեցին նաև Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը։ Այդ թվականի գարնանը և ամռանը շշնամին կատաղաբար դիմադրում էր մեր զորքերի հարձակմանը Կուբանի ստորին հոսանքում և Նովորոսիյսկի մոտ։ Այստեղ նա կենտրոնացրել էր մեծ քանակությամբ զորք և տեխնիկա։ Իր ձեռքում պահելով Թամանի թերակղզին, հակառակորդը նպատակ ուներ այն դարձնել հետագա հարձակման հասատատուն հենակետ, օգտագործել ծովային հաղորդակցության ուղիները, ամրապնդել մեր ռազմական նավա-

41 Боевой путь... էջ 163։

տորմի գործողությունները Սև ծովի շրջանում։ Թամանում գտնվող ֆաշիստական զորքերը, Կերչի Նեղուցի միջոցով, շարունակում էին ամուր կապ հաստատել Ղրիմում գտնվող իրենց թիկունքային ուժերի հետ և պարբերաբար այնտեղից ստանում էին անհրաժեշտ օգնություն։

Ֆաշիստական զորքերը Թամանում կառուցել էին պաշտպանության ամուր գիծ, որը կոչվում էր Կապույտ գիծ։ Նրա շինարարությունն սկսված էր դեռևս 1943 թ. սկզբից, երբ Կարմիր բանակը իր հարձակումն սկսեց Դրոզնու և ապա՝ Տուապսեի շրջաններից։ Այդ գիծը սկսվում էր Կուբան գետի ստորին հոսանքի շրջաններից, Ազովի ծովի ափերից և լճակների ու ճահիճների միջով անցնում դեպի հարավ՝ Կրիմսկի ու Նեբերջաևսկայա բնակավայրերի մոտով, Կովկասյան լեռների արևմտյան լանջերով հասնում մինչև Նովորոսիյսկի մոտերքը, այսինքն Ազովի ծովից մինչև Սև ծովը։ Ընդամենը պաշտպանական այդ գիծը կազմված էր մի քանի շերտից, ուր տեղակայված էին կրակային ուժեղ հանգույցներ։ Այն կառուցված էր ինժեներական վերջին խոսքին համապատասխան։ Կապույտ գիծը ֆաշիստները համարում էին անառիկ։

Խոսելով Կապույտ գծի մասին, Խորհրդային Միության մարշալ Ս. Ա. Գրեչկոն գրել է. «...Կառուցվել էին մի շարք պաշտպանական գծեր, որոնց միջև ընկած տարածությունը կազմում էր 5—25 կմ։ Հիմնական պաշտպանական շերտը, անմիջականորեն Կապույտ գիծը, ուներ մինչև 6 կմ խորություն, բայց դրանից անմիջապես հետո՝ 30—40 կմ խորությամբ ձգված էին պաշտպանական լավ գծեր։

...Պաշտպանության հանգույցները և հենակետերը պատրաստվել էին շրջանաձև պաշտպանության համար և ունեին համատարած խրամատների երկու—երեք գիծ։ Խրամատի առաջին գծից 20—60 մետր հեռավորության վրա կային փայտից-հողից կամ երկաթից ու բետոնից կրակային կառույցներ։ Նրանք դասավորված էին գլխավորապես բարձունքների վրա կամ բնակավայրերի ծայրամասերում, մե-

կը մյուսից 50—70 մետր հեռավորության վրա և նպատակադրված էին առաջավոր գծի թևերի ու փշալարերի ցանցի մատույցների պաշտպանության համար»[42]։

Վտանգ զգալով մեր զորքերի դեսանտային նոր գործողություններից, թշնամին միաժամանակ ամրացրել էր Սև ծովի ափերը, մասնավորապես Նովոռոսիյսկից Անապա ընկած հատվածում։

Կապույտ գիծը պաշտպանում էր ֆաշիստական 17-րդ բանակը, որի կազմում կար 17 հետևակային դիվիզիա, 4 առանձին գնդեր և 7 առանձին ջոկատներ[43]։ Նախքան հարձակումը, մեր զորքերի կողմից կատարված էր մանրազնին հետախուզություն, հիմնականում պարզված թշնամու ուժերի դասավորությունը։ Հետախուզությունը միաժամանակ նրկատել էր, որ ֆաշիստական զորքերը տեղ-տեղ հետ քաշվելու նշաններ են ցույց տալիս։

3. ԹԱՄԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂՋՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

1943 թ. սեպտեմբերի 2-ին դիվիզիայի զորամասերն արդեն մարտական դիրքեր էին գրավել Նովորոսիյսկից հյուսիս-արևելք ընկած շրջանում։ Նրանց մարտական առաջադրանք էր տրված 18-րդ բանակի կազմում հարձակողական գործողությունները ծավալել Դոլգայա լեռան և Սախարնայա Գոլովկա բարձունքի ուղղությամբ, գրավել դրանք և դուրս գալ Նեբերջաևսկի լեռնանցքը։

Մինչև հարձակողական գործողություններն սկսելը, անհրաժեշտ էր հետախուզության միջոցով տվյալներ ձեռք բերել դիվիզիայի առջև կանգնած թշնամական զորքերի մասին։ Նրա հրամանատար գնդապետ Նվեր Սաֆարյանի հրամանով քաջարի հետախույզները սկսում են իրենց գործը։ Շուտով պարզվում է, որ 89-րդ դիվիզիայի դեմ կանգ-

---

42 А. А. Гречко, Битва за Кавказ, էջ 396—397։

43 Նույն տեղում, էջ 403։

նած են գերմանական 73-րդ հետևակային և ռումինական լեռնա-հրաձգային դիվիզիաները, որոնք մեր առաջավոր դիծը մշտապես պահում էին ուժեղ կրակի տակ։ Դիվիզիայի զորամասերը, մասնավորապես հրետանավորները և ականաձիգները, իրենց ուժեղ կրակով ճնշում էին թշնամու ակտիվությունը, լռեցնում նրա շատ կրակակետերը։

Դրանք դիվիզիայի առաջին մարտերն էին Նովոռոսիյսկ քաղաքի և Թաման թերակղզու ազատագրման համար։

Թշնամու առաջավոր դիծը պատած էր փշալարերով և ականներով։ Դա մեծ չափով խանգարում էր մեր գրոհող ստորաբաժանումներին։ Սեպտեմբերի 6-ի մարտի ժամանակ 526-րդ գնդի 5-րդ վաշտի դասականներից մեկի հրամանատար լեյտենանտ Պետրոսյանը մի խումբ ռազմիկներ հետ անցնում է թշնամու պաշտպանական գիծը և թափանցում նրա խրամատները։ Հանկարծակի եկած ֆաշիստները կատաղաբար դիմադրում են։ Խրամատներից մեկում Պետրոսյանը հանդիպում է 3 ֆաշիստի։ Փորձում է նրանց գերել, բայց հանդիպում է ուժեղ դիմադրության։ Ավտոմատային կրակահերթով ոչնչացնում է նրանց և վերցնելով փաստաթղթերը, իր ընկերների հետ վերադառնում վաշտ։

Այդ մարտերում հրետանային և ականանետային կրակով ոչնչացվել էին թշնամու 3 դզոտ, ճնշվել ականանետային 4 մարտկոց, սպանվել մինչև 40 զինվոր և սպա։ Մեր կորուստներն էին 8 սպանված, 16 վիրավոր[44]։

Հենց այդ օրերին դիվիզիան ստանում է համալրում՝ 963 շարքային ռազմիկներ, որոնք մեծ մասամբ Ստալինգրադի մարտերի մասնակիցներ էին։ Դա շատ կարևոր համալրում էր, որն ավելի ամրապնդեց դիվիզիայի շարքերը[45]։

Անդադար աշխատում էին դիվիզիայի սակրավորները։ Հակառակորդի ուժեղ կրակի տակ, յուցարեներով խիզախություն, նրանք մեր զորամասերի գրոհի համար ան-

---

44 Боевой путь... էջ 264—265։

45 Նույն տեղում։

ցումներ էին պատրաստում, կարելով թշնամու առաջավոր գծի փշալարերը և ականազերծելով ականապատված ճանապարհները։ Սեպտեմբերի 8-ին Դոլգայա լեռան ստորոտում նրանք արդեն պատրաստել էին 7 անցում։ Այդ գործում առանձնապես աչքի են ընկնում սակրավոր դումարտակի հրամանատար կապիտան Պետրոսյանը, ավագ սերժանտ Մամյանը, որը այդ մարտում ծանր վիրավորվում է։

Սեպտեմբերի 10-ին սկսվում է 526-րդ գնդի գրոհը Դոլգայա բարձունքի գրավման համար։ Այդ գրոհը իրենց դիպուկ կրակոցներով պաշտպանում էին 531-րդ հրետանային գնդի հրետանավորները։ 526-րդ գնդին օգնության է հասնում 390-րդ հրաձգային գունդը։ Սրա առաջին դումարտակը կապիտան Մ. Մուրադյանի հրամանատարությամբ գրոհում է թշնամուն, մտնում նրա խրամատները և հենց այնտեղ էլ բռնկվում է ուժեղ մարտ։ Միաժամանակ խրամատներում մարտ էր մղում 526-րդ գնդի 2-րդ դումարտակը։ Թշնամին դուրս է քշվում Դոլգայա լեռից։ Վերախմբավորվելով իր ուժերը, նա անցնում է հակագրոհի, որոշ տեղերում վերականգնելով իր դիրքերը։ Մարտերը չէին դադարում։ Միայն սեպտեմբերի 10-ին թշնամին տվեց 140 սպանված զինվոր և սպա։ Ոչնչացվեցին նրա գնդացրային 8 կետ, ականանետային 2 մարտկոց, քար ու բանդ արվեցին 8 դզոտ։ Մեր վնասները կազմում էին՝ 23 սպանված, 165 վիրավոր։

390-րդ գնդի 5-րդ վաշտի մի խումբ ռազմիկների, որոնց զեկավարն էր դասակի հրամանատար լեյտենանտ Գրիգորյանը, հանձնարարություն էր ստացել հետախուզություն կատարել Սախարնայա Դոլովկա լեռան ստորոտում։ Նրանք դժվարին այդ հանձնարարությունը կատարում են մտածված ու վճռական կերպով։ Գրիգորյանը ջոկատը բաժանում է 4 փոքր խմբերի։ Աննկատելի կերպով մոտենում են թշնամու խրամատների մատույցներին, հանգամանորեն ծանոթանում նրա պաշտպանական կետերին։ Ֆաշիստները նրանց նկատում և սկսում են ուժեղ կրակը, փորձում վերցնել շրջա-

պատման մեջ։ Դրիգորյանն իր խմբերից երկուսին կարգադրում է նա քաշվել դեպի Լման դիրքերը, իսկ մյուս երկուսով աննկատ կերպով թևանցում է անում Բշնամու թիկունքը։ Ֆաշիստներն կրակը ուղղում են դեպի նահանջող խմբի կողմը։ Այդ ժամանակ մյուս երկու խմբերը արդեն Բշնամու թիկունքում էին։ Այնտեղից նրանք սկսում են կրակը Բշնամու վրա, օգտագործելով նաև նռնակները։ Ֆաշիստները խուճապի մեջ են ընկնում և դիմում փախուստի, մարտի դաշտում թողնելով 23 սպանված, ձևոքի 4 գնդացիր և 10 ավտոմատ հրացան[46]։

Շարունակվում էին համառ կռիվները Դոլգայա և Սախարնայա Գոլովկա լեռների համար։ Բշնամին բոլոր ուժերով դիմադրում էր։ Դիվիզիայի զորամասերը գրոհում էին։

Մարտերը լեռներում պահանջում էին վարել հատուկ տակտիկա, գործել առանձին փոքրիկ ջոկատներով, առանց հապաղումների, սրընթաց։ Այդպես էլ գործում էին դիվիզիայի զորամասերը։ Դրա շնորհիվ նրանք հասնում են կարևոր հաջողությունների, Բշնամուն պատճառելով մարդկային և ռազմական տեխնիկայի մեծ վնասներ։ Իհարկե, այդ հաջողությունները ձևոք չէին բերվում առանց կորուստների։

Դիվիզիայի «Կարմիր դինվոր» թերթի 1943 թ. սեպտեմբերի 13-ի համարում տպագրված էր ՆՄՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսարի սեպտեմբերի 8-ի հրամանը գվարդիայի շարքային Ալեքսանդր Մատրոսովի սխրագործության և նրա հիշատակը հավերժացնելու մասին։ Հրամանում ասված էր. «1943 թ. փետրվարի 23-ին 56-րդ գվարդիական հրաձիգ դիվիզիայի 254-րդ գվարդիական հրաձգային գնդի գվարդիայի շարքային Ալեքսանդր Մատվեևիչ Մատրոսովը, գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ՝ Ջերնուշկի գյուղի համար մղվող մարտի վճռական րոպեին հասնելով Բշնամու դզօտին, իր մարմնով փակեց հրակնատը,

46 Նույն տեղում, էջ 267—268։

զոհաբերեց իրեն և ապահովեց հարձակվող ստորաբաժանման հաջողությունը։

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1943 թ. հունիսի 19-ի հրամանագրով գվարդիայի շարքային ընկեր Մատրոսովին հետմահու շնորհված է Խորհրդային Միության հերոսի կոչում։

Ընկ. Մատրոսովի մեծ սխրագործությունը պետք է ռազմական արիության և հերոսության օրինակ ծառայի կարմիր բանակի բոլոր զինվորների համար»։

Այդ հրամանը 89-րդ դիվիզիայի քաղաշխատողների ու հրամանատարների կողմից լայնորեն մասսայականացվեց ամբողջ անձնակազմի մեջ։ Հարձակվող զորքերի մարտակարգերում թշնամու կրակի տակ, ռազմիկները մեծ հետաքրքրությամբ լսում էին ռուս մեծ ժողովրդի քաջարի զավակ Մատրոսովի անօրինակ սխրագործության մասին, հրպարատանում նրանով։ Հանուն մեր մեծ հաղթանակի, ռազմիկները բոլոր ուժերով ձգտում էին պատվով կատարել իրենց մարտական խնդիրը, ոչինչ, հարկ եղած դեպքում, նույնիսկ կյանքը, չխնայել ատելի թշնամու դեմ մղվող սըրբազան պատերազմում։

Գնալով, մարտերը թեժանում էին։ Դիվիզիայի ձախ թևում գործող մեր հարևան զորամասերը հուժկու գրոհով սեպտեմբերի 16-ին ազատագրեցին Նովոռոսիյսկ քաղաքը։ Աջ թևում գործող զորամասերը ծավալելով գրոհը, ճեղքել էին թշնամու պաշտպանության Կապույտ գիծը։ Սակայն Դոլգայա լեռան ուղղությամբ մեր դիվիզիայի հարձակվող զորամասերին ֆաշիստները կատաղի դիմադրություն էին ցույց տալիս։ Նրանք ամեն ինչ անում էին այդ բարձունքը պահելու իրենց ձեռքում։

Փոխգնդապետ Ե. Կարապետյանի հրամանատարությամբ գործող 390-րդ հրաձգային գունդը համառ մարտեր էր մղում Դոլգայա լեռան համար։ Գնդի առաջին գումարտակի ստորաբաժանումները, կապիտան Մ. Մուրադյանի հրամանատարությամբ, կրակային բոլոր միջոցներով ճնշում էին

հակառակորդի կատաղի դիմադրությունը, ոչնչացնում նրա զինվորներին ու ռազմական տեխնիկան։ Գրոհը իրենց հզոր կրակով պաշտպանում էին դիվիզիայի հրետանավորները և ականանետիգները։ Թշնամու կրակային կետերից շատերը լռել էին։ Սակայն նրանցից մի մասը շարունակում էր գործել։ Մասնավորապես երկու կրակային կետեր իրենց գնդացրային կրակով արգելակում էին առաջին գումարտակի առաջխաղացումների առաջընթացին։ Անհրաժեշտ էր ոչնչացնել թշնամու այդ կրակակետերը, ճանապարհ բաց անել առաջ շարժվող մեր առաջապահ ստորաբաժանումների համար։

Այդ գործն իր վրա էր վերցնում 390-րդ գնդի առաջին վաշտի դասակի հրամանատարի օգնական, կոմունիստ, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը։ Իր գրոհային ջոկատով, որի մեջ մտնում էին մարտիկներ Գրիգորյանը, Ավետիսյանը, Գևորգյանը, Սաքանյանը, Սահակյանը և ուրիշներ։ Հունան Ավետիսյանը սեպտեմբերի 14-ին բարձրանում է Դոլգայա լեռը։ Մոտենալով թշնամու դզոտին, Հունանը և Սարգիս Սահակյանը նռնակներով ոչնչացնում են նրա անձնակազմը, ցավոք Սահակյանը զոհվում է։ Գրոհայինները առաջ են շարժվում։ Նրանց վրա տեղատարափ կրակ է թափում թշնամու գաղարկված մյուս դզոտը։ Հունանը իր մարտիկներին հրամայում է շրջանցել դզոտը, իսկ ինքը որոշում է մագլցելով, մոտենալ ճակատից։ Շուտով նա ծանր վիրավորվում է, բայց այնուամենայնիվ որոշում է իր կյանքի գնով լռեցնել թշնամու գնդացրի կրակը և ճանապարհ բաց անել հարձակվող իր մարտական ընկերների համար։ Եվ նա այդպես էլ անում է, իր մարմնով փակելով ֆաշիստական դզոտի գնդացրային հրակնատը։ Իր երիտասարդ կյանքի գնով քաջարի զինվորը կատարեց մարտական խնդիրը, ապահովեց ստորաբաժանման առաջընթացը, փրկեց իր մարտական ընկերների կյանքը[47]։ Դիվիզիան տիրացավ Դոլգայա լեռանը, ազատագրեց Վերխնե-Բականսկի խոշոր բնակա-

47 Боевой путь... էջ 175։

վայրը, ուր գտնվում էին 5000 խորհրդային քաղաքացի։

Այդ սխրանքի համար ավագ սերժանտ Հունան Մկրտչի Ավետիսյանը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1944 թ. մայիսի 16-ի հրամանագրով հետմահու արժանացավ Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման[48], իսկ ԽՍՀՄ պաշտպանության մինիստր Ս. Մ. Վասիլևսկու 1949 թ. ապրիլի 22-ի հրամանով նրա անունը առհավետ գրանցվեց 390-րդ հրաձգային գնդի առաջին հրաձգային վաշտի ցուցակում։ Հայ ժողովրդի դյուցազն զավակ Հունան Ավետիսյանի հուշարձանն այժմ կանգնեցված են Վերխնե-Բականսկի բանվորական ավանում, Երևանում և իր ծննդավայրում՝ Ղափանի շրջանի Ծավ գյուղում։ Նրա անունն առհավետ կմնա մեր մեծ Հայրենիքի՝ Խորհրդային Միության քաջ զավակների ցուցակում։

Հերոսական սխրանք կատարեց նաև 526-րդ գնդի ռազմիկ, ավագ սերժանտ, կոմունիստ Սուրեն Սմբատի Առաքելյանը։ 1943 թ. սեպտեմբերի 18-ն էր։ Երկրորդ օրն էր, ինչ համառ մարտեր էին գնում Նովոռոսիյսկից ոչ հեռու գտնվող Կուրբացկայա բնակավայրի և նրա մոտ գտնվող կարևոր բարձունքի համար, ուր ֆաշիստները ստեղծել էին ամուր պաշտպանություն և ուժեղ դիմադրում էին 526-րդ գնդի հարձակվող առորաբաժանումներին։ Սուրեն Առաքելյանը կրտսեր լեյտենանտ Սամվել Մալխասյանի դասակում ջոկի հրամանատար էր։ Իր հրամանատարի ղեկավարությամբ դասակը, գնդի մյուս առորաբաժանումների հետ միասին մարտնչում էր այդ բարձունքի համար։ Մարտի թեժ պահին դասակի հրամանատար Ս. Մալխասյանը վիրավորվում է։ Նրան փոխարինում է ջոկի հրամանատար, ավագ սերժանտ Ս. Առաքելյանը։ Նա համարձակ կերպով առաջնորդում է իր մարտիկների գրոհը։ Թշնամու ուժեղ կրակի տակ դասակը շարժվում էր դեպի բարձունքի գագաթը։ Բոլորից առաջ ընթանում էր Ս. Առաքելյանը։ Նա վերցրել էր

---

48 Նույն տեղում։

Կարմիր դրոշ՝ լեռան վրա բարձրացնելու համար։ Կոչելով «Հայ ժողովրդի պատվի և փառքի համար առաջ», սկսում է դրոհը։ Մոտենալով Բշնամու դղյակին, դասակի հրամանատարը երկու նռնակ է նետում։ Լռում է Բշնամու կրակակետը։ Մարտիկները ոտքի կանգնելով, առաջ են շարժվում դեպի բարձունքի գագաթը։ Նրանց վրա ուժեղ կրակ է տեղում Բշնամու մեկ այլ կրակակետից։ Դրոհող ռազմիկներից մի քանիսը վիրավորվում են։ Նրանց թվումն էր նաև Ա. Առաքելյանը, որը վիրավորվել էր մի քանի տեղից։ Համախելով իր վերջին ուժերը, հայ ժողովրդի քաջարի զավակը արյունաշաղախ իրեն նետում է առաջ և Բշնամու գնդացրի կրակից մահացու վիրավորվում[49]։ Իրենց հրամանատարի և զոհված ընկերոջ վրեժը լուծելու համար դասակի ռազմիկները ոչնչացնում են այնտեղ գտնվող ֆաշիստներին և բարձունքի վրա կանգնեցնում կարմիր դրոշը։ Ֆաշիստների դեմ մղած մարտում ցուցաբերած այդ քաջագործության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. մայիսի 16-ի հրամանագրով Սուրեն Առաքելյանն արժանանում է Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման[50]։

Նովոռոսիյսկի և Թաման թերակղզու ազատագրության համար մղած մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նույն հրամանագրով Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման է արժանանում նաև սակրավոր կարմիրբանակային, կոմունիստ Ջահան Սարդսի Կարախանյանը։ Նովոռոսիյսկի ազատագրման համար մղած մարտերում 89-րդ դիվիզիայի սակրավոր դումարատակի վաշտերից մեկը ուղարկված էր օգնելու հարևան դեսանտային գվարդիական զորամասին։ Այդ վաշտումն էր նաև կարմիրբանակային Ջահան Կարախանյանը, որին հանձնարարված էր ղեկավարել սակրա-

---

49 Боевой путь... էջ 180։

50 Նույն տեղում, էջ 181։

վորների ջոկի գործողությունները։ Նա իր ջոկով քաղաքի մատույցներում, ծովափում և քաղաքի մեջ մեծ գործ է կատարում։ Վտանգի ենթարկելով իրենց կյանքը, ջոկի ռազմիկները վնասազերծում են հարյուրավոր ականներ և ճանապարհ բաց անում խիզախ զվարդիականների համար։

Նովոռոսիյսկի ազատագրումից հետո մեր հարձակվող զորամասերը արագորեն հետապնդում էին նահանջող թշնամուն։ Հարձակվող զորամասերի առջևից ընթանում էին սակրավորները։ Դրանց թվումն էր նաև Ջահան Կարախանյանն իր ջոկով։ Նովոռոսիյսկից դեպի Վերխնե-Բականակ տանող բնակավայրի ճանապարհին Ջ. Կարախանյանի սակրավորները հանդում են մի խոշոր կամուրջի, որը մնացել էր անվնաս։ Սակրավորների ուշադիր ստուգումից պարզվում է,— որ կամուրջը թշնամու կողմից ականապատված է և նրա պայթեցումը բոպիների հարց է։ Վտանգի ենթարկելով իր կյանքը, Ջահան Կարախանյանը շտապում է կանխել պայթեցումը։ Անմիջապես կախվելով կամուրջից, դժվարությամբ առաջ է շարժվում և կտրում թշնամու կողմից վառված լարի ծայրը։ Դրանով գործը չէր ավարտված, քանի որ ականները ամրացված վիճակում գտնվում էին կամուրջի վրա, իսկ թշնամին ուժեղ կրակի տակ էր պահում այն։ Ամեն մի անկախ հարված և պայթյուն կարող էր պայթեցնել ամբողջ կամուրջը և ժամանակավորապես կասեցնել մեր զորքերի անցումը։ Խելամիտ և քաջարի սակրավորը, թշնամու հրետանային և ականանետային ուժեղ կրակի տակ իր մարտիկներ Սերգեյ Հարությունյանի, Աշոտ Ռամազյանի և մյուսների հետ արագորեն ականազերծում է կամուրջը, անվտանգ դարձնում մոտ 500 կիլոգրամ պայթուցիկ նյութը, որը կամուրջին ամրացրել էին ֆաշիստները։

Հանձնելով կամուրջին մեր զորքերն արագորեն անցնում են այն և հետապնդում թշնամուն[51]։ Իր սակրավորներով Ջահան Կարախանյանը ակտիվ կերպով մասնակցում

---

51 Боевой путь... էջ 204—205։

է Թաման թևթակղու մի շարք բնակավայրերի ազատագրմանը և վնասազերծում թշնամու բազմաթիվ ականներ։

Ջահան Կարախանյանը սակրավոր ռազմիկի հարուստ փորձ էր ձեռք բերել ֆիննական պատերազմում և Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման ժամանակ։

Խիզախ սակրավոր Ջահան Կարախանյանը նույնպիսի ակտիվ գործեր կատարեց Կերչի համար մղած դժվարին մարտերում։ 1943 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, երբ մեր զորքերը, դրանց թվում նաև 89-րդ հայկական դիվիզիան, շարունակում էին պայքարը Ղրիմի ազատագրման համար, դիվիզիայի սակրավոր գումարտակի կազմում Ջահան Կարախանյանի ջոկը հաջողությամբ կատարեց բազմաթիվ մարտական խնդիրներ։ Այդպիսի խնդիրներից մեկի կատարման ժամանակ, նույն թվականի դեկտեմբերի 18-ին Ջ. Կարախանյանը ծանր վիրավորվում է և մի քանի օրից հետո մահանում։

Դիվիզիայի գնդերը և մյուս ստորաբաժանումները համառ կերպով շարունակում էին մարտերն ու զրոհները Դոլգայա և Սախարնայա Գոլովկա լեռների գրավման համար։ Ամբողջ անձնակազմը ցուցաբերում էր նվիրվածության ու հերոսության օրինակներ, իսկ հակառակորդը կատաղաբար դիմադրում էր։ Ուժեղ մարտերը շարունակվում էին։

Սակրավոր գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ, կոմունիստ Ներսիսյանը իր զինվորներին խիզախության անձնական օրինակ էր ցույց տալիս։ Նա ոչ միայն առաջավոր գծում անցումներ էր բաց անում, այլև մասնակցում էր զրոհներին, որոնցից մեկի ժամանակ սպանում է 3 ֆաշիստի և այդ մարտում էլ զոհվում։ Կոմունիստ, սանիտարական աշխատող, ավագ Սարգսյանը մարտի թեժ պահին առաջավոր գծից հանում է 45 ռազմիկ։ Սակրավոր, շարքային Դոլգազովը բաց է անում 6 անցում և հենց այդ պահին վիրավորվում է։ Չնայած դրան, նա շարունակում է մարտը, «ուռա» կոչելով, իր ընկերների հետ միա-

սին հարձակվում է ֆաշիստների վրա, հարվածելով նրանց։ Կոմունիստ Մամյան վաղարշակը գլխավորում էր հարձակվող զինվորներին։ Նա շարքից դուրս է գալիս միայն այն ժամանակ, երբ երեք տեղից վիրավորվում է։ Իր ընկերների նման քաջաբար էր կռվում նաև շարքային, կոմունիստ Միսակ Սարգսյանը[52]։

400-րդ դնդի առաջին գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ կապիտան Արմենակ Խառատյանը կոչելով «հանուն հայրենիքի», իր ռազմիկներին տարավ գրոհի և գրավեց Պշնամու դղյոնը։ Քաջաբար էին մարտնչում 526-րդ դնդի վաշտերի կուսակցմակիրարիչներ Լիբերնիոն և Պլեսկաչևը, որը գոհվից գրոհ ժամանակ։ Այդ մարտում հնրասաբար ընկավ նաև նույն դնդի դնդապրային վաշտի կոմերիտական կազմակերպիչ Վաղայանը։

Բնորոշ է, որ այդ թեժ մարտերի ժամանակ և նրա դադարի պահերին քաջ ռազմիկներից շատերը դիմում էին ներկայացնում ընդունվելու կոմունիստական կուսակցության և կոմերիտմիության շարքերը։ Այսպես, դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Գ. Հակոբյանի զեկուցագրում ասված էր, որ 1943 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 20-ը 70 ռազմիկ կուսակցական տոմս են ստացել, իսկ 168-ը դեռևս տոմս չեն ստացել, քանի որ դիվիզիայի նկարիչը գոհվել է, իսկ առանց նկարի հնարավոր չէ կուսակցական փաստաթուղթ ձևակերպել[53]։ Այնտեղ միաժամանակ ասված էր, որ միայն սեպտեմբերի 16-ից մինչև 19-ը մղած ուժեղ մարտերում դիվիզիան տվել է 619 սպանված[54]։

Թամանյան թերակղզու համար մղված մարտերում հարուստ նյութեր-հոդվածներ, թղթակցություններ և փաստաթղթեր են տպագրված ռազմիկների սիրելի «Կարմիր զինվոր» թերթում։ Թերթի սեպտեմբերի 5-ի համարում տպա-

---

52 Боевой путь... էջ 178—179։

53 Боевой путь... էջ 179։

54 Նույն տեղում։

դրված էր մի փոքրիկ Բղթակցություն առաջին մարտերից մեկի մասին։ Այնտեղ ասված է, որ ավագ լեյտենանտ Ն. Նարիմանովի առորակաժանումից հրետանավոր սերժանտ Մ. Մանվելյանի հրետանավորներն իրենց դիպուկ կրակով ջարդ ու փշուր արեցին թշնամու մի քանի ավտոմեքենա՝ իրենց բեռով և պինվորներով, իսկ մնացած մեքենաներին ցիր ու ցան արեցին։ Այդ մարտում ավյալ անձնաազմից աչքի են ընկել սերժանտներ Անուշավան Կուրղինյանը, Արտաշես Խաչատրյանը, ավագ սերժանտ Սուրեն Հախյանը, շարքային Ս. Արշակյանը և ուրիշներ։

Կոմունիստ Միքայել Շամիրյանը, վտանգի ենթարկելով իր կյանքը, նռնակներ փոքրնելով, ոչնչացրեց թշնամու դնդացրային երկու և ականանետային մեկ կրակակետ, Արշակ Հարությունյանը քար ու քանդ է արել թշնամու մեկ դզոտ, իսկ կոմերիտական կազմակերպիչ Ալբերտ Անանյանը բերել է կարևոր հետախուզական տվյալներ։ Ավագ լեյտենանտ Պիլիլյան Միքայելի հրետանավորներն իրենց դիպուկ կրակով ոչնչացրել են ֆաշիստական 12 դզոտ, 2 կրակակետ, և 3 հետաոցավոր դնդացիր։ Պիլոլյանը պարգևատրվել է «Ներգահության համար» մեդալով։ Միայն մեկ օրում կապիտան Հ. Սիմոնյանի դումարտակից անհայտ Հովհաննիսյան հաշիվը ոչնչացրել է 4, իսկ Միքայան Հայկազը՝ 3 ֆաշիստ։

Շատ էին դիվիզիայի ռազմիկների մարտական սխրանքներն այս մարտերում։ Բոլորը հիշատակել հնարավոր չէ։

Հրամանատարները և քաղաքական աշխատողները խիզախ ռազմիկներին բացի կառավարական շքանշանի կամ

---

55 «Կարմիր դինվոր», 1949, սեպտեմբերի 9։

մեդալի ներկայացնելուց, նրանց հարազատներին նամակ էին գրում, ողջունում և շնորհավորում։

89-րդ դիվիզիայի քաղաժինը 1943 թ. սեպտեմբերի 15-ին և 22-ին 18-րդ բանակի քաղաժնին զեկուցագրեր է ներկայացնում Դոլգայա և Սախարնայա Գոլովկա լեռների համար մղված դժվարին մարտերի և դրանց արդյունքների մասին։ Դրանցում նշված է, որ դիվիզիայի շարքային և սպայական կազմը այդ մարտերում ցույց տվեց հարձակողական բարձր բացառիկ օրինակներ։ Դոլգայա լեռան գրավման համար առանձնապես աչքի ընկան 390-րդ հրաձգային գունդը և առանձին սակրավորային գումարտակը[56]։ Բոլոր մարտերում առջևից էին գնում կոմունիստները և կոմերիտականները։ Վիրավորվել և զոհվել էին 107 կոմունիստ, 147 կոմերիտական։

Հերոսաբար զոհվել էին 400-րդ գնդի ռազմական կապիտան Սիմոնյանը, 3-րդ գումարտակի կուսակազմակերպիչ Գևորգյանը, կոմերիտական կազմակերպիչ Համբարձումյանը, վիրավորվել էր առաջին գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ կապիտան Ա. Խառատյանը, գնդացրային վաշտի կուսակազմակերպիչ Կարախանյանը և ուրիշներ[57]։

Այդ մարտերում առանձնապես աչքի էին ընկել հետևյալ հրամանատարները և շարքայինները, որոնք ներկայացվել էին կառավարական շքանշանների և մեդալների. գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Կ. Ա. Ներսիսյանը, ջոկի հրամանատար սերժանտ Վ. Վ. Մանյանը, ջոկի հրամանատար, սերժանտ Վ. Ա. Գևորգյանը, շարքային ռազմիկներ, սակրավոր Ս. Ս. Զաքարյանը, Ս. Տ. Խաչատրյանը, Լ. Գ. Փափազյանը, Մ. Խ. Սարգսյանը, Ն. Ս. Գոլգարյանը, Հ. Ս. Աբրահամյանը։ Իսկ շարքային Միսակ Սարգսյա-

---

56 Боевой путь... էջ 172։

57 Նույն տեղում, էջ 173։

նը Թշնամու ուժեղ կրակի տակ անցուդարձ էր բացել մեր հետևակի համար[58]։

Միայն Դոլգայա լեռան և 352,1 բարձունքի համար մղած մարտերում սեպտեմբերի 10-ից մինչև 14-ը մղած մարտերում դիվիզիան ավել էր 133 սպանված և 393 վիրավոր[59]։

Քաղբաժնի զեկուցման մեջ նշված է, որ այդ մարտերում հրամանատարների հետ միասին իրենց անձնական օրինակով ռազմիկներին ոգեշնչում էին դիվիզիայի քաղաքական կուսակցական աշխատողները՝ 390-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, մայոր Հ. Մեժլումյանը, կուսակազմակերպիչ, կապիտան Ս. Թանդյանը, 526-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, մայոր Պ. Ալալյանը, կուսակազմակերպիչ կապիտան Ս. Բազալովը, 400-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, մայոր Գ. Կարապետյանը, ադիտատոր, կապիտան Մ. Հակոբյանը և մյուսները[60]։

Մարտերի թեժ պահերից հետո, կարճատև հանգստի ժամանակ, հրամանատարներն ու քաղաքական-կուսակցական աշխատողներն իրենց քաջարի ռազմիկների ծնողներին ու մյուս հարազատներին նամակներ էին գրում նրանց սխրանքների մասին։

Ահա այդ նամակներից մեկը.

Կապիտան Խ. Մելքումովը իր սատրաբաժանման քաջարի ռազմիկ Տիգրան Հովսեփյանի մորը՝ Հեղինե Հովսեփյանին նամակ է գրում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարտակերտի շրջանի Օրտաձոր գյուղ։

Նամակում ասված էր.

«Հարգելի բնիկեր Հեղինե Հովսեփյան.

Ձեր որդի Տիգրան Հովսեփյանը ավելի քան 9 ամիս ծառա-

---

58 Նույն տեղում։

59 Նույն տեղում, էջ 174։

60 Նույն տեղում, էջ 176։

յում է մեզ մոտ և համարվում է մեր ստորաբաժանման օրինակելի ու խիզախ մարտիկներից մեկը: Նա ծանր գնդացրորդ է, գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերում անվախ, համարձակ ու քաջ:

Թամանյան թերակղզին օկուպանտներից ազատագրելու ահեղ մարտերում Ձեր որդի Տիգրանը մի բարձունքի մոտ իր գնդացրով ետ շպրտեց գերմանացիների հակագրոհը և երբ թշնամին փախուստի դիմեց, նա իր գնդացրի ուժեղ կրակով բնաջնջում էր թշնամու զինվորներին: Հայրենիքի հողը ծածկվում էր զավթիչների դիակներով:

Անատոում գերմանացիները մի քանի անգամ փորձեցին ճեղքել մեր պաշտպանության գիծը, բայց Ձեր անվեհեր որդի Տիգրանը իր մարտական ընկերների հետ միասին գնդացրային տեղատարափ կրակով ստիպեց թշնամուն փախչել: Այդ կռիվներում խիզախ հայրենասեր Տիգրանն ազատեց գերմանական տասնյակ զինվորներ ու սպաներ:

Մենք ուրախ ենք հայտնելու Ձեզ, որ Ձեր որդի Տիգրանը ողջ է, կայտառ և իրեն շատ լավ է զգում: Հաշվի առնելով նրա մարտական աչքի ընկնող ծառայությունները, խիզախությունը, հրամանատարությունը Տիգրանին ներկայացրել է կառավարական պարգևի:

Բանկադին մայր: Հայրենական մեծ պատերազմի ֆրոնտից ուղարկում եմ Ձեզ, քաջ զինվորի մորը՝ իմ և քո որդի Տիգրանի բոլոր մյուս մարտական ընկերների շնորհակալությունը այն բանի համար, որ Դուք փայփայել ու մեծացրել եք մի ազնիվ հայրենասերի, ինչպիսին է մեր գնդացրորդ Տիգրանը: Դուք կարող եք անհոդ լինել: Այստեղ էլ Տիգրանը շրջապատված է նույնպիսի սիրով և նրա կյանքը թանկ է մեզ համար այնպես, ինչպես և Ձեզ համար:

Լավագույն ցանկություններով

Ձեզ հարգող՝ կապիտան Խ. Մելքումով»[61]:

Սեպտեմբերի 16—21-ը Թամանի թերակղզու ամբողջ

---

61 «Կարմիր զինվոր» 1943, հոկտեմբերի 15:

ռազմաճակատում մեր զորքերը շարունակելով իրենց հարձակումը, ազատագրել էին բազմաթիվ բնակավայրեր։ Կոտրելով թշնամու կատաղի դիմադրությունը, նրանք հաջողությամբ առաջ էին շարժվում։ Այդ զորքերի առաջավոր շարքերումն էր նաև 89-րդ դիվիզիան։ Նա գրավել էր Դոլդայա և Սախարնայա Գոլովկա լեռները, ազատագրել Վերխնե-Բականսկի, Նատուխաևսկայա և մի շարք այլ բնակավայրեր։

Թամանի ազատագրման համար դիվիզիայի առաջին իսկ օրերի մարտական գործողությունները բարձր գնահատականի են արժանանում Գերագույն Գլխավոր հրամանատարության ներկայացուցիչ, Խորհրդային Միության մարշալ Ս. Տիմոշենկոյի և Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի հրամանատարության կողմից։ Հրամանատարությունը սեպտեմբերի 21-ին հատուկ կոչ է ուղղում դիվիզիայի հրամանատարությանը և ամբողջ անձնակազմին։

Այնտեղ ասված էր.

«89-րդ հայկական հրաձիգ դիվիզիայի հրամանատար գնդապետ Ն. Գ. Սաֆարյանին, քաղաքական մասի գծով տեղակալ փոխգնդապետ Գ. Ս. Հակոբյանին, Հայկական դիվիզիայի մարտիկներին, սերժանտներին և սպաներին։

Մարտական հայ ընկերներ.

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը, կատարելով գերագույն գլխավոր հրամանատարության առաջադրած մարտական խնդիրները, վստահորեն, արիաբար և քաջաբար հարվածում են թշնամուն։ մաքրելով Կովկասի մատույցները, Կոտրանը և Թամանի թերակղզին ֆաշիստական բարբարոսներից։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերի հաղթական շարքում 89-րդ հայկական հրաձիգ դիվիզիան գրավեց իր տեղը և բոլոր զորքերի հետ միասին արիաբար մարտեր է մղում առելի թշնամու դեմ։

Հիանալի առիթ է ստեղծված ձեզ համար՝ հարվածել և ոչնչացնել թշնամուն և դրանով իսկ օծել Ձեզ, Ձեր հարա-

զատ հայկական դիվիզիան և դրա հետ միասին ամբողջ հայ ժողովուրդը՝ փառքով ու մարտական արիության նշանով։ Կովկասի համար մղվող կռիվների վերջին էտապը մոտենում է իր հաղթական վախճանին։ Կասկած չկա, որ Ձեր բազուկն Գլխավոր հրամանատարությունը կնշի պարգևատրումներով և Թամանյան անվանումի շնորհումով այն դիվիզիաներն ու գնդերը, որոնք ցույց կտան մարտական արիության ու փառքի օրինակներ։

Դիմելով Ձեզ և հիշեցնելով Ձեզ այդ մասին, ռազմաճակատի ռազմական խորհուրդը կոչ է անում Ձեզ լարել բոլոր ուժերը, լիովին հանդես բերել Ձեզ հատուկ արիությունն ու քաջությունը և կատարել Ձեր խնդիրը-ոչնչացնել թշնամուն, առաջինը մտնել Թաման քաղաքն ու նավահանգիստը, այսպիսով արժանավայել կերպով ստանալ «89-րդ հայկական Թամանյան դիվիզիա» անվանումը։

Ձեր հաջողությունների առկայության դեպքում, դուք բոլոր հիմքերն ունեք արժանի լինելու «Գվարդիական դիվիզիա» կոչմանը։

Յանկանում ենք Ձեզ մարտական հաջողություններ։

Առաջ դեպի թշնամու լիակատար ջախջախումը և ոչնչացումը։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի ռազմական խորհուրդ՝

Գեներալ-Գնդապետ
Ի. Վ. ՊԵՏՐՈՎ

Գեներալ-Մայոր
ԲԱՅՈՒԿՈՎ

21 սեպտեմբերի 1943 թ.»[62]։

Ռազմաճակատի ռազմական խորհրդի այդ կոչը թռուցիկի ձևով տպագրվեց դիվիզիայի թերթի տպարանում և շարունակվող մարտերի պայմաններում լայնորեն մասսայականացվեց դիվիզիայի անձնակազմի շրջանում։

Կոչի մասսայականացման համար դիվիզիայի քաղբա-

62 Այդ կոչը տպագրված էր առանձին թերթիկի վրա։ Նրա մեկ օրինակը պահեցի իմ դրառումների հետ, տարա պարտեզագմի ճանապարհներով և մինչև այժմ էլ պահում եմ իմ անձնական արխիվում որպես մասունք։

Ժինը մոբիլիզացիայի ենթարկեց ամբողջ կուսակցական-քաղաքական աշխատողներին ու հրամանատարներին, սոռ-րաբաժանումների ագիտատորներին: Նույն օրը համարյա բոլոր ռազմիկները արդեն գիտեին կոչի մասին, այն մասին, որ ռազմաճակատի հրամանատարությունը բարձր է գնահատում իրենց մարտական գործերը և միաժամանակ նոր խնդիրներ դնում հետագա մարտերի համար: Այդ մեծ ոգևորություն և մարտական կորով առաջացրեց դիվիզիայի ամբողջ անձնակազմի մեջ:

Կոչը մասսայականացնելու համար, Բշնամու ուժեղ կրակի տակ, մեկ սոռրաբաժանումից մյուսն էին գնում քաղաշխատողներ Գևորգ Կարապետյանը, Նիկոլայ Մեժլումյանը, Պապիկ Ավալյանը, Ֆեոդոր Շիֆոնենկոն, Գուրգեն Հարությունյանը, Մովսես Հակոբյանը, Սմբատ Թանգյանը, Սուրեն Բագրատովը, Բեգո Դավթյանը, Վարազդատ Սահակյանը, Միխայիլ Կապուստինը, Վասիլ Լիխանովը, Ռաֆիկ Սարոյանը, Սիմոն Նալբանդյանը, Գեղամ Ղուկասյանը, Հրայր Հովակիմյանը, Արշալույս Սարոյանը, Ռուբեն Հակոբյանը, սույն տողերի հեղինակը և շատ ու շատ ուրիշներ:

Շարունակվում էին ուժեղ մարտերը:

Ամեն մի կտոր հողի համար Բշնամին կատաղի դիմադրություն էր ցույց տալիս: Կոտրելով նրա դիմադրությունը, դիվիզիայի զորամասերը սեպտեմբերի 24-ին մոտեցել էին Սուվորովո-Չերկասսկ ավանին, որի մոտով անցնում էր ֆաշիստների պաշտպանության 5-րդ գիծը: Սեպտեմբերի 26-ի առավոտյան սկսվեց այդ գծի գրոհը: Միաժամանակ գրոհ սկսեցին 89-րդ դիվիզիայի հարևան զորամասերը՝ աջից և ձախից:

Գործի դրվեցին դիվիզիայի կրակային բոլոր միջոցները՝ հրետանին, ականանետները և մյուս միջոցները: Բշնամու ամրություններն ամբակոծում էին մեր ինքնաթիռները: Պաշտպանական կրակի տակ քայլ առ քայլ առաջ էին շարժվում գրոհային խմբերը, որոնց Բշնամին դիմադրում էր

ուժեղ կրակով։ Մարտը շարունակվեց մինչև ուշ երեկո, երբ մեր զրոհային խմբերը, հաղթահարելով ականապատված դաշտերը և լարափակոցները, մտան Բշնամու պաշտպանական առաջավոր դիրք։ Հակառակորդը խուճապահար փախուստի դիմեց։ Սեպտեմբերի 26-ի լույս 27-ի դիշերը 400-րդ գունդը ազատագրեց Սուվորովա-Չերկասսկ բնակավայրը, իսկ մյուս գնդերը մոտեցել էին Ուտաշ սովխոզին, որը շուտով գրավեցին։

Շարունակելով հետապնդել հակառակորդին, դիվիզիայի զորամասերը շարժվում էին կիզիլդաշ և Վիթյազ լճամանների։ Դիվիզիային մարտական խնդիր էր տրված հարևան զորամասերի հետ միասին շրջանցել Բշնամուն և կտրել աշ թևում գտնվող հակառակորդի զորքերի նահանջի ճանապարհը։ Սակայն հենց այդ թևից Բշնամին ուժեղ կրակով խանգարում էր մեր առաջխնթացը։ Մասնավորապես ցերեկը հնարավոր չէր առաջ ընթանալ։ Այդ պատճառով դիվիզիայի զորամասերը առաջ էին գնում գլխավորապես գիշերները։ Իսկ ավազուտները և ճահիճները մեծ դժվարություններ էին հարուցում, մասնավորապես հրետանավորների համար։ Սակայն քաջարի հրետանավորները, գործադրելով բոլոր ջանքերը, հաղթահարում էին այդ դժվարությունները և հետ չէին մնում հետևակից։

Հնգօրյա համառ մարտերի ընթացքում առաջ ընթանալով ավելի քան 30 կմ տարածություն, Բլագովեշչենսկայա բնակավայրի մոտ, դիվիզիայի զորամասերը դուրս եկան հակառակորդի աջ թևը, վտանգ ստեղծելով նրա շրջապատման համար։ Վճռական գրոհով դիվիզիան ճեղքեց Բշնամու խորը պաշտպանության ևս մեկ գիծ և հոկտեմբերի 3-ին 390-րդ գունդը, փոխգնդապետ Ե. Կարապետյանի հրամանատարությամբ առաջինը մտավ Թաման քաղաքը։ Իսկ հաջորդ օրը դիվիզիայի զորամասերը ազատագրեցին Պրիմորսկայա խոշոր բնակավայրը։

Դրանով ավարտվեցին 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի մարտական գործողությունները Թամանյան թե-

բակղդում։ Իսկ հոկտեմբերի 9-ին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը այն ամբողջությամբ ազատագրեցին թշնամուց։

Դա Հայրենական մեծ պատերազմում Կարմիր բանակի կարևոր հաղթանակներից մեկն էր, որին, ինչպես տեսանք, իր ակտիվ մասնակցությունը ցուցաբերեց նաև 89-րդ դիվիզիան։

Նրա մարտական գործերը բարձր գնահատվեցին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի հրամանատարության և Գերագույն Գլխավոր հրամանատարության կողմից։ Վերջինիս 1943 թ. հոկտեմբերի 9-ի հրամանով, ի թիվս աչքի ընկած մյուս դիվիզիաների, գնդապետ Ն. Գ. Սաֆարյանի հրամանատարությամբ գործող 89-րդ հայկական դիվիզիան նույնպես արժանացավ Թամանյան կոչման։

Թամանի ազատագրումից հետո, Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի հրամանատարությունը Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը և Ժողովրդական Կոմիսարների խորհրդին ողջույնի հեռագիր հղեց, ուր ասված է.

«Թամանը գերմանական աղտեղությունից մաքրելու համար մղած մարտերում առանձնապես աչքի ընկավ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան, որին ... շնորհված է Թամանյան անունը։ Խորհրդային Միության ժողովուրդների եղբայրական բարեկամության անխորտակելիության և հզորության այդ նոր ապացույցը հպարտության օրինական զգացմունք է առաջ բերում և մեր երկրի հայրենասերներին մղում է նորանոր հերոսական գործերի՝ ի փառս Խորհրդային Հայրենիքի։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի ռազմական խորհուրդը շնորհավորում է Ձեզ և հանձին Ձեզ՝ Հայաստանի աշխատավորներին՝ հրաձգային դիվիզիային Թամանյան պատմական անունը շնորհելու բարձր պատվի առթիվ։

Կեցցե մեր մեծ, անպարտելի Խորհրդային Հայրենիքը։

Կեցցե խորհուրդների երկրի ժողովուրդների անխափան եղբայրությունը։

Մահ գերմանական զավթիչներին։

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերի հրամանատար Գեներալ-Գնդապետ՝ ՊԵՏՐՈՎ

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր՝ ԲԱՅՈՒԿՈՎ

Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի քաղվարչության պետ, Գեներալ-մայոր՝ ԵՄԵԼՅԱՆՈՎ»[63]։

Թամանի համար մղած մարտերում մեկ ամսվա ընթացքում 89-րդ դիվիզիան անցավ 130 կմ տարածություն։ Ռազմաճակատի մյուս զորքերի հետ միասին, նա ճեղքեց Թշնամու բազմաշերտ պաշտպանության կապույտ գիծը և ազատագրեց մի շարք բնակավայրեր, այդ թվում Վերխնե-Բականսկայան, Նատուխաևսկայան, Կուրբացկայան, Օլխովկան, Վոզնոսենսկին, Լիմանները, Կրասնի Կուրգանը, Գոստագաևսկայան, Սուվորովո-Չերկասսկին, Պրիմորսկայան և այլն։

Այդ մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար դիվիզիայի հազարավոր ռազմիկներ պարգևատրվեցին խորհրդային Միության շքանշաններով և մեդալներով։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ն. Գ. Սաֆարյանը պարգևատրվեց Սուվորովի II աստիճանի շքանշանով։ Դիվիզիայի «Կարմիր դիվիզոր» թերթի 1943 թ. հոկտեմբեր, դեկտեմբեր ամիսների համարներում պարբերաբար տպագրվեցին Թամանի մարտերում աչքի ընկած հրամանատարների, քաղաշխատողների և կրտսեր հրամանատարների ու շարքայինների ցուցակները, որոնք պարգևատրված էին կառավարական շքանշաններով ու մեդալներով։ Դրանց թիվը հասնում էր ավելի քան 4200-ի։ Մարտական կարմիր Դրոշի շքանշանով պարգևատվածների թվումն էին՝ կա-

63 «Սովետական Հայաստան», 1943, 12 հոկտեմբերի։

պիտան Ա. Հ. Մուքանյանը, ավագ լեյտենանտ Գ. Ի. Դավրյուշկովը, լեյտենանտներ Բ. Հ. Ավիանդիլյանը, Բ. Կ. Կարապետյանը, Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով՝ ավագ լեյտենանտ Կ. Ա. Ներսիսյանը (հետմահու), լեյտենանտ Գ. Գ. Հովհաննիսյանը, ավագ սերժանտներ Ա. Գ. Մկրտչյանը, Պ. Մ. Լեբեդենկոն, սերժանտ Վ. Ի. Մամյանը, Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով՝ կապիտաններ Մ. Ա. Մուրադյանը, Ա. Կ. Խառատյանը, լեյտենանտներ Ս. Հ. Մանուչարյանը, Խ. Ռ. Միրզոյանը, ավագ սերժանտ Ե. Ս. Մատինյանը, շարքային Վ. Ե. Պլեսկաչևը (հետմահու), Կարմիր աստղի շքանշանով՝ մայոր Խ. Հ. Պայազատյանը, կապիտաններ Կ. Պ. Մացոկը, Յ. Հ. Լիլոյանը, ավագ լեյտենանտ Ա. Ա. Աթոյանը, լեյտենանտ Ա. Գ. Ջաքարյանը, շարքային Գ. Ա. Սողոմոնյանը, Խիզախության համար մեդալով՝ ավագ սերժանտ Ա. Ս. Հակոբյանը, ևֆրեյտոր Խ. Ս. Գալստյանը, շարքայիններ Ա. Ա. Ազաջանյանը, Գ. Մ. Յակուբը, Մարտական ծառայությունների համար մեդալով՝ բժ. ծառայության ավագ Գ. Մ. Մալյանը, ավագ Ա. Բ. Շիրինյանը, ավագ սերժանտ Ա. Փ. Գրիգորյանը, շարքային Ս. Ս. Դիվանյան և շատ ու շատ ուրիշներ։

Հնարավոր չէ թվարկել շքանշաններով ու մեդալներով պարգևատրված բոլոր 4200 ռազմիկների անունները։ Նրանք բոլորն էլ արժանի են գովասանքի, փառքի ու պատվի։

Թամանի ազատագրման հերոսամարտերում իրենց կյանքը զոհաբերեցին դիվիզիայի ռազմիկներից շատերը, որոնց անունները երախտագիտությամբ միշտ կհիշի ժողովուրդը։ Դրանց թվումն են հայ ժողովրդի պանծալի զավակներ, Խորհրդային Միության հերոսներ Հ. Մ. Ավետիսյանը և Ս. Ս. Առաքելյանը, ինչպես նաև Շ. Օգանովը, Տ. Ա. Բարսեղյանը, Ս. Հ. Աբրահամյանը, Ա. Խ. Խաչիրյանը, Ա. Մ. Առաքելյանը, Վ. Ա. Խաչատրյանը, Գ. Ս. Անտոնյանը և ուրիշներ։

Թամանի ազատագրումից հետո դիվիզիան գտնվում էր

Կերչի նեղուցից ոչ հեռու Պրիմորսկայա ավանում։ Նա խընդիր էր ստացել կարգի բերել ստորաբաժանումները, ամփոփել անցած մարտերի արդյունքները, ուսումնասիրել նրբանց փորձը և պատրաստվել հնարավոր գործողություններին։ Ամբողջ անձնակազմը օր ու գիշեր հառնդուն աշխատում էր այդ խնդրի կատարման համար։ Բոլորն աշխատում էին անսահման ոգևորությամբ։ Այստեղ դիվիզիան տառնում է մեծ համալրում։

Հոկտեմբերի 12-ին 89-րդ դիվիզիա ժամանեց Գերագույն Գլխավոր հրամանատարության ներկայացուցիչ, Խորհրդային Միության մարշալ Ս. Կ. Տիմոշենկոն։ Նրա հետ էին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Ի. Ե. Պետրովը, 18-րդ բանակի հրամանատար գեներալ-գնդապետ Կ. Ն. Լևանևսկին։ Նրանք նղան դիվիզիայի բոլոր գնդերում, զրույցներ անձնակազմի հետ և իրենց զոհասանքի խոսքն ասացին 89-րդ դիվիզիայի ու նրա բոլոր ռազմիկների հասցեին՝ Թամանում ցուցաբերած քաջագործությունների համար։ Թանկագին հյուրերը շնորհավորեցին դիվիզիային՝ նրա Թամանյան կռման առթիվ։ Դիվիզիայի անձնակազմը սիրելի հյուրերին ամենուրեք դիմավորեց մեծ խանդավառությամբ։

Նույն օրը, առնիտարական գումարտակի մեծ վրանի տակ տեղի ունեցավ դիվիզիայի անձնակազմի ներկայացուցիչների հանդիպումը հյուրերի հետ, որից հետո կազմակերպվեց հանդիսավոր ճաշկերույթ։ Այնտեղ էին դիվիզիայի ողջ ակտիվը, մարտերում աչքի ընկած բազմաթիվ ռազմիկներ։

Այդ հանդիպման մասին «Կարմիր դինվոր» թերթի հոկտեմբերի 13-ի համարում տպագրված հաղորդագրության մեջ ասված էր.

«Հանդիսավոր ճաշկերույթը վերածվում է մեր հայրենիքը գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրելու, մեր ժողովուրդների մեծ բարեկամության մի ցույցի։

Հավաքվածները բուռն և երկարատև ծափերի տարափի

ատակ կենացներ են խմում ի պատիվ Խորհրդային Միության մարշալ Ս. Կ. Տիմոշենկոյի, բանակի գեներալ Ի. Ե. Պետրովի, գեներալ-գնդապետ Կ. Ն. Լեսելիձեի, որոնք հմտորեն ղեկավարելով Թամանյան թերակղզին թշնամուց ազատագրելու մարտական գործողությունները, հաջողությամբ կատարեցին կարևորագույն առաջադրանքը։

Հանդիսավոր ճաշկերույթում ընթերցվեց բանակի գեներալ ընկ. Ի. Ե. Պետրովի շնորհակալական նամակը՝ ուղղված հայ զինվորներին, որին ներկա եղողները դիմավորեցին բուռն ծափահարություններով և օվացիայով։ Ելույթներով հանդես եկան ընկ. ընկ. Սաֆարյանը, Գ. Հակոբյանը, Պետրոսյանը, Կարապետյանը, Մեժլումյանը, Ավալյանը, Պայազատյանը և ուրիշներ։ Նրանք ասում էին այն մասին, որ Կարմիր բանակը նրա շարքերում նաև հայ զինվորները, պատրաստ են նորանոր հարվածներ հասցնելու գերմանական զավթիչներին, որպեսզի կարճ ժամանակում ամբողջովին մաքրեն մեր հայրենի հողը ֆաշիստական աղտեղությունից»։

Բարձր հրամանատարության ներկայացուցիչների այցը զինվորներ և նրանց հանդիպումը անձնակազմի հետ, ջերմ զրույցները մեծ չափով նպաստեցին մարտական ոգու բարձրացմանն ամբողջ անձնակազմի մեջ։

Այդ օրերին զինվորներ ժամանեց նաև Հայաստանի աշխատավորության պատվիրակությունը։ Նրա կազմում էին գրողներ Աղատ Վշտունին, Հարություն Միքայելյանը, Վահան Անանյանը և Բաբկեն Շահումյանը։ Շրջելով զինվորների գնդերում և մյուս ստորաբաժանումներում, նրանք ջերմ հանդիպումներ ունեցան ռազմիկների հետ, պատմեցին թիկունքում կատարվող հայրենանվեր աշխատանքի մասին, հանրապետության բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության աշխատանքային սխրագործությունների մասին հանուն մեր մեծ հաղթանակի։ Իմանալով թիկունքի լավ աշխատանքի և իրենց հարազատների մասին, ռազմիկներն ավելի ու ավելի էին ոգե-

վորվում հետագա մարտերում նոր հաջողություններին հասնելու համար։

Այդպիսի այցելությունները թիկունքի և ռազմաճակատի միջև եղած կապի լավագույն ձևերից մեկն էին, որը շարունակվեց նաև հետագայում։

Ջերմորեն ընդունելով Հայաստանի աշխատավորության պատվիրակությունը, դիվիզիան միաժամանակ նախապատրաստվում էր իր պատվիրակությունն ուղարկել Հայաստան։ Նա պետք էր հայ ժողովրդին պատմեր դիվիզիայի մարտական գործերի ու նրա հիմնական արդյունքների մասին՝ Թամանյան թևակղզու ազատագրության համար մղած մարտերում։

Ուստի անհրաժեշտ էր պատրաստել դիվիզիայի նամակ-զեկուցագիրը, որը պետք է պատվիրակությունը վերցներ իր հետ։ Դիվիզիայի հրամանատար գնդապետ Ն. Գ. Սաֆարյանը այդ գործը հանձնարարեց քաղբաժնի պետ, փոխգնդապետ Գ. Ա. Հակոբյանին։

Քաղբաժնի ապարատի, դիվիզիայի շտաբի և գնդերի հրամանատարության մի խումբ աշխատողների միջոցով մի քանի օրում նամակ-զեկուցագրի բնագիրն արդեն պատրաստ էր, որը հավանության արժանացավ դիվիզիայի հրամանատարության կողմից։ Այն ընթերցվեց ստորաբաժանումներում և հավանության արժանացավ նաև ամբողջ անձնակազմի կողմից։

Նամակ-զեկուցագիրը հոկտեմբերի 21-ին տպագրվեց «Կարմիր զինվոր» թերթում։

Այն սկսվում է այսպես.

«Թանկագին ընկերներ.

Յոթ ամիս է անցել այն օրից, ինչ մենք ձեզանից ստացանք հայ ժողովրդի նամակ-նակազը՝ ուղղված հայ ռազմիկներին։ Այդ նամակը ամբողջությամբ գրված էր մեր եղբայրների, քույրերի, մայրերի, հայրերի ու երեխաների սրտից ու հոգուց և այն անցնելով խրամատից-խրամատ, բլին-

դաժից-բլինդաժ, հասավ ռազմաճակատում գտնվող յուրաքանչյուր հայ ռազմիկի սրտի ու հոգու խորքը։

Ստանալով Ձեր նակազը, մենք երդվեցինք պատասխանել Ձեր նամակին հերոսական մարտագործություններով, բոլշևիկյան գործերով, ամենալավ պատասխանով, որը դուք սպասում էիք մեզանից։ Եվ այսօր, մենք հպարտությամբ ամփոփելով մեր 7 ամսվա[64] մարտական գործողությունների արդյունքը, խնդրությամբ զեկուցում ենք Ձեզ այն մասին, թե ինչպես գնդապետ Սաֆարյանի դիվիզիայի հայ ռազմիկները, կենսագործելով Ձեր նակազը, կատարեցին իրենց պարտքը հզոր խորհրդային Մության հանդեպ, Հայրենիքի հանդեպ»։

Այնուհետև նամակում հանգամանորեն շարադրված են դիվիզիայի մարտական սխրանքները Թամանյան թերակղզու համար մղված մարտերում ընդդեմ ֆաշիստական զորքերի։ Այնտեղ ցույց է տրված, թե ինչպիսի սրընթաց գրոհով դիվիզիան, ռազմաճակատի մյուս զորքերի հետ միասին, ճեղքել է հակառակորդի ամուր պաշտպանության կապույտ գ.ծը 352,1 բարձունքի մոտ, Դոլգայա և Սախարնայա Գոլովկա լեռների մոտ, թե ինչպիսի դժվարին ու խիզախ մարտերով դիվիզիայի զորամասերն ազատագրել են Վերխնեբականեսկայա, Նատուխաևսկայա, Կուրբացկայա, Լիմանների, Կրասնի Կուրգան, Օլխովկա, Վոզնեսենսկին, Դոստոկևսկա, Սուվորովո-Չերկասսկի, Պրիմորսկայա և այլ բնակավայրերը, ազատագրելով հազարավոր խորհրդային քաղաքացիներ, որոնք հնծում էին ֆաշիստական դերության ժոխային պայմաններում։

Նամակում ասված էր, որ այդ հերոսամարտերում իրենց անունը փառքով պսակեցին դիվիզիայի պանծալի ռազմիկներ Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը, Ջա-

---

64 Նկատի է առնված հայ ժողովրդի նամակի հրապարակումից՝ 1943 թ. փետրվարի 27-ից հետո անցած ժամանակը։ Իսկ դրանից հետո դիվիզիայի գլխավոր մարտերը գնացել էին Թամանյան թերակղզու համար։

հան Կարախանյանը, Թևմիկ Ավետիսյանը, Դևոնդ Թունյանը և շատ ու շատ ուրիշներ։

Իրենց ուրախությունը և խորին շնորհակալությունը հայտնելով Բիկունքում կատարվող հայրենանվեր ու բեղմնավոր աշխատանքի համար, հայ թամանցիները մայր ժողովրդին հավատարիցնում են, որ, «Մենք չենք հանգստանում ձևոք բերված մեր նվաճումներով։ Մեր առջև դեռևս նախկան զավթիչների լծի տակ գտնվող դեռ շատ գյուղեր ու քաղաքներ կան։ Թշնամին դեռ ուժեղ է և խարդախ։ Մենք մեր առջև դնում ենք արբազան խնդիր-գալիք ճակատամարտերում հասնել է՛լ ավելի մեծ հաղթանակների և արագացնել խորհրդային ամբողջ հողի մաքրումը գերմանա-ֆաշիստական զավթիչներից»[65]։

Թամանցիների նամակը զետեղվեց նաև Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի «Առաջ հանուն հայրենիքի» հայկական թերթի հոկտեմբերի 27-ի համարում և տարածվեց ռազմաճակատի մյուս զորամասերում։

Այդ նամակ-զեկուցումով 1943 թ. նոյեմբերի 2-ին դիվիզիայի պատվիրակությունը մեկնեց խորհրդային Հայաստան։ Նրա կազմում էին 400-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, մայոր Գևորգ Կարապետյանը (զեկավար), դիվիզիայի թերթի խմբագիր, կապիտան Սիմոն Նալբանդյանը, շարքային սակրավոր Ջահան Կարախանյանը, թերթի աշխատակից, լեյտենանտ, բանաստեղծ Աբշալույս Սարոյանը, գրող Ք. Թափալեյանը, գումարտակի հրամանատարի տեղակալ կապիտան Յուլիկ Լիլոյանը, գնդացրորդ, ավագ սերժանտ Գուրգեն Սարգսյանը, գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, կապիտան Արմենակ Խառատյանը, ռազմաճակատային թերթի աշխատակից, ավագ լեյտենանտ, բանաստեղծ Արսեն Հովհաննիսյանը։

Պատվիրակությունը մեկ ամսից ավելի եղավ Հայաստանում։ Գործարաններում, կոլտնտեսություններում, հիմ-

---

65 Боевой путь..., էջ 203։

Նարկոմյուններում ու գլխավոր վարչություններում նրա անդամները բազմաթիվ հանդիպումներ ունեցան աշխատավորական կոլեկտիվների հետ և պատմեցին դիվիզիայի մարտական գործերի մասին։

Մեր պատվիրակները վերադարձան այն ժամանակ, երբ դիվիզիան արդեն դեսանտ էր իջել Կերչում և ծանր մարտեր էր մղում Կերչ քաղաքի ու Ղրիմի ազատագրության համար։

Նովոռոսիյսկ քաղաքի և Թամանյան թերակղզու ազատագրումը Հայրենական մեծ պատերազմում Կարմիր բանակի հերոսական սխրանքներից մեկն էր, խորհրդային ժողովրդի նոր հաղթանակը։ Այստեղ ֆաշիստական զորքերի դեմ հաղթական մարտեր մղեցին 18-րդ, 47-րդ, 56-րդ, 9-րդ բանակները, Սև և Ազովի ծովի նավատորմերը, մեր ռազմաօդային ուժերը։ Նրանց սմենանակտիվ աջակցություն էին ցույց տալիս տեղական բնակչությունը և պարտիզանները։

Բարձր գնահատելով մեր զինված ուժերի և աշխատավորների ակնառու ծառայությունները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը իր 1973 թ. սեպտեմբերի 14-ի հրամանագրով Նովոռոսիյսկ քաղաքին շնորհեց Հերոս քաղաքի պատվավոր կոչում։

Պրիմորսկայա բնակավայրում հանգստանալով, դիվիզիան համառ կերպով շարունակում էր մարտական և քաղաքական ուսուցումը։ Նա պատրաստվում էր Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի մյուս դիվիզիաների հետ միասին դեսանտային գործողություններ կատարել Կերչի թերակղզում։ Դա դժվարին ու շատ պատասխանատու գործ էր, մանավանդ որ Կարմիր բանակի նախորդ երկու դեսանտային գործողությունները (1941, 1942 թթ.) այստեղ հաջողությամբ չէին ավարտվել։

Դեսանտային գործողությունների նախօրյակին, 1943 թ. հոկտեմբերի վերջին—նոյեմբերի սկզբին դիվիզիայի ռազմիկները մամուլի հաղորդումներից իմանում էին թիկունքում, խորհրդային Հայաստանում կատարվող հայրենանվեր աշխատանքի, դիվիզիային Թամանյան պատվավոր կոչում

շնորհելու կապակցությամբ աշխատավորության բուռն ոգևորության մասին:

«Սովետական Հայաստան» թերթի հոկտեմբերի 12-ի խմբագրական հոդվածում ասված էր, որ դիվիզիային Թամանյան կոչում շնորհելը «...մեր սրտերը լցրեց ուրախությամբ և հպարտությամբ: Մեր պանծալի զավակները պատվով են կատարում իրենց ժողովրդի պատգամը: Նրանք իրենց արյունով ապացուցեցին անսահման նվիրվածությունը Խորհրդային Հայրենիքին»:

Ոգևորվելով Թամանցիների ձեռք բերած հաղթանակներով, հանրապետության աշխատավորները աշխատանքային սխրագործության նորանոր պարտավորություններ էին վերցնում և պատվով կատարում դրանք: Այդ կապակցությամբ հրավիրված միտինգում Կիրովի անվան գործարանի առաջավոր բանվոր Բաղդասարյանն ասում էր. «Ես միշտ կատարել եմ իմ պլանները, բայց այժմ իմանալով Թամանում մեր եղբայրների հերոսական սխրագործությունների մասին, բարձրացրի աշխատանքիս արտադրողականությունը և ամեն օր, առաջադրանքները կատարում եմ 300 տոկոսով: Պարտավորվում եմ տալ էլ ավելի շատ արտադրանք»: Ջերժինսկու անվան հատուցաշինական գործարանի բանվոր Ա. Նազլոյանն ասել է. «Ամեն օր ես արտադրական նորմաս կատարում եմ 200—300 տոկոսով»[66]: Իմանալով 89-րդ դիվիզիային Թամանյան կոչում շնորհելու ուրախալի լուրը, նա խոստանում է էլ ավելի լավ աշխատել, էլ ավելի շատ արտադրանք տալ: Նույնպիսի պարտավորություններ են վերցնում այդ գործարանի բանվորներ Ն. Սոկոլովը, Լ. Տեր Հարությունյանը, Ս. Սարգսյանը և շատ ուրիշներ[67]: Մեծ ոգևորությամբ էին աշխատում արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառների աշխատավորները:

---

66 «Սովետական Հայաստան», 1943, հոկտեմբերի 12:

67 Նույն տեղում:

Սրտաբուխ հատուկ նամակով հայ թամանցիներին ողջունեցին դիվիզիայի մի խումբ ռազմիկների կանայք։ Նամակը վերջանում էր այսպես.

«Մենք գիտենք, որ կգա այն երջանիկ ժամը, երբ դուք, ջախջախելով Յուդենիչին, հաղթանակով կվերադառնաք տուն։ Դա շուտով կլինի։ Իսկ մինչև այդ, դուք ռազմաճակատում, մենք թիկունքում, հարազատ կուսակցության ղեկավարությամբ, կկռվենք ու կաշխատենք ավելի մեծ եռանդով»[68]։

Թամանցիներին չերմորեն ողջունեցին ֆանրապետության աշխատանքային շատ կոլեկտիվներ, նշանավոր մարդիկ և հարազատները։

Իմանալով այդ բոլորի մասին, թամանցիները մեծ ուրախություն էին ապրում։

Մտածում էին դիվիզիայի՝ կերշում դեսանտային գործողություններ սկսելու օրերը։

68 Боевой путь..., էջ 192։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

ՂՐԻՄԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐՈՒՄ

1. ՀԱՆՈՒՆ ԿՈՐՉԻ

Թամանյան թևրակղզու ազատագրումից հետո, ինչպես նշեցինք, 89-րդ դիվիզիան կենտրոնացել էր Պրիմորսկայա բնակավայրի շրջակայքում։ Այստեղ նա մեկ կողմից ամփոփում և ուսումնասիրում էր այդ թևրակղզու ազատագրության համար մղած մարտերի արդյունքները, համալրում շարքերը, մյուս կողմից եռանդուն կերպով նախապատրաստվում դեսանտային գործողությունների՝ Կերչի թևրակղզի իջնելու համար։ Մարտական ուսուցման պարապմունքներն ընթանում էին օր ու գիշեր։ Ամբողջ անձնակազմը մեծ ոգևորությամբ և բոլոր ուժերով աշխատում է հաջողությամբ կատարել իր առջև դրված խնդիրները։

Քաղաքական-կուսակցական աշխատողները և հրամանատարները ռազմիկների հետ քրտնաջան աշխատանք էին կատարում, նրանց բացատրելով առաջին դեսանտային գործողությունների ամբողջ լրջությունն ու պատասխանատվությունը։ Այդ աշխատանքի գլխավոր իմաստը կայանում էր նրանում, որ դեսանտային գործողությունները պետք է կատարել համարձակ և անվախ, որ ոչ մի դեպքում հետ չպետք է նայել, միշտ առաջ ընթանալ և կրակի բոլոր միջոցներով ճնշել հակառակորդին։ Ամեն մի, թեկուզ փոքրագույն նահանջ, կորստաբեր է, կործանարար, որովհետև հետևում ծովն է։ Երբեք չպետք է մոռանալ 1942 թ. գարնանը նույն

Կերչի թերակղզում մեր զորքերի անհաջողությունները։ Դրա համար մենք պետք է անողոք վրեժ լուծենք ֆաշիստներից։

Բոլոր զորամասերում և ստորաբաժանումներում ստեղծվել էին դեսանտային գրոհային ջոկատներ, որոնք ծանոթանում էին դեսանտային գործողությունների փորձին, ուսումնական պարապմունքների ընթացքում իրագործում այդ փորձը, հանգամանորեն ուսումնասիրում կրակային միջոցները և նրանց փոխգործողությունները։

Այդ աշխատանքներն ընթացան ավելի քան մեկ ամիս՝ հոկտեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 14-ը։ Դիվիզիան հաջողությամբ կատարեց դեսանտային գործողությունների համար նախապատրաստվելու իր առջև դրված խնդիրները։ Այդ ակնառու կերպով ցույց տվեցին բարձր հրամանատարության կողմից կատարված տեսչական ստուգումները և դիվիզիայի հետագա մարտական գործողությունները։

Նոյեմբերի 2-ին հատուկ թերթիկի վրա տպագրվում է Առանձին Մերձծովյան բանակի ռազմական խորհրդի կոչը, ուղղված ավյալ բանակի ամբողջ անձնակազմին՝ Ղրիմում դեսանտային գործողություններ սկսելու համար։ Դա մոբիլիզացնող մի մարտական կոչ էր։

Այնտեղ ասված էր, որ Առանձին Մերձծովյան բանակին Հայրենիքը վստահել է խոշորագույն և պատասխանատու գործ՝ ֆաշիստական զավթիչներից ազատել և Հայրենիքին վերադարձնել նրանց լծի տակ հեծող մեր հարազատ Ղրիմը։

Այդ նպատակով այսօր բանակի զորամասերին մարտական հրաման է տրված դեսանտ իջեցնել Կերչի թերակղզում, անցնել հարձակման, կտրել հակառակորդի դիմադրությունը, ազատագրել Ղրիմը։ Կոչը վերջանում էր այսպես.

«...Պատերազմի վերջը մոտ է։ Գերմանիայի բախտը որոշված է։ Մեր մարտական գործից, համարձակությունից և վճռականությունից է կախված անիծված գերմանացիների կործանման արագացումը։ Մեր հարվածների տակ գերմանացիները չդիմացան Կուբանում և Թամանում։ Նրանք

չեն դիմանա նաև Ղրիմում: Մարտական, նոր հաղթական գործերով բազմապատկենք մեր փառքը, կատարենք մեր պարտքը ժողովրդի և պետության առաջ:

... Բարձր պահենք մեր մարտական դրոշները: Առաջ Բշնամու վրա: Առաջ հանուն Կերչի, հանուն խորհրդային Ղրիմի: Առաջ հանուն հաղթանակի»[1]:

Այս կոչը նույնպես մեծ չափով նպաստեց բոլոր ռազմիկների մարտական ոգու բարձրացմանը:

Երկարատև ատակիկական պարապմունքներից հետո, դիվիզիայի անձնակազմը հանգստանում էր: Նոյեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Կերչի նեղուցի կողմից հրետանային համազարկերի և ինքնաթիռներից ռմբակոծությունների ուժեղ որոտներ լսվեցին: Չնայած նոր էինք սկսել հանգիստը և շատերն արդեն խորը քնի մեջ էին, բոլորս անմիջապես արթնացանք ու մարտական վիճակի պատրաստվեցինք: Ինչ որ վատ բաներ անցան մեր մտքերով: Երկնակամարը փայլատակում էր կրակոցներից: Ուշադրությամբ դիտելով, շուտով համոզվեցինք, որ այդ մեր հրետանին ու ինքնաթիռներն էին, որ ռմբակոծում էին Կերչ թերակղզու ափերը: Կրակային ճնշումն այնքան ուժեղ էր, որ հակառակորդի կողմից միայն հատ ու կենտ կրակոցներ էին լինում: Մեր զորքերը սկսել էին դեսանտային գործողությունները:

Դիվիզիայի հրամանատարությունը այդ գիտեր: Սակայն ռազմական գաղտնիքի նկատառումներով անձնակազմը չգիտեր և նրա միայն իմացավ: Այդպես, մենք իմացանք բաղձալի օրվա մասին, որը բոլորիս մեծ ուրախություն պատճառեց և ավելի ու ավելի զգաստացրեց:

Այսպիսով, 1943 թ. նոյեմբերի 2-ին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը իրենց առաջին դեսանտային գործողությունները սկսեցին Կերչի թերակղզում, որոնք անցան հաջողությամբ: Այդ մասին խորհրդային ինֆորմբյուրոյի նոյեմբերի 6-ի օպերատիվ ամփոփագրում ասված էր:

---

1 Боевой путь..., էջ 289:

«Օրերս Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորքերը Սևծովյան նավատորմի և Ազովյան ռազմական նավատորմիկի հետ փոխգործակցելով դեսանտային հաջող գործողություն անցկացրին՝ զորքեր ափ հանելով Կերչի թերակղզու արևելյան ափում և Կերչ քաղաքից հյուսիս-արևելք ու հարավ ընկած շրջաններում: Կերչ քաղաքից հյուսիս-արևելք մեր զորքերը, կատորելով հակառակորդի դիմադրությունը, տիրեցին Օսսովինա, Մայակ, Ժուկովկա, Օպասնայա, Կրեպոստ, Նեֆկալե, Բակի, Կապկաճի ուժեղ ամրացված հենակետերը, այդ շրջանում հենակետ ստեղծելով 10 կիլոմետր ճակատով և 6 կիլոմետր խորությամբ: Կերչ քաղաքից հարավ մեր դեսանտային զորամասերը տիրեցին հակառակորդի ուժեղ ամրացված հենակետ Էլտիգենին: Ափ իջած մեր զորամասերի դեմ ձեռնարկված անընդհատ հակագրոհները հետ մղվեցին հակառակորդի համար մեծ կորուստներով»[2]:

Դեսանտային առաջին գործողությունները սկսեցին մեր հարևան գվարդիական պանծալի զորամասերը: Դրանք հերոսական գործողություններ էին: Նոյեմբերի 4-ին ստացանք «Знамя Родины» բանակային թերթի նույն օրվա համարը: Այնտեղ տպագրված էր դեսանտային գործողությունների մասնակից, զինվորական թղթակից, մայոր (հետագայում խորհրդային Միության հերոս) Ս. Բորզենկովի հոդվածը: Այն պատմում էր մեր դեսանտային զորամասերի առաջին օրվա՝ նոյեմբերի 2-ի մարտական գործողությունների ու հերոսական սխրանքի մասին: Այնտեղ նկարագրված էր, թե հրետանային ինչպիսի ուժեղ համազարկերի տակ մեր դեսանտայինները դուրս են եկել Կերչի նեղուցը և կատորելով հակառակորդի կատաղի դիմադրությունը, ափ են իջել թերակղզում: Մեր հարազատ հողի վրա առաջինը ոտք են դրել կապիտան Նիկոլայ Բելյակովի և Պետր Ժուկովի գումարտակները, որոնց հետևել են մյուս ստորաբաժանումները:

---

2 Сообщения Советского Информбюро, 5, Москва, 1944, էջ 225—226:

Ջախջախիչ հարվածներ հասցնելով հակառակորդին, նրանք գրավել էին Բշնամու մի շարք պաշտպանական կետեր և վերցրել առաջին գերիները:

Բշնամին կատաղի դիմադրում էր, նպատակ ունենալով դլխովին ոչնչացնել մեր դեսանտներին: Ամբողջ օրը՝ առավոտվանից մինչև ուշ երեկո շարունակվում էին համառ մարտերը: Բշնամուն հետզհետե էին հարվածում մեր ռազմիկները: Վերջավոր կարմիր բանակային Պետր Զնորան այդ մարտերում ապանում է 8 ֆաշիստի, նշանառու Կիլացկին իր դիպուկ կրակով ոչնչացրել էր Բշնամու տանկը, գընդացրային կրակակետը և 50 ավտոմատավոր, իսկ ավտոմատավորներ, կրտսեր սերժանտ Միխայիլ Լոյաղան և Ստեփան Ռարանովը 40-ից ավելի ֆաշիստ: Կարմիրբանակայիններ Բուկնելը, Գավրիլովկին և Կրիվենկոն իրենց հակառակային հրացաններով ու նռնակներով շարքից հանել էին Բշնամու մեկական տանկ: Միայն առաջին օրում Բշնամին մեր դեսանտայիններին դեմ կազմակերպել էր տանկային 19 գրոհ, մեծ թվով հետևակի աջակցությամբ: Սակայն այդ բոլոր գրոհները մեր քաջարի դեսանտայինները ետ են մղում, Բշնամուն պատճառելով մեծ կորուստներ: Իհարկե, իրենք ևս զգալի կորուստներ էին ունեցել: Սրբ վրա է հասնում գիշերը, գրավված հենակետում ամր են իջնում մեր նոր զորամասերը, ամրապնդում այն:

Հաջորդ օրերին շարունակվում են ավելի ու ավելի համառ մարտերը, որոնց ընթացքում, հետ մղելով Բշնամու գրոհները, մեր դեսանտային զորամասերը աստիճանաբար ընդարձակում և ամրապնդում են Կիրչ քաղաքի մոտ գրաված հենակետը, որը, ինչպես ասեցինք, նոյեմբերի 6-ին ճակատով 10 կիլոմետր էր, խորությամբ՝ 6: Այդ հենակետը օրից օր պաշտպանում էր մեր ավիացիան, որը գնալով, ավելի ու ավելի ուժեղացնում էր ճնշումը Բշնամու վրա:

Էլտիգենի դեսանտային գործողությունը իրականացրեց 318-րդ հրաձգային դիվիզիան՝ խորհրդային Միության հերոս, գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Վ. Ֆ. Գլադ-

կոմի հրամանատարությամբ։ Այդ դիվիզիայի կազմում էր գործում 1337-րդ հրաձգային գունդը, որի հրամանատարն էր հայ ժողովրդի քաջարի զավակ, փոխգնդապետ Գրիգոր Բլբուլյանը։ Իր և իր ղեկավարած զորամասի մարտական գործերով նա աչքի էր ընկել դեռևս Հյուսիսային Կովկասի, Թամանի, մասնավորապես հերոս քաղաք Նովոռոսիյսկի համար մղած մարտերում։

Այստեղ, Էլտիգենում ևս նա կատարեց հերոսական գործեր, որոնց համար պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Գ. Բլբուլյանի քաջագործությունների մասին Վ. Ֆ. Գլադկովը գրել է. «Ես երբեք չեմ մոռանա 1337-րդ գնդի քաջ հրամանատար Բլբուլյանի սխրագործությունները։ Նրանից խիստ սարսափում էին հիտլերականները։ Միայն մեկ օրվա ընթացքում նրա դյուցազունները ևս են մղել երկու հակահրոհ, մեծ կորուստներ պատճառել թշնամուն։ Նրա ղեկավարած գունդը 50 օր մնաց շրջապատման մեջ, բայց և այնպես հակառակորդին չհաջողվեց ընկճել սովիտական աննկուն մարտիկների պողպատյա կամքը։ Նրանք համառ մարտերով դուրս եկան թշնամու կրակի օղակի միջից և մյուս զորամիավորումների հետ մեկտեղ մասնակցեցին Կերչի ազատագրման մարտերին»[3]։

Կերչի թերակղզում մեր զորամասերի դեսանտային գործողությունների ու նրանց հերոսական սխրագործությունների մասին ռազմաճակատային մամուլում լույս տեսած բոլոր կարևոր նյութերը 89-րդ դիվիզիայի քաղաքական կուսակցական աշխատողները և հրամանատարները, ամենայն ուշադրությամբ, մասսայականացնում էին անձնակազմի մեջ։ Ռազմիկները տեսնում էին, թե ինչպիսի հերոսությամբ են մարտնչում թշնամու դեմ խորհրդային երկրի բոլոր ժողովուրդների զավակները։ Ռազմիկների մեջ ավելի ու ավելի էր ամրապնդվում Կերչի հենակետը մեր ձեռքում պահելու, 1942

3 «Ավանգարդ», 10 ապրիլի 1974։

թվականի անհաջողությունը չկրկնելու հավատը: Իսկ դա շատ կարևոր էր:

Բանակի և դիվիզիայի քաղբաժինների հրահանգների համաձայն, այդ օրերին մեր դիվիզիայի անձնակազմի շրջանում մեծ աշխատանք կատարվեց Ղրիմի կարևոր ստրատեգիական նշանակությունը պարզաբանելու, այնտեղ ֆաշիստների կատարած բարբարոսությունները կոնկրետ փաստերով ցույց տալու համար: Զրույցների ընթացքում քաղաշխատողները և հրամանատարները բանակայիններին բացատրում էին, որ Ղրիմի թերակղզին խորհրդային Միության մարգարիտն է նրա հարավային սահմաններում: Մեծ է նրա նշանակությունը ստրատեգիական և տնտեսական տեսակետից: Այնտեղ են գտնվում մի շարք կարևոր նավահանգիստներ՝ Սևաստոպոլը, Կերչը, Թեոդոսիան, Յալթան և այլն, որոնց միջոցով մեր երկիրը ծովային ճանապարհներով դուրս է գալիս միջերկրական ծով և կապեր հաստատում աշխարհի շատ երկրների հետ: Ըստ որում, Սևաստոպոլը ամենից առաջ հանգիստանում է ռազմական նավահանգիստ, որը ունի իր պանծալի հերոսական պատմությունը: Նա ավելի քան 160 տարի եղել է և կմնա մեր երկրի պաշտպանության կարևոր օղակներից մեկը, այնպիսին, ինչպես Կրոնշտատը Բալթիկ ծովում, Մուրմանսկը՝ հյուսիսում, Վլադիվոստոկը՝ խաղաղ օվկիանոսում: Իր հերոսական սխրանքներով Սևաստոպոլը փառաբանվեց 1941—1942 թվականների պաշտպանական մարտերի ժամանակ, երբ նրա պատերի տակ ոչնչացվեցին ֆաշիստական 300 հազար զինվորներ ու սպաներ: Ղրիմը՝ այդ մեր երկրի հուսալի ամրոցն է հարավում, որը ապահովում է Սև ծովի ափերը:

Իրենց զավթողական պլաններում ֆաշիստները Ղրիմը դիտում էին որպես կարևորագույն հենակետ Հյուսիսային Կովկաս և Անդրկովկաս մտնելու, դեպի Մերձավոր Արևելք և Հնդկաստան շարժվելու համար: Ուստի ապատագրելով Ղրիմը, մենք հիմնովին կփակենք Թշնամու ճանապարհը այդ ուղղությամբ, կապահովենք մեր մեծ հայրենիքի հա-

բավային տերիտորիաների անձեռնմխելիությունը։ Այդ խնդրի հաջող կատարումով մենք կիշխենք Սև ծովում և ավելի ու ավելի ուժգին հարվածներ կհասցնենք ֆաշիստական Գերմանիայի ու նրա սատելիտների զորքերին։

Հյուսիսային կողմից 4-րդ ուկրաինական ռազմաճակատի մեր զորքերը գտնվում են Պերեկոպում, և ցամաքից փակել են Ղրիմ նահանջի ճանապարհը։ Իսկ մեր ռազմաճակատի զորքերն արդեն հենակետեր էին գրավել Կերչի բերդակղզում, ուր շուտով կանցնի նաև հայկական դիվիզիան։

Ուրեմն հասել է մեր հարազատ Ղրիմը աղատագրելու ժամը։ Դրա համար հայրենիքը, ամբողջ խորհրդային ժողովուրդը սպասում է մեր նորանոր սխրանքներին։

Այդ խոսքերը դիվիզիայի ռազմիկներն ընկալում էին մեծ ուշադրությամբ և ըմբռնում իրենց առաջիկա մարտական գործողությունների ամբողջ դժվարությունն ու պատասխանատվությունը, քանի որ Ղրիմին կատաղաբար դիմադրում էր։

Դիվիզիայի դեսանտային գործողությունների անմիջական նախօրյակին անձնակազմի հետ մեծ աշխատանք կատարվեց նաև Ղրիմում ֆաշիստների զաղանությունները ցույց տալու, նրանց նկատմամբ անհաշտելի ատելությունը ավելի ու ավելի ուժեղացնելու նպատակով։ Իսկ դրա համար կային բազմահարուստ փաստեր։ Ինչպես զավթած մյուս վայրերում, նույնպես և Ղրիմում ֆաշիստները զաղանաբար ոչնչացնում էին խորհրդային մարդկանց։ Սևաստոպոլը զավթելու առաջին իսկ օրերին նրանք այնտեղ ոչնչացրել էին ավելի քան 12.000 խորհրդային քաղաքացի, Եվպատորիայում՝ մոտ 15.000։ Սիմֆերոպոլի 150 հազար բնակչից մնացել էր մոտ 70 հազար։ Ֆաշիստները զաղանաբար սպանել և Կերչի մոտ Բագերովյան հակատանկային փոսերն էին լցրել ավելի քան 7000 խորհրդային մարդկանց՝ զինվորական ռազմագերիների, կանանց, երեխաների ու ծերունիներ-

բի[4]։ Նրանք Ղրիմից տասնյակ հազարավոր մարդկանց սորբկական աշխատանքի էին ուղարկել Գերմանիա, որոնց մեծ մասը սովամահության և կամայականության զոհ դարձան։

Ինչպես ամենուրեք, նույնպես և այստեղ՝ Ղրիմում ֆաշիստները բալանել էին ամբողջ ժողովրդական հարստությունը։ Մաղկող քաղաքներն ու գյուղերը վեր էին ածվել ավերակների։ Ղրիմում գործող ֆաշիստական 11-րդ բանակի հրամանատար գեներալ Ֆոն-Մանշտեյնը դեռևս 1941 թ. աշնանը իր զինվորներին խոստացել էր պատերազմն ավարտելուց հետո Ղրիմում նրանց ապահովել հողով։ Ահա թե ինչու ֆաշիստական բանդիտներից մեկը՝ Ռուդի Ռուշելը իր կնոջը Ղրիմից գրում էր. «Այստեղ հրաշալի վիլլաներ կան։ Ինձ համար ևս արդեն ընտրել եմ մեկ տեղամաս։ Ախ, եթե այն ինձ մնար։ Համենայն դեպս, ևս արդեն դիմում եմ ներկայացրել գնդապետին և նա ինձ խոստացել է»[5]։ Այդպես էր նրանց ախորժակը։ Ֆաշիստները աչնչացրել ու թալանում էին Ղրիմի կուլտուրական արժեքները։ Ֆոն-Մանշտեյնն իր անձնական կարիքների համար վերցրել էր Բանգարանային բազմապիսի արժեքավոր իրեր։

Ղրիմում ապրող տարբեր ժողովուրդներին ֆաշիստները հրահրում էին միմյանց դեմ։ Այս գործում, ինչպես և մյուս բոլոր հարցերում, ֆաշիստներին օգնում էին տեղական բնակչության մեջ գտնվող առանձին դավաճաններ։

Ագիտացիայի ժամանակ այդ և մյուս միջոցների օգտագործումը նույնպես զգալի չափով նպաստեցին ֆաշիստների նկատմամբ դիմադրության ոգու թուլությունը բորբոքելու գործին։

Նոյեմբերի 14-ին դիվիզիան մարտական հրաման ստացավ Պրիմորսկայա բնակավայրից շարժվել դեպի Կերչի ներգրավում գտնվող Ջուլկա ցամաքամղուն, հիմնական ուժերով կենտրոնանալ այնտեղ և պատրաստ լինել սկսելու դե-

4 Крым был и будет советским, Изд. газеты «Красный Крым» 1943, էջ 12։

5 Նույն տեղում, էջ 14։

ատնտային գործողությունները։ Մի քանի օրում արդեն ամեն ինչ պատրաստ էր։ Նոյեմբերի 21-ի գիշերը առափնյա մեր հրետանային ուժեղ կրակի պաշտպանության ներքո, դիվիզիայի զորամասերը, Չուշկայի ափերից սկսեցին նստել նավակները և շարժվել դեպի Կերչ թերակղզին։ Առաջինը գնաց փոխգնդապետ Ե. Կարապետյանի 390-րդ հրաձգային գունդը, որը հաջողությամբ ափ իջավ և նշանակված վայրում անմիջապես մարտական դիրքեր գրավեց։ Դիվիզիայի քաղբաժնի կողմից այդ գնդին ամրացված էր սույն տողերի հեղինակը։

Երբ մոտեցանք Կերչի ափերին, նավակները մինչև ափ չկարողացան հասնել, որովհետև ափի խորությունը քիչ էր։ Այդ պատճառով ռազմիկները իջնում էին ջրի մեջ և ապա դուրս գալիս ափ։ Մինչև մեջքները նրանք թրջված էին։ Եվ չնայած դրան, բոլորի մարտական ոգին բարձր էր։ Իրենց կարգի բերելով, նրանք անմիջապես մարտական դիրքեր գրավեցին։ Մարտիկների շրջանում առանդուն աշխատանք էին կատարում գնդի հրամանատար փոխգնդապետ Ե. Կարապետյանը, քաղաքական գծով նրա տեղակալ փոխգնդապետ Ն. Մեժլումյանը, գնդի կուս. կոմիտեի քարտուղար, կապիտան Ս. Թանգյանը, գումարտակի հրամանատար կապիտան Մ. Մուրադյանը, ագիտատոր, կապիտան Ա. Սուքիասյանը, քաղղեկ Համո Օհանյանը, ստորաբաժանումների հրամանատարներ և ուրիշներ։

Շուտով Կերչի թերակղզի փոխադրվեցին նաև դիվիզիայի մյուս զորամասերը։

Չնայած թշնամու հրետանային և օդային կատաղի ռմբակոծություններին, դիվիզիայի դեսանտային գործողությունները հաջող անցան, առանց մեծ կորուստների։

Այժմ նույնպիսի հաջողությամբ պետք էր շարունակվեին մարտերը Հարավային Ղրիմի ազատագրության համար։

Դեկտեմբերի առաջին օրերին 89-րդ Թամանյան դիվիզիան Կերչ քաղաքից արևելք՝ Վոյկովի անվան գործարանի շրջանում, առաջավոր գծում փոխարինեց մի այլ

դիվիզիայի, որը Բշնամու դեմ մղած մարտերում մեծ հռուսումներ էր ունեցել։ Մարտական խնդիր էր տրված վարել ակտիվ պաշտպանական մարտեր և նախապատրաստվել մեր մյուս միավորումների հետ միասին, կերչ քաղաքի վրա գրոհելու։ Դիվիզիայի շտաբը տեղավորված էր Աջիմուշկա քարահանքերում։

Բշնամին ստեղծել էր ամուր պաշտպանական գիծ ինչպես Կերչ քաղաքում, նույնպես և նրա շրջակա բարձունքներում, որոնց մեջ ամենից նշանավորը Միհրդատ բարձունքն էր։ Այնտեղից երևում էին մեր զորքերի գրաված համարյա ամբողջ խրամատները, պաշտպանական հանգույցները, որոնք Բշնամին պահում էր մշտական հրետանային և ականանետային կրակի ներքո։ Իսկ մեր հրանոթներն ու ականանետներն իրենց ուժեղ համազարկերով ճնշում էին ֆաշիստական հրետանու ակտիվությունը։

Կերչի համար առաջին ուժեղ մարտերը սկսվեցին 1943 թ. դեկտեմբերի 4-ին, երբ Առանձին մերձծովյան բանակի զորքերը ընդհանուր հարձակում սկսեցին Կերչի թերակղզում։ Այստեղ, բանակի մյուս դիվիզիաների ռազմիկների հետ միասին, նորանոր մարտական սխրանքներ կատարեցին նաև 89-րդ Թամանյան դիվիզիայի ռազմիկները։

1943 թ. դեկտեմբերի 13-ին Հայտնի դարձավ ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշումը 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ն. Գ. Սաֆարյանին գեներալ-մայորի կոչում շնորհելու մասին։ Այն մեծ ուրախություն պատճառեց դիվիզիայի ամբողջ անձնակազմին։ Այն ոչ միայն Ն. Գ. Սաֆարյանի զինվորական-մարտական ծառայությունների արժանի գնահատականն էր, այլև նրա ղեկավարած դիվիզիայի անձնակազմի, յուրաքանչյուր հրամանատարի ու շարքային մարտիկի։ Ուստի այն մեծ ոգևորություն առաջացրեց դիվիզիայի անձնակազմի մեջ և էլ ավելի բարձրացրեց նրա պատասխանատվությունը առաջիկա մարտերում։

Դիվիզիան շարունակում էր մնալ առաջավոր գծում և ամուր պահպանել իր գրաված դիրքերը։ Թշնամու համարյա ամենօրյա գրոհները և նրանց հետ մղումը սովորական երևույթ էին դարձել։ Իսկ երբ գրոհ չէր լինում, ֆաշիստները մշտական հրանոթային ու ականանետային կրակի տակ էին պահում մեր ոչ միայն առաջավոր դիրքերը, այլև թիկունքային հանգույցները, մասնավորապես Կերչի նեղուցը, որտեղից նավակներով, իսկ ավելի ուշ ճոպանուղիով, ըստացվում էին մեր զորքերի ռազմամթերքը և այլ մատակարարումները։ Իսկ մեր հրետանին ու ինքնաթիռները իրենց ամբակոծումներով և պատասխան կրակով ուժեղ կերպով ճնշում էին թշնամու ակտիվությունը։

Դեկտեմբերի վերջին օրերն էին։ Ավարտվում էր 1943 թվականը։ Մոտենում նոր՝ 1944 թվականը։ Բոլորս ապրում էինք այն մտքով, որ այս նոր տարին լինելու է Ի՛լ ավելի մեծ հաղթանակների տարի, քանի որ նախորդ տարին ճանապարհում էինք խոշոր հաջողություններով։ Չէ որ 1943 թվականին հերոսական Կարմիր բանակը ջախջախիչ հարվածներ հասցնելով ֆաշիստական զավթիչներին, ազատագրել էր Ռուսաստանյան ֆեդերացիայի արևմտյան մարզերը, Դոնբասը, Ձախափնյա Ուկրաինան, մի շարք տեղերում անցել էր Դնեպրը, ազատագրել Եղբայրական Ուկրաինայի մայրաքաղաք Կիևը և այլն։ Թշնամին օդակված էր Ղրիմում։ Նրա ջախջախմանը մասնակցում էր նաև մեր դիվիզիան։ Այդ ամենը մեծ հրճվանք էին պատճառում բոլորիս։

Այսպիսով, նոր տարվա նախօրյակին բարձր էր դիվիզիայի ամբողջ անձնակազմի մարտական տրամադրությունը։

Այդ օրերին 390-րդ հրաձգային դունդը առաջավոր գծից հետ էր քաշվել հանգստի։ Ստորաբաժանումներում ամփոփվում էին անցած մարտերի արդյունքները և ուսումնասիրվում առաջիկա անելիքները։ Դնդի շտաբը տեղավորված էր Այիմուշկայի քարհանքերում, իսկ ստորաբաժանումները՝

դրանից ոչ հեռու, որոշ չափով քողարկված, դաշտերում։ Դեկտեմբերի 24-ին քարհանքերում գումարվեց գնդի մարտական ակտիվի ժողովը, որը պետք էր ամփոփեր անցած մարտերի հիմնական արդյունքները և նշեր հետագա խնդիրները։ Նիստին մասնակցում էին մարտերում ամենից աչքի ընկած հրաձիգները, գնդացրորդները, սնայպերները, հրետանավորները, ականանետիչները, զրահարները, սակրավորները, կապավորները, բժշկական աշխատողները։ Ակտիվի նիստին մասնակցում էր դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Գ. Հակոբյանը, ինչպես նաև սույն տողերի հեղինակը։

Օրակարգի հիմնական հարցի՝ անցած մարտերի արդյունքների և գնդի հետագա խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ գնդի հրամանատար, փոխգնդապետ Ե. Կարապետյանը։ Նա ցույց տվեց, որ գունդը հաջողությամբ է կատարել իր մարտական առաջադրանքը։ Սակայն պետք է ավելի ու ավելի ուժգին հարված հասցնել թշնամուն, որա համար անհրաժեշտ է լիովին տիրապետել զենքի բոլոր տեսակներին, մարտերում ցուցաբերել ավելի ու ավելի խիզախություն և կազմակերպվածություն, հասնել կրակային բոլոր միջոցների ճշգրիտ համագործակցության և այն դարձնել էլ ավելի դիպուկ։

Զեկուցումից հետո ելույթ ունեցան շատերը, որոնք խոսեցին առանձին ստորաբաժանումների ու ռազմիկների մարտական գործերի մասին։

Այդ մարտերում թշնամու դեմ մասնավորապես լավ էին կռվել առաջին գումարտակի ռազմիկները, գնդի գնդացրորդները, հրետանավորները և սնայպերները։ Հերոսական գործեր էին կատարել կոմունիստներն ու կոմերիտականները։

Ակտիվի նիստում ելույթով հանդես եկավ քաղբաժնի պետ փոխգնդապետ Գ. Հակոբյանը, որը բարձր գնահատեց 390-րդ գնդի ռազմիկների մարտական գործերը։

Նոր տարին՝ 1944 թվականը դիվիզիայի ռազմիկները

դիմավորեցին լավ զործերով։ Նոր տարվա նախօրյակին դիվիզիան կարևոր հաջողություններ էր հասել Կերչի փողոցային մարտերում։ Այդ գործում իրենց բաժինն ունեին նրա բոլոր զնդերը, առանձին գումարտակներն ու սապրաժանումները, ամբողջ անձնակազմը։

Ռազմիկներից շատերն ունեին ֆաշիստներին ոչնչացնելու իրենց անձնական հաշիվը։ Այսպես, Կերչի համար մղած մարտերում կոմունիստ սնայպերներ Արշալույս Աղաջանյանը իր դիպուկ կրակով ոչնչացրել էր 61, Գավրիլ Պավլյուտկինը՝ 35, Ալեքսաներ Հախորյանը՝ 26, Ջանիբեկ Ղուկասյանը՝ 15 ֆաշիստ։ Քանի գնում այդ հաշիվներն ավելանում էին։

1944 թ. հունվարի կեսերին դիվիզիայի զորամասերը նորից փոխադրվում են առաջավոր դիծ և մարտերի մեջ մտնում Բշնամու հետ։ Այդ մարտերն իրենց բնույթով դեպրապանյապաս դիրքային էին, այսինքն իրենց գրաված դիրքերից ու խրամատներից հակառակորդները իրենց կրակային միջոցներով համարյա մշտապես հարվածում էին միմյանց։ Միայն առանձին դիշերներին որոշ զադար էր լինում։ Իսկ այդ զադարը շատ հաճախ ընդհատում էին մեր ինքնաթիռները, որոնք իրենց գրոհներով ռումբեր էին թափում ֆաշիստական դիրքերի ու թիկունքային ամրությունների վրա։ Օդային այդ գրոհները իրագործում էր մեր «կուկուրուզնիկների» ստեղծված հատուկ զունդը, որի բոլոր օդաչուները կանայք էին։ Մենք բոլորս այդ գիտեինք և մեծ հրճվանք էինք ապրում, տեսնելով, թե ինչպես մեր խորհրդային կանայք հերոսական մարտական գործեր էին կատարում։ Օդում մենք շատ հաճախ պարզ կերպով տեսնում էինք, թե ինչպիսի ոմբակոծություններ էին կատարում մեր հերոս օդաչուները և խորը ցավ էինք զգում, երբ նկատում էինք, որ ինքնաթիռների որոշ մասը թշնամու զենիթային կրակից վնասվում էր և չէր վերադառնում։ Մեր այդ ինքնաթիռները կատարում էին ցածր թռիչք և թշնամուն հարվածում էին անվրեպ կերպով։ Ինչպես պատմում էին ֆաշիստական գե-

բինները, նրանք մեծ վախ էին զգում մեր «կուկուրուզնիկների» հարձակումներից։

Կերչ քաղաքի մատույցներում, Աջիմուշկա բնակավայրի մոտ 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան մտնում է 16-րդ հրաձգային կորպուսի կազմի մեջ։ Քաղաքի համար ծավալված հենց առաջին մարտերում, մյուս դիվիզիաների հետ միասին, սկսում է հարձակումը։ Թշնամին ցույց է տալիս ուժեղ դիմադրություն։ Հարվածելով իր կրակային միջոցներով, դիվիզիան մեծ վնասներ է պատճառում։ Հունվարի 22—24-ի մարտերում նա ոչնչացնում է ֆաշիստական 700 զինվոր և սպա, գերում 38-ին, ավար վերցնում 3 հրանոթ, 12 գնդացիր, զինամթերքի մի քանի պահեստ և այլ ռազմավար[6]։

Այդ մարտերի ժամանակ, նա մղելով թշնամուն, դիվիզիայի զորամասերը առաջ են շարժվում, գրավելով մի քանի փողոցներ ամրանում են այնտեղ։ Հունվարի 26-ին նա մղելով թշնամու գրոհը, 390-րդ գնդի 2-րդ գումարտակը անցնում է Կաատերլեզ ջրանցքը, նա մղում թշնամու 3 տանկերի գրոհը։ Քաղաքի մի քանի փողոցներում տեղի են ունենում ձեռնամարտեր, որոնցում հաղթող են դուրս գալիս 390-րդ և 526-րդ գնդերի ռազմիկները[7]։

Թշնամու հրետանու և գնդացրային կրակը խանգարում էր մեր ստորաբաժանումների գործողություններին։ Դիվիզիայի 531-րդ հրետանային գնդի 2-րդ դիվիզիոնին խնդիր էր տրված ոչնչացնել թշնամու կրակակետերը։ Իրենց դիպուկ կրակով դիվիզիոնի հրանոթները ոչնչացրին թշնամու 8 կրակակետ և մեկ դզոտ։ Այդ մարտում առանձնապես աչքի ընկավ Սերյոժա Սարգսյանի հրանոթային անձնակազմը, որը ոչնչացրեց գնդացրային 4 կրակակետ, մեկ հրանոթ և մեկ ականանետ։ Իսկ 390-րդ գնդի 2-րդ գումարտակի ականածիգ Գարեգին Շալուխյանը այդ մարտերում իր

---

6 «Боевой путь...» էջ 366։

7 Նույն տեղում, էջ 369։

դիպուկ կրակով ոչնչացրեց Բշնամու 2 կրակակետ և 7 դիվոր։

Խիզախ էր գործում Երևանի Պետական համալսարանի նախկին ուսանող, գումարտակի կուս. կազմակերպիչ լեյտենանտ Լևոն Սարգսյանը։ Քանի որ Բշնամու հրետանային կրակի պատճառով ցերեկը հնարավոր չէր դուրս գալ քարհանքներից ու խրամատներից, լ. Սարգսյանը գիշերներն էր շրջում խրամատներում, զրուցում ռազմիկների հետ, նրանց հաղորդում մեր զորքերի հաջողությունների մասին։ Հետախուզության արդյունքներից հայտնի դարձավ, որ հակառակորդը պատրաստվում է լուսադեմին հակահարձակման անցնել։ Լսելով այդ մասին, լ. Սարգսյանը որոշում էր մնալ առաջապահների մոտ։ Վերցնելով ձեռքի գնդացիրը, նա հարմար դիրք է գրավում և սպասում Բշնամու երևալուն։ Շուտով նա նկատում է, որ ֆաշիստական զինվորները սողալով շարժվում են դեպի մեր դիրքերը։ Նրանց մոտ թողնելով մինչև 70—75 մետր, լ. Սարգսյանը սկսում է գնդացրային անվրեպ կրակը, ոչնչացնելով տասնյակ ֆաշիստների։ Կուսակազմակերպչին հետևում են մյուս մարտիկները, որոնք մեծ վնասներ են պատճառում Բշնամուն և հետ մղում։

Բշնամու դեմ հերոսաբար էր կռվում 400-րդ գնդի 2-րդ գումարտակը, որի հրամանատարն էր կապիտան Հ. Սիմոնյանը, իսկ քաղաքական գծով նրա տեղակալը՝ քաղղեկ Հրաչիկ Ալայանը։ Մարտում գումարտակը նախաձեռնությունը միշտ պահում էր իր ձեռքում և ջախջախիչ հարվածներ հասցնում Բշնամուն։

Գումարտակի դիմաց գտնվող Բշնամին հատկապես գիշերը վախենում էր կրակ բաց անել, քանի որ յուրաքանչյուր կրակակետ բացահայտելուց անմիջապես հետո, Հ. Սիմոնյանի գումարտակի կրակային բոլոր միջոցներով անմիջապես ոչնչացվում էր։

Ջաշակորով էին գործում ավագ լեյտենանտ Վանիկ Պետրոսյանի վաշտի սակրավորները։ Մութ ու ցուրտ գի-

շեր էր։ Ուժեղ փչող սառը քամին հասնում էր մինչև մարդու ոսկորները։ Համառ մարտեր էին գնում Կերչի փողոցներում։ Թշնամին կատաղաբար դիմադրում էր։ Սակրավորներ կոմունիստ Բեգլար Վասիլյանը, կոմերիտականներ Շարբաթ Գաբրիելյանը և Արգամ Բադալյանը մարտական կարևոր առաջադրանք են ստանում՝ անցուղի պատրաստել քաղաքի միջով անցնող Կատերլեզ գետակի վրայով, որի հակառակ կողմում գտնվում էր թշնամին։ Մթության մեջ թշնամին հաճախակի էր հրթիռներ բաց թողնում և անդադար կրակ վառում։ Այդ կրակը լուսավորում էր շարժման համար նպատակավոր բոլոր տեղերը։ Սակայն ոչինչ չկարողացավ խանգարել քաջարի սակրավորներին։ Արհամարհելով թշնամու կատաղի կրակը, նրանք վարպետորեն մոտենում են գետակին։ Երեք ժամ անընդհատ լարված աշխատանքի շնորհիվ սակրավորների անվախ եղբայրին հաջողվում է պատրաստել անցուղի Կատերլեզ գետակի վրայով։ Հաջողությամբ վերադառնալով, նրանք հրամանատարին զեկուցում են մարտական խնդրի կատարման մասին։

Քաջագործություն են կատարում նաև սակրավորներ Հ. Մուրադյանը, Գ. Պողոսյանը, Ա. Կարախանյանը, Վ. Կուչարովը, որոնք նույնպես անցուղիներ են կառուցում Կատերլեզ գետակի վրայով։

Կերչի փողոցային կռիվների ժամանակ ավագ լեյտենանտ Ակոպովի ականաձիգները մոտեցել էին թշնամու պաշտպանական գծին ու թաղարկվել։ Ճշտելով նշանակետը, նրանք հրամանի էին սպասում կրակ բաց անելու համար։ Երբ առաջան այդ հրամանը, անվրեպ կրակով քար ու քանդ արեցին թշնամու ամրություններն, ճնշեցին կրակակետերը։ Ցաշիատները սկսեցին փախչել այս ու այն կողմը։ Այդ ժամանակ թշնամու գլխին սկսեց տեղալ գնդացրային ու ավտոմատային ուժեղ կրակը, որով ոչնչացվեց ավելի քան 40 ֆաշիստ։ Այդ մարտում մասնավորապես աչքի ընկավ կոմսոմոլեց Սիսակ Մնացականյանը։ Մեկ այլ մարտում զոհվեց դասակի հրամանատարը։ Նրան անմիջապես փոխարի-

նեց կոմունիստ Մ. Ղամբարյանը և դասակը գրոհի տարավ թշնամու դեմ։

Կերչի փողոցային մարտերում հերոսական գործեր կատարեցին դիվիզիայի հրետանավորները։ Ընդհուպ առաջ ընթանալով հետևակի մարտական շարքերի հետևից, ուղիղ նշանառությամբ նրանք հարվածում էին թշնամուն և մարդկային ու նյութական մեծ վնասներ պատճառում նրան։ Մասնավորապես հերոսաբար էին կռվում կապիտաններ Սամախվալովի և Գ. Հովհաննիսյանի հրետանավորները։ Իրենց անվրեպ կրակով նրանք ոչնչացրին թշնամու ավելի քան 10 կրակային կետ։ Խիզախությամբ և անվրեպ կրակով աչքի ընկան հրանոթի հրամանատարներ, կոմունիստներ Մ. Ասուլյանը, Մ. Յայլոյանը և շատ ուրիշներ։

Դիվարդիայի կապիտան Ռուբեն Մելքումյանի վաշտին դժվարին մարտական խնդիր էր տրված։ Հետախուզական նպատակով իր վաշտի մարտական գործողություններով նա պետք է պարզեր թշնամու կրակային կետերի դասավորությունը։ Առաջնորդելով վաշտը, առանց մեծ կորուստների նա հաջողությամբ կատարում է մարտական խնդիրը։ Հայտնաբերելով թշնամու կրակային կետերը, մեր հրանոթները ուղիղ նշանառությամբ ոչնչացնում են դրանք և հանապարհ բաց անում հետևակի առաջընթացի համար։ Հարձակման ժամանակ Ռ. Մելքումյանի վաշտը առաջ էր ընթանում դժվարին մի ուղղությամբ։ Թշնամին ուժեղ կրակ էր թափում։ Մեր հրանոթային նախապատրաստումից հետո, բաջարի կապիտանը ամբողջ հասակով բարձրանում և առաջ է վազում, կոչելով՝

— Առաջ, հանուն հայրենիքի։

Նրան հետևում է ամբողջ վաշտը, որը հասնելով թշնամու արգելափակոցին, նորից պառկում է և շարունակում կրակը։ Մարտիկներից մի քանիսը սողալով, առաջ են ընթանում և կտրում ցանցալարերը։ Վաշտը նորից է բարձրանում ու առաջ ընթանում։ Նրանց առջևից գնում էր հայ

ժողովրդի քաջարի զավակ Ռ. Մեժլումյանը։ Թշնամու գընդակը խոցում է նրա սիրտը։ Նա ընկնում է հերոսի մահով։

Տեսնելով իրենց սիրելի հրամանատարի զոհվելը, վաշտի մարտիկներն էլ ավելի մեծ ցասումով շարունակում են իրենց հարձակումը և վրեժ լուծում ֆաշիստներից։ Ռ. Մեժլումյանը կադրային սպա էր։ Մասնակցել էր ֆիննական պատերազմին և Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից գտնվում էր ռազմաճակատում։ Նրա կուրծքը զարդարում էին Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշաններն ու մի շարք մեդալներ։

Կոմունիստներ սերժանտ Արտավազդ Հովհաննիսյանը և ավագ լեյտենանտ Համբարձում Անոյանը գտնվում էին խրամատում։ Հովհաննիսյանը նկատում է թշնամու երկու գնդացրորդի, որոնք գնդացիրը տեղափոխում էին։

— Տեսնք, ընկեր հրամանատար, կրակե՞մ։

— Կրակիր, եղավ հրամանը։

Հովհաննիսյանը վիր փայփայած գնդացրով սկսում է կրակել, չորս գնդակով նա երկու ֆաշիստին էլ շարքից հանում է։

— Ապրես, Արտավազդ, ասաց Անոյանը և համբուրեց նրա ճակատը։

Կերչում դեսանտ իջեցնելուց հետո, հենց առաջին մարտերում թշնամին գործում էր կատաղաբար։ Այդ մարտերից մեկի մասին «Կարմիր դինվոր» թերթի դեկտեմբերի 3-ի համարում ասված էր,— գիշերը թշնամին դուրս եկավ սպա Ե. Կարապետյանի զորամասի ստորաբաժանումներից մեկը։ Սկսվեցին ուժեղ մարտեր։ Թշնամու դեմ առաջինը սկսեցին հրանոթային մրրկային կրակը սպա Մացոկայի մարտիկները։ Նրանց օգնության հասան սպաներ Բալայանի և Հ. Հովհաննիսյանի ռազմիկները, որոնք ականանետային հզոր կրակ բացեցին հարձակվող թշնամու վրա, ջարդ տալով նրան։ Մարտի դաշտում թողնելով մեծ թվով դիակներ, թշնամին նահանջեց իր հման դիրքերից։

Կերչի մարտերում իրար են հանդիպում հայրը՝ Ա. Խա-

չաթրյանը և որդին՝ Միքայելը։ Նրանք գրկախառնվում են ու մարտը շարունակում։ Այդ մասին իմանում է Միքայելի քույրը՝ Նորան, որը նրանց ջերմ նամակ է գրում թիկունքից։ Այնտեղ ասված էր. «Սիրելի հայրիկ, չափից դուրս ուրախ ենք, որ դու և Միքայելը միասին եք ... Մենք ապրում ենք ձեր հաղթանակով, ցանկանում ենք հաջողություն»։ Հայր ու որդի իրենց մարտական հաշվում արդեն ունեին 37 սպանված ֆաշիստ»[8]։

Մարտերից մեկի ժամանակ թշնամին հարձակում գործեց մեր ստորաբաժանման վրա։ Կոմունիստ Պարգև Ղազարյանն իր ականանետով կրակ բացեց ֆաշիստների վրա, որոնք մեծ կորուստներ տալով ետ քաշվեցին։

Մարտում շարքից դուրս եկավ դասակի հրամանատարը։ Իսկ մարտը բորբոքվում էր ու ավելի կատաղի դառնում։

Այդ ժամանակ լսվեց մի խրոխտ ձայն՝

— Դասակի հրամանատարը ես եմ, լսեք իմ հրամանը։

Դա կոմունիստ Ղամբարյանն էր, որի ղեկավարությամբ դասակը մարտը ավարտեց հաջողությամբ։

Սպա Թորոսյանի ստորաբաժանումից Գյուլսուդյանն իր հրացանով սպանեց 2 ֆաշիստ, ականանետի նշանառու Մկրտչիկ Փիլոսյանը ականանետի կրակով ոչնչացրեց թշնամու 2 կրակակետ, Սարգիս Կարապետյանը՝ տասնյակ ֆաշիստների, մարտիկ Բաշխի Հակոբյանը թշնամու ուժեղ կրակի տակ ստորաբաժանումն ապահովեց զինամթերքով[9]։

Կոմունիստ Ջանիբեկ Ղուկասյանը 1944 թ. նոր տարվա՝ հունվարի 1-ի առիթով իր անձնական հրացանով շարքից հանեց 15, իսկ գնդացրորդ Աբշալույս Աղաջանյանը՝ 61 ֆաշիստ։

Հունվարի առաջին օրերին ահռելի ունեցած մարտերում դիվիզիայի բոլոր զորամասերը հուժկու հարվածներ էին հասցնում ֆաշիստներին, նրանց պատճառելով մարդկային

---

8 «Կարմիր դիվիզիա», 1943, դեկտեմբերի 19։

9 «Կարմիր դիվիզիա», 1943, դեկտեմբերի 21։

մեծ վնասներ։ Մարտերում իրենց քաջագործություններով աչքի էին ընկնում բազմաթիվ շարքայիններ ու հրամանատարներ, քաղաքական-կուսակցական աշխատողներ։ Նրանցից շատերը պարգևատրվում էին հենց մարտերի ընթացքում։ Այդ պարգևատրումների մասին հունվարի առաջին 20 օրում դիվիզիայի «Կարմիր զինվոր» ԻԼՊում հրապարակվեցին բարձր հրամանատարության հրամանները։ Պարգևատրվել էին՝ Ալեքսանդր Նևսկու շքանշանով՝ 1-ը, Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով՝ 3-ը, Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով՝ 13-ը, Կարմիր աստղի շքանշանով՝ 55-ը, փառքի III աստիճանի մեդալով՝ 18-ը, խիզախության համար մեդալով՝ 31-ը, մարտական ծառայության համար մեդալով՝ 32-ը։

Կերշում ծավալված փողոցային մարտերն ավելի ծավալուն և սաստիկ բնույթ ընդունեցին հունվարի վերջին տասնօրյակում։ Հերոսաբար էին կռվում կապիտաններ Վելումյանի և Ա. Մարգարյանի գումարտակների զինվորները։ Վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Մամիկոնյանը, դլխավորելով մեր գրոհող խումբը, առաջ էր շարժվում։ Գնդացրորդ Միհրան Խաչատրյանը գնդացրային ուժգին կրակ էր թափում թշնամու վրա։ Այդպես էին գործում նաև մյուս գնդացրորդները։ Այդ կրակների տակ թշնամին փախուստի դիմեց։ Մամիկոնյանի գրոհող խումբը ոչնչացրեց 40 ֆաշիստի և գերի վերցրեց 15-ին։ Փողոցային մարտերը գնում էին ցեխակը և գիշերը։ Թշնամին ուժեղ դիմադրություն ցույց տվեց ջրային բնագծի՝ Կատերլեզ գետակի մոտ։ Վելումյանի և Մարգարյանի գումարտակներն այստեղ երկու օրվա ընթացքում ոչնչացնում են ավելի քան 500 հիտլերական և վերցնում ռազմական ավար՝ 4 հրանոթ, 16 գնդացիր, 1 ականանետ, ռազմամթերքի մեկ պահեստ։

Ուժեղ մարտերից մեկի ժամանակ թշնամին 4 գնդացրի չդադարող կրակով հարվածում էր մեր հետևակի ձախ թևին։ Կապիտան Պոլյակովը դիտակետից հայտնաբերում է թշնամու այդ կրակակետերի տեղը և ականաձիգներ Երվանդ

Բագիրյանն ու Աշոտ Խեչոյանն իրենց դիպուկ կրակով ոչընչացնում են այդ կետերը: Նրանք ոչնչացնում են նաև թշնամու ականանետային երկու մարտկոցը:

Այդ մարտերի մասնակից կապիտան Գեղամ Ղուկասյանը «Կարմիր զինվորի» հունվարի 28-ի համարում կերչում շարունակվող փողոցային ուժեղ մարտերի մասին «Հերոսների սխրագործությունը» հոդվածում գրել է. «Լեյտենանտ Արշալույս Միքայելյանը գրոհելով, իր դասակով առաջ էր շարժվում, ոչնչացնելով 10 հիտլերականի, նա ստեղծեց ազատ տարածություն հարձակվող մեր խմբի համար, իսկ սնայպեր Անանյանը շարքից հանեց 8 ֆաշիստի: Թշնամին շենքի պատուհանից գնդացրով կրակում էր առաջ շարժվող մեր զինվորների վրա: Լեյտենանտ Ա. Միքայելյանը քողարկված կերպով մոտենում է և նրանով կրակում ֆաշիստների վրա: Իր մարտիկների հետ միասին նա ոչնչացնում է շենքում գտնվող ֆաշիստներին և թշնամուց վերցրած գնդացրով վերադառնում զորամաս:

Նոր սխրագործություն կատարեց շքանշանակիր լեյտենանտ Աբրահամյանը: Մի այլ շենքի պատուհանից թշնամին նույնպես ուժեղ կրակ էր բաց անում մեր զինվորների վրա: Աբրահամյանը քողարկված կերպով շրջանցից այդ շենքը և նրա հակառակ կողմի դռնից մտավ այն սենյակը, որտեղից կրակում էին ֆաշիստները: Իր ավտոմատի կրակոցներով նա ոչնչացրեց սենյակում գտնվող ֆաշիստներին, վերացնելով նրանց ավտոմատները վերադարձավ մեր մարտակարգերը»:

Թշնամու կողմից փողոցում ամրացված փշալարերը խանգարում էին մեր ստորաբաժանումին առաջ շարժվելուն: Սակրավորներ Սավաղ Խաչատրյանը և Ղևոնդ Մարգարյանը խնդիր ստացան կտրել այդ փշալարերը և ճանապարհ բացել առաջ շարժվող ստորաբաժանման համար: Հակառակորդի ուժեղ կրակի տակ, արհամարհելով մահը, նրանք կտրատում են այդ փշալարերը և ճանապարհ բացում առաջ շարժվողներին:

Ուժեղ մարտեր էին գնում Հարազատ քաղաքի համար։ Հրետանավորներ Օգանովի, Շախկալամովի և Բոչկովի ստորաբաժանումները հրաման են ստանում դիպուկ համազարկերով ոչնչացնել թշնամու կրակակետերը։ Նրանք հաջողությամբ կատարում են այդ հրամանը և արժանանում բարձր հրամանատարության շնորհակալությանը։

Թեժ մարտեր էին գնում Հարազատ բնակավայրի համար։ Մեր ստորաբաժանումը հաստատ մնալով իր դիրքերում, կրակային բոլոր միջոցներով շարունակում էր հակահարված տալ հարձակվող թշնամուն։ Այդ մարտերում կոմունիստներ Շահնազարյանը ոչնչացրեց 9 ֆաշիստ, Սարգսյանը՝ 13, Պողոսյանը՝ 7, իսկ անկուսակցական Շամիևը՝ 5։ Մարտերից մեկի ժամանակ Ալեքսանդր Գալստյանը և Բոնդերը մտնում են հակառակորդի խրամատները։ Նրանց հետևում են մյուս ռազմիկները։ Սկսվում է ձեռնամարտ։ Այդ ժամանակ նրանք ոչնչացնում են մի բանի ֆաշիստի։ Միայն Գալստյանը սպանում է չորսին։

Գնդացրորդ Վարդ Պողոսյանը նռնակներով ոչնչացնում է թշնամու գնդացրային անձնակազմը։ Հերթով մտնելով 4 շենք, նա նռնակներով ոչնչացնում է 20 ֆրից և ռազմավար վերցնում 2 գնդացիր։ Վ. Պողոսյանը պարգևատրվել է Փառքի III աստիճանի շքանշանով և «Խիզախության համար» մեդալով։

Կերչի փոքրացին մասերում բաշխագործության հիմնական օրինակներ ցույց տվեց 390-րդ հրաձգային գնդի 2-րդ գնդացրային վաշտի ավագ սերժանտ Հակոբ Բալասանյանի գնդացրային հաշվարկը։ Իր դիպուկ կրակով այդ հաշվարկը լռեցրեց թշնամու մի շարք կրակակետեր և շարքից հանեց ստանյակ ֆաշիստների։ Ցուցաբերած քաջագործությունների համար հաշվարկի ամբողջ անձնակազմը պարգևատրվեց։ Նրա հրամանատար Հ. Բալասանյանը պարգևատրվեց Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով, Հարություն Կալկանյանը՝ կարմիր աստղի շքանշանով,

Հրանդ Գևորգյանը և Ջավեն Առաքելյանը՝ հիշատակության համար մեդալով։

Բազմաթիվ էին 89-րդ Թամանյան դիվիզիայի անձնակազմի սխրանքները։ Թշնամու դեմ հերոսաբար էին մարտնչում զենքի բոլոր տեսակներ կրողները՝ հետևակայիններն ու հրետանավորները, ականաձիգները և զրահարները, սակրավորները և կապավորները, բժշկական աշխատողները և թիկունքի ծառայության ստորաբաժանումները, բոլորը, բոլորը։

Դա դիվիզիայի անձնակազմի ցուցաբերած քաջագործությունների միայն մի չնչին մասն էր։

Կորպուսի մյուս դիվիզիաների հետ միասին Թամանյցիները հետ են մղում թշնամու գրոհները և գրավում մի շարք բնակավայրեր ու շենքեր, հացի և պահածոների գործարանները, նավահանգիստը և ձեղքում թշնամու պաշտպանությունը երկաթգծի շրջակայքում։

Բարձր է գնահատել 89-րդ դիվիզիայի զորամասերի ու նրանց անձնակազմի սխրանքները Կերչի փողոցային մարտերում, Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Տերեշկովը։ Խոսելով այդ մասին, նա գրել է.

«Քաղաքի համար փողոցային մարտերում դիվիզիայի ստորաբաժանումները, ռազմիկները և սպաները ցուցաբերեցին չգերազանցված հերոսության, խիզախության և քաջության օրինակներ։ Միայն մեկ օրվա ընթացքում՝ 44 թ. հունվարի 27-ին, դիվիզիան հետ է մղել տանկերով և ինքնագնաց հրանոթներով պաշտպանվող թշնամու հետևակի մինչև 10 հակագրոհ»[10]։

Հնգօրյա մարտերում Թամանյան դիվիզիան մարդկային ու ռազմական տեխնիկայի խոշոր վնասներ է հասցրել թշնամուն։ Փողոցներում թափված էին ֆաշիստական ավելի քան 700 դիակ, ոչնչացված էր 33 և մեկուսացված 10 գնդացրային դզոտ, 33 ավտոմեքենա՝ բեռնված զինվորներով և

---

10 Боевой путь, էջ 652։

ռազմամթերքներով, 16 հրանոթ ու ականանետ և այլն[11]:

Ինչպես այս մարտերի, նույնպես և դիվիզիայի անցյալ ու հետագա մարտերի մասին ասված է դիվիզիայի պատճառի հրամանատար, գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանի առանձին հոդվածներում, դիվիզիայի վիճաբաններ Մ. Նալբանդյանի Ղ. Դալլաքյանի, Խ. Բարսեղյանի, Ե. Կարապետյանի, Գ. Ղուկասյանի և ուրիշների գրքերում և հոդվածներում:

Այդ մարտերում դիվիզիայի զորամասերը, հարևան զորամասերի հետ միասին առաջ ընթանալով, զգալի չափով բարելավնցին իրենց մարտական դիրքերը: Այժմ նրանք հանձնարարություն էին ստացել ամրապնդել այդ դիրքերը և ժամանակավորապես անցնել ակտիվ պաշտպանության: Իհարկե, դա բնավ չէր նշանակում, որ մարտերը ինչ-որ չափով կարող էին դադարել սուր բնույթ կրելուց:

Այդ մարտերը շարունակվում էին օր ու գիշեր: Գնդամին համառորեն գործադրում էր բոլոր ջանքերը՝ հետ վերցնելու կորցրածը: Ավելին, նա կատաղաբար ձգտում էր իրագործել իր գլխավոր նպատակը՝ ջախջախել Կերչի հենակետի մեր զորքերը և հետ գրավել այն: Այդ նպատակով նա հաճախակի ուժեղ գրոհների էր անցնում, սրանք հետ էին մղվում հենակետի մեր զորքերի, այդ թվում նաև 89-րդ դիվիզիայի ջախջախիչ հակահարվածներով:

Հետաքրքիր է նշել, որ Կերչի փոքրացային թեժ մարտերի օրերին ինչպես և միշտ, դիվիզիայի ռազմիկներին մեծ չափով ոգևորում էին Բիկոմբրից ստացված հարազատների ու հանրապետության նշանավոր մարդկանց նամակները, նրանց մտերմական ամենաջերմ մաղթանքները: Այդ օրերին «Կարմիր դինվոր» թերթում տպագրվեցին նման նամակներից մի քանիսը: Այսպես, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ, վաստա-

11 Նույն տեղում:

կավոր ուսուցիչ Սիմակ Սահակյանը իր՝ «Մեր սիրտը Ձեզ հետ է» նամակում գրում էր.

«Իմ կարիճ, իմ արծիվ զավակներ...

Դուք առյուծի քաջությամբ կռվում եք հիտլերյան գազանների դեմ, հիշելով, որ ունեցել ենք հզոր ու մեծ նախնիներ-Վարդան և Վահան Մամիկոնյանները, Գևորգ Մարզպետունին, Դավիթ Բեկը և ուրիշ շատերը: Այս նախնիների արյունն է հոսում Ձեր երակներում և նրանց նման ու թուրկայծակին ձեր ձեռքին զնդացրի ու ականանետի փոխված, անվրեպ կրակ է թափում թշնամու գլխին:

Իսկ մենք, ձեր ծնողները, ապրում ենք ու շնչում ձեր հաղթանակներով: Մեր սիրտը, մեր ուշքը, մեր միտքը Ձեզ հետ է...

Մենք այստեղ մեր նասնդը չենք խնայի, անընդհատ կաշխատենք, իսկ դուք վերջնականապես ջնջեցեք ֆաշիստական սրիկաներին, հետու, հետու քշեցեք մեր լույսապայծառ երկրից և այնուհետև, իբրև հաղթող հերոսներ, վերադարձեք մեր գիրկը: Մենք անհուն խանդավառությամբ կգըրկենք Ձեզ, կհամբուրենք ձեր ճակատը, կտոնենք հաղթանակի մեծ տոնը»[12]:

Թերթի նույն համարում զետեղված էր նաև հայկական ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, պետական մրցանակի դափնեկիր Մարտիրոս Սարյանի «Հպարտանում ենք Ձեր արիությամբ» նամակը: «Փառապանծ հաղթանակներով ենք դիմավորում մենք Խորհրդային Հայաստանի 23-րդ տարեդարձը,— գրում էր մեծ նկարիչը:— Բերկրանքով է լցվում մեր սիրտը ամեն անգամ, երբ մենք իմանում ենք հայ ժողովրդի զավակների նորանոր սխրագործությունների, նորանոր հերոսական գործերի մասին»:

Նույնպիսի ջերմությամբ և մեր մեծ հաղթանակի նկատմամբ անհողդողդ հավատով լի նամակ էր գրել հայ ռազմիկներին նաև մեծ գիտնական Հրաչյա Աճառյանը: Նրա

---

12 «Կարմիր գինվոր», 30 նոյեմբերի 1943 թ.:

նամակը տպագրվեց նույն թերթի 1943 թ. դեկտեմբերի 3-ի համարում։

Դիվիզիայի քաղբաժինը կուսակցության-քաղաքական աշխատողներին ու հրամանատարներին հանձնարարեց այդ նամակների շուրջը առաջավոր գծում բանակայինների հետ զրույցներ անցկացնել։ Այդ զրույցները ռազմիկները լսում էին անսահման հետաքրքրությամբ և իրենց հաստատ պատասխանն ասում հայ ժողովրդի անվանի մարդկանց նամակներին՝ որ իրենք պատվով կպարարայնեն հերոսական Կարմիր բանակի ռազմիկի կոչումը, բարձր կպահեն հարազատ հայ ժողովրդի մարտական սովորույթները և առանց հաղթանակի տուն չեն վերադառնա։ Այդ նրանք համարում էին իրենց սրբազան պարտքը։ Նրանք այդ խոսքերն ասում էին մեծ պատասխանատվությամբ, լուրջ գիտակցելով հետագա մարտերի բազմապիսի դժվարությունները։ Եվ նրանց որոշ մասը հետագա մարտերում ընկավ այդ սրբազան պարտքի կատարման ճանապարհին։ Նրանց արյան ու կյանքի գնով ձեռք բերվեց մեր պատմական հաղթանակը։

Հունվարի 24-ին, երբ համառ մարտերը շարունակվում էին Կերչի փողոցներում, դիվիզիա ժամանեց Առանձին մերձծովյան բանակի նոր հրամանատար, բանակի գեներալ Ա. Ի. Երեմենկոն։ Նա եղավ դիվիզիայի հրամանատարական կետում և զրույցեց գեներալ մայոր Ն. Գ. Սաֆարյանի հետ, մոտիկից ծանոթացավ դիվիզիայի մարտական գործերին։ Եղավ նաև դիվիզիայի 531-րդ հրետանային գնդի կրակակետերում, զրույցներ ունեցավ գնդի հրամանատարության ու առանձին մարտակոցների անձնակազմի հետ։ Յուցում տվեց, որ պետք է շատացնել հրետանային ուղիղ նշանառության կրակակետերը։

Բանակի գեներալ Ա. Ի. Երեմենկոն բարձր գնահատեց դիվիզիայի մարտական գործերը, նրա հրամանատար գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանի ռազմական հմտությունը և դժվարին մարտեր վարելու կարողությունը։ Նոր հանձնարարություններ տալով, հյուրը գոհունակությամբ հեռացավ դիվիզիայից։

Երբ շարադրում եմ այս տողերը, ամեն ինչ վերակենդանանում է աչքիս առջև, քանի որ բախտ եմ ունեցել ներկա գտնվելու այդ հանդիպումներին և փողոցային մարտերի ԲԼԺ պահին դրանց մասին զրույցներ ունենալ դիվիզիայի ռազմիկների հետ:

Կուսակցական-քաղաքական ապարատի կատարած օպերատիվ աշխատանքի շնորհիվ նույն օրը դիվիզիայի ամբողջ անձնակազմը արդեն տեղյակ էր բարձր հրամանատարության ներկայացուցիչների այցելության և նրանց կողմից դիվիզիայի մարտական գործերի բարձր գնահատականի մասին: Այդ էլ ավելի բարձրացրեց դիվիզիայի անձնակազմի մարտական ոգին և հարձակողական թափը:

Կերչի համար այդ և հետագա մի շարք այլ մարտերի ընթացքում 89-րդ Թամանյան դիվիզիայի ռազմիկները կատարեցին նորանոր քաջագործություններ:

400-րդ հրաձգային գունդը գրոհում էր Կերչի խոշոր թաղամասերից մեկը: Նրա երկրորդ դումարտակը, որի հրամանատարն էր կապիտան Հրանտ Սիմոնյանը, կտրելով թշնամու դիմադրությունը, մեծ դժվարությամբ առաջ էր ընթանում: Դումարտակը հաջողությամբ կատարեց իր մարտական խնդիրը և արժանացավ դիվիզիայի հրամանատարության խրախուսանքին: Այդ մարտում մասնավորապես աչքի ընկավ դումարտակի հինգերորդ վաշտը, որի հրամանատարն էր Ալեքսանդր Նիկոլու շքանշանակիր լեյտենանտ Արազ Բաղդասարյանը: Թշնամու դեմ հերոսաբար էին կռվում այդ վաշտի ավտոմատավորներ Սարգիս Ջուրաբյանը, Արտավազդ Այվազյանը, Միքոիչ Ղամբարյանը, Գասպար Գաբրիելյանը, Արևատ Փոլյանը և ուրիշները:

Մեր դիվիզիայումն էր նաև փառապանծ ռազմիկ, Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի փոքր եղբայրը՝ Համլետ Ավետիսյանը: Նա ծառայում էր սակրային գումարտակում և բազմիցս կատարել էր ամենադժվարին մարտական խնդիրներ: Դեռևս Թամանում, երբ ուժեղ մարտեր էին գնում Սախարնայա Գալովկա լեռան համար, նրան

խնդիր էր տրված իր մարտական ընկերների հետ միասին ականապերծել առաջ շարժվող մեր ստորաբաժանման ճանապարհը։ Թշնամու ուժեղ կրակի տակ քաջարի Համայակ Ավետիսյանը իր ընկերներով հաջողությամբ կատարում է այդ խնդիրը։ Հետևակը առանց կորուստների արագորեն առաջ էր շարժվում և հետապնդում հակառակորդին։ Կերչի համար մղված մարտերում խիզախ սակրավորը թշնամու գնդացրային ուժեղ կրակի տակ առաջ սողալով, կտրում է նրա փշալարերը, ականազերծում անցուդին և ապահովում մարտական խնդրի կատարումը։ Այդ քաջագործությունների համար Համայակ Ավետիսյանը արժանանում է փառքի III աստիճանի շքանշանի։ Նրա քաջագործությունների մասին «Կարմիր զինվոր» թերթը 1944 թ. հունվարի 16-ի համարում հատուկ հոդված էր զետեղել. մեծ ցավով հիշելով եղբոր՝ Հունանի կորուստը, Համայակ Ավետիսյանն ասում էր.

«Եղբայրս՝ Հունան Ավետիսյանը Նովոռոսիյսկի համար մղված մարտերում իր կրծքով փակելով հակառակորդի դզոտի ամբրազուրը, ճանապարհ բացեց իր մարտական ընկերների համար։ Նրա օրինակը քաջալերում է ինձ և վրեժի է կոչում գերմանական զավթիչների դեմ։ Ամեն գնով կկատարեմ տրված խնդիրը»։

Ամբողջ զորամասում ճանաչում էին Համայակ Ավետիսյանին՝ որպես խիզախ զինվորի։ Ընկերները նրա հետ առանց տատանումների էին գնում մարտական խնդիրների կատարմանը և վերադառնում հաջողությամբ։

Կերչի փողոցային մարտերում թշնամու դեմ հերոսաբար էր մարտնչում 390-րդ հրաձգային գունդը, որի հրամանատարն էր փոխգնդապետ Ե. Կարապետյանը, իսկ քաղաքական գծով տեղակալը՝ փոխգնդապետ Ն. Մեժլումյանը։ Գնդի վաշտերից մեկը, որի հրամանատարն էր Ա. Ղահրամանյանը, սրընթաց գրոհով անցավ Կատերլեզ գետակը և թշնամուն ետ շպրտից գրաված դիրքերից։ Ծավալվեցին համառ մարտեր։ Այդ մարտերում լեյտենանտ Ա. Մինքայելյանի դասակը ոչնչացրից ավելի քան 10 ֆաշիստ, իսկ կոմունիստ

Անանյանը՝ 8։ Կոմերիտական Զիլոյանը, իր դիպուկ կրակով շարքից հանել Բշնամու անայպերին, որը նշան էր բռնել վաշտի հրամանատար Ա. Ղահրամանյանի վրա։ Զիլոյանը փրկեց իր հրամանատարի կյանքը։

Դիպուկ էին գործում հրետանավորները, որոնց մեծ մասը կրակում էին ուղիղ նշանառությամբ։

Մեր հարձակվող զորամասերին Բշնամին դիմադրում էր ոչ միայն ցամաքից, այլև օդից։ Նրա ինքնաթիռները համարյա անընդհատ ռմբակոծում էին մեր կրակակետերը և թիկունքային զորամասերը։ Իսկ մեր ինքնաթիռները նրանց դիմավորում էին օդում։ Բռնկվում էր օդային մարտ, որի ընթացքում վնասվում և վայր էին ընկնում ինչպես Բշնամու, այնպես էլ մեր ինքնաթիռները։ Մեր ամեն մի ինքնաթիռի վայր ընկնելը խորը ցավ և մեծ հուզմունք էր պատճառում բոլորիս։ Ավելի ու ավելի էր մեծանում վրեժի ցասումը։

Լցված այդ վրեժով, դիվիզիայի զրահարները, որոնց հրամանատարն էր լեյտենանտ Մուշեղ Ջաթիկյանը, հունվարի 24—30-ի մարտերում իրենց դիպուկ կրակով վայր գցեցին Բշնամու 6 ինքնաթիռ։ Ֆաշիստական առաջին ինքնաթիռը վայր գցեցին կոմերիտական նշանառու Խաչիկ Ավետիսյանը և Արտավազդ Միքայելյանը։ Զրահար նշանառուներ Ներսես Հակոբյանը և Հիպարիտ Ներկարարյանը, իրենց զենքի երկրորդ համարների հետ միասին ցած գցեցին Բշնամու յունկերս ինքնաթիռը, այն ժամանակ, երբ վերջինս փորձում էր թափել իր ռումբը։ Իրենց ընկերների օրինակով երրորդ և չորրորդ ինքնաթիռները վայր գցեցին Ռուբեն Հակոբյանը, Վարդան Լալայանը, Հենրիկ Հայրապետյանը և Սարգիս Գոկորյանը։ Հինգերորդ և վեցերորդ ինքնաթիռները զրահարները խորտակեցին իրենց միատեղ համազարկով։ Այդ քաջագործությունների համար նրանք արժանացան կառավարական պարգևների։

Մինչև 1944 թ. մարտի սկիզբը մնալով առաջավոր գծում, դիվիզիայի զորամասերը համարյա մշտապես մար-

տերի մեջ էին։ Այդ մարտերը մեկ կրում էին հարձակողական, մեկ՝ ակտիվ պաշտպանողական և հաճախ էլ՝ դիրքային բնույթ։ Բոլոր դեպքերում դիվիզիան իր առջև դրված խնդիրները կատարեց հաջողությամբ և արժանացավ բարձր հրամանատարության դրական գնահատականին։

Քանի որ անցած մարտերում դիվիզիան ունեցել էր զգալի մարդկային ու տեխնիկայի կորուստներ և անձնակազմը հոգնել էր երկարատև մարտերից, 1944 թ. մարտի առաջին օրերին նա փոխարինվեց այլ զորամասերով և հետ քաշվեց հանգստի՝ համալրման ու մարտական ուսուցման։ Այդ կատարվում էր երկրորդ գծում, այսինքն առաջավոր գծից 2—3 կիլոմետր դեպի թիկունք։ Շատ հաճախ թշնամու հրանոթային արկերը պայթում էին մեր ստորաբաժանումների պարապմունքների վայրում։ Ուստի այդ պարապմունքներն ընթանում էին համարյա մարտական իրադրության մեջ։

Ամբողջ անձնակազմը՝ շարքային մարտիկից սկսած մինչև բարձր հրամանատարությունը, մարտական ուսուցումը իրագործում էր համառ աշխատանքով, ամենայն լարվածությամբ։ Տակտիկական պարապմունքների ընթացքում ստորաբաժանումներն ուսումնասիրում էին անցած մարտերի փորձը, այն շաղկապում կարմիր բանակի համապատասխան կանոնագրքերի պահանջների հետ։ Մարտերում աչքի ընկած լավագույն ռազմիկները՝ անօդաչուները, գնդացրորդները, ականանձիգները, հրետանավորները, սակրավորները և այլն, պատմում էին իրենց փորձի մասին։ Ռազմիկները միաժամանակ համառ կերպով ուսումնասիրում էին զենքերի նյութական մասը, ավելի ու ավելի կատարելագործում իրենց ռազմական հմտությունները։

Ռազմական ուսուցմանը զուգընթաց, անձնակազմի մեջ ծավալուն քաղաքական-դաստիարակչական աշխատանք էր կատարվում։ Այդ աշխատանքի համար դիվիզիայի քաղբաժինը մշակել էր հատուկ պլան։ Կուսակցական-քաղաքական աշխատողները ռազմիկներին ծանոթացնում էին Հայրենական պատերազմի ռազմաճակատների իրավիճակին, հանգա-

մանորեն պատմում Կարմիր բանակի մարտիկների հերոսական սխրանքների մասին, խորհրդային Միության ժողովուրդների բարեկամության, Թիկունքում ծավալված հայրենանվեր աշխատանքի, ռազմաճակատին ցույց տրվող օրըստօրէ աճող օգնության մասին:

Այդ օրերին նոր էր վերջացել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին գումարման 10-րդ նստաշրջանը, որի նյութերը տպագրվել էին մամուլում: Այնտեղ ելույթ էր ունեցել նաև Հայկական ԽՍՀ-ից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատ Լ. Գ. Հովսեփյանը: Որոշ կրճատումներով նրա ելույթը տպագրվեց «Կարմիր զինվորի» փետրվարի 15-ի համարում: Խորին հպարտության զգացումով և ավելի մեծ պատասխանատվության գիտակցությամբ էին մարտիկները լսում ԽՍՀՄ Գերագույն մարմնում Լ. Գ. Հովսեփյանի ասած հետևյալ խոսքերը:

«Հայրենական պատերազմի լայն ռազմաճակատներում Հայաստանի զավակները սրբությամբ պահպանում են իրենց մեծ նախնիների մարտական տրադիցիաները, ցույց տալով հերոսության օրինակներ: Նրանցից հազարները թշնամու դեմ մղած բազմաթիվ մարտերում դարձան շքանշանակիրներ:

...89-րդ հայկական հրաձիգ դիվիզիային հատկապես աչքի ընկնելու համար, Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով շնորհվեց Թամանյան անվանումը:

Պատերազմի առաջին իսկ օրերից Հայաստանի արդյունաբերությունն սկսեց կատարել ռազմական պատվերներ: Այդ բոլոր ժամանակ, սիստեմատիկորեն կատարելով և գերակատարելով արտադրական պլանները, մեր հանրապետության արդյունաբերության աշխատողները յուրացրին նոր ապրանքների 200 տեսակների արտադրությունը, որոնցից ավելի քան 100 տեսակը յուրացրել է Հայաստանի տեղական արդյունաբերությունը՝ տեղական հումքի բազայի վրա»:

Անձնակազմի շրջանում եռանդուն քաղաքական աշ-

խոտանը էին տանում կուսակցական բաղ. աշխատողներ փոխգնդապետ Հ. Մեժլումյանը, մայորներ Գ. Հարությունյանը, Պ. Ավալյանը, Ն. Շահվերդյանը, Ղ. Դալլաքյանը, Մ. Հակոբյանը, Մ. Բաղալովը, Ռ. Սարոյանը, Դիլուդյանը, Գ. Վարդանյանը, Մ. Բանդյանը, Մ. Նալբանդյանը, Գ. Ղուկասյանը, Ա. Սարոյանը, Մ. Մուրադյանը, Ա. Ամիայանը, Ա. Պողոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Զոհրաբյանը, սույն տողերի հեղինակը և շատ ու շատ ուրիշներ: Մասնավորապես ակտիվ աշխատանք էին տանում սատարաժանումների ագիտատորները, որոնց մեծ մասը շարքայիններ էին ու կրտսեր հրամանատարներ:

Մարտի 3-ին ստացանք Երևանի ԲԿԲ-ից: Նրանց մեջ էր «Սովետական Հայաստան» փետրվարի 25-ի համարը: Այնտեղ զետեղված էր առանձին Մերձավոյան բանակի ռազմական խորհրդի ողջույնի հեռագիրը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին՝ Կարմիր բանակի և ռազմածովային նավատորմի 26-րդ տարեդարձի առթիվ: Հեռագրում ասված էր.

«Բանակի ռազմական խորհուրդը և քաղբաժինը մարտիկների, սերժանտների, սպաների ու գեներալների անունից Ձեզ և ծաղկուն Հայաստանի բոլոր բանվորներին ու կոլտնտեսականներին, ինտելիգենցիային հղում են մարտական Կարմիր բանակային ողջույն և շնորհավորում մեր պանծալի Կարմիր բանակի ու ռազմա-ծովային նավատորմի 26-րդ տարեդարձի առթիվ:

...Կարմիր բանակի հզոր հարվածների տակ գերմանական դիվիզիաները նահանջում են դեպի արևմուտք: Հեռու չէ այն ժամը, երբ սովետական ամբողջ հողը լիովին մաքրված կլինի ֆաշիստական ճիվաղներից: Այս սրբազան մեծ պայքարում մեր բանակի շարքերում հերոսաբար մարտնչում են պանծալի հայ ժողովրդի զավակները՝ ցույց տալով խիզախության, արիության ու հերոսության օրինակներ:

Բանակի ռազմական խորհուրդը և քաղբաժինը հա-

վաստիացնում են Ձեզ և ամբողջ հայ ժողովրդին, որ սովետական հողը ֆաշիստական ազտեղությունից մաքրելու ուղղությամբ Գերագույն Գլխավոր հրամանատարության կողմից մեր առջև դրված խնդիրը մենք պատվով կկատարենք ամենամոտ ժամանակներս:

Մենք հավատացած ենք, որ հայ ժողովուրդը իր անձնազոհ աշխատանքով էլ ավելի կուժեղացնի իր օգնությունը ռազմաճակատին և Կարմիր բանակին կատ անհրաժեշտ ամեն բան՝ թշնամու դեմ վերջնական հաղթանակ տանելու համար:

...Կեցցե մեր հայրենիքի ժողովուրդների բարեկամությունը:

Բանակի գեներալ Երեմենկո
Գեներալ-մայոր՝ Բայուկով
Գեներալ-մայոր՝ Եմելյանով»:

Ինչպես տեսնում ենք, հետագրում բարձր էին գնահատված հայ ժողովրդի զավակների, այդ թվում 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի մարտական գործերը: Կարդալով կամ ռադիոտարոնների միջոցով ծանոթանալով այդ հետագրին, դիվիզիայի ռազմիկները հպարտանում ու ուրախանում էին: Միաժամանակ ամբողջ պատասխանատվությամբ նրանք զգում էին, որ այդպիսի բարձր գնահատականը իրենցից պահանջում է մարտական ուժերի էլ ավելի լարում, հետագա նորանոր սխրագործություններ ֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերում:

Այդ օրերին մեր դիվիզիան էր այցելել Հայաստանի արվեստի աշխատողների պատվիրակությունը՝ Մ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Պատվիրակության կազմում էին Հայֆիլհարմոնիայի դերասաններ և կատարողներ Արև Բաղդասարյանը, Սեդա Ամպոյանը, Արուս Պապյանը, Մարգար Սեհնեքերիմյանը, Միխայիլ Միխայլովը և ուրիշներ: Նրանք մի շարք հյուրախոսություններ ունեցան դիվիզիայի տարբեր

ստորաբաժանումներում։ Այդ ելույթները տեղի էին ունենում կամ քարհանքերում, կամ Վոյկովի անվան գործարանի ավերակների մոտ։ Ռազմիկները մեծ ոգևորությամբ էին դիմավորում արվեստի աշխատողների ելույթները։

Իսկ երբ համերգներն ավարտվում էին, թամանցիները ամենաջերմ ուշադրությամբ ուղեկցում էին մեր հյուրերին մինչև նրանց հատկացված հողատնակները կամ քարհանքերը, որպեսզի հանկարծ նրանց որևէ բան չպատահի։ Եվ չպատահեց։ Մարտ ամսի սկիզբներին մենք նրանց հաջողությամբ հանրապարհեցինք դեպի Հայաստան։

Համառ կերպով շարունակվում էր մարտական ուսուցումը։

Դիվիզիայի գնդերի, հրամարտակների, վաշտերի ու մյուս ստորաբաժանումների տակտիկական պարապմունքները շատ հաճախ ղեկավարվում էին մարտական կրակով, որին մասնակցում էին զենքի բոլոր տեսակները։ Երբեմն այդ կրակն այնքան ուժեղ էր լինում, որ մեր առաջավոր գծի թիկունքում գոյանում էին փոշու ու ծխի ամպեր, որոնք ֆաշիստներին շփոթության մեջ էին գցում, թե ինչ է կատարվում այնտեղ։ Այդ մասին հետագայում պատմում էին թշնամու գերիները։

Այդ պարապմունքները շարունակվեցին ավելի քան մեկ ամիս։

Դրան զուգընթաց, դիվիզիան ստացավ մեծ համալրում՝ ինչպես հայ ժողովրդի, նույնպես և խորհրդային մյուս ժողովուրդների զավակներից։ Լինելով ազգային, դիվիզիան իր կազմով միաժամանակ ինտերնացիոնալ էր, որը էլ ավելի էր միաձուլում նրա շարքերը և հզորացնում հարձակողական թափը։

1944 թվականի ապրիլի 3-ին, 89-րդ Թամանյան դիվիզիա ժամանեց Առանձին մերձծովյան բանակի հրամանատար, բանակի գեներալ Ա. Ի. Երեմենկոն, խորհրդային միության մարշալ Կ. Ե. Վորոշիլովը։ Նրանք հիել էին ստուգելու դիվիզիայի մարտական վիճակը։ Մի շարք զորամա-

սերում ծանոթացան իրավիճակին, զրուցեցին հրամանատարների ու անձնակազմի հետ։ Ներկա եղան 390-րդ հրաձգային գնդի տակտիկական պարապմունքներին, որոնք հնարավորին չափ մոտեցվել էին մարտական իրավիճակին։

Ամփոփելով այդ գնդի և մյուս զորամասերի տակտիկական պարապմունքների արդյունքները, Կ. Ե. Վորոշիլովը և Ա. Ի. Երեմենկոն բարձր գնահատական տվեցին դրանց, շնորհակալություն հայտնեցին դիվիզիայի ամբողջ անձնակազմին և 32 ռազմիկների՝ հրամանատարների ու շարքայիններին, պարգևատրեցին անվանական ժամացույցներով։

Հաջորդ օրը, Կերչից արևելք, Վոյկովի անվան գործարանի ավերակների մեջ գումարվեց դիվիզիայի կուսակցական ակտիվի ժողով։

Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանը հիմնական գծերով ամփոփեց մեկ ամսվա մարտական ուսուցման արդյունքները, հաղորդեց Ա. Ի. Երեմենկոյի բարձր գնահատականը այդ ուսուցման արդյունքների մասին։ Վերջում նա ասաց.

— Շուտով մտնելու ենք նոր, ավելի մեծ մարտական գործողությունների մեջ, դրան պետք է պատրաստ լինել բոլոր ուժերով։

Այդ խոսքերն իրենց արտերում, ակտիվի ժողովի մասնակիցները վերադարձան զորամասերն ու ստորաբաժանումները։

Սպասում էինք հրամանի մարտական նոր գործողությունների։ Ինչպես հայտնի է դեռևս 1943 թ. աշնանից ֆաշիստական բանակի՝ Ղրիմում գտնվող մեծ խմբավորումը, որի մեջ էին նաև ռումինական մի քանի դիվիզիաներ, ցամաքից կտրված էր իր հիմնական ուժերից։ Մեր 4-րդ ուկրաինական ռազմաճակատի զորքերը Ղրիմի հյուսիսից՝ Պերեկոպում և Սիվաշում ամուր փակել էին Թշնամու նահանջի ճանապարհները։ Նրանք ռազմաճակատի այդ հատվածում Թշնամուն անընդհատ հարվածի տակ էին պահում՝ նախապատրաստվելով հարձակողական նոր գործողու-

բյուններին։ Իսկ Կերչի թերակղզում, ինչպես տեսանք, թշնամուն անընդհատ հարվածում էին առանձին մերձծովյան բանակի զորքերը։

Ֆաշիստական բանակը ամուր կառչել էր Ղրիմին։ Ծովից սառնալով օգնություն, նա կատաղաբար դիմադրում էր, բոլոր ուժերով ձգտելով Ղրիմը, որպես ստրատեգիական կարևոր հենակետ, պահելու իր ձեռքում։ Այդ նպատակով նա բազմաշերտ պաշտպանական ամուր գծեր էր կառուցել Պերեկոպի և Սիվաշի շրջանում, Կերչի թերակղզում, Ղրիմի շատ վայրերում ծովափին և մասնավորապես Սեբաստոպոլում՝ երկարատև պաշտպանական մարտեր մղելու համար։

Ուկրաինական 3-րդ ռազմաճակատի զորքերը, ծավալելով հարձակումը, 1944 թ. ապրիլի սկզբին հերոսական մարտեր էին մղում Օդեսայի ազատագրման համար և ընդհուպ մոտեցել էին Ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Ռումինիայի սահմաններին։ Այդ ժամանակ Գերագույն Գլխավոր հրամանատարության հրամանով ուկրաինական 4-րդ ռազմաճակատի զորքերը, մարշալ Ֆ. Ի. Տոլբուխինի հրամանատարությամբ, սկսեցին իրենց դրոհը Ղրիմի ազատագրման համար։

Ղրիմում մեր զորքերի հարձակումը սկսվեց ապրիլի 8-ին, երբ 2-րդ գվարդիական բանակը գեներալ Գ. Ֆ. Ձախարովի հրամանատարությամբ դրոհեց Բշնամու Պերեկոպի ամրությունները և ազատագրեց Արմյանսկ քաղաքը։ Սիվաշի հենակետերից հաղթական հարձակում սկսեցին գեներալ Յա. Գ. Կրեյզերի 51-րդ գվարդիական բանակը և գեներալ Մ. Ի. Վասիլևի տանկային կորպուսը։

Ճեղքելով Բշնամու պաշտպանության բազմաշերտ գիծը, հյուսիսից Կարմիր բանակը հաղթականորեն առաջ էր շարժվում, կտրելով նահանջող Բշնամու դիմադրությունը։

Այդ մասին խորհրդային Ինֆորմբյուրոյի հաղորդագրություններն անսահման ոգևորություն առաջացրին Առան-

ձին մերձծովյան բանակի, այդ թվում 89-րդ Թամանյան դիվիզիայի ռազմիկների մեջ:

Հարձակման նախօրյակին Առանձին մերձծովյան բանակի ռազմական խորհուրդը հատուկ կոչ ուղղեց բանակի ամբողջ անձնակազմին: Այդ մեր հաղթանակի նկատմամբ հավատով լի մոբիլիզացնող մի կոչ էր: Նույն օրը այն Բարգմանվեց հայերեն, հատուկ թերթիկի ձևով բազմացվեց «Կարմիր դինվոր» թերթի տպարանում և արագորեն տարածվեց դիվիզիայի բոլոր առաջապահամասերում: Երեկոյան արդեն յուրաքանչյուր ռազմիկ ծանոթ էր կոչի բովանդակությանը:

Կոչում ասված էր.

«Հնկեր կարմիրբանակայիններ, սերժանտներ և հրամանատարներ.

...Մեզ հանձնարարված և վստահված է պետական մեծ կարևորության ունեցող պատվավոր գործ:

Այսօր մեր բանակի զորքերին հրաման է տրված անցնել հարձակման, կտրել Քշնամու դիմադրությունը, ճեղքել թերմանացիների պաշտպանական գիծը, թեանցել Կերչը, որպեսզի հետո արընթաց հարձակմամբ արեմուտք քշենք թերմանական ազատդությունը:

Գերմանացիները Ղրիմում փակված են՝ ինչպես թակարդում, նրանք ելք չունեն այնտեղից, որա համար էլ հուսահատ դիմադրում են, փորձելով երկարացնել իրենց անխուսափելի կործանումը: Նրանք ցանկանում են ինչ գնով էլ լինի, ձեռքում պահել Կերչը և ամբողջ Ղրիմը:

...Հասել է վերջնական հաշվեյման ժամը:

Պատերազմի վերջը մոտ է: Գերմանացիների թախտը վճռված է: Մեր մարտական ունակությունից, քաջությունից ու վճռականությունից է կախված անիծյալ գերմանացիների արագ վախճանը: Մեր հուժկու հարվածներին գերմանացիները չդիմացան Կուբանում և Թամանում, չեն դիմանա նաև Ղրիմում: Նոր հաղթական մարտական գործերով բազմա-

պահենք մեր փառքը, կատարենք մեր պարտքը ժողովրդի ու պետության առջև»[13]։

Այդ կոչը մեծ չափով նպաստեց անձնակազմի մարտական ոգու բարձրացմանը։

Ապրիլի 10-ի լույս 11-ի գիշերը ամբողջ ռազմաճակատում թշնամին ուժեղ հրանոթային և ականանետային կրակ տեղաց մեր դիրքերի վրա, որին էլ ավելի ուժգնությամբ պատասխանեցին մեր հրետանավորներն ու ականաձիգները։ Մասնավորապես մեծ հզորությամբ էին գործում մեր գվարդիական ականանետները, կատյուշաները և, բնականց ավելի հզոր տեսակները՝ Իվան Գրոզնիները, որոնց յուրաքանչյուր համազարկը մեր ռազմիկները դիմավորում էին հաղթական բացականչություններով և մեծ ուրախությամբ։ Իսկ ֆաշիստները խուճապահար փախչում էին մեկ տեղից մյուսը, որը սակայն նրանց չէր փրկում։

Նույն օրը վաղ առավոտյան մեր զորքերը Լլման դիրքերից առաջ շարժվեցին։ Թշնամին խուճապահար փախչում էր։ Հարկավոր էր արագությամբ նրան հետապնդել և գլխավոր ուժերը ոչնչացնել, թույլ չտալով ամրանալու։ Այդ նպատակով բանակի գեներալ Ա. Ի. Երեմենկոյի հրամանով դիվիզիաներում ստեղծվել էին շարժական հատուկ խմբեր, որոնք ապահոված էին տրանսպորտի և զենքի բոլոր անհրաժեշտ միջոցներով ու տանկերով։

Հարձակման առաջին իսկ րոպեներին այդ խմբերը դուրս եկան։ Իսկ նրանց հետևից առանց դադարի շարժվում էին հետևակը և զորքի մյուս տեսակները։ Դրանց շարքում էր նաև 89-րդ Թամանյան դիվիզիան, որը գործում էր 16-րդ հրաձգային կորպուսի կազմում։

Առանձին մերձծովյան բանակի հարձակման առաջին օրվա արդյունքների մասին Խորհրդային Ինֆորմբյուրոյի

---

[13] Այդ կոչի մեկ օրինակը գտնվում է մեր անձնական արխիվում։ Տե՛ս Боевой путь..., էջ 288—290։

ապրիլի 11-ի հաղորդագրության մեջ ասված էր. «Առանձին մերձծովյան բանակի զորքերը, անցնելով հարձակման, ճեղքեցին հակառակորդի ուժեղ ամրացված պաշտպանությունը Կերչի թերակղզում և ապրիլի 11-ին գրավեցին Կերչ քաղաքն ու ամրոցը՝ գերմանացիների պաշտպանության կարևոր հենակետերը Ղրիմի արևելյան ծովափին։ Զարգացնելով հարձակումը, մեր զորքերը առաջ շարժվեցին Կերչից արևմուտք մոտ 30 կիլոմետր, անցան Տուրեցկի վալը և մարտերով գրավեցին ավելի քան 40 բնակավայր։

...Մեր զորքերի հարվածների տակ նահանջելով, հակառակորդը կրում է կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ»[14]։

Այդ հաջողությունների համար Գերագույն Գլխավոր հրամանատարության 1944 թ. ապրիլի 11-ի հրամանով Առանձին մերձծովյան բանակի զորքերն արժանացան շնորհակալության։

Բարձր գնահատելով Կերչի համար մղված ինչպես պաշտպանական, նույնպես և հարձակողական մարտերը և այդ մարտերում Կարմիր բանակի ռազմիկների ու քաղաքի աշխատավորների ցուցաբերած մասսայական հերոսությունները, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը հետագայում՝ 1973 թ. սեպտեմբերի 14-ի հրամանագրով Կերչ քաղաքին շնորհել է ՀԵՐՈՍ քաղաքի կոչում։

Հրամանագրում ասված է.

«Հայրենիքի հանդեպ ունեցած ակնառու ծառայությունների համար, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Կերչի աշխատավորների և սովետական բանակի, ռազմածովային նավատորմի ու ավիացիայի ռազմիկների ցուցաբերած մասսայական հերոսության, արիության ու տոկունության համար և ի նշանավորումն Ղրիմի ազատագրման ժամանակ ֆաշիստական զորքերի ջախջախման 30-ամյակի,

---

14 Сообщения Советского Информбюро, 6 ,Москва, 1944, էջ 178։

կերշ քաղաքին շնորհել Հերոս քաղաքի պատվավոր կոչում՝ հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ»[15]:

Հարձակողական գործողությունները ծավալվեցին անընդհատ արագությամբ և մեծ հաջողություններով: Ազատագրվեցին Բշնամու մարտական կարգերը: Ինչպես ասում են, ֆաշիստական զորքերը դուրս եկան իրենց կանոնադրքերից: Ղրիմում սկսվեց ֆաշիստական «անհաղթ» բանակի խուճապային նահանջը:

Մեր փառապանծ տանկիստները, մեքենայացման ենթարկված զորամասերը և օդաչուները սկսեցին կրնկակոխ հետապնդել հակառակորդին, մարգիչին ու անխնիկայի մեծ կորուստներ պատճառելով նրան: Կերչից դեպի Թեոդոսիա և Սիմֆերոպոլ տանող խճուղային գլխավոր ճանապարհները և մյուս օժանդակ խճուղիները լիքն էին մեր զորքերով, որոնք առանց կանգնելու, գնում էին առջևից ընթացող զորքերի հետևից: Որոշ պաշտպանական գծերում Բշնամին փորձում էր կանգնեցնել մեր առաջընթացը: Ձենքի բոլոր տեսակներով նա մոլեգին կրակ էր տեղում: Սակայն հարձակվող խորհրդային բանակին կանգնեցնել այլևս անհնարին էր: Հինգ և կես ամիս Կերչի հենակետում կենտրոնացած մեր հզոր ուժերը, որոնք ուժգին զսպանակի նման սեղմված էին, այժմ բացվել էին և անհաղթահարելի ուժով առաջ էին ընթանում: Նրանց շարքերում էր նաև գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը՝ 89-րդ Թամանյան դիվիզիան, որը շարժվում էր Սիմֆերոպոլի ուղղությամբ:

Հակառակորդը առանձնապես մեծ հույսեր էր կապել Ադոլֆ Հիտլերի ծովից մինչև Սև ծովը ձգվող Ակ-մանյան ուժեղ ամրությունների հետ, ուր ինչպես հայտնի է, 1942 թվականի գարնանը կատաղի կռիվներ էին տեղի ունեցել: Այստեղ, այդ մարտերին մասնակցեց նաև Հայկական 390-րդ դիվիզիան գնդապետ Ս. Ջաքիյանի հրամանատարությամբ: Այն

---

15 «Սովետական Հայաստան», 1973, 15 սեպտեմբերի:

ժամանակ Թշնամին կարողացավ այդ ամրոցները պահել իր ձեռքում և կանգնեցնել մեր հարձակումը։

Դրանից հետո նա ավելի ու ավելի էր կատարելագործել այդ ամրոցները։ Ազովից մինչև Սև ծովը անց էր կացված հակատանկային պաշտպանության երկու շերտ լայն ու խոր փոսեր, ձգված էին խիստ ու անանցանելի փշալարեր, կառուցված էին բազմաշերտ ամուր կրակային կետեր, փորված մի քանի շերտ խրամատներ։

Հասնելով Ակ-մանայան այդ ամրոցություններին, առանց դադար տալու Թշնամուն, մեր փառապանծ տանկիստները ձախ թևում՝ Թեոդոսիայի ուղղությամբ մի քանի տեղից ճեղքում են այդ ամրոցությունները և հաղթահարելով հակառակորդի զորամասերին նրանք հարվածում են թիկունքից։ Առանց երկար դիմադրելու, թողնելով այդ ամրոցությունները, ամբողջ հակառակ Թշնամին խուճապահար նահանջում էր, տալով մարդկային և տեխնիկայի մեծ կորուստներ։

Ակ-մանայան ամրոցություններն արդեն մեր ձեռքում էին։ Թշնամուն հետապնդում էինք Դրիմի լեռներում ու անառանոներում։

Կերչից դեպի Թեոդոսիա և Սիմֆերոպոլ տանող ճանապարհներն ու դաշտերը լցված էին ֆաշիստական զինվորների ու սպաների դիակներով, ճանապարհների երկու կողմերում թափված էին զրահամեքենական ու ռումինական բազմաթիվ վնասված ու անվնաս տանկեր, հրանոթներ, ականանետներ, զնդացիրներ և զենքի այլ տեսակներ։ Առանձնապես շատ էին ավտոմեքենաները, որոնք վառելիք չունենալու պատճառով կանգ էին առել։ Ֆաշիստների դիակների կողքին թափված էին նաև մեծ քանակությամբ սպանված ձիեր։ Դրանք ռումինական հեծյալ կորպուսի ձիերն էին, այն կորպուսի, որը մինչև մեր հարձակումը պաշտպանում էր Կերչ քաղաքից դեպի հարավ ընկած թերակղզին և նրա

ափերը։ Չկարողանալով փախչել մեր հետապնդումից, թշնամու զորքերը բոլոր ձիերին գնդակահարել էին, որպեսզի մեր ձեռքը չընկնեն, իսկ իրենք փորձում էին փախչել ավտոմեքենաներով կամ քաշվելով լեռներն ու անտառները, մի կերպ գլուխ պրծացնել։ Սակայն իզուր։ Նրանցից շատերը ոչնչացվեցին, իսկ կենդանի մնացածները գերի վերցվեցին։

Ազատագրված ժողովուրդը ուրախության ու հրճվանքի արտասուքը աչքերին էր դիմավորում ազատարար Կարմիր բանակի զորամասերին։ Յուրաքանչյուր ազատագրված բնակավայրում զորամասերի քաղաքական աշխատողները զրուցում էին բնակչության հետ, ուր բնակիչներին պատմում էին մեր զորքերի հաջողությունների մասին ոչ միայն Ղրիմում, այլև Հայրենական մեծ պատերազմի մյուս ռազմաճակատներում։ Ծաշխատները նրանց շատ բաներում էին խաբել։ Ուստի երբ նրանց ասում էինք ճշմարտությունը, ուրախությունից ու հրճվանքից շատերը արտասվում էին։ Ազատագրված բնակչության մեջ մեծ թվով հայեր կային։ Բնակավայրերի մի մասը հայկական էին։

Առանձնապես հուզիչ ու հետաքրքիր էր Բայրաչ մեծ բնակավայրում տեղի ունեցած միտինգը։ Այնտեղ դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Գ. Հակոբյանը իր ելույթում պատմեց Ղրիմում և Հայրենական մեծ պատերազմի մյուս ռազմաճակատներում Կարմիր բանակի հարձակողական գործողությունների ու նրանց հաջողությունների մասին։ Այնուհետև ելույթ ունեցան բնակչության և պարտիզանների ներկայացուցիչները, որոնք իրենց շնորհակալության ջերմ խոսքն ասացին Կարմիր բանակին։ Միտինգից հետո, բնակչության համար դյուզի հրապարակում ելույթ ունեցավ մեր դիվիզիայի արևելյան գործիքների Կարմիր բանակային անսամբլը՝ նշանավոր թառիստ, երկնակի շքանշանակիր Աշոտ Գասպարյանի ղեկավարությամբ։ Երբ ավագ Զաքարյանը անսամբլի նվագակցու-

Այսօր երգում էր հայկական երգեր, բնակիչներից շատերը սկսեցին հուզվել ու արտասվել։ Երկու և կես տարի նրանք տառապել էին ֆաշիստական դաժան լծի տակ։ Այժմ ազատ շունչ էին քաշում և լսում հայրենի հարազատ երգերը։

Շուտով մենք արդեն Ստարի Կրիմսկի քաղաքում էինք։ Այստեղ ևս մեծ թվով հայեր կային։ Մեր դիվիզիայի մարտիկներն ականատես եղան ֆաշիստների կողմից կատարած վայրագությյան մի նոր փաստի։ Քաղաքը ետ ընկնելուց առաջ, նրանք գնդակահարել, մորթոտել ու նախորոք փորված փոսերն էին լցրել նրա 580 անմեղ բնակիչների՝ երեխաների, կանանց ու ծերունիների։ Դիակներն արդեն նեխվել էին։ Քաղաքի բնակչությունից կենդանի մնացածներից շատերը տեսնելով իրենց հարազատների դիակները, սրատճմլիկ կերպով մորմոքում ու հեկեկում էին։ Այդ տեսարանը խիստ ծանր տպավորություն թողեց նաև դիվիզիայի անձնակազմի վրա։

Ֆաշիստների նկատմամբ ատելության ու վրեժի ցասումը ավելի ու ավելի լեռնանում էր։

Ստարի Կրիմսկում տեղի ունեցավ խորհրդային բանակի զորամասերի ու պարտիզանների հանդիպումը։ Խիզախ պարտիզաններն առանձնապես այս շրջանում մեծ դործ էին կատարել։ Նախքան կարմիր բանակի հարձակումը, նրանք մի շարք անգամ դրոհել էին այդ քաղաքում գտնվող ֆաշիստական կայազորի վրա։ Լսելով Ղրիմի հյուսիսից և արևվելքից Կարմիր բանակի հարձակման մասին, նրանք էլ՝ ավելի ակտիվ մարտական գործողություններ էին ծավալել։ Ապրիլի 12-ին Ստարի Կրիմսկում նրանք կարում են ֆաշիստների նահանջի ճանապարհը և ոչնչացնում թշնամու մեծ քանակությամբ զինվորներ ու ռազմական տեխնիկա։ Հարվածի տակ պահելով ճանապարհը, պարտիզանները միաժամանակ մեծ թվով գերիներ էին վերցրել։ Միայն առաջին երեք օրում գերել էին ավելի քան 690 ֆաշիստական զինվոր ու սպա։

Պարտիզանները պատմում էին, թե անցած երկու տարում

ինչպիսի ծանր օրեր են ապրել և ինչ զրկանքներ կրել, բայց երբեք չեն կորցրել իրենց հավատը մեր մեծ հաղթանակի նկատմամբ։ Նրանք անողոքաբար վրեժ էին լուծում թշնամուց։ Ամեն մեկն իր անձնական հաշվում ուներ մի քանի տասնյակ սպանված ֆաշիստ և զգալի քանակությամբ ոչնչացված ռազմական տեխնիկա։ Քաջարի պարտիզանների կազմը ինտերնացիոնալ էր։ Նրանց մեջ կային ռուսներ, ուկրաինացիներ, վրացիներ, հայեր և խորհրդային մյուս ժողովուրդների զավակներ։

Բոլոր պարտիզանները մեծ հպարտությամբ էին խոսում Քանկոյի բնակիչ ծերունի պարտիզան Պողոսյանի մասին, որը իր արդու հետ իրենց շարքերում մեծ սխրանքներ էր կատարել։ Քաջարի գործեր էր կատարել նաև Հայկական ԽՍՀ Կալինինոյի շրջանի Պրիվոլնո գյուղի բնակիչ Տոֆիևը, որը Ղրիմում էր մնացել 1942 թվականից, Թեոդոսիայի անկումից հետո։ Մելորի շրջանի Արևիկ գյուղի բնակիչ, 89-րդ Թամանյան դիվիզիայի ռազմիկ, կապավոր, ավագ սերժանտ Հրաչիկ Հայրապետյանը և նրանց ամբողջ ընտանիքը 1942 թ. սկզբից ոչ մի տեղեկություն չունեին իրենց հարազատից՝ Հրաչիկի ավագ եղբայր Արսենից։ Նրանք արդեն հաշտվել էին այն մտքի հետ, որ Արսենը պատերազմում բնկել է հանուն խորհրդային Հայրենիքի։ Սև ահա թե ինչ տեղի ունեցավ պարտիզանների հետ հանդիպման ժամանակ։

Ավագ սերժանտ Հրաչիկ Հայրապետյանը հանապարհի եղրին իր մարտական ընկերների հետ զրույցում էր ռազմաճակատում մեր զորքերի հաջողությունների մասին։ Այդ պահին նրանցից ոչ հեռու փողոցով անցնում էին երեք հայ պարտիզաններ, որոնց գլխարկի վրա, ճակատի մասում, ամրացված էր կարմիր ժապավենը՝ որպես պարտիզանների տարբերանշան։ Անցնողները դեռ չէին հեռացել, երբ Հրաչիկը նայեց նրանց կողմը և «եղբայր ջան» կոչելով հուզմունքից սկսեց բարձրաձայն լայ լինել։ Դեպի Հրաչիկը վազեց և նրան փաթաթվեց պարտիզաններից մեկը, որը

նույնպես հուզմունքից սկսից արտասվել։ Դա Հրաչիկի ավագ եղբայր Արսենն էր։

Մոտենալով գրկախառնված և ուրախությունից հուզմունքից արտասվող երկու եղբայրներին, մարտիկները ցանկանում էին նրանց հանգստացնել։

— Գնեներալ-մայոր ընկեր Սաֆարյանն է անցնում, լաց մի լինեք, ընկերներ,— դիմում է նրանց մարտիկներից մեկը։

— Գնեներալի ցավը տանեմ, սա ուրախության ու հրճվանքի լաց է,— պատասխանում է Հրաչիկը և լացը փոխարինում է ծիծաղով։

Իրոք որ հուզիչ էր երկու եղբայրների հանդիպման այդ անասրանը։ Նրանք շուտով հուզմունքից հանդստացան և երկար զրուցեցին, որից հետո Հրաչիկը հրաժեշտ տվից եղբորը։ Նա առաջ շարժվից դիվիզիայի զորամասերի հետ՝ կատարելու իր պարտքը հայրենիքի հանդեպ, իսկ Արսենը՝ պարտիզանների հետ, գարձյալ խորհրդային հայրենիքի հանդեպ նույն սրբազան պարտքի կատարման դիտակցությամբ։

Ազատագրված քաղաքների ու գյուղերի բոլոր բնակիչները ցնծությամբ էին դիմավորում իրենց ազատարարներին՝ ռազմաճակատի բոլոր ռազմիկներին։

Իմանալով, որ մեր դիվիզիան հայկական էր, տեղի հայ բնակչությանը (այնտեղ մնծ թվով հայեր կային) հետաքրքրում էր, թե մեր շարքերում արդյոք չկան իրենց հարազատներից, բարեկամներից ու ծանոթներից։ Եվ այդպիսի մի քանիսը գտնվեցին։ Մեր դիվիզիայի քաղաքական-կուսակցական աշխատողները հայերին լեզվով մի քանի զեկուցումներ ու զրույցներ կազմակերպեցին նրանց համար, որոնց մասնակցում էին շատերը և լսում հետաքրքրությամբ։ Տեղի երիտասարդության մի մասը ծառայության եկավ մեր դիվիզիան և մասնակցեց Սևաստոպոլի ազատագրության մարտերին։

Մեր հարձակման այդ օրերին, ապրիլի 18-ին, Առանձին մերձծովյան բանակը վերակազմվեց Մերձծովյան բա-

նակի, անցավ 4-րդ ուկրաինական ռազմաճակատի հրամանատարության։ Նրա հրամանատար բանակի գեներալ Ա. Ի. Երեմենկոն փոխադրվեց այլ աշխատանքի, իսկ վերջինիս փոխարինեց գեներալ-լեյտենանտ Կ. Ա. Մելնիկը։

Հարձակվող այդ բանակի մարտակարգերում մեր դիվիզիան անցել էր Սիմֆերոպոլը, որը ազատագրել էր 51-րդ զվարդիական բանակը ապրիլի 13-ին և առաջ էր ընթանում դեպի Սևաստոպոլ։ Ճանապարհին մեզ հայտնի դարձավ ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թ. ապրիլի 24-ի հրամանագիրը 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան կարմիր աստղի մարտական շքանշանով պարգևատրելու մասին։

Հրամանագրում ասված էր.

«Կերչ քաղաքի ազատագրման համար մղված մարտերում հրամանատարության մարտական խնդրի օրինակելի կատարման և ցուցաբերած արիության ու խիզախության համար կարմիր աստղի շքանշանով պարգևատրել՝

...89-րդ հրաձգային Թամանյան դիվիզիային։

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. Կալինին

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Մ. Գորկին»[16]։

Կերչի համար մղած հերոսամարտերում դիվիզիայի, նրա ամբողջ անձնակազմի սխրանքների բարձր գնահատականն էր այդ, որը անսահման խանդավառություն առաջ բերեց ռազմիկների մեջ։ Բոլոր զորամասերում տեղի ունեցան բուռն միտինգներ, որտեղ հերոսները ոչ միայն շնորհակալության խոսքեր էին ուղղում կոմունիստական կուսակցությանն ու խորհրդային պետությանը՝ իրենց մարտական գործերի բարձր գնահատականի համար, այլ հայտնում էին իրենց վճռական հաստատակամությու-

[16] Боевой путь... էջ 319։

նը՝ առանց վիշնամուն ջախջախելու, առանց հաղթանակի առն չվերագառնալ։

Այդ միտինգների մասին «Կարմիր դինվորի» ապրիլի 28-ի համարում տպագրվեց համառոտ հաղորդում, ուր ասված էր.

«ՍՍՌ Միության Գերագույն Սովետի նախագահության հրամանագիրը՝ 89-րդ Թամանյան դիվիզիային «Կարմիր առաջ» շքանշանով պարգևատրելու մասին բուռն խանդավառությամբ առաջ բերեց մեր առորարաժանումների սպաների և մարտիկների մեջ»։

Ամենուրեք զումարված կարմիր բանակային միտինգներում ռազմիկներն իրենց պատրաստակամությունն էին հայտնում ջախջախիչ հարված հասցնել հակառակորդին և արժանանալ Գերագույն գլխավոր հրամանատարության ու խորհրդային սիատության նոր խրախուսանքին։

Ավագ սերժանտ Մկրտչյանն իր ելույթում նշեց.

— Մենք պատվով կատարեցինք մեր պարտքը Կերչի համար մղված պայքարում։ Սակայն Ղրիմը դեռևս լիովին չի մաքրված գերմանական զավթիչներից։ Մենք միշտ պատրաստ ենք արբունքյամբ կատարելու մեր առջև դրված մարտական խնդիրը։

Ականաձիզ Սահակյանն ասաց.

— Պատրաստ եմ ականանետային հուժկու հարվածներով բարեբաղդ անել Բշնամու դիրքերը։

Գերագույն խորհրդի հրամանագրի հրապարակումը զուգադիպեց մի այնպիսի պահի, երբ մենք պատրաստվում ենք նոր մարտական առաջադրանք կատարելու։

Էլ ավելի լարենք մեր ուժերը, միշտ լինենք զգաստ, աշալուրջ և պատրաստ ամենապատասխանատու հանձնարարությամբ էլ արիությամբ կատարելու մեր մարտական խնդիրը։

Մեր դիվիզիան Կարմիր առաջի շքանշանով պարգևատրելու առթիվ շնորհավորական հեռագիր ստացավ Մերձծովյան բանակի ռազմական խորհրդի կողմից։ Այնտեղ ասված էր.

«Մերձծովյան բանակի ռազմական խորհուրդը ջերմ ողջույն է հղում 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիային՝ զերմանական զավթիչներից Կերչ քաղաքն ազատագրելու և դրա հետ միաժամանակ արիության ու խիզախության ցուցաբերելու համար կառավարական բարձր պարգևով՝ «Կարմիր աստղի» շքանշանով պարգևատրելու կապակցությամբ և վստահ համոզմունք է հայտնում, որ գալիք մարտերում զորամիավորման ամբողջ անձնակազմը մեր մեծ հայրենիքի վրա հարձակված ֆշնամուն շուտափույթ ոչնչացնելու գործում էլ ավելի մեծ հերոսություն ու խիզախություն կցուցաբերի։

Մերձծովյան բանակի հրամանատար,
Գեներալ-լեյտենանտ Մելնիկ
Ռազմական խորհրդի անդամ,
գեներալ-մայոր Բայուկով
Շտաբի պետ, գեներալ-մայոր Կոտով
1944 թվականի ապրիլի 25»[17]։

Կերչում սկսված մեր հարձակումից 10 օր հետո Երևանից ստացվեց Հայկինոյի նոր արտադրության «Դավիթ Բեկ» կինոնկարը, որի ռեժիսորն էր Հովհ. Ժողովրդական արտիստ Համո Բեկնազարյանը։ Այն պատմական մեծ հետաքրքրություն ու արժեք ներկայացնող մի կինոնկար էր, ուր վառ գույներով ցույց էր տրված հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ XVIII դարի սկզբում, պայքար, որը գլխավորել է Հայաստանի նշանավոր պետական գործիչ Դավիթ Բեկը։ Ֆիլմի հայրենասիրական բովանդակությունն ավելի շեշտակի էր դարձել ռեժիսորի կատարած մեծ աշխատանքի ու անվանի դերասաններ Հ. Ներսիսյանի (Դավիթ բեկ), Վ. Սրշուի (Պետրոս I), Ա. Ավետիսյանի (Ֆրանգուլ), Դ. Մալյանի (Ստե-

---

[17] Գ. Գալոյան, Մարտական 89, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1968, էջ 160։

փանոս Շահումյան) և ուրիշների տաղանդավոր կատարման շնորհիվ։

Նկարը տարբեր զորամասերում ցուցադրվում էր դիվիզիայի մարտական երթի ժամանակ։ Բաղմօրյա երթերից չնայած ռազմիկները խիստ հոգնած էին, նկարը դիտում էին անսահման հետաքրքրությամբ։ Նրանց խնդրանքով մի քանի զորամասերում «Դավիթ բեկը» ցուցադրվեց 2—3 անգամ։

Նկարի բովանդակությունը դիվիզիայի ռազմիկների համար ավելի մատչելի դարձնելու նպատակով «Կարմիր դիմակը» թերթի խմբագրությունն ինձ հանձնարարեց նրա մասին դրել գրախոսական։ Այդ հանձնարարությունը մեր կողմից կատարվեց հաճույքով։ Թերթի ապրիլի 24-ի համարում տպագրվեց մեր գրախոսականը, որտեղ բարձր գնահատական տրվեց նկարին։

«Դավիթ բեկ» նկարի ցուցադրումը դիվիզիայի զորամասերում զգալի չափով նպաստեց նրա անձնակազմի հայրենասիրական զգացմունքների ու մարտական կորովի բարձրացմանը։ Այն միաժամանակ ցույց տվեց, թե խորհրդային Հայաստանի արվեստի աշխատողները թիկունքում ինչպիսի ջանասեր աշխատանք են կատարում ռազմաճակատին օգնելու, մեր մեծ հաղթանակը կուռելու համար։ Այդ լավ գործի համար նրանք արժանացան դիվիզիայի անձնակազմի խորին շնորհակալությանը։

Բարձր գնահատելով 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի ռազմիկների քաջագործությունները, Առանձին մերձծովյան բանակի հրամանատարությունը մի շարք հրամաններ է ընդունում նրանց կառավարական շքանշաններով պարգևատրելու մասին։

Այսպես, Կարմիր դրոշի մարտական շքանշանով պարգևատրվում են Կարմիրբանակային, անցյալեր Ս. Ի. Կուբիլովը, ավագ սերժանտ, հաստոցավոր գնդացրի նշանառու Ս. Հ. Հակոբյանը, 390-րդ գնդի հրամանատար, փոխգնդապետ Ե. Ա. Կարապետյանը, 526-րդ գնդի կոմերիտական

կազմակերպիչ լեյտենանտ Ն. Մ. Իշմախլյանը, կարմիրբանակային Մ. Բ. Խաչատրյանը, Բոգդան Խմելնիցկու երրորդ աստիճանի շքանշանով 400-րդ գնդի վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Ա. Ա. Անոյանը, Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով՝ դասակի հրամանատար, լեյտենանտ Ս. Ա. Ալավերդյանը (հետմահու), ավագ սերժանտ, վաշտի կոմերիտական կազմակերպիչ Ս. Բիբրինը (հետմահու) և շատ ուրիշներ, Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով՝ սերժանտ Ա. Գ. Համբարձումյանը, դումարտակի հրամանատար, մայոր Կ. Պ. Մայոկան, կարմիրբանակային, ականանետի հշանառու Ե. Ի. Պետրոսյանը և շատ ուրիշներ: Մեծ թվով ռազմիկներ ու հրամանատարներ, քաղաքական-կուլտուրական աշխատողներ պարգևատրվում են Կարմիր աստղի մարտական շքանշանով և մեդալներով[18]:

Դիվիզիայի անձնակազմին պարգևատրելու մասին հրամանագրի, բացի բանակի հրամանատարության, նաև 16-րդ հրաձգային կորպուսի և 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի հրամանատարությունների հրամանները:

Խորհրդային զինված ուժերի Պոդոլսկի կենտրոնական արխիվում են պահվում 89-րդ դիվիզիայի անձնակազմից շատերի մարտական բնութագրերը, որոնց մի մասը տեղ է գտել դիվիզիայի մարտական ուղուն վերաբերող «Боевой путь армянской таманской стрелковой дивизии *1942—1945 гг.*» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում:

Հիշատակենք Կերչի թերակղզում և Կերչ քաղաքի մարտերում աչքի ընկած մի քանիսի մասին:

Մարգարյան Սուրեն Արշակի, կապիտան, 526-րդ հրաձգային գնդի 3-րդ դումարտակի հրամանատար, 1910 թվի ծնված, ԽՄԿԿ անդամ 1941 թվից, ծնված Ադրբեջանական ԽՍՀ Շամխորի շրջանի Չարդախլու գյուղում:

1944 թ. փետրվարի 6-ին տրված բնութագրում աս-

---

18 Боевой путь..., էջ *311—313*:

ված է, որ Կերչի ինքնակղզու և հատկապես Կերչ քաղաքի պողոցային մարտերում նա ցուցաբերել է համարձակություն և քաջություն։ Բուլկանակ բնակավայրի մոտ տեղի ունեցած մարտերում մշտապես գտնվել է գումարտակի ստորարաժանումների առաջավոր գծում և մի քանի անգամ նա է մղել հակառակորդի գրոհները, նրան պատճառելով մարդկային մեծ կորուստներ։

Կերչ քաղաքի գրոհի նախօրյակին կապիտան Ս. Ա. Մարգարյանը գումարտակի անձնակազմը և կրակային միջոցները հատակ կերպով նախապատրաստել է, գումարտակը առաջինն է մտել հակառակորդի դիրքերը և հաջողությամբ գուրս մղել, ոչնչացնելով նրա կրակային կետերը և հետևակը։ Նրա խելամիտ ղեկավարման, համարձակ հրամանների շնորհիվ գումարտակը գրոհով վերցրել է եկեղեցին՝ գերմանացիների ուժեղ ամրացված պաշտպանության կետը։ Ս. Մարգարյանի մտածված և համարձակ ղեկավարության շնորհիվ գումարտակը հաջողությամբ կատարել է կատերլեզ գետակի անցումը։ Գումարտակը կատարել է հրամանատարության հրամանը, առանց մեծ զոհերի[19]։

Բանակի հրամանատարության 1944 թ. ապրիլի 17-ի հրամանով Ս. Ա. Մարգարյանը պարգևատրվել է մարտական Կարմիր դրոշի շքանշանով[20]։

Մուրադյան Միքայել Արտեմի, մայոր, 390-րդ հրաձգային դնդի առաջին գումարտակի հրամանատար, 1921 թ. ծնված, կոմունիստական կուսակցության անդամ 1937 թվականից, ծնված Վարյագինում, Ադրբեջանական ԽՍՀ։

1944 թ. փետրվարի 7-ի բնութագրում նշված է, որ Հունվարի 23-ից 30-ը Կերչ քաղաքի համար մղված փողոցային մարտերում Մ. Ա. Մուրադյանն իրեն ցույց է տվել որպես կայուն և խելոք ղեկավար, համարձակ մարտի է տա-

---

19 Боевой путь..., էջ 302—303։

20 Ս. Ա. Մարգարյանը հետագայում զոհվեց 1945 թ. ապրիլին, Օդերի Ձրանկֆուրտի մարտերում։

րել գումարտակի անձնակազմը: Գումարտակի 2-րդ և 3-րդ վաշտերը, գնդացրային և ականանետային կրակի պաշտպանության տակ կտրել են թշնամու դիմադրությունը, հաջողությամբ անցել Կատերլեզ գետակը: Տալով զոհեր, նրանք ևս չքաշվեցին և զրաված դիրքերը պահեցին իրենց ձեռքում: Հակառակորդը ավելի մարդկային մեծ զոհեր և ռազմական տեխնիկայի կորուստ: Թամանի համար մղված մարտերում Մուրադյանն արժանացել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանի:

Կերչ քաղաքի մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար նա արժանացել է Կարմիր աստղի շքանշանի[21]:

Պեշչանսկի Իվան Իվանովիչ, փոխգնդապետ, 1909 թ. ծնված, Կարմիր բանակում ծառայել է սկսած 1930 թ., կոմունիստական կուսակցության անդամ, զորաջոչված է Երևանից, 400-րդ հետևակային գնդի հրամանատար:

1944 թ. ապրիլի 14-ի բնութագրում կարդում ենք, որ դեռևս Կերչի թերակղզում մեր զորքերի հենակետն ընդարձակելու մարտերի առաջին էտապում, գունդը Պեշչանսկու ղեկավարությամբ, թշնամու խրամատներում տեղի ունեցած դժվարին ճեռնամարտերում, ոչնչացնելով մոտ մի գումարտակ թշնամական հետևակ, բարելավել է իր դիրքերը: Ավելի ուշ, Կերչ քաղաքի մարտերում գունդը տիրապետում է հակառակորդի ամրացված հենակետին քաղաքի կենտրոնում, մեկուսացնում գնդացրային 6 դզոտ, ոչնչացնում է մինչև 300 զինվոր և սպա, վերցնում ավար, որի մեջ ծանր հրանոթ:

Պեշչանսկին մտածված կերպով ղեկավարելով մարտը, ապահովել է գնդի մարտական հաջողությունները: Երբ պահանջել է իրադրությունը, ընկեր Պեշչանսկին անձնական

---

21 Боевой путь..., էջ 305: Պատերազմից հետո Մ. Ա. Մուրադյանը երկար ժամանակ ծառայել է ԽՍՀՄ Զինված ուժերում և հասել դիվիզիայի-մայորի զինվորական աստիճանի: Այժմ ապրում է Երևանում:

օրինակով, քաջաբար, իր հետևակի մարտական կարգերում, գունդը բարձրացրել է գրոհի բշնամու վրա և միշտ հասել է հաղթանակի: Նա արժանի է Կարմիր դրոշի շքանշանի:

Բնութագիրը ստորագրել է 89-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը:

Բանակի հրամանատարության 1944 թ. ապրիլի 17-ի հրամանով փոխգնդապետ Խ. Ի. Պեշչանսկին պարգևատրվել է մարտական Կարմիր դրոշի շքանշանով[22]:

Անոյան Համբարձում Ալեքսանդրի, լեյտենանտ, 400-րդ հետևակային գնդի 2-րդ վաշտի հրամանատար, ծնված 1909 թ. Երևանում, կոմունիստական կուսակցության անդամության թեկնածու, Կարմիր բանակի շարքերում է 1941 թվականից:

Կերչի թերակղզում, Աջիմուշկայի օդանավակայանի մոտ հարմար պահ ընտրելով, Հ. Անոյանը վաշտը գրոհի բարձրացրեց և առանց մեծ զոհերի, թշնամուն մինչև 400 մետր ետ մղեց: Կերչ քաղաքի Կաուերլեզ գետակի շրջանում մտածված կերպով կազմակերպեց պաշտպանությունը և ետ մղեց հակառակորդի հակագրոհը:

1944 թ. փետրվարի 2—7-ը Կերչ քաղաքի աղյուսի գործարանի շրջակայքում Հ. Անոյանի վաշտը դիպուկ և հզոր կրակով ետ մղեց հակառակորդի 5 հակագրոհներին, այդ մարտում ոչնչացնելով ավելի քան 120 ֆաշիստական զինվոր և սպա: Նա իր վաշտը բարձրացրել է առաջավորների մակարդակին: Միշտ ճիշտ է գնահատում իրադրությունը, սերտորեն շաղկապում մարտական և քաղաքական ուսուցումը:

Անոյանի այդ գնահատականը տվել է գնդի հրամանատար, փոխգնդապետ Ի. Ի. Պեշչանսկին 1944 թ. մարտի 4-ին:

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 24-ի

---

22 Боевой путь..., էջ 317: Ի. Ի. Պեշչանսկին այժմ ապրում է Երևանում:

հրամանով Հ. Ա. Անոյանը պարգևատրվում է Բոգդան Խմելնիցկու շքանշանով[23]:

Ալանակյան Հրաչիկ Լիպարիտի, մայոր, 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժնի պետի տեղակալ, կոմունիստական կուսակցության անդամության թեկնածու, ծնված 1920 թ. Թիֆլիսում, Կարմիր բանակի շարքերում է 1941 թվականից:

Կերչի թերակղզու մարտերում ցուցաբերել է համարձակություն և վճռականություն, Կերչ քաղաքի փողոցային մարտերում միշտ գտնվել է կռվող ստորաբաժանումներում և ապահովել է իրազրության վիճակի հաղորդումը դիվիզիայի շտաբին, դրանով իսկ դիվիզիայի հրամանատարի ընդհատվող ղեկավարությունը մարտում: Միշտապես պահպանում է կապը ստորաբաժանումների հետ: Լավ է տիրապետում իր գործին: Ալանակյանի այդ գնահատականը տվել է դիվիզիայի շտաբի պետը, 1944 թ. ապրիլի 10-ին:

Բանակի հրամանատարության 1944 թ. ապրիլի 4-ի հրամանով Հ. Լ. Ալանակյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով[24]:

Կերչ թերակղզու և Կերչ քաղաքի մոտ հինգ և կես ամիս տևած ծանր մարտերում 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի շարքերում աճեցին հարյուրավոր հյուցապուններ, որոնք անբիծ կերպով կատարելով իրենց երդումը մայր ժողովրդին, անխնա հարվածում էին կատաղի թշնամուն, նրան պատճառելով մարդկային և նյութական խոշոր վնասներ:

Այդ մարտերում զոհվեցին դիվիզիայի ռազմիկներից շատերը, որոնց քաջագործությունները բարձր գնահատվեցին դիվիզիայի, բանակի և հայրենիքի կողմից: Հանուն

---

23 Боевой путь..., էջ 310—311: Պատերազմից հետո Հ. Ա. Անոյանը մահացել է Երևանում:

24 Նույն տեղում, էջ 315—316:

հայրենիքի գիտակցաբար զոհելով իրենց կյանքը, նրանք մնացին անմահ։

Այդ քաջերի մի մասը հենց կերչի թերակղզու մարտերում հետմահու արժանացան կառավարական բարձր շքանշանների։

Հիշատակենք նրանցից մի քանիսին.

1944 թ. հունվարի վերջին կերչ քաղաքում փողոցային ուժեղ կռիվներ էին ընթանում։ Թշնամին կատաղի դիմադրում էր։ Իսկ մեր դիվիզիայի 390-րդ գունդը կրակային բոլոր միջոցներով հարվածում էր նրան։ Գնդի այդ գործողությունները անմիջականորեն և հմուտ կերպով ղեկավարում էր գնդի հրամանատարի տեղակալ, կոմունիստ, մայոր Մամիկոն Խաչանյանը, որն ուներ հարուստ մարտական փորձ։ Նա այդ մարտում ցուցաբերեց բացառիկ քաջություն, հերոսություն և նվիրվածություն օրինակ։ Գնդին խնդիր էր տրված գրոհել և առանց դադարի անցնել քաղաքի կենտրոնով հոսող Կատերլեզ գետակը, թշնամուն դուրս մղել այն թաղամասից, որը գտնվում էր այդ գետակի աջ ափում։ Թշնամին անընդհատ ուժեղ կրակով փակում էր մեր մարտիկների գրոհի ճանապարհը։ Այդ պահին մայոր Մ. Խաչանյանը դլխավորում է վաշտերից մեկը, որպեսզի անձնական օրինակով մարտիկներին ոգևորի և առաջ տանի՝ խնդիրը լուծելու համար։ Սկսելով սրընթաց գրոհը, վաշտն անցում է կատարում գետակի մյուս ափը։ Մի խումբ մարտիկների հետ միասին նա մտնում է շենքերից մեկը, որը թշնամու ամրացված կետն էր։ Նրանք համարձակ և վճռական գործողությամբ արագ ոչնչացնում են այնտեղ գտնվող թշնամու զինվորներին ու սպաներին։

Ամրանալով գետակի աջ ափին և ճնշելով թշնամու դիմադրության հիմնական կետերը, մայոր Մ. Խաչանյանն ապահովեց մեր մյուս ստորաբաժանումների անցումը գետակի մյուս ափը։ Այդ մարտի թեժ պահին թշնամու գընդակը մահացու խոցում է դյուցազն մայորին։ Նա իր կյան-

քի գնով ստորաբաժանման առաջնորդից հաջողությամբ կատարելու մարտական դժվարին խնդիրը։

Գնդի հրամանատար փոխգնդապետ Ե. Ա. Կարապետյանը մայոր Մ. Խաչանյանին հետմահու ներկայացրեց Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանի[25]։

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 14-ի հրամանով մայոր Մ. Խաչանյանը հետմահու պարգևատրվել է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով։ Նա 1898 թ. ծնված էր, 1942 թ. Կոմունիստական կուսակցության անդամ, 1920—1926 թթ. ծառայել էր Կարմիր բանակի շարքերում, զորակոչվել էր Սրխանից։

Կերչի փողոցային մարտերի ժամանակ 526-րդ գնդի վաշտերի ու գումարտակների միջև հեռախոսային կապը խզվել էր։ Անհրաժեշտ էր անմիջապես վերականգնել այն, ապահովել մարտական խնդրի կատարումը։ Այդ գործը հրամանատարությունը հանձնարարում է գնդի կապի վաշտի կարմիր բանակային Մամիկոն Ռուբենի Հովհաննիսյանին։ Ցուցաբերելով անվախություն և համարձակություն, թեժ մարտերի պահին, հակառակորդի ականանետային և գնդացրային ուժեղ կրակի տակ նա նետվում է հանձնարարությունը կատարելուն և ժամանակին ապահովում է կապը գումարտակի և գնդի հրամանատարների միջև։ Միայն մեկ օրվա ընթացքում նա վերականգնում է խափանված 16 հեռախոսային գիծ։ Նա այդ անում է իր կյանքի գնով։ Կապավոր մարտիկ Մ. Ռ. Հովհաննիսյանը Քշնամու գնդացրի ուղղակի նշանառությամբ հերոսաբար զոհվում է։ Այդ քաջագործության համար մերձծովյան բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 14-ի հրամանով նա հետմահու պարգևատրվում է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով[26]։

Կապավոր կարմիրբանակային Մ. Ռ. Հովհաննիսյանը

---

[25] Боевой путь..., էջ 306—307։

[26] Боевой путь..., էջ 301։

զոհվեց 30 տարեկան հասակում: Ջորակոչված էր էջմիածնից:

Կերչի փողոցային մարտերում անվախ էր կռվում 526-րդ գնդի ջոկի հրամանատար, կոմունիստ սերժանտ Հակոբ Խոսրովի Սարգսյանը: Իր ջոկով նա առաջինը գրոհի բարձրացավ և հարձակվեց թշնամու դիրքերի վրա: Ճեղքելով նրա պաշտպանությունը, նա առաջ շարժվեց և դրավեց թշնամու ղրաղեցրած շենքը, ոչնչացրեց նրա զինվորներին և կրակային կետերը: Միայն ինքը ոչնչացրեց 10 ֆաշիստ: Հունվարի 28-ին՝ կատերլեզ գետակի անցման ժամանակ Հակոբ Սարգսյանն ընկնում է քաջի մահով:

Գնդի հրամանատարությունը հետմահու նրան ներկայացնում է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանի: Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 14-ի հրամանով նա արժանանում է այդ շքանշանին: Նա ծնվել է 1923 թ. վրացական ՍՍՀ Բոդբանովկայի շրջանի Կուլալիկ գյուղում[27]:

Թշնամու դեմ հերոսաբար էր կռվում և ռազմիկներին անձնական օրինակ էր ցույց տալիս 390-րդ գնդի 3-րդ գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ կապիտան, կոմունիստ Գուրգեն Մովսեսի Սարգսյանը: Մարտերի պահին նա միշտ գտնվում էր զինվորների հետ, իր համոզիչ խոսքերով նրանց քաջալերում և դեպի առաջ էր տանում: Գումարտակը խնդիր էր ստացել անցում կատարել Կատերլեզ գետակը, որը գտնվում էր թշնամու ուժեղ հսկողության տակ: Կապիտան Գ. Սարգսյանն անձամբ լինում է գումարտակի բոլոր վաշտերում, զրուցում մարտիկների հետ: Իր վստահ և համոզիչ խոսքով նա ոգևորում էր նրանց: Գումարտակը գրոհից և հաջողությամբ անցավ Կատերլեզ գետակը: Գ. Սարգսյանը գնում էր մարտիկների առջևից: Այստեղ նա զոհվում է 1944 թ. հունվարի 26-ին:

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 14-ի հրամանով կապիտան Գ. Մ. Սարգսյանն հետմահու պար-

---

27 Նույն տեղում, էջ 302:

դևատրվում է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով[28]։

Գ. Մ. Սարգսյանը ծնվել է 1917 թ. Վրացական ԽՍՀ Սուրամի քաղաքում, Կարմիր բանակի շարքերումն էր 1938 թ.։

Կոմունիստ, կապիտան Սուրեն Կարապետի Շահնազարյանը 390-րդ գնդի 6-րդ վաշտի հրամանատարն էր։ Նրա հրամանատարությամբ վաշտը սկսելով գրոհը, ֆաշղուբյամբ անցում է կատարում Կատերլեզ գետակը։ Առանց դադարի հետապնդելով հակառակորդին, վաշտը գրավում է ուժեղ ամրացած խոշոր շենքը։ Այստեղ վաշտը ոչնչացնում է թշնամու երեք գնդացրային կետ և մոտ երկու տասնյակ զինվոր։ Շարունակվող մարտում վաշտը իր քաջարի հրամանատարի ղեկավարությամբ նոր, մեծ վնասներ է հասցնում թշնամուն և պահպանում գրաված դիրքերը։ Այստեղ քաջարի կապիտան Ս. Շահնազարյանը մահացու վիրավորվում է։

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 14-ի հրամանով կապիտան Ս. Կ. Շահնազարյանը հետմահու պարգևատրվում է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով։ Նա ծնվել է 1910 թ. Դորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում։

390-րդ գնդի 3-րդ գումարտակը մարտական խնդիր էր ստացել գրոհով անցնել Կատերլեզ գետակը։ Այդ վաշտի դասակի հրամանատար լեյտենանտ Արշալույս Ավետիսի Մաթևոսյանն իր դասակով անցավ հրամանի կատարմանը։ Սրընթաց կերպով նա սկսեց անցումը և հայտնվեց գետակի մյուս ափին։ Թշնամին ընկավ շփոթության մեջ և նույնիսկ չկարողացավ գործի դնել շենքերում տեղավորված իր կրակակետերը։ Լեյտենանտ Ա. Մաթևոսյանն իր դասակով թափանցեց 53-րդ թաղամասի առաջին շեն-

---

28 Боевой путь..., էջ 303—304։

քը, խլեց Բշնամու զնդացիրը և նրանով սկսեց գնդակոծել ֆաշիստներին, հարվածել նռնակներով։ Շուտով Բշնամին դուրս է շպրտվում այդ շենքից, այնտեղ թողնելով ֆաշիստի 5 դիակ։ Դասակը մնաց այդ շենքում և կազմակերպեց շրջանաձև պաշտպանություն։ Դրանով հնարավորություն տրվեց գումարտակի մյուս վաշտերին առանց դոհերի անցնելու գետակը։ Այդ մարտում լեյտենանտ Ա. Մաթևոսյանն ընկնում է քաջի մահով։

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 14-ի հրամանով լեյտենանտ Ա. Ա. Մաթևոսյանը նամահու պարգևատրվում է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով[29]։ Նա ծնվել է Սևփանավանի շրջանի Գյատպյատ գյուղում 1908 թ.։

Կերչի փողոցային մարտերի պահին 526-րդ գնդի առաջին գումարտակի կապավոր, կարմիրբանակային կոմերիտական Աբել Սամսոնի Գրիգորյանը գտնվում էր մարտի առաջին գծում։ Բշնամու ուժեղ կրակի պայմաններում, արհամարհելով մահը, նա վերականգնում է վնասված կապը։ Բայց մարտական դիրքում Բշնամու գնդակից ընկնում է։

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 24-ի հրամանով նա նամահու պարգևատրվում է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով[30]։ Շարքային Ա. Ս. Գրիգորյանը ծնվել է 1922 թ. Դիլիջանում։ Կարմիր բանակ էր կանչվել 1941 թ.։

Հունվարի 23-ին Կերչ քաղաքում շարունակվում էին փողոցային ուժեղ մարտերը։ Մեր հետևակի մբրկային կրակի տակ ֆաշիստները թողնելով իրենց դիրքերը, ամրանում են մոտակա խոշոր շենքում և անչափից ցույց տալիս համառ դիմադրություն։ 526-րդ գնդի հնդացրային վաշտը առաջադրանք էր ստացել հակառակորդին դուրս մղել պաշտպանության այդ կետից։ Խիզախ գնդացրորդ, կարմիր

---

29 Боевой путь..., էջ 306։

30 Նույն տեղում, էջ 307—308։

բանակային Միհրան Խաչատրյանն իր գնդացրով բաց դիրքերից տեղատարափ կրակ է սկսում դիմադրող թշնամու վրա: Նա շարքից հանում է գնդացրային երկու կետ և գրավում մեկ գնդացիր: Եկեղեցու գրավման մարտում նա ճնշում է հակառակորդի կրակային երեք կետ և ոչնչացնում 7 ֆաշիստ: Երբ զոհվում է դասակի հրամանատարը, կոմերիտական Միհրանը փոխարինում է նրան, անցում կատարում Կատերլեզ գետակը, իր գնդացրային կրակով պաշտպանում հարձակվող մեր հետևակին:

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 24-ի հրամանով գնդացրորդ Միհրան Բալաբեկի Խաչատրյանը պարգևատրվում է մարտական Կարմիր դրոշի շքանշանով[31]: Նա ծնվել է 1922 թ. Մարտունու շրջանի Ջոլաքար գյուղում:

Հունվարի 28-ի փողոցային մարտերում նույն գնդի 3-րդ գումարտակի հրամանատար, ավագ սերժանտ Մարգար Դասպարի Խաչատրյանը իր դասակով հաջողությամբ անցում է կատարում Կատերլեզ գետակը, տիրապետում երկու շենքի և ոչնչացնում այնտեղ գտնվող ֆաշիստներին: Հակառակորդը գնդացրային ուժերով զրոհի է անցնում՝ այդ շենքերը նա վերցնելու համար: Ծավալվում են ուժեղ մարտեր, որոնք շարունակվում են երկու օր: Ավագ սերժանտ Մարգար Խաչատրյանի դասակը նա է մղում թշնամու բոլոր զրոհները: Այդ մարտում միայն ինքը ոչնչացնում է 11 հիտլերական, թշնամու գնդակից զոհվում:

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 24-ի հրամանով ավագ սերժանտ, կոմերիտական Մարգար Դասպարի Խաչատրյանը Հետմահու պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով[32]: Նա ծնվել է 1905 թ. Թալինի շրջանի Ահագնի գյուղում:

---

31 Боевой путь..., էջ 308—309:

32 Նույն տեղում, էջ 309:

Բշնամու դեմ քաջաբար էր մարտնչում 526-րդ գնդի 3-րդ վաշտի կարմիրբանակային Հովհաննես Սարգսի Եղիազարյանը։ Հունվարի 25-ին Կերչ քաղաքի փողոցային մարտերում գրոհի ժամանակ նա առաջինն էր մտնում թշնամու դիրքերը և իր ընկերների հետ միասին գերում 11 ֆաշիստի։ Եկեղեցու համար մղված մարտերում նա սրընթաց կերպով անցնում է Կաատերլեզ գետակը և այստեղ շարունակում կրակը թշնամու վրա։ Այստեղ էլ նա քաջաբար զոհվում է։

Բանակի հրամանատարության 1944 թ. մարտի 24-ի հրամանով Հովհաննես Սարգսի Եղիազարյանը ետմահու պարգևատրվում է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով[33]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան, Մերձծովյան բանակի 16-րդ հրաձգային կորպուսի կազմում հերոսական մարտնչություններ է մղել Կերչ թերակղզու և Կերչ քաղաքի ազատագրման համար մղված դժվարին մարտերում և հասել նրանց ազատագրմանը։ Այդ մարտերում նա մարդկային ու ռազմական տեխնիկայի խոշոր վնասներ է հասցրել հակառակորդին։

Դիվիզիայի շարքերում աճել են հարյուրավոր ու հազարավոր դյուցազուններ, որոնց մի մասն իր երիտասարդ կյանքը տվեց հանուն Խորհրդային մեծ Հայրենիքի։ Փա՜ռք նրանց։

2. ՍԵՎԱՍՏՈՊՈԼԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Ապրիլի 26-ին դիվիզիայի զորամասերը կենտրոնացել էին Բալակլավայից ոչ հեռու՝ Միխայլովկայի շրջանի անտառներում ու լեռներում։ Այստեղ նրանք ստացան

---

33 Боевой путь..., էջ 310, Հ. Ս. Եղիազարյանը ծնվել է 1908 թ. Աղրեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի Ջուռնաբադ գյուղում։

կարճատև հանգստի հնարավորություն։ Հանգիստը օգտագործելին իրենց զենքերը և ռազմական մյուս տեխնիկան կարգի բերելու և Սևաստոպոլի համար առաջիկա մարտերին լիովին պատրաստվելու համար։

Այդ օրերին դիվիզիա ժամանեց Լենինականի պատվիրակությունը։ Նա իր հետ բերել էր քաղաքի աշխատավորության նամակը և նվերները դիվիզիայի ռազմիկներին՝ մեծ քանակությամբ ծանրոցներ, ինչպես նաև հարազատներից նամակներ։ Մայիսի 1-ի նախօրյակին Լենինականի աշխատավորության նվերները բաժանվեցին ռազմիկներին, որոնք առնի օրը ճաշակեցին հարազատների ուղարկած հայկական ընտիր ուտելիքները։ Պատվիրակության ներկայացուցիչները եղան դիվիզիայի մի շարք զորամասերում, ռազմիկներին պատմեցին Հայաստանի, մասնավորապես Լենինականի աշխատավորության հայրենասիրական աշխատանքի, ռազմաճակատին օգնելու նրանց հերոսական ջանքերի մասին՝ հանուն մեր մեծ հաղթանակի։ Այդ հանդիպումներն անցան ամենաջերմ մթնոլորտում։ Հարազատ ժողովրդի պատվիրակներին թամանցիները իրենց ելույթներում պատասխանում էին, որ իրենք ամեն ինչ կանեն մայր ժողովրդի վստահությունն արդարացնելու, հերոսական Կարմիր բանակի մյուս զորամասերի հետ միասին ֆաշիստական սողունին գլխովին ջախջախելու համար։

Սևաստոպոլի գրոհի նախօրյակին, մայիսի 3-ին, դիվիզիայի ռազմիկները Լենինականի աշխատավորությանը գրեցին իրենց պատասխան նամակը, որի տակ ստորագրել էին դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը, նրա տեղակալ, փոխգնդապետ Գ. Բլբուլյանը, քաղբաժնի պետ փոխգնդապետ Գ. Հակոբյանը, փոխգնդապետ Ա. Չիլինգարյանը, գնդի հրամանատարներ փոխգնդապետներ Ի. Պեշչանսկին, Ե. Կարապետյանը, մայոր Ս. Վախրամեևը, քաղաշխատողներ, փոխգնդապետ Ն. Մեժլումյանը, մայորներ Գ. Հարությունյանը, Պ. Ավալյանը, Ֆ. Շիֆաննիկոն, կապիտաններ Ն. Շահվերդյանը, Ա. Հա-

կոբյանը, Ղ. Դալլաքյանը, Ս. Նալբանդյանը, Գ. Ղուկասյանը և շատ ուրիշներ։ Նամակը ընթերցվեց բոլոր զորամասերում և արժանացավ ամբողջ անձնակազմի հավանությանը։ Այն «Կարմիր զինվոր» թերթի տպարանում բազմացվեց առանձին թերթիկով և բաժանվեց դիվիզիայի անձնակազմին։

Լենինականի աշխատավորությանն ուղղված թամանցիների նամակում ասված էր.

«Մեր հարազատներ, մեր թանկագին մայրեր, հայրեր, քույրեր ու եղբայրներ.

Ֆաշիզմի դեմ մղվող Հայրենական պատերազմի ռազմաճակատներում հերոսական կարմիր բանակի փայլուն հաղթանակների այս նշանակալից օրերին մենք, 89-րդ թամանյան շքանշանակիր դիվիզիայի մարտիկներս, սերժանտներս ու սպաներս ստացանք Ձեր ուղարկած նամակը և նվերները։ Անհուն բերկրանքով ու անսահման ուրախությամբ մենք ընթերցեցինք Ձեր նամակը, որում լսեցինք ոչ միայն Լենինականի աշխատավորության, այլև մեր չքնաղ Հայաստանի ամբողջ ժողովրդի, մեր բոլոր հարազատների ձայնը, որը մեզ նոր սխրագործությունների է կոչում մարդկության սուր թշնամու՝ ֆաշիզմի դեմ մղվող կատաղի մարտերում։

Ձեր նամակից մենք հրճվանքով իմացանք այն խոշոր հաջողությունների մասին, որ ձեռք են բերել Լենինականի աշխատավորները արտադրական պլանները կատարելու բնագավառում, մեր սովետական հայրենիքի հզորությունն էլ ավելի ամրապնդելու գործում։ Մեզ ամենքիս քաջ հայտնի է, որ առանց մեր թիկունքի ամեն մի աշխատավորի, ամեն մի աշխատավորուհու հերոսական ջանքի, առանց մեր ինտելիգենցիայի աննկուն աշխատանքի, անհնար է մեր հաղթանակը ռազմաճակատում։ Մենք հույսով ենք, որ Լենինականի և Հայաստանի ամբողջ աշխատավորությունը

կրամատատակի իր հաջողություններն այդ ասպարեզում»[34]։

Մայր ժողովրդին դեկուցելով իրենց մարտական գործերի մասին, թամանցիների նամակում այնուհետև ասված էր, որ ֆաշիզմի դեմ մղված հերոսամարտերում այդի ընկնելու համար դիվիզիան պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, որ նրա անձնակազմի ավելի քան 80 տոկոսը պարգևատրված է Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով, որ դիվիզիան չի հանգստանում ձեռք բերածով, նա դեռևս մեծ ու պատասխանատու խնդիրներ ունի կատարելու նեռից ջնջամոլ դեմ մղվելիք առաջիկա մարտերում, որ նա պատրաստվում է պանծալի Կարմիր բանակի մյուս զորամասերի հետ միասին, առաջիկա օրերին պրոհելու մեր հարազատ Սևաստոպոլի ազատագրման, ամբողջ Ղրիմը ջնջամուշ մաքրելու համար[35]։

Մայիսի 4—6-ը դիվիզիայի զորամասերը քաղաքկված պայմաններում կենտրոնացան Բալակլավա թնակավայրի շրջակայքում։ Արդեն առաջավոր գծումն էինք։

Բոլոր գնդերը մայիսի 6-ին գրավել էին նման դիրքեր։ Ջնջամին օրից կատաղաբար ամրակոծում էր։

Մեր զորքերն ամբողջ ռազմաճակատով պատրաստվում էին Սևաստոպոլի գրոհին։

Իսկ ինչ էր իրենից ներկայացնում ջնջամուշ Սևաստոպոլի պաշտպանության գիծը։ Երկու տարի մնալով այստեղ, ֆաշիստները ստեղծել էին բազմաշերտ ամրություններից ու կրակային կետերից բաղկացած պաշտպանության բնագիծ, որը հագեցված էր ժամանակակից կրակային բոլոր միջոցներով։ Պաշտպանական այդ գծում յուրահատուկ տեղ ունեին Սապուն-Գարա և Գորնայա լեռները, ինչպես նաև Սևաստոպոլի շրջակայքի բազմաթիվ ամրություններ։ Նահանջելով Ղրիմի մյուս մասերից, ֆաշիստներն իրենց գլխավոր ուժերը և տեխնիկան կենտրոնացրել

---

34 Боевой путь..., էջ 319—320։

35 Նույն տեղում, էջ 320—321։

Ֆին այստեղ, հույս ունենալով որ այն կկարողանան պահել իրենց ձեռքում, մանավանդ, որ Հիտլերը կարուկ հրաման էր տվել՝ ոչ մի դեպքում չթողնել Սևաստոպոլը, այն պահել որպես հետագա հարձակման հենակետ։

Ահա թե ինչու Սևաստոպոլը պաշտպանող գերմանական 17-րդ բանակի հրամանատարը իր զորքերին ուղղած 1944 թ. մայիսի 3-ի հրամանում գրել էր. «...ես հրաման եմ տալիս պաշտպանել Սևաստոպոլի պլացդարմի յուրաքանչյուր բիլը։ Նրա նշանակությունը դուք գիտեք։

...ես պահանջում եմ, որ ոչ ոք ետ չգնա և իր ձեռքը պահի յուրաքանչյուր խրամատ, յուրաքանչյուր դիրք։ Հենակետն ամրոցը խորությամբ սարքավորված է ինժեներական տեսակետով և հակառակորդը որտեղ էլ որ երևա, կմոտվի մեր պաշտպանության սարքավորման մեջ։ Բայց մեղանից և ոչ մեկի մտքով չպետք է անցնի այդ դիրքերից նահանջել։

17-րդ բանակը Սևաստոպոլում պաշտպանում է օդային և ծովային ուժերը։ Ցույները մեզ տալիս է անհրաժեշտ բանակությամբ ռազմապաշար, ինքնաթիռ, զենք և լրացուցիչ ուժ»[36]։

Եվ չնայած դրան, խորհրդային հերոսական բանակը 5 օրում քարուքանդ արեց թշնամու այդ ամրություններն և գլխովին ջախջախեց ու դերից այստեղ դանվող նրա զորքերը։

Սևաստոպոլի վրա կարմիր բանակի գրոհը սկսվել էր դեռևս մայիսի 5-ին, երբ 2-րդ գվարդիական բանակը Հյուսիսային ծովածոցի ուղղությամբ հաջողությամբ ծավալել էր իր հարձակումը, ճեղքելով թշնամու պաշտպանության առաջին գիծը։ Իսկ մայիսի 7-ին իրենց հաղթական գրոհը սկսեցին 51-րդ գվարդիական և Մերձծովյան բանակները՝ թշնամուն ջախջախիչ հարվածներ հասցնելով թևերից։

Մեր զորքերի գրոհներին նախորդեցին հրանոթային

---

36 «Պրավդա», 1944 թ. № 114։

և ականանետային ուժգին համազարկերը և ինքնաթիռների անընդմեջ ալիքային ռմբակոծությունները։ Բշնամու դիրքերը կրակի, ծխի ու բանձր փոշու մեջ էին։ Բայց նա կատաղաբար դիմադրում էր։

Մերձծովյան բանակի 3-րդ կորպուսի կազմում գտնվող 89-րդ Թամանյան դիվիզիան գործում էր Բալակլավայի կողմից՝ Դորնայա լեռան ուղղությամբ՝ Սապուն Դարա լեռան հարավային թեքություններում։ Նրան մարտական խնդիր էր տրված գրավել Դորնայա լեռը և հակառակորդին հետ շպրտել նրանից արևմուտք։

Խոսելով այդ մասին, դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանը գրել է.

«Մեր դիվիզիան մարտական խնդիր ստացավ հարձակվել կորպուսի մարտակարգի կենտրոնում, գրավել Դորնայա լեռը և զարգացնել հարձակումը 170,0 բարձունքի ու Օմեգայի ուղղությամբ։ Այս մարտական խնդիրը լուծելու համար 526-րդ գնդին առաջադրանք տրվեց՝ գրոհել Բշնամու պաշտպանական հենակետի վրա «Բոլշևիկ» կոլտնտեսության ուղղությամբ, դուրս գալ Դորնայա լեռան հյուսիսային լանջը։

390-րդ գնդի խնդիրն էր՝ գրոհել Բշնամու ամրությունները Դորնայա լեռան հարավ-արևելյան կողմից և գրավել այն։

400-րդ հրաձգային գնդի առաջադրանքն էր՝ պատրաստ լինել զարգացնելու առաջին էշելոնի հաջողությունը, թափանցելու Բշնամու թիկունքը»[37]։

Ռազմաճակատի հրետանային մյուս զորամասերի հետ միասին, դիվիզիայի հրետանավորները խրենց հուժկու կրակով ճնշում էին Բշնամուն, պաշտպանում մեր հարձակվող զորամասերին, որոնք առաջ էին շարժվում տանկերի հետևից։

Կատաղի կրակով Բշնամին դիմադրում էր։ Նրա կրա-

37 «Սովետական Հայաստան», 1966 թ. 24 դեկտեմբերի։

կից այրվեցին մեր տանկերից մի քանիսը։ Զոհվեցին ու վիրավորվեցին ռազմիկներից շատերը։ Բայց գրոհը շարունակվում էր ավելի ու ավելի համառ կերպով։ Թամանցիներն առաջ էին ընթանում սարն ի վեր։ Մասնավորապես մեծ ակտիվությամբ էին գործում ստորաբաժանումներում ստեղծված գրոհային խմբերը։ Համառ մարտերը շարունակվեցին մայիսի 7-ի ամբողջ օրը, մինչև ուշ գիշեր։

Գնահատելով 89-րդ Թամանյան դիվիզիայի այդ օրվա մարտերը, Մերձծովյան բանակի 3-րդ հրաձգային կորպուսի հրամանատար գեներալ-մայոր (հետագայում բանակի գեներալ) Ս. Լուչինսկին գրել է.

«Հրետանու և զվարդիական ծանր ականանետների կարճատև համազարկից հետո հայկական հրաձգային դիվիզիայի 526-րդ և 390-րդ գնդերը երեկոյան ժամը 18-ին անցան գրոհի և սկսեցին արագորեն բարձրանալ Գորնայա լեռան հարավ-արևելյան ստորոտը։ ...Հայկական դիվիզիայի զինվորների ու սպաների բացառիկ հերոսության և նրա հրամանատար գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանի համառության շնորհիվ օրվա վերջին դիվիզիային հաջողվեց տիրանալ գերիշխանության»[38], որը իշխող դիրք էր գրավում տվյալ հատվածում։

Երկօրյա ծանր մարտերից հետո, հաղթահարելով շշնամու կատաղի դիմադրությունը, դիվիզիան գրավեց Գորնայա լեռը, որը հանդիսանում էր շշնամու՝ Սևաստոպոլի պաշտպանության կարևոր հանգույցներից մեկը։

Այդ լեռը գրավելու համար հերոսաբար էին մարտնչում կոմունիստներ, մայորներ Հրանտ Սիմոնյանի, Հրանտ Բաբայանի, Սուրեն Մարգարյանի, Գրիգոր Աբրահամյանի, Միքայել Մուրադյանի, Արշավիր Ամոյանի գումարտակները և ուրիշ բազմաթիվ ստորաբաժանումներ, դիվիզիայի ամբողջ անձնակազմը։

Հիշատակենք այդ մարտերում դիվիզիայի ռազմիկ-

---

38 «Военно-исторический журнал», *1964, № 5, էջ 25—26։*

նների ցուցաբերած հերոսական սխրանքներից մի քանիսը։

Գրոհում էր մայոր Սուրեն Մարգարյանի գումարտակը։ Թշնամին ուժեղ կրակով դիմադրում էր։ Սերժանտ Ջախջանը և կարմիր բանակային Յաղջյանը առաջադրանք էին ստացել լռեցնել թշնամու դզոտի գնդացրային կրակը։ Սողտող մոտենալով դզոտին, նրանք մի քանի նռնակներ են նետում դզոտի անցքերից և լռեցնում կրակը։ Նույն ձևով են գործում սպաներ Հուսիկ Պետրոսյանի, Այդինյանի և Գևորգյանի ստորաբաժանումների ռազմիկները։ Ստորաբաժանումը առաջ է շարժվում և գրավում բարձունքը։ Ավազ սերժանտ Նիկողոսյանը բարձունքի վրա կարմիր դրոշ է բարձրացնում։ Այդ մարտում միայն մայոր Ս. Մարգարյանի գումարտակը վերցրեց 275 գերի։ Մարտական խնդիրը կատարվեց հաջողությամբ։

Կոմունիստ լեյտենանտ Արազ Բաղդասարյանի վաշտին մարտական խնդիր էր տրված գրոհով գրավել կարևոր բարձունքներից մեկը, որտեղից թշնամու չընդհատվող կրակը խանգարում էր զորամասի առաջխաղացմանը։ Գրավելով նման դիրքերը, մեր հրանոթային ու ականանետային պաշտպանական կրակի տակ վաշտը բարձրանում է գրոհի։ Նրա առջևից գնում էր անվախ հրամանատար Ս. Բաղդասարյանը։ Մարտիկներ Բաբիկ Հարությունյանը, Ժորժիկ Ասատրյանը իրենց անվրեպ նռնակներով առաջինը լռեցնում են թշնամու կրակակետը, այն կրակակետը, որը ամենից ավելի ակտիվ էր գործում։ Շուտով շարքից հանվում են նաև մյուս կրակակետերը, որոնց անձնակազմը գլխովին ոչնչացվում է։ Բարձունքն արդեն մեր ձեռքումն էր։ Նկատելով այդ, օդնուխյան հասած թշնամու ուժերը անցնում են հակագրոհի՝ բարձունքը հետ վերցնելու համար։ Սակայն ի զուր։ Հերթական ագրանշանով Ս. Բաղդասարյանը մեր հրետանու և ականանետային կրակը ուղղում է գրոհող թշնամու վրա։ Դիպուկ կրակից նրա շարքերը երերվում են և խուճապի մատնված նահանջում։ Նրանց հե-

տապնդելով, առաջ են ընթանում մեր քաջարի մարտիկները, իրենց կրակով ոչնչացնում ֆաշիստներին։ Այդ մարտում մասնավորապես աչքի ընկան գնդապետներ Բարիկին Ավետիսյանը, Լևոն Դանիելյանը, ավագ սերժանտ Արտավազդ Այվազյանը և ուրիշներ։ Մարտի դաշտը լցված էր ֆաշիստների դիակներով ու վիրավոր զինվորներով։ Այդ բարձունքի գրավումը ապահովեց զորամասի առաջխաղացումը և հետագա մարտերի հաջողությունը։

Մայոր Հրանտ Բաբայանի գումարտակը առաջադրանք էր ստացել ճեղքել Բշնամու պաշտպանության գիծը և գրավել կարևոր բարձունքներից մեկը։ Այդ առաջադրանքը կատարելու համար վաշտերում ստեղծվել էին գրոհային ջոկատներ, որոնց առաջին շարքերում էին կոմունիստներն ու կոմերիտականները։ Բշնամուն հանկարծակիի բերելու նպատակով գրոհը պետք է սկսվեր դիշերը։ Գրոհային ջոկատներից մեկը խնդիր է ստանում ղեկավարել մոտենալ Բշնամու պաշտպանական գծին, կտրատել փշալարերը և ուղի բաց անել գումարտակի հարձակման համար։ Դիշերային մթության մեջ կտրատելով փշալարերը, գրոհայիները հարձակվում են Բշնամու դիրքերի վրա, իրար հետևից նետելով նռնակների կապոցները։ Այդ հանկարծակի հարձակումը ֆաշիստներին խուճապի է մատնում։ Թողնելով դիրքերը, նրանք փախչում են։ Գումարտակը առաջ է շարժվում և գրավում բարձունքը։ Մի այլ բնագծում գումարտակը նորից հանդիպում է Բշնամու կատաղի դիմադրությանը։ Այստեղ նույնպես գործի են անցնում գրոհայինները, որոնք հերոսական մարտեր մղելով, ճեղքում են Բշնամու պաշտպանության գիծը։

Կոմունիստ Հ. Բաբայանի գումարտակից այդ մարտերի ժամանակ հերոսական սխրանքներ գործեցին սպաներ Անանյանի, Սարգսյանի և Մանուչարյանի ստորաբաժանումների ռազմիկները։ Խորհրդային ռազմիկին հատուկ հերոսություն ցուցաբերեց վաշտի կուսակցական կազմակերպիչ

գրոհային ջոկատի մարտիկ Աբշակ Ռուստամյանը, որը ընկավ Բշնամու գնդակից, իր մարտական խնդիրը կատարելու պահին։ Իր կյանքի գնով նա ճանապարհ բաց արեց մեր առաջխաղացման համար։ Նրա հետ ընկան նաև մեր ռազմիկներից շատերը։

Մարտի ավարտից հետո դաշտում թափված էին Բշնամու բազմաթիվ դիակներ ու ռազմական տեխնիկա։

Ջոկի հրամանատար Հակոբ Զիլֆիմյանը վերջը ապաքինելուց հետո հիվանդանոցից նոր էր վերադարձել իր հարազատ վաշտը, երբ սկսվեց Գորնայա լեռան գրոհը։ Նրա ջոկին խնդիր էր տրված ոչնչացնելու Բշնամու դղյոնը։ Շարժվելով բոլորից առաջ, գրոհի վճռական պահին նա գոչեց «Հանուն հարազատ Սևաստոպոլի» և նռնակների կապոցները թափեց Բշնամու ամրությունների վրա։ Քաջարի հրամանատարին հետևեցին մյուս մարտիկները։ Ոչնչացնելով դղյոնը, նրանք լցվեցին Բշնամու խրամատները։ Ձեռնամարտում Հ. Զիլֆիմյանը ոչնչացրեց 2 ֆաշիստ։ Նա նկատեց, որ ֆաշիստական սնայպերը անընդհատ կրակում էր և վնասում մեր մարդկանց։ Կարմիր բանակային Քոչարյանին առաջադրանք տրվեց անմիջապես ոչնչացնել այդ սնայպերին։ Սողնակ և աննկատելի կերպով մոտենալով, Քոչարյանը նռնակների կապոցը նետում է նրա վրա։ Հավերժ լռում է Բշնամու սնայպերը։

Սևաստոպոլի համար մղած մարտերում խիզախ էր դրսևորում 400-րդ հրաձգային գնդի 2-րդ դումարտակի հրամանատար մայոր Հրանտ Սիմոնյանը։ Շնորհիվ նրա քաջության և հնարամտության, դումարտակը հաջողությամբ կատարեց իր բոլոր մարտական խնդիրները, արժանանալով գնդի և դիվիզիայի հրամանատարության գովասանքին։ Հիշատակենք Հ. Սիմոնյանի դումարտակի մարտական գործերից միայն մեկը։ Հակառակորդը կատաղի դիմադրում էր Գորնայա լեռան ուղղությամբ հարձակվող մեր գնդին։ Անհրաժեշտ էր կոտրել նրա դիմադրությունը և դուրս շպրտ-

տել գրաված դիրքերից։ Այդ դժվարին խնդիր էր, մանավանդ այն պատճառով, որ թշնամին գտնվում էր բարձունքում, նախօրոք ամրացված ու նպատակալոր դիրքերում, իսկ Հ. Սիմոնյանի գումարտակը պետք է հարձակվեր ստորոտից։

Մեր հրանոթային և ականանետային ուժեղ կրակից հետո, Հ. Սիմոնյանի գումարտակի քաջերը բարձրանում են գրոհի և հաղթականորեն առաջ շարժվում։ Անսովոր արագությամբ նրանք հասնում են թշնամու դիրքերին և մխրճվում նրա խրամատների մեջ։ Ծավալվում է համառ պայքար։ Որոշ տեղերում այն վեր է ածվում ձեռնամարտի։ Արդյունքը այն է լինում, որ մայոր Հ. Սիմոնյանի ռազմիկները հաղթում են։ Թշնամին տալով մեծ քանակությամբ զոհեր, նահանջում է։ Թշնամու պաշտպանությունը ճեղքված էր։ Հ. Սիմոնյանի գումարտակը բացել էր դեպի հարձակման ճանապարհը։ Այդ մարտերում ծանր վիրավորվեց գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ կապիտան Հրաչիկ Լալայանը։

Ուժեղ կռիվները շարունակվում էին։ Գարնայա լեռան համար։ Ամբողջ ճակատով դիվիզիայի զորամասերը հարձակվում էին։ Թշնամին ոչ միայն պաշտպանվում էր, այլև հաճախ ինքն էր անցնում հակագրոհի։ Հատվածներից մեկում սպա Ս. Մարգարովի գումարտակի ռազմիկները ամուր մնալով իրենց դիրքերում, ետ մղեցին հակառակորդի հարձակումը և գրավեցին մի կարևոր բարձունք։ Այդ մարտում խիզախության և հնարամտության օրինակ ցույց տվեցին սպա Հ. Պետրոսյանի ռազմիկները։

Բարձունքը գրավելուց հետո նրանք սկսեցին հետապընդել թշնամուն։ Մարտի ժամանակ վաշտի հրամանատարը զոհվում է։ Նրան փոխարինում է լեյտենանտ Շ. Դաղբաշյանը, որի զեկավարությամբ մարտը շարունակվում է։ Թշնամին ետ է մղվում, դաշտում թողնելով 15 դիակ։ Այս մարտում աչքի են ընկնում գնդացրորդ Մ. Հարությունյանի, Ա. Հակոբյանի ու Գ. Բաղդասարյանի ջոկերը։

526-րդ գնդի 5-րդ վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Ա. Պողոսյանն իր օրագրում այդ օրերին գրել է.

«...Հարևան ստորաբաժանումների հետ միասին մենք պետք է ճեղքենինք թշնամու ուժեղ պաշտպանությունն ու դուրս գայինք ջրհորների մոտ։ Թշնամու կրակը հնարավորություն չէր տալիս գլուխ բարձրացնելու։ Այս դեպքում անհրաժեշտ էր գործել առանձին-առանձին՝ փորը խմբով։ Այդպես էլ արեցի։

Ավագ սերժանտ Ս. Մնացականյանին հրամայեցի 4 խիլպախների հետ սողսող մոտենալ թշնամու կրակակետերին, որոնք խանգարում են վաշտի առաջխաղացմանն ու ոչնչացնել դրանք։ Մի քանի րոպեից հետո խնդիրը կատարված էր։ Մնացականյանը վերադարձավ, բերելով 8 գերի։ Դիմացի գնդացրային կետերը լռեցին։ Գնդացրորդ կարապետյանի գնդացիրը իր կրակով ստիպում է հակառակորդի կրակակետերին լռելու»[39]։

Ս. Պողոսյանի վաշտը հաջողությամբ, առանց մեծ զոհերի, կատարում է մարտական խնդիրը, գրավում առաջին և երկրորդ ջրհորները։

Կոմունիստների հետ միասին, նրանց օրինակով, ֆաշիստների դեմ մղած մարտերում հերոսական սխրանքներ էին կատարում դիվիզիայի կոմերիտականները, նաև այստեղ՝ Սևաստոպոլում։ Հիշատակենք մի քանի օրինակ։

Կոմերիտական Ս. Արրահամյանը առաջադրանք էր ստացել առաջինը մտնել թշնամու խրամատը և ոչնչացնել նրա կրակակետերը։ Դնալով հարձակվող ռազմիկների առջևից, «Հանուն Հայրենիքի» լողունգով, նա մտնում է ֆաշիստների խրամատը։ Հենց այստեղ նա ոչնչացրեց 6 գերմանացի։ Զնոքի գնդացրորդ, կոմերիտական Ի. Էքսուզյանը գարնանյա բարձունքը գրոհելիս, վիրավորվեց։ Նա շարքից դուրս չեկավ և շարունակեց կռիվը, ոչնչացրեց թշնամու մի

---

39 «Կարմիր վինվոր», 1944, հունիսի 18։

կրակակետ։ Հակառակորդի պաշտպանությունը ճեղքելուց հետո, իր գնդացրի կրակով նա ոչնչացրեց 20-ից ավելի գերմանացի։

Գրոհի ժամանակ հակառակորդի կրակակետը շարունակում էր անընդհատ կրակը և խանգարում էր մեր առաջխաձման առաջընթացը։ Դումարտակի կոմերիտական կազմակերպիչ Գուրգեն Սարգսյանը երկու մարտիկների հետ միասին սողոսող մոտենում է դոտին և նռնակներ նետում նրա մեջ։ Դոտի հետ միասին նա ոչնչացրեց 8 հիտլերական։

Խիզախ կոմերիտական Հարություն Մկրտչյանը[40] իր մարտիկներով շրջապատեց և ոչնչացրեց թշնամական դոտը։ Գնդացրային անձնակազմի հետ միասին նա գերեց 10 ֆաշիստի։

526-րդ գնդի կոմերիտական կազմակերպիչ սերժանտ Սերսես Իշմաիլյանը մի խումբ կոմերիտականների հետ միասին ճեղքեց թշնամու պաշտպանությունը, ոչնչացրեց գերմանական 12 զինվոր և գերի վերցրեց 4-ը։ Նույն մարտում նա կրակոծից դուրս բերեց մեր 17 վիրավոր զինվորի։

Կոմերիտական գնդացրորդ Համլետ Ջրաղացպանյանը գնդացրային կրակով լռեցրեց հակառակորդի մի դոտի կրակը, հնարավորություն տալով մեր առաջխաձմանն առաջ շարժվելու։ Մարտում նա ոչնչացրեց 17 հիտլերական։ Վաշտի կոմերիտական կազմակերպիչ լեյտենանտ Աբրահամ Մկրտչյանը առաջինն էր, որ իր դասակով ճեղքեց թշնամու պաշտպանությունը։

Բազմաթիվ են մեր կոմերիտականների սխրագործությունները։ Նրանք արիաբար մարտնչեցին հերոս քաղաքի՝ Սևաստոպոլի և ամբողջ Ղրիմի ազատագրման մարտերում[41]։

---

40 Հետագայում Խորհրդային Միության հերոս։

41 «Կարմիր զինվոր», 1944 թ., մայիսի 21։

Դիվիզիայի զորամասերը թշնամու դեմ ամբողջ ճակատով համառ մարտական գործողություններ կատարեցին հատկապես մայիսի 9-ին։ Մարտերը շարունակվում էին Դորնայա լեռան գրավման համար։ Միայն այդ օրը դիվիզիան ոչնչացրեց հակառակորդի մինչև 500 զինվոր և սպա, հրետանային 6 և ականանետային 8 մարտկոց, 12 գնդացրային կետ։ Ռազմաավար վերցրեց՝ տարբեր տրամաչափի 12 հրանոթ, 16 ականանետ, մինչև 500 հրացան և ավտոմատ, 32 գնդացիր, 5 ավտոմեքենա և ռադիոմիջոցի 5 պահեստ[42]։ Այդ օրը դիվիզիայի կորուստները կազմել են՝ զոհված 59, վիրավոր 128[43]։

Միայն Սևաստոպոլի մարտերում դիվիզիան գերի է վերցրել ֆաշիստական 1950 զինվոր և սպա, ռազմաավար՝ 1000 ավտոմեքենա, 150 մոտոցիկլ, 40 հատ տարբեր տրամաչափի հրանոթ և մեծ թվով ռազմամթերքի պահեստներ[44]։

Բազմաթիվ են 89-րդ Թամանյան դիվիզիայի շարքերում ծնված Սևաստոպոլի քաջերի անունները։ Անհնարին է բոլորին թվարկել։

Սակայն, անհրաժեշտ է թեկուզ համառոտ կերպով, մի քանի խոսք ասել այն քաջերի մասին, որոնք Սևաստոպոլի համար մղած մարտերում հատկապես աչքի ընկած սրխրանքների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. մարտի 24-ի հրամանագրով արժանացան խորհրդային Միության հերոսի բարձր կոչման և համալրեցին դիվիզիայի ու հայ ժողովրդի հերոսների պանծալի ընտանիքը։ Դրանք են լեյտենանտներ Սիմոն Կարապետի Բաղդասարյանը, Խորեն Արմենակի Խաչատրյանը, ավագ սերժանտներ Այդին Հարությունի Հարությունյանը, Հարություն Ռուբենի Մկրտչյանը և Վարդկես Արշակի Ռոստոմյանը։

---

42 Боевой путь..., էջ 390։

43 Նույն տեղում։

44 Նույն տեղում, էջ 395։

Այն ժամանակ, ծանր մարտերի ճակատագրական պահին, ֆաշիստական ճիվաղներին քաջարար հարվածողներն իրենց հերոսներ չէին պատկերացնում և այդ մասին բոլորովին էլ չէին մտածում։ Նրանք, ինչպես և շատ ու շատ ուրիշներ, կատարում էին իրենց սրբազան պարտքը խորհրդային հայրենիքի ու ժողովրդի առջև։ Ուղղակի անում էին այն, ինչ որ կարող էր և պետք էր անել ռազմիկը ազատագրական պատերազմում։

1944 թվականի մայիսի 9-ն էր։

Դիվիզիան գրոհում էր Դորնայա լեռը։ Մեր հրետանային ու ականանետային ուժեղ կրակից հետո 400-րդ գունդը առաջ էր շարժվում դեպի Բշնամու դիրքերը։ Սակայն հակառակորդը ամրացել էր իր դիրքերում և կրակային բոլոր միջոցներով արգելափակում էր գնդի առաջխաղացումը։ Ուժեղ կրակ տեղալով Բշնամու դիրքերի վրա, վաշտը գրոհով առաջ էր ընթանում լեռն ի վեր։ Բշնամու գրնդակը խոցում է վաշտի առջևից ընթացող խիզախ հրամանատար Ջուրոչկային։ Նա մահացու ընկնում է[45]։ Սակայն վաշտի գրոհը չի դադարում։ Նրա հրամանատարությունն իր ձեռքն է վերցնում դասակի հրամանատար Սիմոն Կարապետի Բաղդասարյանը և շարունակում գրոհը։ Դորնայա լեռան բարձունքին գտնվող ֆաշիստական զօտերն ու դզօտները իրենց ուժգին կրակով շարունակում էին խանգարել մեր առաջխաղացմանը։ Անհրաժեշտ էր առաջին հերթին շարքից հանել Բշնամու կրակային այդ կետերը, որը խիստ դժվարին խնդիր էր։ Նրա կատարումը իր վրա է վերցնում լեյտենանտ Սիմոն Բաղդասարյանը։ Իր վաշտի 20 ռազմիկներից ստեղծելով գրոհային ջոկատ, նա անցնում է խնդրի կատարմանը։ Սողեսող և աննկատելի կերպով գրոհայինները մոտենում են Բշնամու կրակային կետերին։ 30 մետր հեռավորությունից Բշնամին նկատում է նրանց և գնդացրային ուժեղ կրակ բացում։ Ս. Բաղդասարյանի հրամանով գրոհայինները սեղ-

---

45 Боевой путь..., էջ 327։

մվում են գետնին և սպասում մինչև կրակի թուլացումը։ Նրանցից մի քանիսը վիրավորվում և զոհվում են։ Վրեժի ցասումն ավելի է ուժեղանում։ Թշնամուն թյուրիմացության մեջ գցելու նպատակով փորձառու հրամանատար Ս. Բաղդասարյանը դիմում է խորամանկության։ Գրոհայիններից հինգին նա ուղարկում է ձախ թևը և հրամայում այնտեղից կրակ բացել և նռնակներ նետել թշնամու դիրքերի վրա։ Նկատելով այդ, ֆաշիստներն իրենց կրակն ուղղում են դեպի ձախ թևը։ Ս. Բաղդասարյանը հենց դրան էր սպասում։ Իր գրոհայիններով նա անմիջապես բարձրանում և ճակատից առաջ է ընթանում։ Նռնակներ նետելով թշնամու կրակային կետերի վրա, քաջարի ռազմիկները լռեցնում են նրանց և սպանում ամբողջ անձնակազմը։ Մարտական դժվարին խնդիրը կատարվեց փայլուն կերպով։

Գորնայա լեռան գագաթին արդեն մեր ձեռքումն էր, որին առաջինը հասել էր լեյտենանտ Սիմոն Բաղդասարյանի վաշտը և կարմիր դրոշակ բարձրացրել այնտեղ։ Այդ մարտում առանձնապես աչքի ընկան Ս. Բաղդասարյանի վաշտի ռազմիկներ ավագ սերժանտ Սերգեյ Շահնազարյանը, կարմիրբանակային Լևոնդրոշ Խաչիրյանը, ավագ Երվանդ Հակոբյանը, գնդացրորդ Վազգեն Միկոյանը և ուրիշներ։ Մարտական խնդիրը կատարելիս հանուն խորհրդային հայրենիքի հերոսաբար ընկան Ենոք Հովհաննիսյանը, Գրիգորի Կրասնովը և ուրիշներ։

Դիվիզիայի զորամասերը հնարավորություն ստացան ավելի ուժգին կերպով հարվածելու կատաղաբար դիմադրող թշնամուն։

Յուցաբերած սխրանքների համար Ս. Բաղդասարյանի վաշտի ռազմիկներից շատերն արժանացան կառավարական շքանշանի, իսկ ինքը, ինչպես նշեցինք, Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման[46]։

---

[46] Боевой путь..., էջ 327—328։

Դիվիզիայի 390-րդ գունդը ուժեղ մարտեր էր ծավալել Սևաստոպոլի ջրամբարի գրավման համար: Մարտերի առաջավոր շարքերում էր գտնվում նաև լեյտենանտ Խորեն Արմենակի Խաչատրյանի դասակը, որին հանձնարարված էր գրավել 80,0 բարձունքը: Սակայն այնտեղից ֆաշիստները ուժեղ կրակ էին տեղում մեր մարտակարգերի վրա: Իրավիճակը հրամանատար, կոմունիստ Խ. Խաչատրյանը որոշում է ինքը ուշնայնել այդ կրակակետը: Իր հետ վերցնելով դասակի ռազմիկներ Կամարիկ Աբովյանին և Սուրեն Աբրահամյանին, Խ. Խաչատրյանն աննկատելի կերպով անցնում է Բշնամու թիկունքը: Շուտով նրանք ընկնում են շրջապատման մեջ: Բռնկվում է անհավասար մարտ: Յոթը ֆաշիստներ հարձակվում են երեք քաջերի վրա: Խ. Խաչատրյանի ընկերները վիրավորվում են: Նա միայնակ շարունակում է մարտը, որի ընթացքում ֆաշիստներից երկուսին սպանում է, իսկ մյուսներին փախուստի մատնում: Խ. Խաչատրյանը Բշնամու թիկունքում շարունակում է կրակը, տպավորություն ստեղծելով, որ ֆաշիստները շրջապատման մեջ են: Շուտով դասակը և մյուս ստորաբաժանումները օգնության են հասնում: Բշնամին հետ է նահանջում, 80,0 բարձունքն ազատված էր: Շուտով գունդը գրավեց նաև ջրամբարը և շարունակեց իր հաղթական գրոհը: Այդ մարտում Խ. Խաչատրյանի դասակը սպաննեց 43 և գերի վերցրեց 97 ֆաշիստական զինվոր ու սպա:

Բշնամու դեմ այսպես էր մարտնչում կոմունիստ Խորեն Խաչատրյանը, որի մարտական գործերը հայրենիքը բարձր գնահատեց: Նա արժանացավ Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման: Իսկ հետագա մարտերում նորանոր քաջագործություններ կատարեց[47]:

Գյուղական ուսուցիչ էր Այդին Հարությունի Հարությունյանը, երբ 1939 թ. աշնանը զորակոչվեց Կարմիր բանակ: Իսկ երբ պատերազմն սկսվեց, նա դեռ բանակի շար-

---

47 Боевой путь..., էջ 326—327:

քերումն էր և առաջին իսկ օրերից տեսավ այդ պատերազմի դժվարություններն ու դառնությունները։ 1943 թ. հոկտեմբերից նա արդեն 89-րդ հայկական դիվիզիայի 526-րդ գնդում էր՝ նախ որպես դասակի հրամանատարի օգնական, ապա՝ հրամանատար։ Դիվիզիայում գտնվելու առաջին իսկ օրերից կոմունիստ, ավագ սերժանտ Ա. Հարությունյանն աչքի է ընկնում իր կազմակերպվածությամբ և քաջությամբ։ Այդ ցայտուն կերպով դրսևորվեց Սևաստոպոլի համար մղված մարտերում։

Մարտերը Սևաստոպոլի համար գնալով, ավելի և ավելի ուժգին բնույթ էին կրում։ Դիվիզիայի 526-րդ գունդը համառ մարտեր էր ծավալել թշնամու դեմ, որը ամրանալով Գորնայա լեռան բարձունքներում, բոլոր ուժերով դիմադրում էր։ Նա չէր ուզում թողնել իր դիրքերը։ Սակայն գունդը մարտական խնդիր ուներ անպայման գրավել դրանք և մյուս զորամասերի հետ միասին թշնամուն սեղմել ծովին։

Վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Բալաբեկ Նալատակյանը դասակի հրամանատար, ավագ սերժանտ Ա. Հարությունյանին հանձնարարություն է տալիս իր դասակով ոչնչացնել թշնամու կրակակետը և հնարավորություն ստեղծել վաշտի առաջխաղացման համար։ Նա վստահ էր, որ Ա. Հարությունյանն այդ հանձնարարությունը կկատարի հաջողությամբ, քանի որ նախորդ մարտերում դրսևորել էր իր քաջագործությունները։ Եվ իրոք, Այդինն իր քաջերով շուտով խոպան լռեցնում է թշնամու այդ կրակակետերը։ Բացի դրանից, նա շարքից հանում է ֆաշիստական երկու անասպարեի։ Այդ մարտի ժամանակ վաշտի հրամանատարը իր մի խումբ զինվորներով մեծ չափով խորացել էր թշնամու մարտակարգերում և շրջապատման վտանգի մեջ էր ընկել։ Նկատելով այդ, Այդին Հարությունյանն անմիջապես օգնության է հասնում վաշտի հրամանատարին և դուրս բերում շրջապատման վտանգից։ Վաշտը հաջողությամբ շարունակում է իր խնդրի կատարումը։ Ա. Հարությունյանը իր դասակի ռազմիկների հետ

մասին ոչնչացնում է նաև թշնամու մի շարք այլ կրակակետեր և ապահովում դրամասի մարտական խնդրի կատարումը։ Նռնականներ նետելով թշնամու դզոտի մեջ, Այդինը սպանում է 10 ֆաշիստի։ Նրա հրամանով դասակը կրակ է բացում հարձակվող թշնամու վրա և սպանում 40 հիտլերականի։ Այդ մարտերում իրենց քաջագործություններով աչքի ընկան նաև ռազմիկներ Աշոտ Քոչարյանը, Հովհաննես Բարսեղյանը, Ազատ Ստեփանյանը, Ղազախ ժողովրդի զավակ Կարմանգուլի Ժակսիմբաևը և շատ ուրիշներ։ Յուցաբերած քաջագործության համար Այդին Հարությունյանն արժանանում է Խորհրդային Միության հերոսի բարձր կոչմանը[48]։

1942 թ. հունվարից 20 տարեկան Հարություն Ռուբենի Մկրտչյանը գվարդիական կորպուսի շարքերում մասնակցում էր Կովկասի պաշտպանության հերոսամարտերին։ Այդ մարտերում աչքի ընկնելու համար պարգևատրվել էր խիզախության համար մեդալով։ Նա արդեն գվարդիայի ավագ սերժանտ էր և թշնամու դեմ կռվելու զգալի փորձ ուներ, երբ 1943 թ. փետրվարին փոխադրվեց 89-րդ հայկական դիվիզիայի 526-րդ հրաձգային գունդը, որպես ավտոմատային վաշտի ջոկի հրամանատար։ Թամանի ազատագրման համար մղված մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար Հ. Մկրտչյանը պարգևատրվել էր Կարմիր աստղի, իսկ Կերչում՝ Կարմիր դրոշի շքանշանով։

Սևաստոպոլի համար մղված մարտերում գվարդիայի ավագ սերժանտ Հարություն Մկրտչյանը կատարում է նորանոր քաջագործություններ։ Գորնայա լեռան գրոհի առաջին օրը, մայիսի 7-ին, ավտոմատավորների վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Խաչիկ Սիրոյանը Հ. Մկրտչյանի ջոկին խնդիր է տալիս ոչնչացնել հակառակորդի դզոտը, որը իր խաչաձև կրակով խանգարում էր մեր դրամասի առաջխաղացմանը։ Իր ջոկի ռազմիկներով նա անցնում

---

[48] Боевой путь..., էջ 329—330։

է խնդրի կատարմանը, որը մեծ վտանգի հետ էր կապված։ Սողեսող շրջանցելով դզօտը, հակառակ կողմից հակատանկային մի քանի նռնակներ է նետում։ Դզօտի անձնակազմը ոչնչացվում է, թշնամու կրակը լռում։ Ավտոմատային վաշտը և դումարտակի մյուս սաորաբաժանումները առաջ են շարժվում, հետապնդելով նահանջող թշնամուն։

Գորնայա լեռը գրոհողների առաջին շարքերումն էր Նաչիկ Սիրոյանի վաշտը։ Ճնշելով ուժեղ դիմադրությունը, մյուս սաորաբաժանումների հետ միասին վաշտը առաջ էր շարժվում, իսկ նրա առջևից գնում էր խիզախ հրամանատարը։ Խ. Միրոյանի անձնական օրինակը համարձակություն ու քաջություն էր ներշնչում վաշտի անձնակազմին։

Բոլորը թշնամու դեմ կռվում էին իրենց սիրելի հրամանատարի օրինակով ու քաջությամբ։ Մարտի ԹԱԺ պահին, Գորնայա լեռան կատարին խիզախ հրամանատար Խ. Միրոյանը մահացու վիրավորում և հերոսաբար ընկնում է։ Նրան փոխարինում է կրտսեր լեյտենանտ Բարսեղյանը և շարունակում ղեկավարել վաշտի գրոհը։ Այդ գրոհի մասին «Կարմիր ղինվոր» թերթի 1944 թ. մայիսի 17-ի համարում տպագրված հոդվածում ասված է.

«Կարճ ժամանակից հետո վաշտը գրոհի դիմաց։ Կրտսեր լեյտենանտ Բարսեղյանը անձամբ ոչնչացրեց 10 հիտլերական։ Արտակարգ քաջությամբ էր կռվում մարտական սրընթացգործությունների հայտնի ավագ սերժանտ Հարություն Մկրտչյանը։ Նա սերժանտ Ս. Մակյանի և կարմիրբանակային Ա. Համբարձումյանի հետ միասին մտավ թշնամու դաստավորության մեջ ու անձամբ ոչնչացրեց 5, սերժանտ Ս. Մակյանը՝ 7 գերմանացի։ Կարմիրբանակային Մ. Սարգսյանը նռնակներ նետելով, շարժվում էր առաջ։ Ավագ սերժանտ Հ. Մկրտչյանը հրետանային կրակից հետո, առաջ նետվեց դեպի գերմանացիների պաշտպանության վերջին ամրությունը և դուրս գալով ծովափ, այնտեղ բարձրացրեց կարմիր դրոշը։ Սաորաբաժանումը գերի վերցրեց 35 հիտլերական, որից 3-ը սպա։

Վրեժը ձգված զսպանակի պես բոլոր մարտիկներին մղում էր առաջ։

Այդ մարտում գվարդիայի ավագ սերժանտ Հ. Մկրտչյանի ջոկը ոչնչացրեց ավելի քան 40 և գերի վերցրեց մի քանի տասնյակ ֆաշիստական զինվոր և սպա։ Նրա քաջագործությունների մասին գիտեին ամբողջ դիվիզիայում»։

Ցուցաբերած այդ քաջագործությունների համար ավագ սերժանտ Հ. Ռ. Մկրտչյանը արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման[49]։

Նույն 526-րդ հրաձգային գնդում էր ծառայում նաև ավագ սերժանտ Վարդկես Արշակի Ռոստոմյանը՝ որպես ջոկի հրամանատար։ Դիվիզիայի շարքերում նա մարտերով անցել էր Կովկասյան լեռներից մինչև Սևաստոպոլի լեռները և մասնակցում էր այդ պանծալի քաղաքի ազատագրման մարտերին։ Դորնայա լեռը գրոհելու ժամանակ Վ. Ռոստոմյանը հաջողությամբ կատարում է իր մարտական խնդիրը շարքից հանելով ֆաշիստական մի քանի ամրացված կրակակետեր։ Դրանով նա հնարավորություն է ստեղծում մարտական խնդրի հաջող կատարմանը։ Մայիսի 9-ի մարտերի ժամանակ, ֆաշիստական ինքնաթիռը մեր զորամասի վրա խուզող թռիչք էր կատարում։ Նկատելով այդ, քաջարի ռազմիկ Վարդկես Ռոստոմյանը գնդացրային դիպուկ կրակով ընդմիշտ վայր է գցում։

Դորնայա լեռան շրջանում Վ. Ռոստոմյանն իր ջոկով շրջապատում է թշնամու զոր և «Հանուն հայրենիքի» գոչելով, առաջնորդում է իր ջոկին, ձեռնամարտում անձամբ ոչնչացնում գերմանական 15 զինվոր։ Երբ մայիսի 9-ին գերմանացիները անցան հակագրոհի, Վարդկեսը նրանց բավական մոտ թողեց և իր գնդացրային կրակով ոչնչացրեց 20 գերմանացի ու գերի վերցրեց 5-ին։ Ֆաշիստներն իրենց զբոսից ուժեղ գնդացրային կրակ էին վարում։ Սողալով, նա առաջինն է մոտենում թշնամու այդ կրակակետին և

---

49 Боевой путь..., էջ 328—329։

նետելով մի քանի նռնակ, ոչնչացնում է թշնամու այդ դզօտը։

Դրանով նա հնարավորություն է ստեղծում գումարտակի առաջխաղացման համար[50]։

Հետագայում երբ հրապարակվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. մարտի 24-ի հրամանագիրը ավագ սերժանտ Վ. Ռոստոմյանին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին, առաջին Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչությունն այդ առթիվ հատուկ թռուցիկ է հրատարակում՝ ուղղված ռազմաճակատի զինվորներին։ Այնտեղ ասված էր. «Մարտիկ, հետևիր Խորհրդային Միության հերոսի օրինակին։ Թշնամուն խփիր այնպես, ինչպես խփում է Խորհրդային Միության հերոս Վ. Ռոստոմյանը»[51]։

Բացի Խորհրդային Միության այդ հերոսներից, 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի շարքերում հարազատ Սևաստոպոլ քաղաքի համար վճռական այդ մարտերում աճեցին բազմաթիվ այլ քաջեր, որոնց մի մասի սխրանքների վերաբերյալ ասվեց նախորդ էջերում։

Դիվիզիայի մարտական ուղու մասին փաստաթղթերի ու նյութերի ժողովածուում Սևաստոպոլի մարտերում աչքի ընկածների մասին տեղ են գտել նաև մի քանի պարգևատրման թերթիկներում, որոնք նույնպես կարևոր են և դրանց մասին հարկ կա այստեղ թեկուզ համառոտ հիշատակելու։

Մայիսի 9-ին մեր ստորաբաժանումներն առաջ էին շարժվում դեպի խոշոր ջրամբարը։ Սակայն նրա մոտ գրտնվող թշնամու հրանոթը չընդհատվող կրակոցներով խանգարում էր մեր ռազմիկների առաջընթացը։ 390-րդ գնդի

---

50 Боевой путь..., էջ 325։

51 «Գիրք հերոսների մասին», ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, էջ 410։

կարմիրբանակային Դարսևան Ստեփանի Հարությունյանն իր անձնակազմով՝ թվով 4 հոգի առաջինը շարժվեց դեպի այդ հրանոթը և իր հակատանկային հրացանի դիպուկ կրակոցներով շարքից հանեց այն: Դա հնարավորություն տվեց մեր ռազմիկներին առաջ գնալու: Կոմունիստ Գ. Ս. Հարությունյանը բանակ էր զորակոչվել Բաքվից: Այդ քաջագործության համար նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով[52]:

Գորնայա լեռան ստորոտում շատ ակտիվ էր գործում հակառակորդի պաշտպանության հանգույցը: Հարկավոր էր այն ոչնչացնել և թափանցել Բշնամու խրամատները: 400-րդ գնդի հակատանկային վաշտի դասակի հրամանատար, ավագ սերժանտ, կոմունիստ Մուշեղ Հարությունի Գասպարյանն աննկատելի կերպով մոտենալով Բշնամու խրամատին, նռնակներ է նետում նրա մեջ: Այնտեղ խուճապ է առաջանում: Օգտվելով դրանից, նա անմիջապես մտնում է խրամատ և ավտոմատային կրակով ոչնչացնում ֆաշիստներին: Գասպարյանի վճռական գործողությունը հնարավորություն տվեց ստորաբաժանմանը գրավելու Բշնամու խրամատները: Միայն Մուշեղ Գասպարյանն այդ մարտում ոչնչացրեց 15 ֆաշիստ: Այդ քաջագործության համար նա պարգևատրվեց Փառքի III աստիճանի շքանշանով[53]: Մուշեղը ծնվել է 1917 թ. Դորիսի շրջանի Քարաշեն գյուղում:

390-րդ գնդի առաջին վաշտի դասակի հրամանատար, կոմերիտական սերժանտ Սուրեն Արշակի Գասպարյանը հակատանկային զենքի իր հասակով, անանուն բարձունքի գրավման ժամանակ անվախ կերպով առաջ շարժվեց և ուղղակի նշանառությամբ ոչնչացրեց Բշնամու կրակակետերը: Յուցաբերելով քաջություն, անձնական օրինակով Սուրենն իր հետևից էր տանում դասակի մարտիկներին: Դասակը քարուքանդ արեց 2 կրակակետ, 3 բլինդաժ և

---

52 Боевой путь..., էջ 324:

53 Նույն տեղում, էջ 323:

ոչնչացրեց 6 ֆաշիստ։ Այդ քաջագործության համար Ս. Ա. Գասպարյանը պարգևատրվեց Փառքի III աստիճանի շքանշանով[54]։ Նա ծնվել է 1922 թ. նոր Բայազետի շրջանի Փաշաքենդ գյուղում։

Թշնամու դեմ համարձակ ու խելամիտ էր գործում 390-րդ գնդի 3-րդ գումարտակի հրամանատարի տեղակալ, կոմսոմոլական կազմակերպության քարտուղար Կապիտան Աղաջան Գևորգիի Մանասյանը։ Գորնայա լեռան գրոհի ժամանակ նա գտնվում էր 8-րդ վաշտի մարտական շարքերում։ Նա բազմակողմանի օգնեց վաշտին, նրա հրամանատարությանը պատրաստվելու գրոհին՝ այն հաշվով, որ ամեն ինչ կատարվի մտածված, խելացի ու սրընթաց՝ առանց մեծ կորուստների։ Եվ երբ սկսվեց գրոհը, այդպես էլ եղավ։ Իր անձնական օրինակով ոգևորում էր վաշտի ռազմիկներին։ Վաշտը սրընթաց կերպով հասավ թշնամու խրամատները և ոչնչացրեց դիմադրող խմբին։ Նահանջող թշնամուն հետապնդելիս նա հմուտ կերպով ղեկավարում էր վաշտին, թևային անցումներով տեղաշարժեր էր կատարում, որի շնորհիվ վաշտը գերեց 24 ֆաշիստ։ Վաշտն անխնա հարվածում էր դիմադրող ֆաշիստներին։ Շարունակելով հարձակումը, վաշտը, կապիտան Մանասյանի ղեկավարությամբ գերեց ևս 23 գերմանացի և ոչնչացրեց 11-ին։

Ցուցաբերած խիզախության և մտածված գործողության համար կապիտան Մուշեղ Մանասյանը պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու III աստիճանի շքանշանով[55]։ Մ. Մանասյանը ծնվել է 1916 թ. Ղափանի շրջանի Խլաթաղ (այժմ Ջորաստան) գյուղում։ Կարմիր բանակ է զորակոչվել 1941 թ.։

390-րդ գնդի 3-րդ գումարտակը հարձակողական մարտեր էր մղում Գորնայա լեռան համար։ Նրա շտաբը գրտնվում էր առաջին գծի ստորաբաժանումներում։ Այստեղ գումարտակի ավագ ադյուտանտ, կապիտան, կոմունիստ

---

54 Боевой путь..., էջ 324։

55 Տես նույն տեղում, էջ 331—332։

Հրանտ Խաչատուրի Մարգարյանը ցուցաբերում է անձնական արիություն, խելամիտ ղեկավարություն: Նա ճիշտ կերպով որոշում է վաշտերի մարտական դիրքերը, որով և ապահովում է հաջողությունը: Գրոհի ամենադժվարին պահին երբ դեռ բարձունքը չէր վերցված, 7-րդ վաշտի հրամանատարը վիրավորվում է: Վաշտի հրամանատարությունն իր վրա է վերցնում կապիտան Հ. Մարգարյանը և շարունակում գրոհը: Վաշտը ոչնչացնում է թշնամու 34 զինվոր և սպա: Այստեղ Հ. Մարգարյանն անձամբ ոչնչացնում է 5-ին: Զինվորների մի փոքր խմբով և հաստոցավոր զնդացրով նա թշնամուն թևանցում է կատարում և սկսում կրակոցը: Գնդացրորդը վիրավորվում է, նրան փոխարինում է Հ. Մարգարյանը և շարունակում է կրակահերթը: Դա հնարավորություն է տալիս գումարտակին շարունակելու հարձակումը: Մայիսի 12-ին Խերսոնես հրվանդանում, մի խումբ զինվորների հետ Հ. Մարգարյանը գերում է 18 ֆաշիստի, որոնց թվում մեկ սպա:

Մարտական այս հաջող գործողության, գումարտակին մեծ օգնություն ցույց տալու համար կապիտան Հ. Խ. Մարգարյանը պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկու մարտական շքանշանով[56]: Հ. Խ. Մարգարյանը ծնվել է 1915 թ.: Զորակոչվել է Բաքվից:

Սևաստոպոլի մարտերում դիվիզիայի աչքի ընկած 18 ռազմիկներ պարգևատրվում են 3-րդ լեռնահրաձգային կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Ֆիլատովի հրամանով: Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով պարգևատրվածների թվում էին կապիտան Պ. Ս. Բոշնագյանը, լեյտենանտ Շ. Գ. Գվենիպաձեն, ավագ լեյտենանտ Ֆ. Բ. Սալամատակինը, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով՝ կարմիրբանակային Գ. Ս. Հարությունյանը, ավագ լեյտենանտ Մ. Ա. Ավագյանը, լեյտենանտ Ռ. Վ. Վանյանը, սերժանտ Գ. Մ. Սավելևը և

---

56 Боевой путь..., էջ 332—333:

ուրիշներ, Փառքի III աստիճանի շքանշանով՝ ավագ սերժանտ Մ. Ա. Գասպարյանը, սերժանտ Ս. Ա. Գասպարյանը կարմիրբանակային Սանթուրյանը[57] և ուրիշներ։

Բանակի գեներալ Ֆ. Ի. Տոլբուխինի հրամանատարությամբ Սևաստոպոլի ազատագրության հերոսամարտերում աննման սխրանքներ կատարեցին 4-րդ ուկրաինական դիվիզիայի զորքերը, մեր հետևակայինները և հրետանավորները, օդաչուները և նռնակիններն, սակրավորները և հետախույզները, բժշկական աշխատողները և բանակի թիկունքային աշխատողները, բոլոր նրանք, ովքեր մասնակցում էին այդ մարտերին։ Դրանք մեր մեծ խորհրդային Հայրենիքի բոլոր ժողովուրդների թաջարի զավակներն էին՝ ռուսները և ուկրաինացիները, բելոռուսները և ուզբեկները, հայերը և վրացիները, ղազախները և լատիշները։ Թուրքմենները և տաջիկները և այլն։ Սևաստոպոլի և Սապուն-Գարա լեռան գրոհի ժամանակ իրենց հերոսական քաջագործություններով աչքի ընկածների թվում էին շարքայիններ Դադաշ Բաբաջանովը, Ս. Պ. Եվգլևսկին, Աշոտ Մարգարյանը, Ի. Ի. Պոլիկախինը, Ի. Կ. Յացունենկոն, եֆրեյտոր Վ. Ի. Դրոբյազկոն, ավագ սերժանտ Ֆ. Ն. Սկորյատինը, ավագ Ա. Մ. Ֆիսենկոն, լրտես լեյտենանտ Վ. Ֆ. Գրամակովը, լեյտենանտներ Մ. Յա. Զիկունովին, Վ. Յ. Ժուկովը, Յա. Ն. Գուժվան, ավագ լեյտենանտ Պ. Մ. Կալինիչենկոն, կապիտաններ Ն. Վ. Շիլովը, Ի. Լ. Տանցյուրը և շատ ու շատ ուրիշներ[58]։

Սևաստոպոլի պատմական հաղթանակը՝ այդ նրանց միասնության և հերոսական սխրանքների հաղթանակն էր։ Այդ միասնությունը մեզ հասցրեց վերջնական հաղթանակի Հայրենական մեծ պատերազմում, այն դաժան պատերազմում, ուր վճռվում էր մեր սոցիալիստական հասարակար-

---

57 Նույն տեղում, էջ 333—335։

58 Великая Отечестеная война Советского Союза 1941—1945 гг., краткая история, էջ 337։

դի, իրենց խաղաղ ստեղծագործական աշխատանքով զբաղված մեր երկրի ժողովուրդների բախտը։

1944 թ. Մայիսի 9-ին Կարմիր բանակը ազատագրեց Սևաստոպոլը, իսկ 12-ին՝ Խերսոն թերակղզում գլխովին ջախջախեց ֆաշիստական բանակի Ղրիմյան խմբավորումը։ Դրանով ավարտվեց Կարմիր բանակի հարձակողական կամպանիան Ղրիմում։ Այստեղ ֆաշիստական բանակը կորցրեց 100 հազար սպանված և գերի ընկած զինվոր, ինչպես նաև Սևաստոպոլում եղած ամբողջ ռազմական տեխնիկան[59]։

Սևաստոպոլի ազատագրման առթիվ Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանում ասված էր.

«Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի զորքերը, ավիացիայի ու հրետանու կենտրոնացված հարվածների աջակցությամբ, երեքօրյա հարձակողական մարտերի հետևանքով ճեղքեցին գերմանացիների խիստ ամրացված երկարատև պաշտպանությունը, որը կազմված էր երկաթ-բետոնային պաշտպանական կառուցումների երեք շերտից, և մի գրոհով գրավեցին Սև ծովի վրա գտնվող ամրոցը և կարևոր ռազմածովային բազա Սևաստոպոլ քաղաքը։

...Սևաստոպոլի համար մղած մարտերում աչքի ընկան գեներալ-լեյտենանտ Ձախարովի, գեներալ-լեյտենանտ Մելնիկի, գեներալ-մայոր Լուչինսկու... զորքերը»[60]։

Մարտական գերազանց գործողությունների համար Սևաստոպոլի ազատագրմանը մասնակցած մեր բոլոր բանակները, կորպուսները, դիվիզիաները և մյուս զորամասերը արժանացան Գերագույն Գլխավոր հրամանատարության շնորհակալությանը։

Ղրիմը ազատագրող մեր պանծալի զորքերի պատվին Մոսկվան 7 անգամ սալյուտ տվեց։ Վերջին սալյուտը տրվեց Սևաստոպոլը ազատագրողների պատվին։ Զորամասե-

---

59 Նույն տեղում, էջ 338։

60 «Սովետական Հայաստան», 10 մայիսի, 1944 թ.։

րից շատերը ստացան Պերեկոպյան, Սիմաշյան, Կերչյան, Թեոդոսյան, Սիմֆերոպոլյան և Սևաստոպոլյան պատվավոր անվանակոչումները: 126 ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության Հերոսի բարձր կոչման: Հազարավոր ռազմիկներ պարգևատրվեցին կառավարական զբանշաններով և մեդալներով:

Խորհրդային բանակի հերոսական սխրանքը բնորոշելու տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ փաստը. երբ 1941—1942 թվականներին ֆաշիստական բանակը կարողացավ Սևաստոպոլը գրավել 250-օրյա կատաղի հարձակումներից հետո, ապա Կարմիր բանակը այն թշնամուց հետ խլեց միայն 5-օրյա հերոսական գրոհից հետո: Դա մեր զինված ուժերի պատմության ամենափառավոր էջերից մեկն է:

Սևաստոպոլը գրոհող մեր քաջարի զորքերի առաջավոր շարքերում էր նաև 89-րդ Թամանյան հայկական հրաձգային դիվիզիան, որը զործում էր թշնամու դեմ մարտերում կոփված, հայ ժողովրդի պանծալի զավակ գեներալ-մայոր Նվեր Գևորգի Սաֆարյանի հրամանատարությամբ: Բացի այս դիվիզիայից Կարմիր բանակի մյուս միավորումների կազմում այստեղ թշնամու դեմ մարտնչում էին հայ ժողովրդի հազարավոր զավակներ: Դիվիզիան գրավեց թշնամու խոշոր ամրություններից մեկը՝ Դարնայա լեռը, որը Սևաստոպոլի պաշտպանության գլխավոր հանգույցներից էր: Ճեղքելով թշնամու պաշտպանության բազմաշերտ գիծը, նա տիրացավ նաև մի շարք այլ ամրություններ, ինչպես նաև օդանավակայանին: Մեր մյուս զորքերի հետ միասին, դիվիզիան թշնամու զորքերի մնացորդներին սեղմեց Խերսոնես թերակղզում և հենց այստեղ ստիպեց զենքը վայր դնել:

Ինչպես տեսանք, Սևաստոպոլի համար մղված խոշոր ճակատամարտում ևս 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան մեծ սխրանքներ է կատարել: Այդ բարձր է գնահատվել 38-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, խորհր-

դային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Տերեշկովի կողմից։ Խոսելով այդ մասին, նա գրել է.

Մարտական գործողությունների ըստ ամենայնի աճող թափով դիվիզիան մասնակցել է Ղրիմը գերմանա-ֆաշիստական աղտեղությունից մաքրելուն, թշնամու դեմ մարտերին՝ սևաստոպոլյան պաշտպանական ամրություններում։

1944 թ. մայիսի 7-ին, 3-րդ լեռնահրաձգային կորպուսի կազմում, դիվիզիան մասնակցել է երկաթ-բետոնյա և ինժեներական արդելափակման ուժեղ ամրացված պաշտպանության գծի ճեղքմանը Դորնայա լեռան մատույցներում։

Դորնայա լեռան տիրապետման համար կռիվները կմտնեն դիվիզիայի մարտական պատմության մեջ որպես ամբողջ անձնակազմի մարտական փորձի և հերոսության օրինակ գրոհելու անառիկ համարվող գերմանական այդ կարևորագույն հենակետը։

Դոթծելով գրոհային ջոկատներով և գրոհող-մեկուսացնող խմբերով, հաղթահարելով թշնամական կրակի քողը և լեռնային թեքվածները, դիվիզիայի զորամասերը թափանցեցին հակառակորդի պաշտպանության մեջ։ Գրոհի առաջին օրվա վերջում առաջավոր ջոկատները դուրս եկան հարավային լանջերը, իսկ հաջորդ օրը հիմնական ուժերով լիովին տիրապետեցին Դորնայա լեռան։

Սևաստոպոլյան պաշտպանական ամրություններում 5 օրվա ընթացքում դիվիզիան հակառակորդին հասցրել է կենդանի ուժի և տեխնիկայի հետևյալ կորուստները. սպանված և վիրավոր զինվորներ—1905, տարբեր տրամաչափի հրանոթներ—95, ականանետներ—39, գնդացիրներ—99, ավտոմեքենա—410։ Գերի է վերցված 2589 զինվոր և սպա։ Ռազմական ավար է վերցված՝ տարբեր տրամաչափի հրանոթներ 114, ականանետներ—29, գնդացիրներ—191, ավտո-

մեքենա—160, հրացաններ և ավտոմատներ—2500, պահեստներ ռազմամթերքով և կենսամթերքներով—4»[61]:

Խորհրդային պետության և Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից բարձր գնահատվեցին 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի մարտական գործերը Սևաստոպոլի ազատագրության մարտերում: Ինչպես տեսանք, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. մայիսի 24-ի հրամանագրով դիվիզիան պարգևատրվեց Կարմիր դրոշի մարտական շքանշանով: Դա նրա երկրորդ շքանշանն էր: 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերը արժանացան Սևաստոպոլյան պատվավոր անվանակոչման: Դիվիզիայի քաջարի ռազմիկներից հինգը՝ լեյտենանտներ Ա. Կ. Բաղդասարյանը, Խ. Ա. Խաչատրյանը, ավագ սերժանտներ Ա. Հ. Հարությունյանը, Հ. Ռ. Մկրտչյանը և Վ. Ա. Ռոստոմյանը արժանացան Խորհրդային Միության Հերոսի բարձր կոչման: Դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանը պարգևատրվեց Կուտուզովի II աստիճանի շքանշանով:

Սևաստոպոլի հերոսամարտերում ցուցաբերած խիզախությունների համար դիվիզիայի մոտ 6000 ռազմիկներ պարգևատրվեցին Խորհրդային Միության շքանշաններով և մեդալներով: Մարտական Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեցին 39 ռազմիկ, Բոգդան Խմելնիցկու II աստիճանի շքանշանով՝ 11, Ալեքսանդր Նևսկի շքանշանով՝ 12, Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով՝ 73, Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով՝ 280, Կարմիր աստղի շքանշանով՝ 1300, Փառքի III աստիճանի շքանշանով՝ 927, Արիության համար մեդալով՝ 2123, Մարտական ծառայությունների համար մեդալով՝ 1069 ռազմիկ և այլն:

Այդ, ինչպես և նախորդ ու հետագա մյուս բոլոր մարտերում, դիվիզիայի ձեռք բերած հաջողությունները կապ-

---

[61] Боевой путь..., *էջեր 653—654:*

ված էին բազմապիսի դժվարությունների հետ, որոնց հաղթահարումը անխուսափելի կերպով զոհողություններ էր պահանջում։ Թշնամու պաշտպանության յուրաքանչյուր կետ, յուրաքանչյուր բնագիծ հաճախ հաղթահարվում էր մեր ռազմիկների կյանքի գնով, որոնք այդ անում էին գիտակցաբար, հանուն խորհրդային մեծ հայրենիքի։ Այդպիսի գիտակցությամբ թշնամու դեմ մղված մարտերում Սևաստոպոլի մոտ զոհվեցին դիվիզիայի ռազմիկներից շատերը, որոնց թվում լեյտենանտ Գ. Մելքոնյանը, ավագ լեյտենանտ Խ. Միրոյանը, սերժանտներ և շարքայիններ Ս. Հարությունյանը, Վ. Մեժլումյանը, Դ. Խանումյանը, Գ. Մրկրտումովը, Ս. Մինասյանը, Գ. Շեկոյանը, Ա. Մատինյանը և շատ ուրիշներ։ Նրանց անունները հավերժ վառ կմնան երախտապարտ ժողովրդի սրտում։

Դիվիզիայի, նրա գնդերի ու բոլոր ստորաբաժանումների հրամանատարության հետ միասին ինչպես Կերչից մինչև Սևաստոպոլ մարտական երթի ընթացքում, նույնպես և նրա աղատագրության դժվարին մարտերում հրամանատարության հետ միասին հսկայական գործ կատարեցին դիվիզիայի կուսակցական-քաղաքական աշխատողները։ Այդ գործը գլխավորում էր քաղբաժինը, որի պետն էր փոխգնդապետ Գ. Ս. Հակոբյանը։ Կուսակցական-քաղաքական ապարատը նա հմուտ կերպով նպատակամղում էր դիվիզիայի առջև դրված մարտական խնդիրների կատարմանը, ամբողջ անձնակազմի ուժերի մոբիլիզացմանը։ Քաղբաժնի պետի տեղակալ մայոր Ե. Դավիդովը, մայորներ Մ. Բայսդովը, Գ. Կարապետյանը, Մ. Կապուստինը, կապիտաններ Ն. Շահվերդյանը, Ա. Հակոբյանը, Ղ. Դալլաքյանը, Վ. Լիխանովը, Ն. Կարովկինը, Ս. Նալբանդյանը, Գ. Ղուկասյանը, Գ. Վարդանյանը, Ա. Սարոյանը, գնդերի քաղաշխատողներ մայորներ Ն. Մեժլումյանը, Գ. Հարությունյանը, Պ. Ավալյանը, Ֆ. Շիֆոնենկոն, կապիտաններ Ռ. Սարոյանը, Ս. Բադալովը, Ա. Սուբիասյանը, Մ. Հակոբյանը, Ա. Դիլանյանը, Հ. Օհանյանը, Ռ. Հակոբյանը, Ռ. Մարգարյանը և մյուսները

մարտերի ամենաթեժ պահերին գտնվում էին առաջավոր գծում և իրենց ադիտատորի ճշմարիտ խոսքով ու անձնական օրինակով օգնում ռազմիկներին ու նրանց հրամանատարներին՝ հաջողությամբ կատարելու մարտական խնդիրը։ Շարքայինները, սերժանտները և զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարները մեծ հավատով էին վերաբերվում դեպի քաղաքական-կուսակցական աշխատողները, որոնք հավատարիմ կերպով իրագործում էին կոմունիստական կուսակցության գիծը, ամեն կերպ օգնում վերադաս հրամանատարության հրամանների ու դիրեկտիվների կենսագործմանը, ծանր մարտերում ցույց տալով անձնական օրինակ։

Դիվիզիայում սերտորեն միաձուլված էին կուսակցական-քաղաքական և հրամանատարական աշխատանքը թե մարտական ուսուցման և թե ամենադժվարին մարտերի ժամանակ։ Դա հանդիսացել է 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի մարտական հաջողությունների կարևոր պայմաններից մեկը ինչպես Սևաստոպոլի, նույնպես և նրան նախորդ և հետագա կռիվներում։

Սևաստոպոլի ազատագրման, դրանով իսկ ամբողջ Ղրիմի ազատագրման առթիվ մայիսի 16-ին տեղի ունեցավ դիվիզիայի ամբողջ անձնակազմի խանդավառ միտինգը։ Ռազմիկներն ամենուր երգում ու պարում էին, նվագում էին գրնդերի փողային նվագախմբերը։ Կատարվում էին հաղթանակի հրավառություններ։

Հատուկ ազդանշանով բոլորը լռեցին և հավաքվեցին փայտաշեն բարձր ամբիոնի շուրջը։

Միտինգը բաց արեց դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը։ Նա ռազմիկներին դիմեց այսպիսի խոսքերով.

«Կարմիր բանակի մեր հարևան զորամասերի հետ միասին ձեռք-ձեռքի տված, հայ ժողովրդի զավակները պատվով կատարեցին իրենց մարտական խնդիրը։ Նրանք հերոսաբար կռվեցին Ղրիմը Գերմանա-ֆաշիստական զավ-

թիչներից մաքրելու համար։ Ամբողջ աշխարհը հիանում է այն սքանչելի հաղթանակով, որը ձեռք բերեց հերոսական Կարմիր բանակը Ղրիմում և Սևաստոպոլի տակ մղած մարտերում։

Ավելի ամրապնդենք զինվորական կարգապահությունը, ավելի կատարելագործենք մեր ռազմական գիտելիքները, որպեսզի գալիք մարտերում էլ ավելի ուժեղ հարված հասցնենք գերմանա-ֆոշիստական ավազակներին»[62]։

Միտինգում նույն ոգով ելույթներ են ունենում դիվիզիայի բոլոր գնդերի և մյուս ստորաբաժանումների ներկայացուցիչները։

Միտինգը ողջույնի հեռագիր է ուղարկում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին, խոստանալով ավելի բազմապատկել մարտական սխրանքները, մինչև վերջ կատարել հայ ժողովրդի պատվիրանը՝ առանց հաղթանակի տուն չվերադառնալ։

Սևաստոպոլի մարտերի հաղթական ավարտումից հետո, մինչև մայիսի վերջերը դիվիզիան մնաց այնտեղ։ Այդ երեք շաբաթ ժամանակամիջոցը օգտագործվեց հանգստի, զորամասերը կարգի բերելու, ծովափի պաշտպանությունը ապահովելու և միաժամանակ մարտական ուսուցման համար։

Մարտական-քաղաքական ուսուցման առաջնահերթ խնդիրն էր՝ հանգամանորեն ամփոփել Սևաստոպոլի մարտերի արդյունքները, ուսումնասիրել առաջավոր ստորաբաժանումների փորձը և անել անհրաժեշտ հետևություններ հետագա մարտական գործողությունների համար։ Այդ գործը կատարվեց մեծ հաջողությամբ։

Մարտական փորձի հանրագումարները նախ ամփոփվեցին վաշտերում, գումարտակներում և գնդերում։ Այնուհետև, մայիսի 17-ին, դրանք ամփոփվեցին դիվիզիայի հրամանատարության, բոլոր զորամասերի ու ստորաբաժա-

62 «Կարմիր դինվոր», 1944 թ. մայիսի 17։

նամների հրամանատարների, կուսակցական-քաղաքական աշխատողների ու ծառայությունների պետերի և սպաների սեմինար-խորհրդակցություններում:

Այստեղ ընդարձակ ելույթով հանդես եկավ դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանը: Նա հանդամանորեն վերլուծեց բոլոր դումարտակների, առանձին ստորաբաժանումների ու ծառայությունների մարտական գործերը, ցույց տվեց, թե դրանցից յուրաքանչյուրը ինչպես է կատարել իր խնդիրը: Ընդհանուր եզրակացությունն այն էր, դիվիզիան մեծ հաջողությամբ է կատարել իր մարտական առաջադրանքը Սևաստոպոլի համար մղված ծանր մարտերում: Դրա բարձր գնահատականն այն եղավ, որ կառավարության կողմից դիվիզիան արժանացավ մարտական Կարմիր դրոշի շքանշանի, նրա գնդերից երկուսը՝ 400-րդը և 390-րդը արժանացան Սևաստոպոլյան կոչման և ավելի քան 5000 ռազմիկներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով: Գեներալը հիշատակեց բազմաթիվ հրամանատարների, կուսակցական-աշխատողների, սերժանտների ու կարմիրբանակայիններին անուններ, որոնք անձնուրաց սխրանքներ են կատարել այդ մարտերում:

Ուրախությամբ ու հպարտությամբ խոսելով այդ բոլորի մասին, գեներալը միաժամանակ հիշատակեց մի շարք թերություններ ու սխալներ, որոնք տեղ էին գտել առանձին ստորաբաժանումներում: Նա խիստ կերպով նախազգուշացրեց դրանց մասին և պահանջեց համապատասխան հետևություններ անել:

Պատերազմը և հաղթանակը առանց զոհերի հնարավոր չէ: Բայց մեր ամենահիմնական խնդիրն է դրան հասնել նվազագույն զոհերով: Եվ այստեղ տեղին է ասել, որ թամանցիների սիրելի գեներալը բոլոր մարտերում հետևողականորեն գործել է այդ սկզբունքով: Մտածված ու խելացի հրամանների շնորհիվ նա կարողացել է հասնել այն բանին, որ դիվիզիայի իր մարտական խնդիրները կատարել է

առանց ավելորդ ու մեծ զոհերի։ Դա պատիվ է բերում յուրաքանչյուր հրամանատարի։

Մայիսի վերջերին դիվիզիայի զորամասերը Սևաստոպոլից փոխադրվեցին Սիմֆերոպոլի մոտ և Բոյուկ-Օնլարի շրջանում շարունակելով մարտական և քաղաքական ուսուցումը, մարտական փորձի ուսումնասիրությունը։

Ինչպես նշեցինք, ազատագրված Ղրիմում մեծ թվով հայ բնակչություն կար, որը ակտիվ դեր էր խաղացել թիկունքում ֆաշիստների դեմ մղվող ընդհատակյա պայքարում։ Նրա զավակներից շատերը խորհրդային պարտիզանների շարքերում պայքարել էին թշնամու դեմ։ Ազատագրման ժամանակ նրանք ջերմորեն դիմավորեցին Կարմիր բանակի զորքերին, այդ թվում մեր դիվիզիային։

Եվ ահա այժմ, Սևաստոպոլը ազատագրելուց հետո, երբ Սիմֆերոպոլի մոտ դիվիզիայի զորամասերն զբաղված էին մարտական ուսուցմամբ, խիստ գաղտնի հրաման ստացվեց՝ պատրաստվել կարևոր խնդրի կատարման համար։ Նվ շուտով պարզվեց, որ բանակի զորքերին, այդ թվում մեր դիվիզիային, հրամայված էր մի քանի ժամվա ընթացքում Ղրիմից տեղահանել հայ բնակչությանը (մինչև այդ թաթարական բնակչությունը արդեն տեղահանված էր)։

Դիվիզիայի անձնակազմը այդ հրամանն ընդունեց որպես անհասկանալի և անտեղի հրաման։ Չէ որ այստեղի հայերը գերմանական օկուպացիայի ժամանակ իրենց լավ էին պահել, ընդդեմ թշնամու ընդհատակյա աշխատանք էին կազմակերպել, ակտիվ մասնակցել էին պարտիզանական շարժմանը։ Ինչո՞վ էին մեղավոր նրանք, ինչու են նրանց տեղահանում։ Բայց ռազմական հրամանը՝ հրաման է։

Նրա կատարման ժամանակ սրտաճմլիկ իրադրություն էր ստեղծվել... ողբալով և լաց լինելով, հայերը հավաքում էին իրենց իրերը։ Մենք ևս զգում էինք, հոգեպես ապրում այդ ծանր պահը։ Բայց ուրիշ ելք չկար։ Բացատրում էինք, որ հավանական է հրամանը սխալ է, տեղահանումը՝ ժա-

մանակավոր է, որ կարող է դուք վերադառնաք։ Տվյալ պահին այդքանից ավելին հնարավոր չէր։

Երբ հիմա վերհիշում ենք այդ օրերը, հաստատապես կարող ենք ասել, որ Ղրիմի հայերի (ոչ միայն հայերի) տեղահանումը ճչացող անարդարություն էր, բռնապետ Ստալինի անմարդկային դաժանության օրինակներից մեկը։

Քանի որ Ղրիմի բնակչությունը տեղահանված էր, շատ զորամասերի, այդ թվում 89-րդ Թամանյան հայկական դիվիզիային, խնդիր տրվեց զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով։ Մոտ մեկ ու կես, երկու ամսվա ընթացքում՝ 1944 թ. հուլիսի սկզբից մինչև օգոստոսի կեսերը, Բիյուկ-Օնլարի շրջանում դիվիզիայի ռազմիկները ավելի քան 17.000 հեկտար հողամասում բերքահավաք կատարեցին և հերկեցին 200 հեկտար հողամաս, ինչպես նաև կատարեցին գյուղատնտեսական այլ աշխատանքներ։

Իրենց կատարած գյուղատնտեսական արդյունավետ այդ աշխատանքների համար դիվիզիայի բոլոր գնդերը և հատուկ ստորաբաժանումները արժանացան վերադաս հրամանատարության և տեղական իշխանությունների շնորհակալությանը։

Հունիսի 3-ին դիվիզիա ժամանեց Հայաստանի աշխատավորության պատվիրակությունը, որը բաղկացած էր արվեստի աշխատողներից ու գրողներից։ Նրա կազմում էին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ժողովրդական արտիստ Շ. Տալյանը, վաստակավոր արտիստուհի Մ. Սեդմարը, բանաստեղծ Ա. Վշտունին, գրականագետ Հ. Մկրտչյանը (պատվիրակության ղեկավար), ժուռնալիստ Ա. Պետրոսյանը, ասմունքի վարպետ Ե. Քալանթարը, դաշնակահար Ա. Ավդալբեկյանը և դերասան Հ. Ասլանյանը 10 օրվա ընթացքում նրանք մի շարք հանդիպումներ ունեցան դիվիզիայի տարբեր զորամասերի անձնակազմի հետ, ելույթներ ունեցան նրանց համար, պատմեցին թիկունքի աշխատանքի մասին։ Հանդիպումներն ամենուրեք ջերմ էին, անմիջական և սրտառուչ։

Ռազմիկների կուլտուրական սպասարկման գործում զգալի աշխատանք էր կատարում դիվիզիայի ակումբը, որի պետն էր կապիտան Լևոն Վաթյանը։ Ակումբի օգնությամբ մի շարք զորամասերում և առանձին ստորաբաժանումներում ստեղծվել էին կարմիրբանակային ինքնագործ խմբակներ։ Այդ խմբակների որոշ մասը հաջող ելույթներ ունեցան 1944 թ. հունիսին ռազմաճակատի զորամասերի ինքնագործ խմբերի ստուգատեսում։ Այդ մասին դրական դրախոսական գրեց բանակի «Боевой путь» թերթը։

Հունիսի 6-ին մամուլում հաղորդում հրապարակվեց մեր դաշնակիցներ ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից արևմուտքում երկրորդ ռազմաճակատի բացման մասին։ Նրանք հաջողությամբ մեծ թվով զորքեր էին ափ իջեցրել Ֆրանսիայի հարավում և ծավալում էին սկսված հարձակումը։ Այդ լուրը մեծ ուրախությամբ ընդունեցին նաև մեր դիվիզիայի ռազմիկները։ Դումարվեցին թամանցիների միտինգներ, ուր ելույթներ ունեցան մի շարք ռազմիկներ։ Նրանք ուրախությամբ ողջունեցին երկար սպասված և այժմ արդեն բացված երկրորդ ռազմաճակատը։

1944 թ. հունիսին 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան Ղրիմից Հայաստան ուղարկեց հատուկ պատվիրակություն՝ մայր ժողովրդին զեկուցելու նրա ռազմիկ զավակների մարտական գործերի մասին և ծանոթանալու թիկունքի աշխատանքներին։

Պատվիրակությունը զեկավարում էր դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանը։ Նրա կազմի մեջ էին մտնում մի մեծ խումբ անվանի թամանցիներ՝ մայորներ Պ. Ավալյանը, Հ. Յ. Սիմոնյանը, Մ. Գ. Մաղաքյանը, կապիտաններ Ռ. Գ. Հակոբյանը, Հ. Ա. Անոյանը, բժշկական ծառայության կապիտան Խ. Գ. Մխիթարյանը, ավագ լեյտենանտ Գ. Մ. Լալաբեկյանը, ավագ Ս. Մ. Վարդանյանը, ավագ սերժանտներ Մ. Ն. Մելքոնյանը, Ռ. Հ. Մանուկյանը և Հ. Ռ. Մկրտչյանը։

Նրանց բոլորի կուրծքը զարդարում էին բազմաթիվ մարտական շքանշաններն ու մեդալները։

Պատվիրակությունը Երևան է հասնում հունիսի 12-ին։ Այդ օրը Երևանի երկաթուղային կայարանն արտակարգ տոնական տեսք էր ընդունել։ Պատվիրակությանը դիմավորելու համար հավաքվել էր բազմահազար հասարակություն։ Շատերն ուզում էին տեսնել իրենց հարազատներին և լուրեր իմանալ նրանց մասին։ Ինչպես գրել է «Коммунист» թերթը իր խմբագրական հոդվածում, «փառապանծ թամանցիների գալու լուրը արագ կերպով տարածվեց քաղաքում։ Հազարավոր երևանցիներ գնացին նրանց դիմավորելու։ Նրանցից շատերը հույսով էին՝ իմանալ իրենց որդու և եղբոր մասին, որոնց հետ ուս-ուսի մարտնչել են պատվիրակության անդամները—Զանգեզուրի, Արարատյան հարթավայրի, գեղատեսիլ Լոռու և Դիլիջանի զավակները»[63]։

Պատվիրակությունը 20 օր մնում է Հայաստանում։ Նրա անդամները խմբերով կամ առանձին-առանձին հանդիպումներ են ունենում Երևանի, Լենինականի, Կիրովականի արտադրական ձեռնարկությունների և շատ շրջանների աշխատավորների, նրանց առանձին կոլեկտիվների, կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատավորների, մտավորականության ներկայացուցիչների, բարձրագույն դպրոցների ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ։

Հանդիպման հիմնական թեման էր դիվիզիայի, նրա զորամասերի ու առանձին ռազմիկների մարտական սքանչանքները ֆաշիստական բանակի դեմ մղվող Հայրենական մեծ պատերազմում։ Իր հերթին աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչները պատմում էին թիկունքում կատարվող իրենց հայրենանվեր ու քրտնաջան աշխատանքի մասին՝ հանուն հաղթանակի։

Դիվիզիայի պատվիրակության պատվին ընդունելու-

---

63 «Коммунист» *1944 թ., հունիսի 14։*

թյուն են կազմակերպում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը։ Այստեղ պատվիրակության անդամները պարգևատրվում են թանկարժեք նվերներով։

Վերադառնալով դիվիզիա, պատվիրակության անդամները բոլոր զորամասերում և ստորաբաժանումներում ռազմիկներին պատմում են թիկունքում կատարվող մեծ աշխատանքների մասին, զինվորների հարազատների աշխատանքային սխրագործությունների մասին։ Դա մարտական նոր լիցք էր հաղորդում նրանց։

Վերադառնալով Հայաստանից, մեր պատվիրակներն իրենց հետ բերել էին շատ նամակներ։ Հետո ստացվեցին մեծ քանակությամբ նվեր-ծանրոցներ։

Դա ռազմաճակատում մարտնչող թամանցիների և թիկունքում հերոսական աշխատանք կատարող մարդկանց միջև կենդանի կապի գեղեցիկ օրինակներից մեկն էր։

Ինչպես տեսանք, Սևաստոպոլի ազատագրման համար Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում քաջարի Կարմիր բանակի մյուս զորամասերի ռազմիկների հետ միասին մարտնչում էին նաև 89-րդ թամանյան հայկական դիվիզիայի ռազմիկները։ Բարձր պահելով հայ ժողովրդի մարտական սովորույթները, պատվի ու փառքի դրոշը, նրանք կործանիչ հարվածներ հասցրին թշնամուն Դորնայա լեռան վրա և Խերսոնես հրվանդանում։

Հայտնի է, որ հաղթանակն առանց զոհերի չեռը չի բերվում։ Այդ ահեղ մարտերում, երբ թշնամին վիրավոր գազանի նման վերջին ուժերը լարելով, դիմադրում էր, կառչելով ամեն մի հողակտորին, Սևաստոպոլի ահեղ մարտերում քաջի մահով զոհվեցին խիզախ թամամանցիներից շատերը[64]։

Եվ ահա, դիվիզիայի հրամանատարությունը որոշեց

---

64 Боевой путь..., էջ 342։

Սևաստոպոլի մոտ, Գորնայա լեռան ստորոտում, կառուցել հուշարձան-կոթող այդ դյուցազունների անմահ հիշատակը հավերժացնելու համար: Որոշումը մեծ արձագանք գտավ դիվիզիայի անձնակազմի մեջ և արժանացավ նրա բուռն հավանությանը:

Դիվիզիայի ռազմիկների մի մեծ ջոկատ, մեծ մասամբ սակրավորներ, 1944 թ. հունիսի առաջին օրերից մինչև օգոստոսի սկիզբը քրտնաջան աշխատանք կատարեց այդ հուշարձան-կոթողը կառուցելու համար: Բացի դրանից նրա կառուցմանը մեծ եռանդով մասնակցեցին նաև դիվիզիայի շատ ուրիշ ռազմիկներ:

Հուշարձանի վրա մեծ տառերով գրված էր այսպես՝

Կառուցված է հուշարձան
ի հիշատակ
89-րդ
Հայկական հրաձգային
Թամանյան կարմրադրոշ
Կարմիր աստղի շքանշանակիր
Դիվիզիայի ռազմիկների,
որոնք քաջի մահով
զոհվեցին Գորնայա լեռան վրա
Սևաստոպոլ քաղաքը գերմանաֆաշիստական
զավթիչներից ազատագրելիս:

Հուշարձան-կոթողի բացումը տեղի ունեցավ 1944 թ. օգոստոսի 5-ին, նրան մասնակցում էին դիվիզիայի բոլոր զորամասերի և հատուկ ստորաբաժանումների մեծ թվով ներկայացուցիչներ: Այստեղ էին նաև Ղրիմի մարզի Բալակլավայի շրջանի կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Զոհվածների հիշատակին հարգանքի տուրքի և մարտական նոր պարտավորությունների ընդունումով հանդես եկան շատ թամանցիներ: Բացման առթիվ տրված հաղորդագրության մեջ ասված է.

«Հուշարձանի բացման մասնակիցները զոհվածների շիրիմների առաջ ծնկի չոքելով, երդվեցին վրեժ լուծել գերմանա-ֆաշիստական գավթիչներից իրենց ընկերների թափած արյան դիմաց: Նրանք երդվեցին մարտական ուսուցման մեջ դառնալ առաջավորներ, կատարելագործել իրենց մարտական վարպետությունը՝ գալիք մարտերում թշնամուն մահացու հարված տալու համար»[65]:

Զոհված հերոսների հիշատակին նվիրված հատուկ բանաստեղծություն գրեց դիվիզիայի «Կարմիր դինվոր» թերթի աշխատակից, լեյտենանտ, շնորհալի երիտասարդ բանաստեղծ Արշալույս Սարոյանը: Հեղինակը, մեծ հուզմունքով, այն կարդաց արձանի բացման ժամանակ:

Այնտեղ ասված էր.

Ընկերներ իմ քաջ, զոհվածներ անմահ,
Այսօր ձեր շիրիմին այցի ենք եկել,
Նկել ենք, որ մեր շուրթերով պապակ
Համբուրենք այս սուրբ հուշարձանը ձեր,
Ձեր փառքի առաջ, սրբության առաջ
Հանդարտ խոնարհենք գլուխները մեր,
Դուք անմահության մահով եք ընկել,
Մասիսն է փառքի արձանը վեհ,
Դուք հավերժ կապրեք հերոս ընկերներ
Բյուր միլիոնների սրտում բոցակեզ[66]:

Դիվիզիայի ռազմիկների համար նշանավոր օր էր 1944 թ. օգոստոսի 5-ը: Ամբողջ անձնակազմը շարք էր կանգնած: Նվագում էին դիվիզիայի և գնդերի ռազմական նվագախմբերը: Մինչև հանդիսավոր արարողության սկսվելը, ամենուրեք ռազմիկները պարում և երգում էին: Բոլորի տրամադրությունը տոնական էր, հաղթական:

---

65 Боевой путь..., էջ 343:

66 «Կարմիր դինվոր», 1944 թ. օգոստոսի 10: Բանաստեղծությունն ավելի ընդարձակ է: Բերված է մի հատված:

Դիվիզիային պետք է հանձնվեր երկրորդ շքանշանը՝ մարտական Կարմիր դրոշի շքանշանը, որին նա արժանացել էր Սևաստոպոլի հերոսամարտերում ցուցաբերած սքանչանքների համար։

Շքանշանը հանձնելու համար դիվիզիա էր ժամանել Մերձծովյան բանակի հրամանատար, գվարդիայի գեներալ-լեյտենանտ Մելնիկը։ Հանդիսավոր միտինգում արտասանած ճառում նա բարձր գնահատեց հայ ժողովրդի ու նրա ռազմիկ զավակների մարտական գործերը ֆաշիստական բանակի դեմ մղվող պատերազմում։ Նա մասնավորապես նշեց դիվիզիայի, նրա գնդերի ու բոլոր ռազմիկների հերոսական սխրանքները Դորնայա լեռան գրոհի և Սևաստոպոլի ազատագրության մարտերում։

Հանձնելով շքանշանը, բանակի հրամանատարը նորանոր հաջողություններ մաղթեց դիվիզիային առաջիկա մարտերում և ասաց, որ դա վերջին շքանշանը չի լինելու։

Դիվիզիայի ներկայացուցիչները՝ նրա հրամանատարը և մյուս ռազմիկները, ընդունելով շքանշանը, հանդիսավոր երդում տվեցին բազմապատկել դիվիզիայի մարտական հաջողությունները, մեր հերոսական Կարմիր բանակի մարտակարգերում հասնել ֆաշիստական բանակի գլխովին ջախջախմանը։

Այդ ռազմական մի նոր երդում էր, որը հետագա մարտերում դիվիզիայի անձնակազմը կատարեց սրբությամբ։

Շուտով դիվիզիան մարտական հրաման ստացավ՝ օգոստոսի կեսերին կենտրոնանալ Սիմֆերոպոլի շրջանում՝ Ղրիմից մեկնելու համար։

Ռազմական խիստ գաղտնիքի շնորհիվ մեզանից ոչ ոքի հայտնի չէր, թե ուր էինք մեկնելու։ Քանի որ այն ժամանակ Թյուրքիայի հետ հարաբերությունները լարված էին, ոմանք մտածում էին, որ կարող է գնանք Անդրկովկաս... իսկ շատերն էլ մտածում էին, որ տվյալ պահին Կարմիր բանակի ամբողջ ուշադրությունը կենտրոնացված է գործող ռազմաճակատների վրա, ուստի շատ հավանական է, որ

գնանք Բելոռուսիա, Ուկրաինա կամ Մերձբալթիկա։ Բոլոր դեպքերում էլ նրանց մոտեցումը հիմնավոր էր։

Շուտով դիվիզիային տրամադրվեցին ռազմական էշելոններ։ Առաջին էշելոնները տրվեցին 400-րդ հրաձգային գնդին, որի ստորաբաժանումները կարճ ժամանակամիջոցում վագոններում գրավեցին իրենց տեղերը։

Դիվիզիայի հրամանատարության կողմից այդ գնդին կցված էր գեներալ-մայոր Ն. Սաֆարյանի տեղակալ, փոխգնդապետ Գ. Բլբուլյանը։ Քաղբաժնի կողմից սույն տողերի հեղինակին էր հրամայված գնալ այդ գնդի հետ։ Գ. Բլբուլյանի հետ մի վագոնում էինք։

Երկաթուղային ճանապարհին Լաղովայա կայարանն այն կետն էր, ուր գիծը բաժանվում էր երկու մասի՝ հարավ և հյուսիս։ Այդտեղ մեզ հայտնի պետք է լիներ, թե որ ուղղությամբ ենք գնալու։

Գնացքը շարժվեց նախ դեպի հյուսիս, ապա արևմուտք։

Մի քանի օրից հետո, սեպտեմբերի 7-ին, գնացքը կանգ առավ Բրեստից արևմուտք, Ձերեմխա կայարանում, ուր կարգադրված էր իջնել գնացքից և սպասել դիվիզիայի մյուս զորամասերի կենտրոնացմանը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐՈՒՄ

1. ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԴՐՄԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Մի քանի օր դիվիզիայի բոլոր զորամասերը Ղրիմից արդեն տեղափոխվել էին Բրեստի մոտ, մտնելով Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի կազմի մեջ։ Նրանք կենտրոնացել էին Վիգոդա, Ալեքսանդրովկա, և Ադամովա Չաստավա բնակավայրերի շրջակայքում՝ անտառներում։

Գտնվելով ռազմաճակատի երկրորդ գծում, դիվիզիան խնդիր էր ստացել 16-րդ հրաձգային կորպուսի կազմում նախապատրաստվել առաջիկա մարտերին, մեր հերոսական Կարմիր բանակի հարձակողական գործողություններին։ Անհրաժեշտ էր ավելի ու ավելի խորը ուսումնասիրել դիվիզիայի անցած մարտերի ու ամբողջ Հայրենական մեծ պատերազմի փորձը, օրավուր ստացվող ռազմական նոր տեխնիկան, էլ ավելի բարձրացնել անձնակազմի մարտական ու քաղաքական ուսուցման որակը, նրա բարոյաքաղաքական ոգին, բորբոքել աստվածային հուրը թշնամու նկատմամբ։

Մոտ 40 օր դիվիզիան մնաց վերահիշյալ վայրերում։ Ամբողջ ժամանակ, գիշեր ու ցերեկ, դիվիզիայի ամբողջ անձնակազմը անդադրում ու քրտնաջան աշխատանք էր կատարում այդ խնդիրների կենսագործման համար։ Դիվիզիայի հրամանատարությունը և քաղբաժինը իրենց օպերատիվ աշխատանքով մեծ օգնություն էին ցույց տալիս զորա-

մասերի հրամանատարությանը և կուսակցական-կոմերիտական կազմակերպություններին։

Ավելի քան մեկ ամսվա մարտական-քաղաքական ուսուցման արդյունքներն ամփոփվեցին դիվիզիայի զորամասերի տակտիկական ընդհանուր վարժություններով, որոնք կորպուսի հրամանատարության կողմից բարձր գնահատականի արժանացան։

1943 թ. հոկտեմբերի 19-ին դիվիզիան խնդիր ստացավ հնարավորին չափ թաղարկված վիճակում շարժվել դեպի հարավ-արևմուտք՝ Լյուբլին քաղաքը։ Այստեղ էր գտնվում Լեհաստանի նորաստեղծ հեղափոխական կառավարությունը։ Թշնամու հետախուզությունից և օդային ռմբակոծություններից խուսափելու նպատակով, դիվիզիայի զորամասերի մարտական երթը կատարվում էր միայն գիշերները, իսկ ցերեկը ռազմիկները հանգստանում էին։ 9—10 օրվա ընթացքում դիվիզիայի զորամասերը սկսեցին կենտրոնանալ նշանակված վայրը՝ Լյուբլինի հարավում գտնվող անտառներում, Ֆաշիստական նախկին խոշոր ճամբարներից մեկի՝ Մայդանեկի շրջակայքում։

Չնայած ավելի մոտեցանք ռազմաճակատին, բայց դա դեռևս առաջավոր գիծը չէր։ Ուստի դիվիզիայի խնդիրը մնաց նույնը՝ շարունակել մարտական և քաղաքական ուսուցումը, ավելի ու ավելի կատարելագործել զորամասերի մարտունակությունը։

Ինչպես Բրեստի մոտ, նույնպես և այս նոր վայրում դիվիզիան շարունակում էր համալրումների ստացումը, որպեսզի Ղրիմի մարտերում ունեցած կորուստներից հետո անձնակազմով լրիվ կոմպլեկտավորվեր։

Այս անգամ դիվիզիայի անձնակազմի համալրումը կատարվեց գլխավորապես նոր ազատագրված Արևմտյան Բելոռուսիայից և Արևմտյան Ուկրաինայից զորակոչվածների

հաշվին։ Դրանց թիվը հասնում էր մոտ 1200-ի[67]։ Ինչպես միշտ, այս անգամ ևս անհրաժեշտ էր եռանդուն աշխատանք կատարել դիվիզիայի նոր ռազմիկների հետ։ Անհրաժեշտ էր կարճ ժամանակամիջոցում նրանց հետ ծավալուն աշխատանք կատարել մարտական ուսուցման գծով, օգնել տիրապետելու զենքին, կարմիր բանակի կանոնադրքերին, Հայրենական Մեծ պատերազմի փորձին, բարձրացնել նրանց քաղաքական պատրաստականությունը, լիովին պատրաստել առաջիկա մարտերի համար։ Դա ի հարկե, հեշտ, գործ չէր, մանավանդ այն պատճառով, որ համալրման կարգով ստացված այդ նոր անձնակազմի խոշոր մասը նոր էր ազատագրված գերմանական գերությունից, իսկ նախքան պատերազմը միայն երկու տարի էր ապրել խորհրդային իշխանության պայմաններում՝ 1939 թվականին Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի ազատագրումից հետո։ Բայի դրանից, նրանց մի զգալի մասը չէր տիրապետում ռուսերեն լեզվին։ Ուստի հրամանատարական-քաղաքական կազմը որոշ աշխատանք էր կատարում նաև օգնելու ռազմիկներին սովորելու ռուսաց լեզուն, որը մեծ չափով կնպաստեր մչսրատական-քաղաքական ուսուցման հաջողություններին։

Հաշվի առնելով վերոհիշյալը, դիվիզիայի ու զորամասերի հրամանատարությունը, քաղաքական օրգաններն ու կուսակցական-կոմերիտական կազմակերպությունները քրտնաջան աշխատանք սկսեցին նոր համալրման հետ։ Բացի ստորաբաժանումների ու խմբային պարապմունքներից, դիվիզիայի նոր ռազմիկների հետ կազմակերպվում էին անհատական դրույցներ մարտական և քաղաքական ուսուցման տարբեր հարցերի շուրջը։ Մասնավորապես մեծ ուշադրություն էր դարձվում ամբողջ ռազմաճակատում կարմիր բանակի հերոսական մարտերի, նրանցում աչքի ընկած ռազմիկների սխրանքների, մեր դիվիզիայի անցած մարտական ուղու, խորհրդային ժողովուրդների բարեկամության, նենգ

67 «Боевой путь», էջեր 405—406։

թշնամու դեմ նրանց եղբայրական համագործակցության և այլ հարցերի վրա։

Այդ բնագավառում զորամասերում և ստորաբաժանումներում հրամանատարների հետ միասին օր ու գիշեր անդադրում աշխատանք էին կատարում դիվիզիայի քաղբաժնի աշխատողներ մայորներ Ն. Շահվերդյանը, Ա. Հակոբյանը, Ղ. Դալլաքյանը, Գ. Կարապետյանը, Մ. Կապուստինը, Վ. Լիխանովը, Ս. Նալբանդյանը, Գ. Ղուկասյանը, կապիտաններ Հ. Հովակիմյանը Հ. Ադաջանովը, լեյտենանտ Ա. Սարոյանը, գնդերի քաղաշխատողներ, փոխգնդապետ Ն. Մեժլումյանը, մայորներ Գ. Հարությունյանը, Պ. Ավալյանը, Ֆ. Շիֆաննիկոն, Ս. Բադալյանը, Մ. Հակոբյանը, Հ. Գևորգյանը, կապիտաններ Ռ. Սարոյանը, Ս. Թանգյանը, Հ. Օհանյանը, Ա. Ամբարդարյանը, ավագ լեյտենանտներ Ն. Իմմաիլյանը, Գ. Սարդսյանը և հրամանատարներ, մայորներ Գ. Աբրահամյանը, Պ. Բոշնագյանը, Հ. Սիմոնյանը, Ս. Մարգարյանը, Հ. Բաբայանը, Ա. Աբոյանը, Ս. Բաղդասարյանը, Ա. Պողոսյանը, Գ. Զոհրաբյանը, կապիտաններ Տ. Սիմոնյանը, Հ. Անոյանը և շատ ու շատ ուրիշներ։

Կատարված աշխատանքի արդյունքն այն եղավ, որ [illegible]ված նոր համալրումը իր մարտական և քաղաքական ուսուցմամբ, թշնամու դեմ պայքարելու իր պատրաստակամությամբ ու վճռականությամբ շուտով հասավ լավագույն արդյունքների։ Այդ գեղեցիկ կերպով ապացուցվեց հետագա ծանր մարտերում։

Լեհական խոշոր քաղաք Լյուբլինը և Ֆաշիստների սահմանած մահվան ճամբար Մայդանեկը կարմիր բանակը ազատագրել է 1944 թ. հուլիսի 23-ին։ Այդ օրերին մամուլի հաղորդագրություններից արդեն հայտնի էր, որ նրա հսկա ճամբարում միաժամանակ տեղավորվում էր 45 հազար մարդ, որ նրա գոյության ժամանակ ֆաշիստներն այնտեղ ոչնչացրել էին մոտ մեկ և կես միլիոն մարդ՝ խորհրդային, լեհական և ուրիշ ռազմագերիներ ու քաղաքացիներ։ Թերթերում տպագրված էին նաև հաղորդագրություններ ֆա-

շիստների կողմից մարդկանց մասսայաբար ոչնչացնելու ձեվերի ու տեխնիկայի մասին: Դրանց մասին գիտեին շատերը, այդ թվում նաև մեր դիվիզիայի ռազմիկները, որոնց հետ քաղաշխատողները և հրամանատարները համապատասխան զրույցներ էին անցկացրել:

Քանի որ դիվիզիան գտնվում էր Մայդանեկից ոչ հեռու, հրամանատարությունը և քաղբաժինը ցուցում ավելցին զորամասերի և ստորաբաժանումների անձնակազմը հերթականությամբ տանել Մայդանեկ և տեղում ցույց տալ ֆաշիստական գազանությունների հետեւանքները, մարդկանց ոչնչացնելու նրանց ստեղծած դիվային տեխնիկան:

Որպես դիվիզիայի քաղբաժնի ագիտատոր, մի քանի անգամ ռազմիկների հետ եղա Մայդանեկում, ուր հատուկ էքսկուրսավարները բացատրություններ էին տալիս մարդկանց մասսայաբար ոչնչացնող այդ հսկա «ֆաբրիկայի», նրա առանձին տեղերի ու ամբողջ կոմպլեքսի մասին:

Ամեն անգամ գնալիս, ինչպես բոլոր մեր ռազմիկները, նույնպես և ես անասելի ծանր ապրումներով ու ցավով էինք դիտում Մայդանեկի յուրաքանչյուր շենքը, նրա յուրաքանչյուր իրը և այն դաշտերը, որոնցում տեղավորված են դրանք: Այդ օրերից չնայած անցել են տասնյակ տարիներ, այժմ էլ ծանր է վերհիշել ու նկարագրել այնտեղ տեսածն ու ապրածը:

Այնուամենայնիվ փորձենք համառոտ կերպով ցույց տալ, թե ինչ էր իրենից ներկայացնում Մայդանեկը, ֆաշիստական այդ խոշորագույն ճամբարներից մեկը, ուր ոչնչացվել է ինչպես նշեցինք, մոտ մեկ ու կես միլիոն մարդ:

Մարդկանց մասսայաբար ոչնչացման Մայդանեկի ճամբարը ֆաշիստները կազմակերպել էին 1940 թվականին, Լվհատտանի զավթումից հետո: Աստիճանաբար կատարելագործելով մարդկանց ոչնչացնելու տեխնիկան և այդ նպատակով ուժեղ թափով ծավալելով շինարարությունը, մեկ երկու տարում Մայդանեկը դարձել էր մարդկանց ոչնչացնելու ինդուստրիալ կենտրոններից մեկը: Նրա սարքավորումների հիմնա-

կան մասը արտադրվել էր Բեռլինում՝ հատուկ նախագծերով և պատվերներով

Ճամբարը ղբաղեցնում էր ավելի քան երկու հարյուր հիսուն հեկտար տարածություն, մոտ 150 բնակելի շենքերով ու բարաքներով։ Այն շրջափակված էր մետաղյա փշալարերի խիտ ցանցով, որի բարձրությունը հասնում էր երեք մետրի։ Ըստ որում, այդ ցանցը միացված էր էլեկտրական բարձր հոսանքին։ Ցանցի համապատասխան տեղերում, մոտ 100—120 մետր իրարից հեռավորության վրա պահակային բարձրադիր կետեր էին կառուցված, որտեղից ֆաշիստական ժամապահները իրենց հատուկ վարժեցված շներով, հսկում էին ճամբարը, որպեսզի բանտարկվածներից ոչ մեկը չկարողանա փախչել։ Իսկ ով փորձ էր անում փախչելու, տեղն ու տեղը գնդակահարում էին։

Ահա թե ինչպես է նկարագրել Մայդանեկը անգլիական թղթակից Ա. Վերտը, որը նրա ազատագրումից հետո, 1944 թ. օգոստոսին եղել էր այնտեղ։ Նա նշում է, որ ֆաշիստները շատ են ունեցել մահվան ճամբարներ, բայց «Մայդանեկը մյուսներից ավելի վատ կերպով էր ցույց տալիս նացիստական ռեժիմի իսկական էությունը, մասշտաբները և հետևանքները գործողության մեջ։ Քաղդի այստեղ մի հսկայական արդյունաբերական ձեռնարկություն է եղել, որտեղ հազարավոր «հասարակ» գերմանացիներ առավոտից երեկո քրտնաջան աշխատել են միլիոնավոր այդ մարդկանց բնաջնջելու վրա, մասնակցելով պրոֆեսիոնալ սադիզմի մի յուրատեսակ մասսայական դիմաբրուքի, կամ, որ ավելի վատն է, կատարվող իրադարձություններին վերաբերվել, են այնպիսի գործարար վստահությամբ ինչպես մի սովորական աշխատանքի»[2]։ Միաժամանակ Ա. Վերտը նշում է, որ երբ այդ օրերին ինքը թղթակցություն

---

2 Ալեքսանդր Վերտ, *Ռուսաստանը, 1941—1945 թվականների պատերազմում «Հայաստան» հրատարակություն, Երևան, 1969 թ., էջ 834։*

է ուղարկել Բի-Բի-Սիին Մայդանեկում գերմանացիների գաղանութիւնների մասին, այստեղ այդ իրաւակցութեանը չեն հավատացել, այն համարել են «սովետական պրոպագանդիստական տրյուկ» և չեն տպագրել։ Եվ «միայն այն ժամանակ, երբ արևմտյան դաշնակիցների զորքերը հայտնաբերեցին Բուխենվալդը, Դախաուն և Բերգեն-Բելզենը, Բի-Բի-Սին համոզվեց, որ թե Մայդանեկը և թե Օսվենցիմը նույնպես իրականութիւն են եղել...»[3]— գրում է Ա. Վերտը։

Մարդկանց մասսայաբար ոչնչացնելու այդ ֆաբրիկայի բոլոր տեղամասերը կամ բաժինները կոչվում էին ոչ իրենց իսկական անուններով, այլ ինչ որ անմեղ անուններով։ Այդ արված էր նրա համար, որ փարատեն ապագա զոհերի կասկածները և նրանց հետ դատաստան տեսնեն առանց որևէ դիմադրութեան։ Այսպես, մարդկանց ոչնչացնող այդ ճամբարի հիմնական տեղամասերից մեկը, որը տեղավորված էր մի հսկայական բարաքում, կոչվում էր «Բաղնիք և ախտահանարան 2-րդ»։ Ճամբարի մյուս բարաքներից մեծ-մեծ խմբերով մարդկանց բերելով այստեղ, ֆաշիստները նրանց առաջարկում էին մտնել բաղնիք լողանալու։ Երբ ավարտվում էր լողանալու կարճ պրոցեսը, հատուկ պահակները լողացողներին մերկ վիճակում հրավիրում էին բաղնիքին կից հարևան շենքը։ Դա բավական երկար մի շինութիւն էր, բաղկացած գետնախառույց քառակուսի բաղմաթիվ խցիկներից, որոնք պատուհաններ չունեին, այլ փոքրիկ լուսանցքներ առաստաղից։ Նրանցից յուրաքանչյուրում կանգնած վիճակում տեղավորվում էր ավելի քան 260 մարդ։ Երբ բոլոր խցիկները լցվում էին, փակվում էին նրանց դռները և սկսվում էր ամենադաժան պրոցեսը՝ մարդկանց գազով խեղդամահ անելը։ Նախ առաստաղից, հատուկ անցքերի միջոցով մղվում էր տաք օդ, այնուհետև թունավոր գազը, որը արագորեն գոլորշիանում էր տաք մթնոլորտում։ Մի քանի րոպեում այդ խցիկներում գտնվող մարդիկ խեղ-

3 Նույն տեղում։

դամահ էին լինում։ Այնուհետև հատուկ սարքավորումներով զոհերի դիակները դուրս էին թափվում և բեռնատար ավտոմեքենաներով փոխադրվում Ճամբարի հակառակ կողմում գտնվող մյուս տեղամասը՝ դիակիզարանը։ Հատուկ տեխնոլոգիական մեթոդով, 1700 աստիճան տաքության մեջ այդ դիակները այստեղ արագորեն այրվում էին և նրանցից ստացված մոխիրը հետագայում օգտագործվում որպես պարարտանյութ։ Դիակիզարանի ծխնելույզը քառանկյունի մի հսկայական աշտե էր, որը երևում էր շատ հեռվից։ Թվում էր թե նա ինչ որ խաղաղ գործարանի ծխնելույզ է։ Դիակիզարանն ուներ վեց հսկայական վառարան։

Նախքան դիակիզարան ուղարկելը, ֆաշիստները բոլոր զոհերի դիակների վրայից հանում էին թանկարժեք իրերը՝ ոսկի մատանիները, այլ զարդերը և ոսկի ատամները։

Հսկայական բարաքներից մի քանիսը լեփ-լեցուն էին զոհվածների հագուստեղենով, կոշիկներով և այլ իրերով, որոնք տեսակավորված էին ըստ որակի և հատուկ գնացքներով առաքվում էին ֆաշիստական Գերմանիայի տարբեր քաղաքները՝ կամ վերամշակման, կամ բնակչության և բանակի կարիքները հոգալու։

Ճամբարում կային հատուկ սարքավորումներ մարդկանց ճարպը և արյունը հանելու և օգտագործելու համար։

Էքսկուրսավարը մանանավորապես մեծ հուզմունքով էր խոսում 1943 թ. նոյեմբերի 3-ի մասին, երբ ֆաշիստները մեկ օրում սպանել էին 20 հազար հրեայի, որոնց մի մասը խեղդամահ էին արել Մայդանեկում, իսկ մյուսին՝ գնդակահարել մոտակա Կրեմպեցկի անտառում։

Զարհուրելի էին ֆաշիստների հանցագործությունները։ Այդ հանցագործությունները կատարողների մի մասը կանգնեց դատարանի առջև և ստացավ իր արժանի պատիժը։ Մայդանեկի հանցագործների դատավարությունը տեղի ունեցավ 1944 թ. նոյեմբերին՝ Լյուբլինում։ Դատարանի առջև կանգնած էին 6 հանցագործներ՝ 4 գերմանացի և 2 լեհ, որոնք Մայդանեկում ակտիվ դեր էին կատարել անմեղ մարդկանց

ոչնչացնելու դործում։ Խորհրդա-լեհական միացյալ դատարանը նրանց դատապարտեց մահվան՝ կախաղանի միջոցով։

Այդ վճիռը իրագործվեց Լյուբլինի հրապարակներից մեկում, որին ներկա էին տասնյակ հազարավոր մարդիկ, այդ թվում մեր դիվիզիայի ռազմիկներից շատերը։

Մայդանեկում կատարված գազանություններն էլ ավելի բորբոքեցին խորհրդային բանակի, այդ թվում և մեր դիվիզիայի ռազմիկների ատելության հուրը ֆաշիստական բարբարոսների նկատմամբ։ Այնտեղ այցելած ռազմիկներից շատերը իրենց ցասումը արտահայտեցին դիվիզիայի «Կարմիր դինվոր» թերթի էջերում։ Այսպես, ավագ սերժանտ Շ. Աբովյանը Մայդանեկը դիտելուց հետո, նույն թերթի դեկտեմբերի 7-ի համարում գրել է. «Միլիոնավոր մարդկանց ոչնչացնող այս ճամբարը շրջափակված է փշալարերի բարձր ցանցով։ Մոտում ենք այն սենյակը, որտեղ քամել են կենդանի մարդկանց արյունը, սպանել նրանց և ապա այրել համապատասխան վառարանի մեջ։

Ձոհերի արյունը ցեմենտյա սեղանի կենտրոնում հարմարեցված խողովակի միջոցով հոսել է մեծ ավազանի մեջ։ Հիտլերականները այդ արյունով հրշիկ են պատրաստել, իսկ մարդկային ճարպից՝ օճառ։ Սրշիկագործ գազանները դրամի են վերածել նույնիսկ մարդկանց հառաչանքը։

Ո՞ր մեկը պատմես։ Հիտլերյան գազանները Մայդանեկում ցույց են տվել իրենց՝ բորենու իսկական պատկերը։ Այժմ հասել է հատուցման ժամը, որպեսզի Կարմիր բանակի յուրաքանչյուր մարտիկ հատուցի այդ բոլորի փոխարեն՝ անմեղ զոհերի արյան ու արցունքի փոխարեն»։

Իսկ դիվիզիայի թերթի աշխատակից, բանաստեղծ, լեյտենանտ Արշալույս Սարոյանը Մայդանեկի սարսափելի տեսարանների թարմ տպավորության տակ գրել է իր «Մայդանեկում» բանաստեղծությունը, որը տպագրվեց «Կարմիր դինվոր»-ի նույն համարում և տարածվեց դիվիզիայի ռազմիկների շրջանում։ Այնտեղ ասված է.

Մարդկային ճարպի տակառն առաջիս,
Վրեժի անմար կրակն իմ սրտում,
Արցունքի երկու շիթեր աչքերիս՝
Կանգնել եմ ահա ես Մայդանեկում:

Այնուհետև գեղարվեստական խոսքի միջոցով բանաստեղծը նկարագրում է Մայդանեկը, ֆաշիստների անմարդկային բարբարոսությունները:

Ավելին կարելի է գրել Մայդանեկում ֆաշիստների գազանությունների մասին: Բայց բավարարվենք այսքանով, քանի որ, հրապարակում կա առատ գրականություն:

Մայդանեկի մասին հիշատակելով, մենք կամենում ենք ընդգծել այն միտքը, որ Կարմիր բանակի ռազմիկները, այդ թվում նաև մեր դիվիզիայի ռազմիկները, տեղում տեսնելով մարդկանց ոչնչացնելու ֆաշիստական համակենտրոնացման ճամբարը և այնտեղ գործադրված գազանությունների հետևանքները, ավելի ու ավելի առելությամբ էին լցվում գազրելի թշնամու նկատմամբ և է՛լ ավելի ուժգնորեն էին պայքարում նրա դեմ՝ հանուն մեր մեծ հաղթանակի:

1944 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դիվիզիան Մայդանեկի մոտ շարունակեց իր մարտական-քաղաքական ուսուցման աշխատանքները, որոնք ընթանում էին առանց դադարի: Դիվիզիայի հրամանատարության, զորամասերի և ստորաբաժանումների ամբողջ հրամանատարական-քաղաքական կազմի ու բոլոր ռազմիկների ուշադրությունը կենտրոնացած էր այն բանի վրա, որպեսզի հնարավորին չափ արագ և բարձր որակով ավարտվեն այդ աշխատանքները և դիվիզիան լիովին պատրաստ լինի առաջիկա մարտական գործողություններին, որոնք սպասվում էին ամեն օր: Եվ դիվիզիայի ամբողջ անձնակազմը մեծ հաջողությամբ կատարեց այդ խնդիրը, լիովին պատրաստ լինելով մարտական գործողություններին:

1944 թ. նոյեմբերի 29-ին լրացավ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 24-րդ տարեդարձը: Այդ

տոնի առթիվ դիվիզիայի անձնակազմը ստացավ հայ անվանի գրողների ջերմագին նամակը։ Նրա տակ ստորագրել էին Ա. Վ. Խահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Գ. Սարյանը և Հր. Քոչարը։

Սրտագին ողջունելով հայ ժողովրդի ազգային վերածննդի տոնը, սիրելի գրողները հպարտանում էին ռազմաճակատում հերոսական Կարմիր բանակի, այդ թվում 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի, ձևոք բերած մեծ հաղթանակներով և իրենց երախտագիտության խոսքն ասում այդ կապակցությամբ։ Նամակը վերջանում էր հետևյալ խոսքերով.

«Հայ ժողովրդի ազգային վերածնության այս տոնի առթիվ մենք ցանկանում ենք խնդրել ձեզ, որ հայտնեք մեր երախտագիտության զգացմունքները Կարմիր բանակի՝ ռուս և այլ ժողովուրդների ծոցից ելած ձեր մարտական ընկերներին, որոնց անօրինակ սխրագործությունների շնորհիվ գերման չարդարարների սկսած պատերազմը այս անգամ չհասավ Հայաստան, և սովետական տարիների ընթացքում վերաշինված մեր հայրենիքը չդարձավ իր զավակների արյամբ ողողված ավերակույտ, ինչպես միշտ եղել է անցյալ պատերազմների ժամանակ։

Դրա համար շնորհակալություն ձեզ, մեր հայ քաջարի զավակներ, շնորհակալություն մեր անհաղթ Կարմիր բանակին»[4]։

Դիվիզիայի ամբողջ անձնակազմը լիովին զգում էր այդ պարտավորեցնող խոսքերի ամբողջ իմաստը։ Հերոսական Կարմիր բանակի շարքերում նա պատրաստվում էր մարտական նոր սխրանքներով ցույց տալ իր նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին, նրա առաջատար ուժը հանդիսացող ռուս մեծ ժողովրդին։

Այդ տոնի առթիվ հայ ժողովրդին ուղղած իրենց նա-

---

4 Боевой путь..., էջ 413—414։

մակը դիվիզիայի ռազմիկներն ավարտում են հետևյալ խոսքերով.

«Հանուն մեր սիրելի հայրենիքի, հանուն հարազատ Հայաստանի չենք խնայի մեր կյանքը, կխփենք թշնամուն մինչև նրա վերջնական ջախջախումը։ Եվ ամբողջ Կարմիր բանակի հետ միասին հաղթանակի դրոշ կծածանենք Բեռլինի վրա։

Կեցցե ԽՍՀՄ ժողովուրդների անխորտակելի բարեկամությունը»[5]։

Ինչպես նախորդ ամիսներին, հատկապես դեկտեմբերին, դիվիզիայի զորամասերը առանդուն կերպով շարունակում էին իրենց մարտական ուսուցումը, տակտիկական պարապմունքները։ Գնալով ավելի ու ավելի արդյունավետ էին դառնում դրանք, բարձրանում էր ռազմական ուսուցման որակը։

Դեկտեմբերի 19-ին, երբ դիվիզիան նշում էր իր ձևավորման 3-րդ տարեդարձը, հետախուզությունը հաղորդեց, որ ոչ հեռու անտառում պարաշյուտիստների մի խումբ է վայրէջք կատարել։ Ձևոք առնված օպերատիվ միջոցառումների շնորհիվ այդ խմբի անդամները՝ թվով 7 հոգի, ձերբակալվում են։ Դրանք գերմանացիներ էին, վայր իջած հատուկ հետախուզական նպատակով։

Շուտով հրաման է ստացվում՝ պատրաստ լինել դեպի առաջավոր դիծ շարժվելու համար։

Ինչպես հայտնի է, շարունակելով հաղթական հարձակումը, 1944 թ. ամռանը և աշնանը Հերոսական Կարմիր բանակը խորտակիչ հարվածներ էր հասցրել ֆաշիստական բանակին և ձևոք բերել խոշորագույն հաջողություններ։

Հսկայական մարդկային ու նյութական կորուստներ տալով, թշնամին հետ էր շպրտվել խորհրդային տերիտորիայից։ Լիովին վերականգնվել էր խորհրդային սահմանը Բարենցի ծովից մինչև Սև ծովը։

Պատերազմական գործողությունները փոխադրվում էին

---

[5] Боевой путь..., էջ 416։

օտար երկրների տերիտորիա։ Կարմիր բանակը ձեռնամուխ էր եղել իր ազատագրական նպատակի կատարմանը։ Այդ կապակցությամբ կոմունիստական կուսակցությունը խորհրդային կառավարությունը նրան հատուկ դիրեկտիվ տվեցին, որի իմաստն էր.

«1. Եվրոպայի ժողովուրդին ազատագրել ֆաշիստական զավթիչներից և նրանց աջակցություն ցույց տալ վերստեղծելու իրենց անկախ ազգային պետությունները։

2. Ազատագրված ժողովուրդներին լիակատար ազատություն վերապահել՝ լուծելու իրենց պետական կառուցվածքի և սոցիալական կարգի հարցը։

3. Միջոցներ ձեռք առնել, որպեսզի պատերազմի գլխավոր հանցագործները, պատերազմի և ժողովուրդների տառապանքների համար մեղավորները խիստ պատիժ կրեն իրենց կատարած ոճրագործությունների համար։

4. Եվրոպայում հաստատել այնպիսի կարգ, որ լրիվ բացառի նոր ագրեսայի հնարավորությունը Գերմանիայի կողմից։

5. Հաստատել Եվրոպայի բոլոր ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական տևական համագործակցություն, որը հիմնված լինի փոխադարձ վստահության ու փոխադարձ օգնության վրա՝ ֆաշիստների կողմից օկուպացված և կողոպտված երկրներում տնտեսությունն ու կուլտուրան վերականգնելու համար»[6]։

Դրան համապատասխան անհրաժեշտություն առաջացավ վերակառուցել, կատարելագործել զորքերի մեջ տարվող գաղափարական-քաղաքական աշխատանքի ձևերն ու մեթոդները, Կարմիր բանակի ազատագրական նպատակի պրոպագանդումը, անձնակազմի ինտերնացիոնալ դաստիարակությունը, քաղաքական զգոնության և կարգապահության բարձրացումը, կազմակերպել և ծավալել քաղաքական-բա-

---

6 «Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմություն», Երևան, 1981, էջ 640—641։

յատրական աշխատանքը տեղական բնակչության շրջանում, օգնել ազատագրված երկրների դեմոկրատական ուժերին և այլն։

Դիվիզիայի քաղբաժինը, գնդերի և մյուս ստորաբաժանումների կուսակցական-քաղաքական աշխատողներն ու հրամանատարները և «Կարմիր դինվոր» թերթը ծավալուն աշխատանք կատարեցին այդ ուղղությամբ։ Կուսակցության կողմից առաջադրված այդ նոր խնդիրները կենսագործելու նպատակով քաղբաժինը մշակել էր հատուկ պլան։ Համաձայն այդ պլանի, քաղբաժինը պարբերաբար կազմակերպում էր պրոպագանդիստների և ագիտատորների սեմինարներ և հրահանգչական դնկուցումներ, անձնակազմի հետ պարապմունքներ և դրույցներ։ Տեղական բնակչության շրջանում քաղաքական-մասսայական աշխատանք էին կատարում քաղբաժնի կողմից առանձնացված քաղաքական աշխատողները և հրամանատարները։ Այսպես, 1944 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ դիվիզիան դեռևս գտնվում էր Մայդանեկի մոտ, նրա շրջակա գյուղերի բնակչության համար նրանք հաճախակի կազմակերպում էին դրույցներ, բացատրում պատերազմի հետ կապված առանձին հարցեր, պատմում Կարմիր բանակի ազատագրական դերի մասին, ցույց տալիս ֆաշիզմի՝ որպես ժողովուրդների ամենավտանգավոր թշնամու էությունը։

Այդպիսի աշխատանքներ շարունակվեցին նաև հետագայում՝ ինչպես հաղթական հարձակումների ճանապարհներին, նույնպես և դադարի պահերին, երբ, այս կամ այն չափով հարկ էր լինում շփվել տեղական բնակչության հետ։ Այդ աշխատանքները տարվում էին մեծ մասամբ թարգմանիչների օգնությամբ։

Կարմիր բանակը պատրաստվում էր վերջնական հարված հասցնել ֆաշիստական բանակին, նրան գլխովին ջախջախել իր հողում և ավարտել պատերազմը, ժողովուրդներին բերել խաղաղություն։ Դա մի վիթխարի խնդիր էր, որի

կատարմանը նա ձեռնամուխ եղավ 1945 թ. հունվարի կեսերին։

Չնայած պատերազմի նախորդ տարիներին ունեցած վիթխարի մարդկային ու ռազմական տեխնիկայի կորուստներին, 1945 թվականի սկզբին ֆաշիստական բանակը դեռևս իրենից ներկայացնում էր մեծ ուժ։ Նրա կազմում կար 7,476 հազար մարդ, որից 5,343 հազարը գտնվում էր գործող բանակում, ըստ որում նրա գերակշռող մասը՝ 3.100 հազարը կռվում էր արևելյան ռազմաճակատում՝ կարմիր բանակի դեմ ունենալով 28.500 հրանոթ և ականանետ, 3.950 տանկ և 1.960 մարտական ինքնաթիռ[7]։

Ֆաշիստական այդ բանակի դեմ 1945 թ. հունվարյան հարձակման ժամանակ խորհրդային զինված ուժերը ռազմաճակատում ունեին մոտ երկու անգամ ավելի անձնակազմ, 3 անգամ ավելի հրանոթ, ականանետ, տանկ և ինքնագնաց հրանոթ, 7 անգամ, ավելի մարտական ինքնաթիռ[8]։

Կարմիր բանակի հարձակումը նախատեսված էր 1945 թ. հունվարի վերջերին։ Սակայն ֆաշիստական բանակը արևմտյան ճակատում հարձակման անցնելով, Արդեններում ծանր վիճակ էր ստեղծել մեր դաշնակիցների զորքերի համար։

Այդ դրությունից դուրս գալու նպատակով Անգլիայի պրեմիեր մինիստր Չերչիլը դիմել էր Խորհրդային Միության օգնությանը։ Ընդառաջելով մեր դաշնակիցների այդ խնդրանքին, Գերագույն Գլխավոր Հրամանատարության հրամանով մեր զորքերը ժամկետից շուտ սկսեցին իրենց հարձակումը, որը ծավալվեց մեծ արագությամբ և նպաստեց մեր դաշնակիցների զորքերին՝ դուրս գալու ծանր վիճակից։

Առաջինը հարձակումը սկսեցին ուկրաինական առաջին

---

7 Великая Отечественая война Советского Союза *1941—1945*», краткая история էջ *460*։

8 Նույն տեղում։

ռազմաճակատի զորքերը՝ 1945 թ. հունվարի 12-ին։ Մի քանի օրում մեկը մյուսի հետևից հարձակումներ սկսեցին մյուս ռազմաճակատները։ Կարմիր բանակի հաղթանակական հարձակումը շուտով ընդգրկեց ամբողջ ռազմաճակատը՝ Բալթյան ծովից մինչև Կարպատները՝ 1200 կիլոմետր ճակատով։

Բելոռուսական առաջին ռազմաճակատը հարձակումը սկսեց հունվարի 14-ին։ Մինչև այդ, նրա բոլոր բանակներն ու դիվիզիաները ընդունել էին համապատասխան մարտական դիրքեր և լիովին պատրաստվել հարձակմանը։ Դրանց թվումն էր նաև 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան։ Նրա 531-րդ հրետանային գունդը նախորոք Պուլավիի հենակետ էր փոխադրվել և դեկտեմբերի վերջերին մարտական դիրքեր գրավել։

1945 թ. հունվարի 5-ին դեպի ռազմաճակատի առաջավոր դիծը սկսեցին շարժվել 89-րդ դիվիզիայի բոլոր գնդերն ու հատուկ ստորաբաժանումները։ Քանի որ տեղաշարժումն իրագործելու էր ռազմաճակատի մերձակա գոտում, խնդիր էր դրված այն կատարել խիստ քողարկված պայմաններում, գլխավորապես գիշերները։ Եվ իրոք, զորամասերի մարտական երթը կատարվեց միայն գիշերներին՝ հունվարյան սառնամանիքների պայմաններում։ Ռոդոմ քաղաքի ուղղությամբ անցնելով լայնահորդ Վիսլա գետի կամուրջը, դիվիզիայի զորամասերը մարտական երթը ավարտեցին Պուլավիի հենակետում։ Շնորհիվ դիվիզիայի և զորամասերի հրամանատարության խելամիտ ղեկավարության, այդ դժվարին երթը անցավ հաջողությամբ, առանց կորուստների։

Շուտով դիվիզիայի բոլոր զորամասերն ու ստորաբաժանումները գրավեցին մարտական դիրքերը և ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին սպասում էին հարձակման հրամանի։

Բարձր էր անձնակազմի մարտական ոգին։ Բոլորը, շարքային ռազմիկներից սկսած մինչև բարձր հրամանատարները, լի էին մարտական կորովով ու վճռականությամբ՝

հաջողությամբ ծավալելու գրոհը եղբայրական լեհ ժողովրդին ամբողջությամբ ազատագրելու, ֆաշիստական Գերմանիայի սահմանները մտնելու, այնտեղ նրան պլխովին ջախջախելու համար: Ռադիոն արդեն հաղորդել էր ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի հունվարի 12-ին սկսած հարձակման հաջողությունների մասին, որը էլ ավելի բարձրացրեց անձնակազմի մարտական ոգին:

Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի հունվարի 14-ի վաղ առավոտյան սկսած հրետանային հուժկու նախապատրաստությունից ցնցվում էր հողը, բոցավառվում երկնակամարը: Քանի որ եղանակը անբարենպաստ էր, այդ օրը մեր ավիացիան գործեց ոչ ամբողջ հզորությամբ: Ճընշելով թշնամու դիմադրությունը, հրետանային կրակի պաշտպանության ներքո մեր տանկային ու մեքենայացված զորամասերը սրընթաց առաջ էին շարժվում: Նրանց հետևից արագ կերպով առաջ էր շարժվում հետևակը: Ջնայած թշնամու կատաղի փորձերին՝ կանգնեցնելու մեր զորքերի առաջընթացը, այդ նրան չհաջողվեց: Ռազմաճակատի մի շարք հատվածներում ֆաշիստների պաշտպանության դիծը ճեղքված էր, որը գնալով, ավելի ու ավելի ընդարձակվում էր: Այդ հնարավորություն տվեց մեր զորքերին հաոձակորդական գործողությունները ծավալելու լայն մասշտաբով:

Հաճելի է նշել, որ հունվարի 14-ի հրետանային նախապատրաստությանը ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին 89-րդ Թամանյան դիվիզիայի հրետանավորները և ականաձիգները, որոնց գործողությունները դեկավարում էր փոխգընդապետ Խ. Պայազատյանը: Իրենց դիպուկ կրակով մասնավորապես աչքի ընկան փոխգնդապետ Տիննակու, մայորներ Ղահրամանյանի, Բ. Խաոատյանի, Կապիտան Տ. Սիմոնյանի, լեյտենանտ Ս. Սարգսյանի և մի շարք այլ ստորաբաժանումների հրետանավորները և ականաձիգները:

Հարձակման առաջին չորս օրում ռազմաճակատի զորքերը ազատագրեցին եղբայրական Լեհաստանի քա-

զաքներ և հարյուրավոր գյուղեր։ Նրանք հաղթականորեն առաջ էին ընթանում դեպի արևմուտք։

89-րդ դիվիզիայի հետևակային զորամասերը գտնվում էին առաջ շարժվող զորքերի երկրորդ էշելոնում։ Հունվարի 18-ին բարձր հրամանատարությունից հրաման ստացվեց հարձակումը շարունակել առաջին էշելոնի զորքերի շարքում։ Նույն օրը դիվիզիայի բոլոր զորամասերը արդեն առաջին գծում էին։ Դիվիզիան գործում էր առաջին բելոռուսական ռազմաճակատի ձախ թևում գտնվող 33-րդ բանակի մեջ, նրա ձախ թևում։ Այսպիսով, դիվիզիան փաստորեն գտնվում էր առաջին բելոռուսական և առաջին ուկրաինական ռազմաճակատների միացման սահմանում։ Այդ ավելի էր բարդացնում նրա խնդիրը, քանի որ բանակի (ուստի և ռազմաճակատի) ձախ թևի ապահովությունը նրան էր վստահված։

Բանակի մյուս զորամասերին համընթաց, դիվիզիան առաջ էր շարժվում, իրագործելով իր մարտական խնդիրը։ Քանի որ Կարմիր բանակի հուժկու հարվածների շնորհիվ ֆաշիստական բանակի ռազմաճակատը կտրված էր, ապա Բշնամին ի վիճակի չէր առաջ ընթացող մեր զորքերին ամենուրեք դիմադրել ճակատով։ Ուստի նա հատուկ ուշադրություն էր դարձնում մեր զորքերին թևային կամ թիկունքային հարվածներ հասցնելու վրա։ Մեծ մասամբ իրարից կտրված նրա զորամիավորումները դեպի արևմուտք էին նահանջում ինչպես կարողանում էին։ Շատ հաճախ ընթացքի ժամանակ հանդիպելով Կարմիր բանակի զորքերին, նրանց հետ մարտի էին բռնվում՝ ճանապարհ բացելու, դեպի արևմուտք փախչելու համար։ Իսկ մեր զորքերը խնդիր ունեին արագ կերպով շարժվել դեպի արևմուտք, դեպի ֆաշիստական Գերմանիայի սահմանները։ Ուստի ոչ բոլոր դեպքերում էր նպատակահարմար կանգնեցնել առաջընթացը և ղբաղվել ֆաշիստական զորքերի առաջին խմբերի հետ մարտի բռնվելու։ Բայց, որտեղ անհրաժեշտ էր, իհարկե, այն տեղի էր ունենում հատուկ հնկողությամբ, պաշտպանելով թևերը և

թիկունքը, հարձակվող մեր զորքերը, արագ կերպով առաջ էին ընթանում։

Մարտական երթով և մերթ-մերթ մարտի բռնվելով, մեր դիվիզիայի զորամասերը, ռազմաճակատի մյուս զորքերի հետ միասին, օրական անցնում էին 30—40, երբեմն 45—50 կիլոմետր տարածություն։ Առաջ էինք ընթանում օր ու գիշեր, առանց պատշաճ հանգստի։ Հունվարյան ուժեղ սառնամանիքներն ավելի էին դժվարացնում մեր առաջընթացը։ Իմանալով առաջին բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, Խորհրդային Միության մարշալ Գ. Կ. Ժուկովի հրամանը, որ հարձակումը չի կարելի ընդհատել, որ արագ կերպով պետք է առաջ շարժվել դեպի արևմուտք, դիվիզիայի ամբողջ անձնակազմը, հաղթահարելով հոգնածությունը և սառնամանիքի հետ կապված դժվարությունները, հաստատ վճռականությամբ առաջ էր ընթանում։ Դիվիզիայի հրամանատար գնդապետ-մայոր Ն. Սաֆարյանը, նրա տեղակալ, գնդապետ Գ. Բլբուլյանը, քաղբաժնի պետ Ե. Դավիդովը[9] և դիվիզիայի շտաբի ու քաղբաժնի աշխատողները, մշտապես գտնվում էին զորամասերում, զրույցներ ունենում անձնակազմի հետ և օգնում նրանց առջև դրված մարտական խնդիրների կատարմանը։

Երբ դիվիզիայի զորքերը, Կոշմին քաղաքից ոչ հեռու, մոտեցել էին Վարտա գետին, հետախուզությունը հաղորդեց, որ թշնամին պատրաստվում է այդ գետի խոշոր կամուրջի մոտ կանգնեցնել մեր հարձակումը, իսկ եթե այդ չհաջողվի, ապա պայթեցնել այն։ Գնդապետ-մայոր Ն. Սաֆարյանի հրամանով արագ կերպով ստեղծվեց գրոհային հատուկ ջոկատ, որի հրամանատարությունը հանձնարարվեց մայոր Հ. Կ. Դեբեմյանին։ Քաղբաժնի կողմից այդ ջոկատին ամրացվեց

---

9 Դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Գ. Հակոբյանը 1944 թ. հունիսին փոխադրվեց Մոսկվա՝ այլ աշխատանքի։ Նրան փոխարինեց փոխգնդապետ Ե. Դավիդովը, որը մինչև այդ աշխատում էր որպես քաղբաժնի պետի տեղակալ։

մայոր Ղ. Մ. Դալլաքյանը։ Ջոկատի առջև մարտական խնդիր դրվեց սրընթաց գրոհով հետապնդել թշնամուն և ապահովել այդ խոշոր ջրային պատնեշի կամուրջի անվտանգությունը։ Իր մտածված գործողության և քաջագործության շնորհիվ ջոկատը հաջողությամբ կատարեց մարտական խնդիրը։

Այդ կապակցությամբ մայոր Ա. Կ. Դեմուրյանի պարգևատրման թերթիկում ասված է, որ ջոկատը երեք ժամ ծանր մարտեր է մղել թշնամու դեմ, որի ընթացքում ոչնչացրել է նրա ականանետային մարտկոցը և 200 զինվոր։ Ջոկատը փրկել է կամուրջը և ակտիվ մասնակցել Կոշմին քաղաքի ազատագրմանը։ Այդ մարտերում ջոկատի հրամանատարը ցուցաբերել է նվիրվածություն և խիզախություն։ Դրա համար նա արժանացել է մարտական Կարմիր դրոշի շքանշանի[10]։

Իսկ մայոր Ղ. Մ. Դալլաքյանի պարգևատրման թերթիկում ասված է, որ անձնական օրինակով նա ջոկատի ռազմիկներին ոգևորել է ֆաշիստների դեմ մղված մարտում և ապահովել դժվարին մարտական խնդրի կատարումը[11]։ Դրա համար նա արժանացել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանի։

Լեհաստանի տարածքում առաջ ընթանալով, դիվիզիայի զորամասերը մի շարք տեղերում հանդիպեցին թշնամու նահանջող զորքերի խմբավորումներին և ուժեղ մարտերի մեջ մտան նրանց հետ։ Այդպիսի մարտերից մեկը տեղի ունեցավ հունվարի 18-30-ը Ռուսկի Բրուդ բնակավայրի մոտ։

Դիվիզիայի զորամասերը առաջ էին շարժվում դեպի Կալիշ քաղաքը։ Հետախուզությունը հաղորդեց, որ դիմավոր ճանապարհի ձախ կողմում, անտառի խորքում գտնվում են ֆաշիստական զորամասեր և ռազմական տեխնիկա։ Բայց դեռևս չէր պարզված, թե դրանք ինչ ուժ ներկայացնող զո-

---

10 Боевой путь..., էջ 488։

11 Նույն տեղում, էջ 489։

րամասեր էին։ Անտառում այդ վայրերում քանի որ այլ ճանապարհներ չկային, նրանց փախուստը պետք էր տեղի ունենար այն ճանապարհով, որով առաջ էր ընթանում մեր դիվիզիան։ Իսկ դիվիզիայի զորամասերը անցել էին բավական առաջ։ Ուրեմն Թշնամու այդ զորախմբավորումը պետք է շարժվեր մեր դիվիզիայի հետքերով, որը սպառնալիք էր ըստեղծում նրա համար։

Հաշվի առնելով այդ, Ն. Սաֆարյանը հրամայեց 390-րդ հրաձգային գնդին [հրամանատար գնդապետ, Ե. Կարապետյան], 400-րդ հրաձգային գնդի առաջին գումարտակին և 531-րդ հրետանային գնդի մեկ դիվիզիոնին՝ ոչնչացնել այդ խմբավորումը։ Իսկ մյուս զորամասերը շարունակերցին իրենց առաջընթացը։ 390-րդ գնդի հետ էր նաև դիվիզիայի հրամանատարի տեղակալ, անցած մարտերում իր քաջագործություններով փառաբանված գնդապետ Գ. Բլբուլյանը։ Այստեղ մարտական գործողությունները նա էր ղեկավարում։

Շրջապատելով անտառը, մեր այդ զորամասերն սկսեցին իրենց մարտական գործողությունները Թշնամու խմբավորումը ոչնչացնելու համար[12]։

Երբ սկսեցին գործել մեր հրանոթները, ականանետները, գնդացիրները և զենքի մյուս տեսակները, Թշնամու կուտակված ուժերը հանկարծակիի եկան, բացահայտվեցին և փրկության համար դիմեցին կատաղի դիմադրության։ Նրանք գործի դրեցին տանկերը և ինքնագնաց հրանոթները։

Մարտական գործողությունների ընթացքում հետախուզական լրացուցիչ տվյալներով և վերցված գերիների ցուցմունքներով պարզվեց, որ այդ խմբավորման մեջ էին առաջին ուկրաինական ռազմաճակատում հունվարի 12-ին ըսկսված հարձակման ժամանակ գերմանական ջախջախված մի քանի դիվիզիաների մնացորդները, որոնք նահանջել և

---

12 Ինչպես հետո պարզվեց, այդ խմբավորման անձնակազմը հասնում էր 5000-ից մինչև 7000-ի։ Նա ուներ 60 տանկ, 20 ինքնագնաց հրանոթ, 500 ավտոմեքենա և այլն։ Տես Боевой путь..., էջ 461։

կուտակվել էին Ռուսկի Բրուդ բնակավայրի մոտի անտառներում։

Այդպիսի խմբավորման ոչնչացումը, իհարկե հեշտ գործ չէր։ Բայց այն պատվով կատարեցին Թամանցիները։ Ծալվված կատաղի մարտերի ընթացքում 390-րդ գունդը, 400-րդ և 531-րդ գնդերի վերոհիշյալ ստորաբաժանումները հերոսական սխրանքներ կատարեցին, ոչնչացնելով այդ խմբավորումը և թիկունքից ապահովելով դիվիզիայի հետագա առաջընթացը։

Շրջապատումից դուրս գալու նպատակով Բշնամին փորձում էր ճեղքել 390-րդ գնդի երկրորդ գումարտակի մարտակարգերը։ Սակայն գումարտակի ռազմիկները, նրա քաջարի հրամանատար մայոր Գ. Բադալյանի ղեկավարությամբ ուժգին հակահարված են հասցնում ֆաշիստներին և հետ շպրտում։ Բշնամու տանկերին, ինքնագնաց հրանոթներին ու կենդանի ուժին դիպուկ հարվածներ էին հասցնում ավագ լեյտենանտներ Բ. Խաչյանի և Թոխյանի ականաձիգներ Օ. Կուրղինյանը, Ա. Օրդոյանը, Ա. Եսայանը, Պ. Վարդանյանը, Ս. Սևոյանը և ուրիշներ։

Բշնամու դեմ հերոսաբար էր մարտնչում ավագ Կ. Սարուխանյանի հրանոթի անձնակազմը։ Այդ մասին «Կարմիր ղինվոր» թերթի փետրվարի 19-ի համարում տպագրվեց լեյտենանտ Հր. Հովակիմյանի թղթակցությունը, որտեղ ասված էր.

«Մեր զորքերի կողմից շրջապատված հիտլերականները գլուխները կորցրած, ելք էին փնտրում դուրս գալու օղակումից Բշնամական 4 ավտոմեքենա հանդիպեցին ավագ Կ. Սարուխանյանի հրամանատարությանը ենթակա հակատանկային հրանոթի անձնակազմին և մարտի բռնվեցին։ Մարտը տևեց մեկ ժամ։ Անձնակազմի բոլոր մարտիկները, թե հրացաններով և թե հրանոթով սկսեցին հերոսաբար կռվել։ Նրանք իրենց դիպուկ հարվածներով ոչնչացրին տասնյակ հիտլերականների և շարքից դուրս հանեցին Բշնամական 3 մեքենա։

Վիրավորվեցին Սարուխանյանի մարտիկներից մի քանիսը։ Սարուխանյանն առանց իրեն կորցնելու, ուղիղ նշանառությամբ շարքից հանեց թշնամու վերջին մեքենան։ Կենդանի մնացած հիտլերականները դիմեցին հակագրոհի։ Հայրենասեր մարտիկը անմիջապես սեղմվեց հողին ու դիմեց խորամանկ միջոցի։ 30—40 քայլ էր մնում, որ հիտլերականները հասնեին Սարուխանյանին, երբ վերջինս անմիջապես նետեց նռնակն ու բաց արեց ավտոմատային կրակ։

Հայրենասեր Սարուխանյանի այդ անօրինակ սխրագործությունը ոգեշնչում է մեր բոլոր մարտիկներին ու օֆիցերներին»։

Հակառակորդի գրոհի ժամանակ համարձակ ու անվախ էր գործում կոմերիտական գնդացրորդ Ա. Ռուդենկոն։ Սկզբում նա թշնամուն հարվածում էր իր գնդացրի անվրեպ կրակով, շարքից հանելով տասնյակ ֆաշիստների։ Երբ փամփուշտները վերջացան, նա գործի դրեց նռնակները։ Իսկ երբ այլևս նռնակ չկար, նա թշնամու վրա կրակ տեղաց մարտի դաշտում ձեռք բերած ուրիշ զենքով։ Թշնամու դեմ այդպես էին մարտնչում նաև Ռուդենկոյի մարտական ընկերները։ Դրա շնորհիվ հակառակորդի գրոհը հետ շպրտվեց։

Հակառակորդի զինվորների մի մեծ խումբ ձգտում էր անցնել ջրային բնագիծը և միանալ իրենց հիմնական ուժերին։ Այդ ջոկատի ոչնչացումը հանձնարարվում է ավագ լեյտենանտ Պետրոսովի ստորաբաժանմանը, որը հաջողությամբ և առանց կորուստների կատարում է մարտական խնդիրը։ Թշնամու խումբը գլխովին ոչնչացվում է։

Դրոհելով, ֆաշիստական տանկերը խրվել էին մեր ստորաբաժանումներից մեկի մարտակարգերը։ Լուրջ վտանգ էր ստեղծվել։ Ստորաբաժանման ամբողջ անձնակազմը հերոսաբար դիմադրում էր։ Հակատանկային նռնակներով նրանք շարքից հանեցին մի քանի տանկ։ Սակայն օգնության են հասնում թշնամու նոր տանկեր։ Ստորաբաժանման հրա-

մանատարը շարքից դուրս է գալիս։ Կուսակազմակերպիչ Ս. Դավթյանը հրամանատարությունը վերցնում է իր ձեռքը։ Անձնական օրինակով նա ոգևորում է ստորաբաժանման անձնակազմին և հետ մղում հակառակորդի հարձակումը, դերևլով տասնյակ հիտլերականների։

Թշնամու դեմ հերոսաբար էին մարտնչում բոլոր ստորաբաժանումները, բոլոր ռազմիկները։ Մարտերի առաջին օրը թշնամին մարդկային նաև նյութական մեծ կորուստներ ունեցավ։ Կորուստներ ունեցան նաև մեր զորամասերը։ Անտեղի զոհերից խուսափելու նպատակով, մեր հրամանատարությունը բարձրախոսով գերմանացիներին առաջարկեց անձնատուր լինել։ Սակայն այդ առաջարկը մերժվեց։

Մարտերը շարունակվեցին ավելի ուժգին թափով։ Թշնամին ձգտում էր դուրս գալ շրջապատումից և ճանապարհ բաց անել դեպի արևմուտք։ Իսկ թամանցիները փակել էին նրանց ճանապարհը և ուժգին հարվածներ էին հասցնում։ Հունվարի 18-ին 7 տանկերի և 12 ինքնագնաց հրանոթների աջակցությամբ թշնամին գրոհ սկսեց 390-րդ գնդի մարտակարգերի վրա։ Ծավալվում են ուժեղ մարտեր։ Այդ մարտերում մահացու վերք ստացավ հայ ժողովրդի քաջարի զավակ, 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Գ. Բլբուլյանը։ Զոհվում է նաև 531-րդ հրետանային գնդի հրամանատար, ռուս ժողովրդի արժանավոր զավակ, գնդապետ Մ. Տինակին։ Հերոսաբար զոհվում են նաև մի շարք հրամանատարներ ու շարքայիններ, այդ թվում՝ Մելքումովը, Ակոպովը և ուրիշներ։

Ծանր վիրավորում է 390-րդ գնդի հրամանատար գընդապետ Ե. Կարապետյանը, որը մեծ հաջողությամբ ղեկավարում էր գնդի մարտական գործողությունները։ Գնդի հրամանատարությունն իր վրա է վերցնում Ե. Կարապետյանի տեղակալ, փոխգնդապետ Ս. Ռամազյանը։

Հաջողությամբ ղեկավարելով մարտական գործողությունները, շուտով Ս. Ռամազյանը նույնպես վիրավորվում է։ Այնուհետև գնդի ղեկավարությունն իր ձեռքն է վերցնում

նրա շտաբի պետ, մայոր Օգանովը, որին մեծ չափով օգնում է շտաբի պետի տեղակալ մայոր Պ. Բոշնաղյանը։ Գլխավորելով հատուկ ջոկատի մարտական գործողությունները, Պ. Բոշնաղյանը հետ է շպրտում թշնամու գրոհը, որն ուղղված էր գնդի շտաբի վրա։

Այդ ծանր մարտերի ժամանակ մեծ գործ կատարեցին գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, փոխպրնդապետ Ն. Մեժլումյանը, դիվիզիայի քաղբաժնի հրահանգիչ Ն. Շահվերդյանը, գնդի կուս. կազմակերպիչ Ս. Թանգյանը և ամբողջ հրամանատարական-քաղաքական կազմը։ Նրանք իրենց անձնական օրինակով ոգեշնչում էին ռազմիկներին։ Այդպիսի գործ կատարեցին նաև 531-րդ հրետանային գնդի դիվիզիոնի և 400-րդ հրաձգային գնդի առաջին գումարտակի հրամանատարությունը և քաղաշխատողները։

Հունվարի 19-ին տեղի ունեցած համառ մարտերում թշնամուն հաջողվեց հիմնովին ճնշել թշնամու դիմադրությունը և մարդկային ու տեխնիկայի մեծ վնասներ հասցնել նրան։ Ռուսկի Բրուդի մոտ գտնվող ֆաշիստական խմբավորման հիմնական ուժերը ջախջախվում են, իսկ նրա մնացորդները փախչում անտառները, որոնք հետագայում գերի են հանձնվում։

Այդ մարտերում հերոսաբար էր գործում 390-րդ գնդի հրամանատար, փոխգնդապետ Ե. Ա. Կարապետյանը։ Գնևերալ-մայոր Ն. Սաֆարյանի ստորագրած նրա պարգևատրման թերթիկում ասված է, որ «45 թ. հունվարի 18-ին Ռուսկի Բրուդի շրջանում հակառակորդի շրջապատված խմբավորման ոչնչացման համար մղված մարտերում ընկ. Կարապետյանը ցուցաբերեց բացառիկ քաջություն և խիզախություն։ Իմանալով գերմանացիների խմբավորման մասին, նա անմիջապես որոշում ընդունեց շրջապատել ու ոչնչացնել խմբավորումը։ Երբ հակառակորդը գերազանցող ուժերով անցավ հակագրոհի, նա անձամբ ղեկավարեց 3-րդ հրաձգային գումարտակի մարտը։ Ծանր վիրավորվե-

լով, նա շարունակում է ղեկավարել մարտը և միայն հարմար դիրքերը գրավելուց հետո դուրս եկավ շարքից»[13]։

Այդ քաջագործության համար փոխգնդապետ Ե. Ա. Կարապետյանը պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով։

Ֆաշիստական այդ խոշոր խմբավորման ջախջախման գործում թամանցիների մարտական սխրանքներին բարձր գնահատական է տվել 16-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Խորբովոլսկին։ Ինչպես նշել ենք, այդ ժամանակ 89-րդ դիվիզիան գործում էր այդ կորպուսի կազմում։ Նա գրել է, որ մինչև 6000 անձնակազմ ունեցող գերմանական խմբավորման ոչնչացման համար Ռուակի Բրուդի անտառում առանձնապես ուժեղ կռիվներ են տեղի ունեցել 45 թ. հունվարի 17—19-ին։ Այստեղ 390-րդ հրաձգային գունդը, 531-րդ հրետանային գնդի մեկ դիվիզիոնի պաշտպանությամբ գլխովին ջախջախել է համառ դիմադրող հակառակորդին։ Միայն մեկ օրվա՝ 45 թ. հունվարի 18-ի ընթացքում, 390-րդ գունդը հետ է մղել հակառակորդի կատաղի 8 հակագրոհները, որոնց մասնակցել են 7 տանկ և 12 ինքնագնաց հրանոթ։

Այնուհետև անցնելով վճռական գրոհի, 390-րդ գունդը կոտրում է հակառակորդի դիմադրելու ամեն տեսակի ընդունակությունը։ Շրջապատված խմբավորումը ոչնչացվում է[14]։

Նույն փաստաթղթում նշված է, որ մարտի դաշտում թշնամին թողել էր մինչև 1800 զինվորի և սպայի դիակ։ Հրանոթային կրակով այրվել և ոչնչացվել էր 750 ավտոմեքենա՝ տարբեր բեռներով (դրանք գլխավորապես զորամասերի և միավորումների շտաբների ավտոմեքենաներ էին), 18 ինքնագնաց հրանոթ, 5 տանկ, 22 քարշակ, ավելի քան 600 սայլակ։ Գերի էր վերցվել գերմանական ավելի քան

---

13 Боевой путь..., էջ 660։

14 Боевой путь..., էջ 526։

500 զինվոր և սպա, ռազմավար ավտոմեքենա՝ 900, մոտոցիկլ՝ 80, տարբեր տրամաչափի հրանոթներ՝ 50, սայլակ տարբեր բեռներով-1000 և այլն[15]։

Այդ մարտերում զգալի էին նաև թամանցիների մարդկային և նյութական կորուստները։ Միայն 390-րդ գունդը հունվարի 20-ին ունեցավ 39 զոհ և 100 վիրավոր։ Ինչպես նշեցինք նույն ամսի 18-ին մահացու վիրավորվել էր գնդապետ Գ. Բլբուլյանը և զոհվել գնդապետ Տինսկին՝ 531-րդ հրետանային գնդի հրամանատարը[16]։

Թշնամու այդ խմբավորման ջախջախումով ապահովվեց 89-րդ դիվիզիայի թիկունքը, որը հաջողությամբ առաջ էր ընթանում դեպի Ֆաշիստական Գերմանիայի տերիտորիան։ Իսկ խմբավորման դեմ պայքարած զորամասերը՝ 390-րդ հրաձգային գունդը 531-րդ հրետանային գնդի մեկ դիվիզիոնը և 400-րդ հրաձգային գնդի առաջին գումարտակը, կարգի բերելով իրենց շարքերը, հունվարի 23-ին սկսեցին մարտական նրբը՝ հասնելու դիվիզիայի հիմնական ուժերին։ Իսկ դիվիզիան այդ 4—5 օրում արդեն բավականին հեռացել էր, այնելով ավելի քան 150 կիլոմետր։ Սակայն հետ մնացած այդ զորամասերին հետագա առաջընթացի ճանապարհները լիովին պարզ չէին։ Ըստ ռազմաներթի քարտեզի, նրանց հայտնի էր, որ պետք է շարժվեն մինչև լեհական Քալիշ քաղաքը, որը ազատագրվեց հունվարի 23-ին, իսկ այնուհետև թե ո՞ւր էին գնալու, պարզ չէր, մանավանդ որ ռադիո կապը դիվիզիայի հետ ընդհատված էր։

Այդ հանգամանքը դիվիզիայի հրամանատարությանը, մասնավորապես գեներալ մայոր Ն. Սաֆարյանին խիստ անհանգստացնում էր։ Եվ նա որոշեց Կալիշից դեպի արևմուտք դիվիզիայի անցած ուղու և հետագա առաջընթացի ուղղության քարտեզը շտապ կերպով ուղարկել հետ մնա-

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում, էջ 463։

ցած զորամասերին, որպեսզի նրանք առանց ժամանակ կորցնելու, արագորեն առաջ շարժվեն և հասնեն արդեն Գերմանիայի սահմաններին մոտեցած դիվիզիայի հիմնական ուժերին։

Հունվարի 24-ի առավոտյան գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը և դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Ե. Դավիդովն սույն տողերի հեղինակին կանչեցին դիվիզիայի հրամանատարական կետը։ Նվեր Գեորգևիչը բացատրեց հետ մնացած զորամասերի իրավիճակը, նրանց՝ արագորեն դիվիզիային հասնելու կարևորությունը և ավելացրեց, որ Կալիշից հետո դիվիզիայի անցած ուղու և հետագա առաջրնթացի ուղղության քարտեզը պետք է շտապ կարգով հասցնել հետ մնացած այդ զորամասերին։ Եվ հրամանի առնով նա ասաց, որ այդ խնդրի կատարումն հանձնարարում են ինձ։

Կես ժամից հետո դիվիզիայի շտաբից ստանալով այդ քարտեզը, ապրանքատար ավտոմեքենայով և երկու ավտոմատավորների ուղեկցությամբ, առանց ժամանակ կորցնելու, շարժվում ենք դեպի հետ՝ Կալիշ քաղաքը, որպեսզի հետ մնացած զորամասերը չանցնեն այնտեղից և չկորցնենք նրանց հետքերը։ Պետք է ասել, որ ճանապարհը այնքան էլ ապահով չէր, քանի որ նրանից ոչ հեռու, իսկ որոշ տեղերում նույնիսկ նրա վրայով դեպի արևմուտք էին փախչում անտառներում թափառող ֆաշիստական ջախջախված զորքերի մնացորդները։ Այդ պատճառով միշտ մարտական վիճակում էինք։ Շարժվում էինք առանց հանգստի։ Քանի որ ճանապարհները շատ տեղերում քանդված էին, դժբախտաբար այդ շարժումը ոչ ամենուրեք էր արագ կատարվում։ Այդ մեզ բավական անհանգստացնում էր։

Սակայն ամեն ինչ անցավ բարեհաջող։ Ճանապարհին ոչինչ չպատահեց։ Հունվարի 25-ի ցերեկը, Կալիշից արևելք մենք հանդիպեցինք հետ մնացած մեր 390-րդ գնդին և մյուս զորամասերին։ Այժմ արդեն պարզ էր նրանց հետագա առաջրնթացի ուղին։ Վստահ ու արագ կերպով նրանք

սկսեցին շարժումը դեպի արևմուտք հասնելու դիվիզիայի հիմնական ուժերին։ Այդ տեղի ունեցավ մի քանի օրից հետո, ֆաշիստական Գերմանիայի բուն տերիտորիայում՝ Յուլիխաու քաղաքի մոտ։

Եղբայրական Լեհաստանի տերիտորիայում առաջընթացի ժամանակ մեր դիվիզիայի զորամասերը մի քանի այլ տեղերում նույնպես հանդիպեցին ֆաշիստական նահանջող զորքերի խմբավորումներին և մարտի բռնվեցին նրանց հետ։ Հակահարված տալով և մեծ վնասներ պատճառելով նրանց, դիվիզիան, սակայն, չէր կանգնեցնում իր մարտական երթը։ Ռազմաճակատի մյուս զորքերի հետ միասին նա ձգտում էր արագ կերպով հասնել լայնահուն Օդերի ջրային բնագծերին, թույլ չտալ, որ թշնամին ամրանա նրա ափերին և բաց անել ճանապարհը դեպի ֆաշիստական պետության մայրաքաղաք Բեռլին։

Կոմունիստների, դիվիզիայի ամբողջ անձնակազմի հետ միասին, ինչպես միշտ, Լեհաստանի ազատագրման համար նույնպես անձնվիրաբար էին պայքարում Թամանցի կոմերիտականները։ Այս տեսակետից ուշագրավ է դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Ե. Կ. Դավիդովի զեկուցագիրը ուղղված 16-րդ հրաձգային կորպուսի քաղբաժնի պետին։ Այն պատմում է 1945 թ. հունվարին Վիսլայից մինչև Օդեր տեղի ունեցած հարձակողական մարտերում կոմերիտականների հերոսական սխրանքների մասին[17]։

Հիշատակենք մի քանի փաստ.

Մարտի թեժ պահին 526-րդ գնդի 2-րդ վաշտի գնդացրորդը զոհվում է։ Նրան անմիջապես փոխարինում է վաշտի կոմերիտական կազմակերպիչ Սամսոն Մուսախանյանը և շարունակում անընդմեջ կրակը թշնամու դեմ, կոմերիտականներին կոչ է անում գրոհել նրա դիրքորների վրա։ Միայն այդ մարտերում Սամսոնը ոչնչացնում է 10 ֆաշիստ։ Դումարտակի կապավոր, կոմերիտական, կարմիր-

17 Боевой путь..., էջ 479—482։

բանակային Վլադիմիր Դրոզդովսկին Ռուսկի Բրուդում տեղի ունեցած մարտերում, թշնամու ուժեղ կրակի տակ, գործելով խիզախ կերպով, ապահովում է մշտական կապը և մարտական խնդրի կատարումը։ Մի խումբ ռազմիկների հետ գնալով հետախուզության, նա կարևոր տվյալներ է բերում թշնամու կրակային կետերի մասին։

Նույն Ռուսկի Բրուդում, թշնամին գրոհում է գնդացրային չվաշտի վրա։ Կոմերիտականները Նիկոլայ Ստավրովը, որն առաջին անգամն էր մասնակցում կռվի, առաջինը գնաց գրոհի և իր հետևից տարավ մյուսներին։ Վիրավորվելով, նա դուրս չի գալիս մարտադաշտից։ Մնում է մինչև թշնամու գրոհը հետ մղելը։

Զորամասերի ու ստորաբաժանումների կոմերիտական կազմակերպություններն անդադրում աշխատանք էին կատարում մարտերում աչքի ընկած երիտասարդներին իրենց շարքերն ընդգրկելու համար։ Եվ հարյուրավոր խիզախներ համալրում էին նրա շարքերը։ Նրանք փոխարինում էին իրենց զոհված ընկերներին։

Շատ էին քաջարի կոմերիտականները։

33-րդ բանակի 16-րդ հրաձգային կորպուսի կազմում դիվիզիան իր դժվարին մարտական խնդիրները կատարեց փառքով ու պատվով։ Նա ակտիվ մասնակցություն ունեցավ Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայի, խոշոր քաղաքներ Կալիշի, Տումաշովի, Կոպնիցի, Վոլշտեյնի և այլ քաղաքների ու բազմաթիվ բնակավայրերի՝ ֆաշիստական լծից ազատագրելուն։

Այդ բոլորի համար դիվիզիան երեք անգամ արժանացավ Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալությանը։

Դիվիզիայի հարյուրավոր ռազմիկներ իրենց էյանքը զոհեցին հանուն լեհ ժողովրդի ազատագրության։ Դրանց թվումն են գնդապետներ Գ. Բլբուլյանը, ավագ լեյտենանտներ Ն. Ակոպովը, Գ. Զաքարյանը, լեյտենանտներ Ի. Դավիդովը, Ա. Լևինը, Ս. Բոյաջյանը, շարքայիններ Մ. Միրզո-

յանը, Գ. Ղազարյանը, Մ. Սարգսյանը և շատ ու շատ ուրիշներ, որոնց հիշատակը երախտապարտ լեհ ժողովուրդը պահպանում է սրբությամբ։

Լեհաստանի ազատագրման մարտերում ցուցաբերած սխրանքների համար բազմաթիվ թամանցիներ բարձր հրամանատարության կողմից պարգևատրվեցին կառավարական շքանշաններով և մեդալներով։

Այսպես, 33-րդ բանակի հրամանատարության միայն 1945 թ. փետրվարի 10-ի հրամանով պարգևատրվեց 16 ռազմիկ[18]։ 16-րդ հրաձգային կորպուսի հրամանատարության 1945 թ. փետրվարի 14-ի հրամանով պարգևատրվեց 74 թամանցի[19]։

Խորհրդային զինված ուժերի Պոդոլսկի արխիվում պահվում են Լեհաստանի ազատագրման մարտերում աչքի ընկած շատ թամանցիների պարգևատրման թերթիկները, որոնցով նրանք արժանացել են կառավարական շքանշանների ու մեդալների։ Հիշատակենք նրանցից մի քանիսին։

531-րդ հրետանային գնդի 5-րդ մարտկոցը Ռուսկի Բրուդ բնակավայրի մոտ մարտեր էր մղում։ Թշնամին հարձակման էր անցել։ Հրանոթի անձնակազմը դիմագրում էր նրան։ Նշանառու կարմիրբրանակային կոմունիստ Վաղարշակ Պետրոսի Պետրոսյանը իր դիպուկ կրակով ոչնչացնում է տասնյակ ֆաշիստների և մեծ թվով ռազմական տեխնիկա։ Այդ քաջագործության համար Վ. Պետրոսյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով։ Նա 1923 թ. ծնված էր։ Զորակոչվել էր Ապարանի շրջանի Քուչակ գյուղից[20]։

Մեծ աշխատանք ու սխրանքներ էին կատարում դիվիզիայի կապավորները, որոնց օպերատիվ գործունեու-

---

18 Боевой путь..., էջեր 477—478։

19 Նույն տեղում, էջեր 483—488։

20 Боевой путь..., էջ 472—473։

Բյունը ղեկավարում էր դիվիզիայի կապի պետ, փոխգնդապետ, կոմունիստ Միսակ Համբարձումի Սարգսյանը: Հարձակողական սրընթաց մարտերի ժամանակ, երբ զորամասերը և ստորաբաժանումները կրնկակոխ հետապնդում էին թշնամուն, շնորհիվ կապի պետ փոխգնդապետ Մ. Սարգսյանի առանդուն և խելամիտ աշխատանքի, որը զուգակցում էր անձնական խիզախության հետ, ոչ մի անգամ տեղի չունեցավ կապի խզում դիվիզիայի հրամանատարության, զորամասերի ու ստորաբաժանումների միջև: Դրա շնորհիվ նրանք իրենց մարտական խնդիրը կատարում էին առանց հապաղումների և հաջողությամբ:

Բարձր գնահատվեցին նրա մարտական ծառայությունները: Դրա համար փոխգնդապետ Մ. Հ. Սարգսյանը պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով[21]: Նա 1909 թ. ծնված էր, Կարմիր բանակ էր կանչվել Երևանից:

Հետախույզների մի խումբ, կոմունիստական կուսակցության անդամ, ավագ Ռուբեն Սարգսի Ադամյանի հրամանատարությամբ, Ռուսկի Բրուդի մարտերում խնդիր է ստանում թափանցել հակառակորդի թիկունքը և նրան հարվածել այնտեղից: Այդ խումբը հաջողությամբ կատարում է մարտական խնդիրը: Սրընթաց կերպով թափանցելով ֆաշիստների թիկունքը, հենց այստեղից թամանցիները հարվածում են նրան, մեծ վնասներ պատճառում: Նրանք գերում են 17 ֆաշիստ: Մտնելով բնակավայրը, ուր գտնվում էին թշնամու զինվորները, Ռ. Ադամյանի քաջերը գնդացրով և նռնակներով հարվածում են նրանց, ոչնչացնում մի քանիսին, գերում մեկ կրտսեր սպայի: Մարտի պահին ծանր վրավորվում է մեր մյուս դասակի հրամանատարը: Մեծ օգնություն ցույց տալով այդ դասակին, Ադամյանը նրա վիրավոր հրամանատար լեյտենանտին հանում է մարտի դաշտից և հասցնում մինչև սանիտարական մաս:

---

21 Նույն տեղում, էջ 473:

Այդ քաջագործության համար նա պարգևատրվում է մարտական Կարմիր դրոշի շքանշանով[22]: Նա ծնվել է Լևոնային Ղարաբաղում, 1913 թվականին:

Ռուսկի Բրուդ բնակավայրում թշնամու դեմ ծանր մարտեր էր մղում 390-րդ գունդը: Քանի որ հակառակորդը և քանակով և ռազմական տեխնիկայով այստեղ գերազանցություն ուներ, դժվարին վիճակ էր ստեղծվել գնդի համար: Դրությունն ավելի բարդացավ, երբ ծանր վիրավորվեց գնդի հրամանատար, փոխգնդապետ Ե. Ա. Կարապետյանը: Այս դժվարին պահին համարձակ ու մեծ աշխատանք կատարեց գնդի շտաբի պետ առաջին օգնական, կապիտան Պերճ Սերգոյի Բոշնագյանը: Վտանգի ենթարկելով իր կյանքը, նա մարտի դաշտից դուրս բերեց գնդապետ Ե. Կարապետյանին: Իսկ երբ հակառակորդը գրոհի անցավ, Պ. Բոշնագյանը գնդի հումարատակին համախմբեց և վճռական հակահարված տվեց թշնամուն: Նույնպիսի հակահարված նա կազմակերպեց նաև Օդերի ձախ ափին, փետրվարի 7-ին: Այդ քաջագործությունների համար կապիտան Բ. Ս. Բոշնագյանը պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով[23]: Նա 1920 թ. ծնված է, զորակոչվել է Երևանից:

Ռուսկի Բրուդ բնակավայրի մոտ ծանր մարտեր էին գընում թվով ավելի շատ թշնամու դեմ: Դժվարին իրավիճակ էր ստեղծվել մեր ստորաբաժանման համար: Հրանոթի նշանառու, ավագ սերժանտ, կոմունիստ Ջանիբեկ Սերգեյի Հարությունյանը բաց դիրքերից իր դիպուկ կրակով շարքից հանում է թշնամու երկու զրահամեքենա, 19 ավտոմեքենա և ոչնչացնում գնդացրային 3 կետ ու մոտ մեկ դասակ ֆաշիստ: Մյուս հրանոթների անձնակազմի հետ միասին նա այդ մարտում ևս է մղում թշնամու հինգ հակագրոհ: Այդ քաջագործության համար Ջ. Հարությունյանը պարգևատրվում է

---

22 Նույն տեղում, էջ 474:

23 Նույն տեղում, էջեր 474—475:

Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով[24]։ Նա հերոսի մահով ընկավ Բեռլինի համար մղված մարտերում, և այդպես էլ չվիճակվեց ստանալ շքանշանը։ Զորակոչված էր Ն. Ախտայի (այժմ Հրազդան) շրջանի Արզական գյուղից։

Դիվիզիայի մղած մարտերում կարևոր գործ էր կատարում նրա հետախուզական վաշտը, որի հրամանատարն էր կապիտան, կոմունիստ Սուրեն Արզումանի Սարգսյանը։ Նա բանակ էր կանչվել Ղափանի շրջանից։ Ռուսկի Բրուդ բնակավայրի շրջանում վաշտը թշնամու դեմ կռվում էր 390-րդ գնդի հետ միասին։ Նրա ռազմիկները ոչ միայն կրակային միջոցներով հարվածում էին թշնամուն, այլև հետախուզություն կատարում։ Ստացված տվյալների հիման վրա գունդն ավելի դիպուկ էր հարվածում թշնամուն։

Իր վաշտի մի խումբ ռազմիկների հետ միասին կապիտան Ս. Սարգսյանը 1945 թ. հունվարի 18-ին համարձակ կերպով թափանցում է թշնամու թիկունքը և այնտեղ մարտի բռնվում։ Այդ մարտերում հետախույզները սպանում են 80 և գերի վերցնում 70 հիտլերական։ Ռուսկի Բրուդի շրջանում տեղի ունեցած ամբողջ մարտական գործողությունների ժամանակ հետախուզական վաշտը սպանում է 220 և գերի վերցնում 170 գերմանական զինվոր և սպա։

Այդ հերոսական գործերի համար վաշտի հրամանատար, կապիտան Սուրեն Սարգսյանը պարգևատրվում է մարտական Կարմիր դրոշի շքանշանով[25], իսկ նրա ռազմիկներից շատերը՝ տարբեր շքանշաններով և մեդալներով։

Ինչպես տեսանք, Լեհաստանի ազատագրման մարտերում 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան գործել է 33-րդ բանակի 16-րդ հրաձգային կորպուսի կազմում։

Բարձր է գնահատել այդ կորպուսի հրամանատար, գվար-

---

24 Նույն տեղում, էջեր 475—476։

25 Նույն տեղում, էջ 476։

դիայի գեներալ-մայոր Դոբրովոլսկին դիվիզիայի դերը Լեհաստանի ազատագրման գործում։

1945 թ. ապրիլի 7-ին գրված փաստաթղթում[26], որի տակ ստորագրել է նա, ասված է, որ դիվիզիան ինչպես Լեհաստանում, նույնպես և Գերմանիայում տեղի ունեցած մարտերում ցույց է տվել իր բարձր մարտական վարպետությունը, կայունությունը և խիզախությունը, ատելի թշնամու դեմ մղված պայքարում՝ հանուն հաղթանակի։

Շարունակելով հարձակումը բանակի նախ երկրորդ, ապա առաջին գծում, դիվիզիան ուժեղ մարտեր է մղել ճեղքմանը Վիսլա գետի Պուլավիի հենակետում։

1945 թ. հունվարի 14-ին դիվիզիան ակտիվ մասնակցություն է ունեցել թշնամու ուժեղ ամրացված դիրքերի թշնամու շրջապատված խմբավորումների ոչնչացման համար։ Հատկապես Ռովկի Բրուդ բնակավայրի շրջանում դիվիզիայի զորամասերը ջախջախիչ հարվածներ են հասցրել շրջապատված թշնամական մեծ խմբավորմանը։ Այստեղ հերոսական մեծ գործ են կատարել հատկապես 390-րդ հրաձգային գունդը, 315 հրետանային գնդի 2-րդ դիվիզիոնը և 400-րդ հրաձգային գնդի մեկ գումարտակը...

Դլուտով, Կորշև, Կոպնից և մի շարք այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման մարտերում դիվիզիան հետագա նոր մեծ վնասներ է հասցրել թշնամուն։ Միայն Կոշմին քաղաքի համար մղած 3-օրյա ծանր մարտերում դիվիզիան ոչնչացրել է 300 և գերել 250 ֆաշիստական գինվոր և սպա։ Այստեղից էլ վերցրել է մեծ քանակությամբ ռազմամթերք։

Ջախջախիչ հարվածներ հասցնելով և հետապնդելով հակառակորդին մինչև Օդեր գետը (չհաշված Ռուսկի Բրուդում թշնամուն հասցրած վնասները), 89-րդ դիվիզիան

---

26 Այն կազմված է դիվիզիային Սուվորովի II աստիճանի շքանշանի ներկայացնելու համար։

ոչնչացրել է հակառակորդի ավելի քան 2000 և գերել 500 զինվոր և սպա[27]։

Ահա այսպես գնահատեց 16-րդ կորպուսի հրամանատարը 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի մարտական սխրանքները եղբայրական Լեհաստանի ազատագրման մարտերում։

2. ՄԱՐՏԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ. ՕԴԵՐԻ ՀՆՆԱԿՆԵՐԸ

33-րդ բանակի 16-րդ կորպուսի կազմում հունվարի 28-ին 89-րդ Թամանյան դիվիզիայի զորամասերը մտան ֆաշիստական Գերմանիայի տերիտորիան։ Ինչպես ամբողջ հերոսական կարմիր բանակի, նույնպես և մեր դիվիզիայի ռազմիկները վաղուց էին սպասում այդ բաղձալի օրվան։ Իհարկե, նրանք մինչև այստեղ հասել էին ոչ թե ինչ որ հեշտ ու հանգիստ ճանապարհով, այլ անձնուրաց հերոսական պայքարի, սխրանքների ու բազմաթիվ զոհերի գնով։

Ֆաշիստական պետության սահման մտնելը մի նշանավոր ու անմոռանալի երևույթ էր բոլորիս համար, ամբողջ խորհրդային ժողովրդի համար։ Դա պատմական խոշորագույն իրադարձություն էր։

Ջախջախիչ հարվածներ հասցնելով առաջավոր մարդկության մեծագույն թշնամու զինված ուժերին, կարմիր բանակը մոտեցնում էր մեր մեծ հաղթանակի օրը։ Թեժ մարտերի հետ միասին, որտեղ հնարավոր էր, այդ իրադարձության առթիվ գումարվում էին ռազմիկների թուղթիկ միտինգներ։ Այդ միտինգներում սրտառուչ ելույթներ էին ունենում իրենք ռազմիկները և ուրախության ու հրճվանքի հետ միասին, իրենց վճռական խոսքն ասում հաղթանակը արագացնելու համար։ Թշնամու սահմանը մտնելու կապակցությամբ դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթը իր առաջնորդող հոդվածներից մեկում գրում էր. «Մենք կռվում

27 Տե՛ս «Боевой путь...», էջեր 525—527։

ենք ֆաշիստական վիրավոր գազանի որջում: Մեր ճանապարհը, դեպի Բեռլինն է: Քաջարի Կարմիր բանակի ուժգին հարվածներից ջախջախված հիտլերյան ավազակները հուսահատորեն դիմադրություն ցույց տալով, փորձում են երկարացնել իրենց վախճանի ժամը: Սակայն ոչ մի բան չի կարող արգելակել խորհրդային ռազմիկի հաղթական առաջխաղացումը:

...Էլ ավելի համառությամբ հարվածենք Բշնամուն: Նոր սխրագործություններով հավերժացնենք Կարմիր բանակի 27-րդ տարեդարձը»[28]:

Թշնամին կատաղաբար դիմադրում էր: Նա բոլոր ուժերով ձգտում էր կանգնեցնել մեր բանակի հաղթական առաջխաղացը, բայց այդ նրան չհաջողվեց:

Կատրելով Բշնամու դիմադրությունը, ամբողջ ռազմաճակատով մեր զորքերն առաջ էին ընթանում:

Հունվարի 30-ին և 31-ին համառ մարտեր ծավալվեցին գերմանական Լանդսբերգ, Մեզերիտց, Շվիբուս և մի շարք այլ քաղաքների ու բնակավայրերի համար: Այդ մարտերին մասնակցում էր նաև գեներալ-մայոր Դորբովոլսկու հրամանատարությամբ գործող 16-րդ հրաձգային կորպուսը, որի կազմում էր մեր դիվիզիան: 33-րդ բանակի և ռազմաճակատի մյուս միավորումների հետ միասին, ջախջախիչ հարվածներ հասցնելով ֆաշիստական զորքերին, այդ կորպուսը գրավում է վերոհիշյալ քաղաքները և արժանանում Գերագույն Գլխավոր հրամանատարության շնորհակալությանը: Այդ հրամանը մեծ ոգևորություն է առաջացնում կորպուսի, այդ թվում մեր դիվիզիայի, ամբողջ անձնակազմի մեջ:

Երբ հասել էինք Օդերին, ռազմաճակատի թիկունքային ծառայություններից արդեն բավական հեռու էինք գտնվում: Նրանք մի քանի հարյուր կիլոմետր հետ էին մնացել: Իսկ առաջին գծում գտնվող զորքերը, այդ թվում նաև

---

28 «Կարմիր դիվիզիոն» 21 փետրվարի, 1945 թ.:

մեր 89-րդ դիվիզիան, ռազմամթերքի մեծ կարիք էին զգում։ Մնացել էր մի քանի օրվա պաշար։

Փետրվարի 3-ին դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը և քաղբաժնի պետ գնդապետ Ե. Դավիդովը քաղբաժնի ագիտատորներ, մայորներ Ղ. Դալլաքյանին և Ա. Հակոբյանին կանչեցին հրամանատարական կետ։ Բացատրելով իրադրությունը, հրամայեցին, որ պետք է շտապ կերպով մեկնել 33-րդ բանակի թիկունք՝ պահեստները և զինամթերք բերել։ Դրա համար դիվիզիայի շտաբը շարունակում էին փախուստը դեպի արևմուտք, դրանց անմիջապես տրամադրեց 20 խոշոր (ամերիկյան) ավտոմեքենա, ձևակերպեց փաստաթղթերը։ Այնտեղ ասացին, որ թիկունքի պահեստներն արդեն գտնվում են Լհասան Կալիշ քաղաքում։

Քանի որ թիկունքի անտառներում դեռևս գտնվում էին նահանջող հակառակորդի զորքերի որոշ մնացորդները և վտանգից ապահով լինելու նպատակով, ավտոշարասյանն ուղեկցելու և պաշտպանելու համար յուրաքանչյուր մեքենային ամրացվեց երկու ավտոմատավոր զինվոր։

Ավտոշարասյունը, վնասված և վառանգավոր ճանապարհներով, շարժվում էր առանց դադարի։ Գնալիս հաջողությամբ տեղ հասանք։ Կալիշում գտանք պահեստները և առանց ուշացման ստացանք անհրաժեշտ ռազմամթերքը։ Այժմ անհրաժեշտ էր արագ կերպով վերադառնալ, դրա համար շարժվում էինք նաև գիշերը։ Այդ ընդամենը աչքից չվրիպեց։ Նրա ինքնաթիռները ավտոշարասյունը ռմբակոծեցին։ Բայց ամեն ինչ անցավ բարեհաջող։ Դիվիզիան ապահովվեց ռազմամթերքով։

Ավտոշարասյան ամբողջ անձնակազմը և վարորդները, և ավտոմատավոր զինվորները, և մայոր Ղ. Դալլաքյանն ու սույն տողերի հեղինակը արժանացան դիվիզիայի հրամանատարության շնորհակալությանը։

Շարունակելով մարտերը և առաջ ընթանալով, փետրվարի առաջին օրերին ռազմաճակատի այդ հատվածում մեր

զորքերը արդեն հասել էին լայնահուն Օդերին, որի հորդառատ ջրերը մի շարք տեղերում դեռևս սառցակալված էին։ Բայց դրանք թույլ սառույցներ էին և հաճախ ջուրը նրանց քշում-տանում էր։ Գետը հոսում էր սառույցների մեծ-մեծ կտորներով, ամբողջ սառցալանգվածներով։

Մեր զորքերին մարտական խնդիր է տրված՝ առանց ուշացման Օդերի ձախ ափին գրավել հենակետեր և թույլ չտալ թշնամուն ամրանալու նրա ափերին։ Այդ հրամանի նպատակն էր ամուր հենակետեր ստեղծել Բեռլինի վրա հետագա հարձակման համար։ Պանծալի Կարմիր բանակն այդ խնդիրը նույնպես կատարեց մեծ հաջողությամբ։ Օդերի վրա գտնվող Ֆրանկֆուրտ քաղաքից հյուսիս և հարավ, այդ գետի ձախ ափին ստեղծվեցին մի շարք կարևոր հենակետեր։

Այդ օրերին 89-րդ Թամանյան դիվիզիան մարտական խնդիր էր ստացել՝ մեկ կողմից Ռամպիտց բնակավայրի շրջանում անտառները մաքրել ֆաշիստական զորքերի մնացորդներից, մյուս կողմից՝ մասնակցել Օդերի ձախ ափին հենակետերի ստեղծմանը։ Վերջին խնդիրը հանձնարարվեց 390-րդ հրաձգային գնդին ու հրետանավորներին։ Իսկ մյուս խնդիրը հաջողությամբ իրագործում էին դիվիզիայի մյուս զորամասերը։

390-րդ գնդի ստորաբաժանումները Օդերի ձախ ափը պետք է անցնեին Նեյեր-Դրաբեն բնագծում, փետրվարի 6-ի լույս 7-ի գիշերը։ Այնտեղ արդեն կորպուսի մյուս զորամասերը հենակետ էին գրավել, սակայն թշնամու հակագրոհների պատճառով՝ մեծ կորուստներ ունեցել։ Անհրաժեշտ էր շտապ օգնություն հասնել նրանց և ամրապնդել հենակետը։ Գնդի ստորաբաժանումները Օդերն անցնում են հենց այդ գիշերը՝ 16-րդ կորպուսի սակրավորների պատրաստած լաստային անցումի վրայով և անմիջապես մտնում մարտերի մեջ հարձակվող թշնամու դեմ։ Ամբողջ գիշերը և հաջորդ ցերեկը շարունակվում են ծանր մարտերը։ Մյուս զորամասերի հետ միասին, գնդի ստորաբաժանումները հետ են շպրտում ֆաշիստների մի շարք գրոհները, նրանց պատճա-

ռելով մեծ վնասներ։ Սակայն մեր զորամասերը նույնպես ունենում են զգալի կորուստներ։ Այնտեղ հերոսաբար զոհվում են գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Ռ. Հակոբյանը և մի շարք հրամանատարներ ու շարքայիններ։

Փետրվարի 8-ին հակառակորդն ավելի ուժգին գրոհ է սկսում այդ հենակետի և Օդերի անցումների վրա։ Նա գործի է դնում ավիացիան, որը մեր դիրքերին հարվածում էր մեծ ակտիվությամբ[29]։ Վնասվեց լաստային անցումը, կտրվեց կապը հենակետի հետ։ Անհրաժեշտ էր ռազմամթերք և սնունդ հասցնել հենակետում գտնվողներին, այնտեղից Օդերի աջ ափը փոխադրել վիրավորներին։ Այդ խնդիրները իրագործելու համար կորպուսի սակրավորների հետ միասին, հակառակորդի մշտական կրակի տակ, հերոսական աշխատանք կատարեցին դիվիզիայի սակրավորները՝ փոխգնդապետ Ն. Ադամյանի և մայոր Հ. Գևորգյանի ղեկավարությամբ։ Նրանք պատրաստեցին լաստային նոր անցում, որը սակայն երկար չդիմացավ շարժվող սառցազանգվածների ճնշմանը։ Այնուհետև սակրավորները սկսեցին ափին ամրացված տախտակներ փռել գետի որոշ հատվածներում մնացած սառույցների վրա և փոխադրումները կատարել դրանց վրայով։ Այդ բոլորի շնորհիվ կապը չկտրվեց հենակետի հետ։ Չնայած որոշ ուշացումով, այնտեղ ուղարկվեց անհրաժեշտ ռազմամթերք, սննդամթերք և գետի աջ ափը փոխադրվեցին վիրավորները։ Վերջիններիս օգնելու գործում դժվարին աշխատանք կատարեցին դիվիզիայի և 390-րդ գնդի բժշկա-սանիտարական աշխատողները, մասնավորապես բժշկա-սանիտարական գումարտակի հրամանատար, բժշկական ծառայության մայոր Բ. Մելքումյանը, քաղ. գծով նրա տեղակալ Վ. Բայբուրդյանը, բժիշկներ Խ. Մխիթարյանը, Հ. Մար-

29 Օդերին հասնելու առաջին օրերին մեր օդանավակայանները հեռու գտնվելու պատճառով, ավիացիան ի վիճակի չէր մեծ օգնություն ցույց տալու առաջավոր գծի զորքերին։ Մի քանի օրից հետո, երբ ստեղծվեցին ռազմաճակատից ոչ հեռու օդանավակայաններ, իրադրությունը խիստ փոխվեց, օդում սկսեց իշխել մեր ավիացիան։

տիրոսյանը, Ա. Մանուկյանը, Վ. Ազիզյանը, Ս. Չորանյանը և ուրիշներ։

Փետրվարի 12-ին դիվիզիայի զորամասերը հրաման են ստանում իրենց դիրքերը հանձնել այլ զորամասի և փոխադրվել ռազմաճակատի մյուս հատվածը։ 390-րդ գունդը հենակետը թողնց այլ զորամասերի, ետ անցավ Օդերի աջ ափը և միացավ դիվիզիայի հիմնական ուժերին։ Դիվիզիայի շարժումը կատարվում էր դեպի հյուսիս՝ Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը։ Երեք օր հետո մեր զորամասերը կենտրոնացան Ֆրանկֆուրտից 4—5 կիլոմետր հարավ գտնվող Բրանդենբուրգյան անտառում՝ Օդերի աջ ափին գտնվող Շվեդիգ գյուղից ոչ հեռու։ Սպասում էինք մարտական նոր առաջադրանքի։

Փետրվարի 15-ին հրաման ստացվեց պատրաստ լինել մանևրու ռազմական գործողություններին մեջ։ Լույս 16-ի գիշերը 526-րդ և 400-րդ հրաձգային գնդերը խիստ քողարկված պայմաններում անաղմուկ կերպով արդեն գտնվում էին Շվեդիգ գյուղում։ Նրանց մարտական խնդիր էր տրված անմիջապես անցնել գետի ձախ ափը և փոխարինել այնտեղ գտնվող մեր 77-րդ գվարդիական և 4-րդ հրաձգային դիվիզիաներին, որոնք հերոսական անցումով Ֆրանկֆուրտից 3—4 կիլոմետր հարավ Ցշեցշնով ընակավայրի մոտ գրավելով հենակետ, ընդամենը հակագրոհների պատճառով մարդկային ու տեխնիկայի մեծ կորուստներ էին ունեցել։

Անհրաժեշտ էր ինչ գնով էլ լինի, այդ հենակետը պահել մեր ձեռքում, քանի որ Օդերի Ֆրանկֆուրտի գրավման և դեպի Բեռլին առաջխաղացման համար այն ուներ խիստ կարևոր նշանակություն։ Կուսակցական-քաղաքական աշխատողները և հրամանատարները այդ մասին հանդամանորեն զրույցներ էին ունեցել դիվիզիայի ամբողջ անձնակազմի հետ։ Բոլորը այդ լավ էին գիտակցում։ Ռազմիկների մեջ ամուր արմատացել էր այն միտքը, որ անցնելով Օդերը, այլևս հետ դառնալու մասին չպետք է մտածել, քանի որ այդ նշանակում է կործանում։ Ուստի ամեն գնով պետք էր

հենակետը պահել մեր ձեռքում, ավելի ու ավելի ամրապնդել այն։ Ահա այդպիսի հաստատ համոզմունքով էլ 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի ռազմիկները մոտեցել էին Օդեր գետին և պատրաստվում էին նրա անցմանը։

Նշենք նաև, որ ինչպես ամբողջ խորհրդային ժողովրդի, նրա հերոսական Կարմիր բանակի, նույնպես և մեր դիվիզիայի մարտական ոգու բարձրացմանը զգալի չափով նպաստեցին հակահիտլերյան երեք խոշոր պետությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի զեկավարների ղրիմյան կոնֆերանսի նյութերը, որոնք այդ օրերին հրապարակվեցին մամուլում։ Բոլոր ռազմիկները մեծ հետաքրքրությամբ հետևում էին այդ նյութերին։ Նրանց մի մասը տպագրվեց «Կարմիր զինվոր» թերթի փետրվարի 15-ի համարում, որը բանակայինները և դիվիզիայի ամբողջ անձնակազմը ընդունեցին անսահման հետաքրքրությամբ։

Ֆաշիստական Գերմանիայի չախջախման վերաբերյալ կոնֆերանսի մասին հաղորդագրության մեջ ասված էր, որ երեք դաշնակից պետությունները և նրանց բանակների շտաբները հասան ռազմական ջանքերի ավելի սերտ կոորդինացման, որ անհուսալի է թշնամու դիմադրությունը, որ ֆաշիստական Գերմանիան դատապարտված է կործանման։

Առանձին զորամասերում ու ստորաբաժանումներում, ուր հնարավոր էր, այդ նյութերի շուրջը զումարվեցին անձնակազմի միտինգներ։ Իրենց ելույթներում ռազմիկները հավանություն տալով կոնֆերանսի որոշումներին, խոստանում էին էլ ավելի ուժգին հարվածել ատելի թշնամուն։

Օդերի անցումը նախապատրաստելու համար այստեղ ևս հերոսական գործ կատարեցին դիվիզիայի սակրավորները։ Նախքան գնդերի՝ գետափին մոտենալը, սակրավորներն արդեն ավարտել էին անցման բոլոր նախապատրաստական աշխատանքները. Նրանք պատրաստել էին իրենց մոտ եղած փոքրիկ նավակները, օժանդակ տախտակամածները, գետի ափերի միջև ստեղծել էին երկաթյա լարերի կապ, որը պետք է ապահովեր նավակների շարժման

ուղղությունը։ Այդ լարերից բռնելով, սակրավորները ճավակները պետք է հասցնեին գետի հակառակ ափը՝ նշանակված վայրը։ Ինչ հնարավոր էր, նրանք արել էին գետանցման համար։ Դա, իհարկե, շատ դժվարին գործ էր։ Եթե նկատի ունենանք, որ տվյալ հատվածում Օդերի լայնությունը 170—200 մետր էր և այն հոսում էր մեծ արագությամբ՝ լցված սառցակտորներով, ապա ավելի հասկանալի կլինի այդ դժվարությունը։ Այդ բոլորին զուգընթաց, անցումը իրագործվելու էր թշնամու հրանոթային ու գնդացրային կրակի ներքո։

Սակրավորների այդ դժվարին աշխատանքները ղեկավարում էր դիվիզիայի սակրային ծառայության պետ, փոխգնդապետ Ն. Ադամյանը։ Օդերի անցումը հաջողությամբ իրագործելու համար մեծ աշխատանք կատարեցին մայոր Հ. Գևորգյանը, կապիտան Բ. Հայրապետյանը, կրտսեր հրամանատարներ և շարքայիններ Բ. Վասիլյանը, Վ. Սանոյանը, Ս. Խաչատրյանը, Վ. Կուլիկյանը, Ն. Փոթեյանը, Հ. Պետրոսյանը, Ա. Իսամազյանը, Ս. Դևոլեցյանը, Գ. Հակոբյանը և ուրիշներ։

Հենակետը, ուր պետք է անցնեին մեր դիվիզիայի ռազմիկները, մի փոքրիկ հողակտոր էր ճակատով 2,5—3 կիլոմետր, խորությամբ 800—900 մետր։ Նրա աջ թևում ճահիճներ էին, ուր խրամատներ ունենալն անհնարին էր, իսկ ձախ թևում՝ հարթ ու ավազուտ տարածություն, ուր նույնպես դժվար էր պաշտպանության դիծ ստեղծել։ Պաշտպանության տեսակետից քիչ թե շատ նպատակավոր էր հենակետի կենտրոնական մասը, որտեղ գտնվում էր մի փոքրիկ բարձունք։ Այնտեղից անցնում էր երկաթուղագիծը՝ Ֆրանկֆուրտից դեպի Հարավ։ Հենց այդտեղ էլ ամրացել էին հենակետը գրաված մեր զորամասերի գլխավոր ուժերը։

Ավարտվել էր 526-րդ և 400-րդ հրաձգային գնդերի կենտրոնացումը Օդերի աջ ափին և նրանք պատրաստվում էին անցմանը, այնտեղ էր նաև դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը։ Համարյա բոլոր գումար-

տակներում նա ջերմ ու սրտակից զրույցներ ունեցավ անձնակազմի հետ։ Գեներալը հիշում էր շատ ռազմիկների անունները, բացատրում մարտական խնդրի դժվարությունը և հարցնում, թե ինչպես են նրանք կատարելու այդ խնդիրը։ Բոլորը միաձայն պատասխանում էին, որ կկատարեն յուրաքանչյուրն իր հատուկ քաջությամբ, որ կարմիր բանակի ռազմիկի անունը միշտ բարձր կպահեն։

Փետրվարի 15-ի լույս 16-ի գիշերը դիվիզիայի վերոհիշյալ գնդերը մեծ հաջողությամբ, համարյա առանց կորուստների անցան Օդերը և հենակետում գրավեցին մարտական դիրքեր։ Հաջորդ օրերի ընթացքում հենակետ փոխադրվեցին նաև դիվիզիայի մի շարք այլ ստորաբաժանումներ։ 2—3 օր հետո իր հետևակային հիմնական ուժերով 89-րդ դիվիզիան արդեն գտնվում էր այդ հենակետում, իսկ այստեղ եղած մյուս դիվիզիաները փոխադրվել էին գետի աջ ափը՝ հանգստի և համալրման։ Աջ ափում էին գտնվում նաև դիվիզիայի հրամանատարական կետը, շտաբը, քաղբաժինը և թիկունքային ծառայությունները։

Քանի որ հենակետը փոքր էր և աննպաստ հրետանային մեծ գործողությունների համար, դիվիզիայի հրետանային և ականանետային զորամասերն ու մյուս ստորաբաժանումները մարտական դիրքեր էին գրավել Օդերի աջ ափին։ Ռազմաճակատի հրետանային մյուս զորամասերի հետ միասին, նրանք հուսալի պաշտպանության տակ էին պահում հենակետում գտնվող մեր զորամասերին։ Թշնամու ամեն մի գրոհ գետի հենակետի մեր դիրքերը, հանդիպում էր մեր հրանոթների ու ականանետների հուժկու կրակին։ Հենակետ էր փոխադրված միայն մեր թեթև հրետանին՝ 45 միլիմետրանոց հրանոթները և փոքր տրամաչափի ականանետները։

Ֆրանկֆուրտի հենակետ անցած առաջին զորամասերի հետ էր նաև դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը։ Լինելով առաջավոր գծում, նա շրջում էր խրամատները և տեղում գործնական օժանդակություն

ցույց տալիս գնդերի, գումարտակների ու վաշտերի հրամանատարներին դիրքերը ճիշտ ընտրելու, պաշտպանությունը մտածված ձևով կազմակերպելու համար։ Հենակետում հակատանկային հրանոթները տեղադրվեցին նրա ցուցումներով, այն հաշվով, որ մարտի ընթացքում նրանք ավելի դիպուկ և արդյունավետ գործեն։ Երբ մարտիկները գեներալին տեսնում էին խրամատներում, նրանք ապրում էին և՛ ուրախություն և՛ տագնապ։ Ուրախանում էին, որ իրենց սիրելի գեներալն իրենց կողքին է, իրենց հետ։ Տագնապ էին ապրում, որովհետև վախենում էին, որ գեներալին որևէ բան պատահի։

Ուստի խրամատներում տեսնելով գեներալին, բոլորը միաձայն նրան խնդրում էին, որ գնա իր հրամանատարական կետը, քանի որ իրենք ինչպես հարկն է, կանգնած են առաջավոր գծում և միշտ պատրաստ են ուժգին հարվածներ հասցնել թշնամուն։ Սակայն դրան, գեներալը դրանից հետո էլ հաճախ էր լինում առաջավոր գծում, խրամատներում, իր սիրած ու քաջարի ռազմիկների մոտ։

Ինչպես հայտնի է, բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերը հասնելով Օդերին, նրա ձախ ափին գրավելով մի շարք կարևոր հենակետեր, կանգ էին առել, նախապատրաստվելով Բեռլինի գրոհին։ Հայրենական պատերազմի վերջին ու վճռական գրոհին։ Նախապատրաստությունը տևեց երկու ամիս՝ մինչև ապրիլի կեսերը։ Այդ ժամանակամիջոցում ռազմաճակատի տարբեր հատվածներում թշնամին բազմաթիվ գրոհներ և հարձակումներ ձեռնարկեց, որոնք բոլորն էլ հերոսական կարմիր բանակի կողմից հետ շպրտվեցին։ Ֆաշիստական զորքերը մասնավորապես մեծ հարձակում ձեռնարկեցին ռազմաճակատի հյուսիսային թևից՝ Շտետին քաղաքի կողմից, նպատակ ունենալով շարժվելով դեպի հարավ-արևելք, հասնել Պոզնան, օժանդակել այնտեղ շրջապատված իրենց զորքերին և իր հերթին շրջապատման մեջ առնել Օդերին հասած Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերին։ Նախօրոք կռահելով թշնամու այդ

մտադրությունը, ռազմաճակատի հրամանատարությունը տվյալ հատվածում կենտրոնացրել էր անհրաժեշտ քանակությամբ զորքեր և ռազմական տեխնիկա։ Դրա շնորհիվ ֆաշիստական բանակի առաջին իսկ հարձակումը հետ մղվեց նրա համար մեծ կորուստներով։ Ձախողվեց թշնամու մտադրությունը հյուսիսից ճեղքելու մեր ռազմաճակատը և անցնելու առաջին բելոռուսական ռազմաճակատի զորքերի թիկունքը։ Սակայն ամբողջ ռազմաճակատում ֆաշիստական զորքերը կատաղաբար շարունակում էին դիմադրությունը և հարձակումները՝ մասնավորապես Օդերի ձախ ափին գրաված մեր հենակետերի վրա։

Ինչպես նշեցինք, թամանցիները մարտական խնդիր էին ստացել, ինչ գնով էլ ուզում է լինի, հենակետը պահել իրենց ձեռքում և հնարավորին չափ ավելի ամրապնդել այն, քանի որ Ֆրանկֆուրտի գրավման և Բեռլինի գրոհի համար ունի խիստ կարևոր նշանակություն։

Բազմիցս հետ մղելով ֆաշիստական զորքերի հարձակումները, թամանցիները հերոսաբար պաշտպանում էին հենակետը։ Կատաղի թշնամու դեմ մղած դաժան մարտերում բոլոր թամանցիները, շարքային ռազմիկից սկսած մինչև բարձր հրամանատարները, դրսևորելով խորհրդային վառ հայրենասիրություն, հերոսական գործեր էին կատարում։

Դիվիզիայի ռազմիկները դեռ նոր էին տեղավորվում խրամատներում, նոր էին ծանոթանում տեղանքին, երբ փետրվարի 16-ի առավոտյան մեր դիրքերի վրա տեղացին թշնամու հրանոթային, ականանետային ու գնդացրային կրակոցները։ Սկսվեց ֆաշիստների գրոհը։ Նրանք որոշել էին գրավել հենակետը և մեր զորամասերին նետել Օդերը։ Ծավալվեցին օրհասական մարտեր։

Մեր հրետանին իր ամբողջ հզորությամբ Օդերի աջ ափից սկսեց ռմբակոծել թշնամու դիրքերը և կրակակետերը, ճնշել նրա ակտիվությունը։ Թշնամու գրոհի դեմ հերոսաբար կանգնեցին հենակետում գտնվող 526—րդ և 400-րդ գնդերի բոլոր ստորաբաժանումները։ Ծավալված ուժեղ մար-

տերի ընթացքում հարձակվող թշնամին վճռական հակահարվածներ ստացավ։ Մեծ կորուստներ տալով, նա հետ շպրտվեց ելման դիրքերը։ Մարտի դաշտը լցված էր ֆաշիստական դիակներով։ Գնդերի մարտական գործողությունները համուտ կերպով ղեկավարում էին գնդապետներ Պ. Ուլանովսկին և Ֆ. Շապովալովը։ Հարձակվող թշնամու դեմ մղված այդ մարտերում մասնավորապես աչքի ընկան կապիտաններ Գ. Աբրահամյանի, Ա. Աթոյանի, Հ. Սիմոնյանի, Հ. Բաբայանի և Ս. Մարգարովի դումարտակները, որոնք անկերպով մնացին իրենց դիրքերում և ուժգին կրակ տեղացին հարձակվող թշնամու վրա։

Խիզախ էին մարտնչում մեր ռազմիկները։ Մարտի թեժ պահին դասակներից մեկի հրամանատարը զոհվում է։ Դասակի հրամանատարությունն իր ձեռքն է վերցնում նրա կուսակազմակերպիչ Ք. Աբովյանը։ Հանուն հայրենիքի կոչելով, նա մարտիկներին առաջ է տանում։ Այդ մարտում Ք. Աբովյանը ոչնչացնում է 20 հիտլերական։ Կոմունիստ հրամանատարի օրինակով թշնամու դեմ խիզախորեն էին պայքարում դասակի ռազմիկներ Ղ. Հակոբյանը և ուրիշներ։

Մեր դիրքերին մոտեցող թշնամուն մրրկային կրակով դիմավորեցին լեյտենանտ Ավագովի ստորաբաժանման դրնդացրորդներն ու հրաձիգները։ Առաջնորդելով իր դասակի մարտիկներին, լեյտենանտ Գ. Օփրանոսյանը ձեռնամարտի բռնվեց ֆաշիստների հետ։ Իր դիպուկ հարվածներով նա վայր գցեց երկու հիտլերականի։ Իրենց հրամանատարի նման էին թշնամուն հարվածում մյուս ռազմիկները։ Մարտի դաշտում թողնելով տասնյակ դիակներ, թշնամին հետ է քաշվում իր ելման դիրքերը։

Կապիտան Հ. Բաբայանի ստորաբաժանման վրա էին գրոհում ֆաշիստական երկու տանկ և մեկ ինքնագնաց հրանոթ։ Քաջարի զրահար Գ. Ղարիբյանը դիպուկ կրակով շարքից հանում է թշնամու առաջին տանկը։ Մյուս տանկն ու ինքնագնաց հրանոթը դիմում են փախուստի։

Գրոհի եկած թշնամու զորքերի վրա մրրկային կրակ էր տեղում կոմերիտական Ա. Առաքելյանի գնդացիրը: Մարտի որոշ պահին նա մենակ մնաց: Երբ հիտլերականները մոտեցել էին նրան և գտնվում էին միայն 20 քայլ հեռավորության վրա, Ա. Առաքելյանը գործի է դնում ձեռքի նռնակները: Ֆաշիստներն սկսում են փախուստը: Նրանց հետևից նորից տեղային Ա. Առաքելյանի գնդացրային կրակահերթերը:

Այդ մարտերում թշնամու դեմ անձնուրաց էին մարտնչում գումարտակների կոմերիտական կազմակերպիչները լեյտենանտներ Գ. Սարգսյանը և Ի. Կարախանյանը: Իրենց անձնական օրինակով նրանք առաջիկներին ոգեշընչում էին Օդերի հենակետի պաշտպանության մարտերում:

Ֆաշիստները մեր դիրքերի վրա գրոհներ կազմակերպեցին նաև փետրվարի 17-ին: Այս անգամ ևս նրանք հանդիպեցին թշամանցիների ուժգին հակահարվածներին ու հետ քաշվեցին ելման դիրքերը, դարձյալ տալով մեծ կորուստներ: Նրանք այժմ ավելի ու ավելի էին համոզվում, որ հեշտ գործ չէ այդ հենակետի գրավումը: Բնորոշ է, որ ինչպես հետո պատմում էին նրանց ռազմագերիները առաջին այդ երկու անհաջող գրոհներից հետո, ֆաշիստների մեջ տարածվել էր այն լուրը, որ Օդերի այդ հենակետում իրենց դեմ կանգնած են «ինչ որ զարմանալի և չափազանց համառ կամքի տեր մարդիկ»:

Որոշ դադարներից հետո, հետագա օրերին ֆաշիստները դարձյալ բազմիցս գրոհներ կազմակերպեցին մեր դիրքերի վրա, հետապնդելով նույն նպատակը՝ հետ վերցնել հենակետը: Սակայն նրանց բոլոր գրոհները քաջարի թշամանցիների կողմից հետ էին շպրտվում: Բացի այդպիսի գրոհներից, մշտապես շարունակվում էին փոխադարձ գրնդացրային, ավտոմատային և սնայպերական կրակոցները: Քանի որ երկու կողմերի խրամատները միմյանց բավականին մոտ էին՝ 50—60, իսկ որոշ տեղերում նույնիսկ 40 մետր, ուստի այդպիսի կրակոցները տալիս էին իրենց արդյունքը: Ամբողջ երկու ամսվա ընթացքում մեր գնդացրորդ-

ներբ, ավտոմատավորները և անձակերները իրենց դիպուկ կրակներով շարքից հանեցին բազմաթիվ ֆաշիստների։ Ի-հարկե, զոհեր ունեցանք նաև մենք։ Մասնավորապես թշնամու կրակոցներից վնասվում էին նրանք, ովքեր խրամատներում անզգույշ շարժումներ էին կատարում, կամ ովքեր գետանցումից առաջավոր գիծ էին գալիս կամ հետ վերադառնում առանց անհրաժեշտ քողարկման։ Հրամանատարությունն ամեն ինչ անում էր կանխելու այդպիսի զոհերը։

Ինչպես նախորդ, նույնպես և Ֆրանկֆուրտի հենակետի համար մղված ծանր մարտերում հերոսական սխրանքներ կատարեցին դիվիզիայի բժշկա-սանիտարական աշխատողները։ Իրենց նվիրական ու խիզախ աշխատանքի շնորհիվ մարտի դաշտում նրանք մշտապես անհրաժեշտ օգնություն էին ցույց տալիս վիրավորներին, փրկելով նրանցից շատերի կյանքը։ Թշնամու հարատև կրակի տակ սանիտարական աշխատողներ Օնիկ Նուբիասյանը, Մկրտչյանը, Մարուսյա Հևքիմյանը, Ոսկի Հովաննիսյանը, Կարպովան, բժիշկներ Հր. Սահակյանը, Վ. Ազիզյանը, Տ. Նալբանդյանը, Վ. Եսայեվկյանը, Ս. Ջոբանյանը և շատ ու շատ ուրիշներ, առաջին օգնությունը ցույց տալով վիրավորներին, կազմակերպում էին նրանց շուտափույթ փոխադրումը Օդերի աջ ափը՝ դիվիզիայի սանիտարական գումարտակը։ Թշնամու կրակի տակ դժվարին վիրահատություններ էր կատարում բժ. ծառայության կապիտան Խ. Մխիթարյանը։

Դիվիզիայի բժշկա-սանիտարական ծառայության դործը հմուտ կերպով գլխավորում էին փոխգնդապետ Բ. Մելքումյանը և մայոր Վ. Բայբուրդյանը։

Թշնամու կողմից մեր հենակետի ամենաուժեղ զրահներից մեկը տեղի ունեցավ 1945 թ. ապրիլի 3-ին։ Վաղ առավոտյան, ժամը 5-ին մեր դիրքերի վրա տեղացին թշնամու հրանոթային և ականանետային համազարկերը։ Ամբողջ խրամատները և նրանց մերձակա տարածությունները պատած էին պայթած ականների ծխով ու փոշիով։

Հակառակորդի պաշտպանական կրակի ներքո դեպի մեր դիրքերն էին շարժվում նրա զինվորները, որոնց թիվը անցնում էր մի քանի հարյուրից։ Դրանք հարձակման անցած ֆաշիստների առաջին մարտակարգերն էին, որոնց հաջորդում էին մյուսները։ Թշնամու գրոհը կրում էր հոգեբանական բնույթ։

Թամանցիները հանկարծակիի չեկան։ Նրանք կազմ ու պատրաստ դիմավորեցին թշնամու այդ գրոհը, գործի դնելով կրակի բոլոր միջոցները։ Հենակետից անմիջապես տրրված ազդանշանի շնորհիվ Օդերի աջ ափից սկսեց գործել մեր հրետանին, որը իր մարտական դիրքերում միշտ կազմ ու պատրաստ սպասում էր այդպիսի ազդանշանի։ Մեր հրետանային ու ականանետային համազարկերի շնորհիվ թշնամու դիրքերը ևս կորան կրակի ու ծխի մեջ։ Մեր հրետանավորները իրենց դիպուկ նշանառությամբ կրակային հզոր պատնեշ ստեղծեցին թշնամու առաջ շարժվող մարտակարգերի միջև։ Քանի որ այդ մարտակարգերից առաջինը, թվով մոտ 400 զինվոր և սպա, արդեն հասել էր մեր խրամատներին և այնտեղ ծավալվում էին մարտերը, որոնք շատ տեղերում վերածվեցին ձեռնամարտի, հրետանային ճշգրիտ կրակը փակեց թշնամու երկրորդ և հաջորդ մարտակարգերի ճանապարհը։ Դրա շնորհիվ նրա առաջին մարտակարգերը կտրվեցին հիմնական ուժերից և չկարողացան ստանալ հարկ եղած օգնություն։ Մեր հրետանու կրակային գործողությունները ղեկավարում էր դիվիզիայի հրետանու պետ, փոխգնդապետ Խ. Պայազատյանը։

Այս մարտերում ևս դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանի կողմից բարձր է գնահատված հրետանավորների ու նրանց պետ Խ. Հ. Պայազատյանի մարտական ծառայությունները։ Նա նշել է, որ հենակետի ծանր մարտերի ամբողջ ժամանակ հրետանավորները գործել են բացառիկ խիզախությամբ և հաստակությամբ՝ իրենց դիպուկ կրակով մշտապես պաշտպանելով հետևակին, հարվածելով թշնամուն։ Միայն փետրվարի 16-ից մինչև մար-

տի 16-ը, իրենց հուժկու կրակով նրանք հետ են մղել Թըշնամու 19 հարձակում, ոչնչացրել 600 զինվոր և սպա, այրել 4 ինքնագնաց հրանոթ, ոչնչացրել 5 ականանետային մարտկոց, 20 գնդացրային կետ և այլն։ Հետևակը վերցրել է 100 գերի։ Թշնամու մեկ ուրիշ հարձակման ժամանակ մեր հրանոթային հուժկու կրակի շնորհիվ ոչնչացվել է ավելի քան 400 ֆաշիստ և կրակային շատ կետեր։ Այդ բոլորում մեծ է եղել հրետանու պետ, փոխգնդապետ Ս. Պայազատյանի դերը[30]։

Դրա համար նա պարգևատրվել է մարտական կարմիր դրոշի շքանշանով։

Մասնավորապես ուժեղ մարտեր տեղի ունեցան 400-րդ հրաձգային գնդի 3-րդ գումարտակի պաշտպանական գծի հատվածում։ Այստեղ ստեղծվել էր ծանր վիճակ։ Մեծ կորուստների գնով հակառակորդին հաջողվում է ճեղքել գումարտակի պաշտպանության գիծը և թափանցել նրա խրամատները։ Նույնիսկ որոշ խուճապ է առաջանում գումարտակի վաշտերում։

Սակայն գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, մարտական հարուստ փորձ ունեցող, կապիտան Համբարձում Նահապետյանը կոչելով՝ մա՛հ ֆաշիստներին, առա՛ջ հայ կտրիճներ, առաջ է նետվում։ Նրան հետևում են գումարտակի զինվորները։ Մավալվում է ձեռնամարտը։ Ատրճանակի դիպուկ կրակոցով կապիտան Նահապետյանը հենց խրամատում սպանում է 3 ֆաշիստի և նռնակներ նետում մյուսների վրա։ Փաստորեն նա էր ղեկավարում գումարտակի մարտական գործողությունները։ Զինվորները հետևում էին քաջարի քաղղեկին։ Գումարտակի խրամատները թափանցած բոլոր ֆաշիստները ոչնչացվում են։ Սակայն գալիս են մյուսները։

Երբ մարտը դեռ շարունակվում էր, Հ. Նահապետյանն աջ ձեռքից երկու տեղից վիրավորվում է։ Բայց նա չի թողնում մարտը, շարունակում է ոգևորել ռազմիկներին։ Նա երկրորդ

30 Боевой путь..., էջեր 616—617։

անգամ, այժմ ավելի ծանր է վիրավորվում։ Դումարտակի ռազմիկները նրան դուրս են բերում խրամատից և հասցնում սանիտարական մաս։ Նրան բժշկական անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս գնդի բժիշկ, բժշկական ծառայության կապիտան Կարո Բիշեմյանը։

Դումարտակի այդ մարտերում թշնամու դեմ քաջաբար էին կռվում, նրա կուսակցական և կոմերիտական կազմակերպիչներ Ռ. Մանուկյանը և Վոլոդկինը։ Մարտի դժվարին պահին, ականանետային վաշտի 10 քաջեր, վաշտի կուսկազմակերպիչ Լազյանի ղեկավարությամբ, օգնության են հասնում իրենց ընկերներին։ Անձնուրաց էին մարտընչում 7-րդ վաշտի զինվորները, որոնց հրամանատարն էր ավագ լեյտենանտ Ակոպովը։

Այդ մարտերում ստացած ծանր վերքերի բուժումը կապիտան Հ. Նահապետյանը շարունակում է մեկ տարի՝ զինվորական տարբեր հոսպիտալներում։ Նա ծնվել է 1902 թ., Արևմտյան Հայաստանում։ Մեծացել է որբանոցներում։ 1924—1938 թվականներին ծառայել է Կարմիր բանակի շարքերում։ Կուսակցության անդամ է 1927 թվից։ Բանակ է զորակոչվել Երևանից։ Հայրենական պատերազմի երկրորդ խմբի հաշմանդամ է։ Այժմ ապրում է Երևանում։

Ապրիլի 3-ին թշնամու դեմ մղած ծանր մարտերում հերոսական սխրանքներ կատարեցին կապիտան Մ. Ավագյանը և նրա վաշտի ռազմիկները։ Գնդացրորդներ Մազնյուկը և Միսակարյանն իրենց դիպուկ կրակով շարքից հանեցին տասնյակ ֆաշիստների։

Թշնամուն անխնա հարվածում էին խորհրդային Միության հերոս, ավագ լեյտենանտ Ս. Բազդասարյանի ավտոմատավորները։

Հերոսական սխրանքներ կատարեց դումարտակի կոմերիտական կազմակերպիչ լեյտենանտ Գուրգեն Սարգսյանը, որը իր քաջագործություններով գնդում և դիվիզիայում հայտնի էր դեռևս նախորդ մարտերից։ Այդ օրը նրա կատարած մարտական գործերի մասին «Կարմիր զինվոր»

Թերթի ապրիլի 5-ի համարում տպագրվեց ավտոմատավորների վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս Ս. Բաղդասարյանի՝ «Կոմսոմոլի կազմակերպչի սխրագործությունը» հոդվածը։

Այնտեղ ասված է. «Կատաղի մարտը շարունակվում էր մեր ստորաբաժանման և հակագրոհի ենթարկված հիտլերականների միջև։ Գերմանացիներն իրենց դիակների վրայով համառորեն փորձում էին խցկվել մեր պաշտպանության առաջին գիծը։ Կռիվը գնալով սաստկանում էր։ Ինչպես միշտ, այս անգամ նույնպես անօրինակ սխրագործություններ կատարեց կոմսոմոլի կազմակերպիչ, լեյտենանտ Դուրգեն Սարգսյանը։ Երբ հակառակորդը ընդհուպ մոտեցավ մեր պաշտպանության բնագծին, նա ձեռքի գնդացրից մրրկային կրակ բաց արեց։ Անվեհեր ռազմիկի, ինչպես և մեր մյուս քաջարի մարտիկների կամքը պայաններց գերմանացիների առաջխաղացման ճանապարհը։ Հիտլերականները դիմեցին փախուստի։

Խիզախ կոմսոմոլի կազմակերպիչը գնդացրային անընդմեջ կրակով ու նռնակներով համարձակորեն հետապընդեց թշնամուն մինչև իր ելման դիրքերը։ Նրա մարտական սխրագործությունը ոգևորում էր մեր քաջարի ռազմիկներին, որոնք նրա օրինակով կռվելով, ամուր պաշտպանեցին գրաված դիրքերը»։

Ավագ սերժանտ Ս. Խառատյանը մարտի էր բռնվել հակառակորդի զինվորներից մեկի հետ։ Շուտով նա նկատում է, որ իր վրա են գրոհում նաև 4 ֆաշիստներ։ Մոտեցող ֆաշիստների վրա նա անմիջապես նետում է նռնակ։ Բոլորն էլ գետնին են փռվում։ Նա ահեղ դատաստան է տեսնում նաև հինգերորդ ֆաշիստի հետ։ Այնուհետև Ս. Խառատյանը նկատում է, որ 6 ֆաշիստի դեմ անհավասար մարտ է մղում իր մարտական ընկեր, կարմիրբանակային Խ. Խաչատրյանը։ Անմիջապես օգնության է հասնում իր ընկերոջը և նռնակների դիպուկ հարվածներով շարքից հանում բոլոր

ֆաշիստներին: Այդ մարտում Ս. Խառատյանը ոչնչացրեց տասնյակ հիտլերականների:

Թշնամու դեմ մղած ծանր մարտում խիզախության օրինակներ էր ցույց տալիս կոմունիստ, Փառքի III և II (հետագայում նաև I) շքանշանների ասպետ, ավագ սերժանտ Գինևան Ոսկանյանը: Իր հրանոթի անձնակազմի դիպուկ կրակով նա ոչնչացրեց թշնամու մեկ տանկ, մեկ ավտոմեքենա և գնդացրային երկու կրակակետ, ինչպես նաև մի քանի տասնյակ հիտլերական:

Մարտի թեժ պահին շարքից դուրս եկավ մեր ստորաբաժանումներից մեկի գնդացրի առաջին համարը: Նրան անմիջապես փոխարինում է կոմունիստ հրամանատար Ա. Սահակյանը և շարունակում կրակը, առաջ շարժվում թշնամու դեմ: Հրամանատարին օգնում էր կարմիրբանակային Ս. Տարանովեցկին, որը այդ պահին դեմքից ծանր վիրավորվում է: Եվ չնայած դրան, շարունակում է մարտը: Հայ և ուկրաինացի եղբայրները այդ մարտում շարքից հանեցին տասնյակ հիտլերականներ: Ս. Տարանովեցկին սանիտարական մաս գնաց միայն այն ժամանակ, երբ արդեն մարտն ավարտվել էր մեր հաղթանակով, երբ թշնամին հետ էր շպրտվել իր ելման դիրքերը:

Բազմաթիվ են ապրիլի 3-ի մարտերի ընթացքում մեր ռազմիկների հերոսական սխրանքները: Բոլորը թվարկել հնարավոր չէ: Սակայն հարկ ենք համարում նշել, որ ինչպես նախորդ, նույնպես և այս մարտի ընթացքում դիվիզիայի ամբողջ անձնակազմը պատվով կատարեց իր դժվարին խնդիրը՝ բոլոր ուժերով ձեռքում պահել հենակետը:

Հերոսաբար էին մարտնչում հետևակայինները, հրետանավորները, հետախույզները, կապավորները և սակրավորները: Վիրավորներին անհրաժեշտ օգնություն էին ցույց տալիս բժշկա-սանիտարական աշխատողները: Թիկունքի ծառայությունները առաջավոր գիծը ապահովեցին անհրաժեշտ բոլոր ռազմամթերքներով:

Կուսակցական-քաղաքական աշխատողները, բոլոր կո-

մերիտականներն ու կոմունիստները իրենց անձնական օրինակով դիվիզիայի ամբողջ անձնակազմին ոգևորում էին և գրոհի առաջնորդում թշնամու դեմ։

Օդերի աջ ափին գտնվող իր հրամանատարական կետից դիվիզիայի բոլոր մարտական գործողություններին հետևում և ուղղություն էր տալիս նրա պանծալի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը։

Այդ բոլորի շնորհիվ դիվիզիային հաջողվեց հաղթանակով դուրս գալ Օդերի հենակետում տեղի ունեցած բոլոր մարտերից ամենածանրից՝ ապրիլի 3-ի մարտից։

Ի պատիվ Օդերի այդ հենակետում մեր դիվիզիայի ցուցաբերած հերոսական մարտերի, նրա անձնակազմի քաջագործությունների, ռազմաճակատում այդ հենակետը անվանում էին նաև «Հայկական»։

Դերի վերցված ֆաշիստական սպաների և զինվորների ցուցմունքներից հայտնի դարձավ, որ նրանց հրամանատարությունը ապրիլի 3-ի նախօրյակին Բեռլինից և այլ վայրերից մեր հենակետի հատվածն էր փոխադրել զգալի քանակությամբ զորքեր, մեծ մասամբ տուգանային գումարտակներ և վաշտեր։ Նրանց ապակողմնորոշելու նպատակով բացատրել էին, որ այդ հենակետում իրենց դեմ գտնվում են թույլ ուժեր և առաջին իսկ գրոհով կարելի է գրավել հենակետը։ Դրան ի հատուցում ֆաշիստական հրամանատարությունը խոստացել էր բոլորին ազատել տուգանային զորամասերից և պարգևատրել շքանշաններով։ Իսկ գրոհի նախօրյակին այդ զինվորներին առատորեն հատկացրել էին ալկոհոլային խմիչքներ, որից նրանք հարբել էին։

Վերցրած գերիները ուղարկվեցին 33-րդ բանակի, ապա բելոռուսական առաջին ռազմաճակատի շտաբ։ Ավելի մեծ թվով գերիներ վերցվեցին ապրիլի 14-ի ուժային հետախուզության ժամանակ։ Այդ գերիներից վերցված տվյալները կարևոր նշանակություն ունեցան մեր հետագա հարձակումների արդյունավետության համար։

Հենակետում թշնամու պաշտպանության գիծը ճեղ-

քելուց հետո, առաջ շարժվելով դիվիզիայի զորամասերը Թշնամու ուժեղ դիմադրությանն են հանդիպում Ձևեշնով բնակավայրի մոտ: Հակառակորդը մեծ ուժերով և կրակային բոլոր միջոցներով դիմադրում էր և ոչ մի քայլ հետ չէր քաշվում: Ապրիլի 16-ից մինչև 19-ը այստեղ շարունակվում էին կատաղի մարտերը, փոխադարձ գրոհները և նույնիսկ ձեռնամարտերը: Դիվիզիայի զորամասերը՝ 400-րդ և 526-րդ գնդերի ստորաբաժանումներն ամրացել էին գրաված բնադծերում: Անընդհատ գործում էին գնդացիրները: Ուղիղ նշանառությամբ կրակում էին հրանոթները: Հակառակորդի դինվորներն ամրացել էին շենքերում: Հատկապես ուժեղ մարտեր էին գնում եկեղեցու շրջակայքում: 390-րդ գունդը կռվում էր Բուշմյուշլե բնակավայրի արևմտյան կողմում:

Ապրիլի 16-ին դիվիզիան ունեցավ զգալի կորուստներ՝ զոհվեց 76, վիրավորվեց 201 ռազմիկ[31]: Տեղի ունեցավ ռազմական տեխնիկայի զգալի կորուստ: Թշնամու զոհվածները կազմում էին ավելի քան 300, մեծ էր նրա ռազմական տեխնիկայի կորուստը[32]: Նույն ամսի 17-ին և 18-ին մարտերը շարունակվեցին ավելի համառությամբ: Ճեղքելով Թշնամու պաշտպանությունը, դիվիզիայի զորամասերը ծավալեցին փողոցային մարտեր: Նրանք արդեն գտնվում էին այդ բնակավայրի հյուսիսային մասում:

Մարտի մեջ մտցնելով նոր զորամասեր և ռազմական տեխնիկա, ֆաշիստներն անցնում են հակագրոհի: Հուժկու հակահարված տալով հարձակվող Թշնամուն, մեր զորամասերը գրավում են հարմար դիրքերը: Ապրիլի 18-ի օրվա վերջին դիվիզիայի զորամասերը նորից անցնում են հարձակման և ամրանում եկեղեցու շրջակայքում: Համառ մարտերը Ձևեշնով բնակավայրի համար շարունակվեցին նաև 19-ին, երբ արդեն դիվիզիայի զորամասերն ամբողջությամբ տիրապետեցին այդ բնակավայրին և ճանապարհ բաց արին դեպի Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը՝ Գերմանիայի արևելյան խոշոր քա-

---

31 Боевой путь..., էջեր 500:
32 Боевой путь..., էջ 500:

զաքներից մեկը, որը պաշտպանում էին թշնամու լավագույն ուժերը։ Ֆրանկֆուրտ քաղաքի համար մեր դիվիզիան, մյուս դիվիզիաների հետ միասին, համառ մարտեր շարունակեց մինչև ապրիլի 23-ը։

Ապրիլի 16-ից մինչև 19-ը տեղի ունեցած ծանր մարտերում դիվիզիան ոչնչացրել է հակառակորդի ավելի քան 1600, գերել է մինչև 300 զինվոր և սպա, շարքից հանել մեծ թվով ռազմական տեխնիկա[33]։

Այդ չորսօրյա մարտերում զգալի կորուստներ է ունեցել նաև մեր դիվիզիան։ Նրա շարքերից զոհվեցին 175 և վիրավորվեցին 603 ռազմիկ[34]։ Տեղի էր ունեցել նաև ռազմական տեխնիկայի զգալի կորուստ։

Վիրավոր ռազմիկներին մարտի դաշտից դուրս բերելու և օգնելու համար անձնուրաց աշխատանք էին կատարում դիվիզիայի սանիտարական գումարտակի, գնդերի ու ստորաբաժանումների բժշկա-սանիտարական աշխատողները։ Այդ մասին ասված է դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Ե. Կ. Դավիդովի 1945 թ. ապրիլի 18-ին վերադասին ուղղված զեկուցման մեջ[35]։ Ամեն առանդով ու նվիրվածությամբ էին աշխատում վիրավորների էվակուացիայի ջոկատի պետ, բժշկական ծառայության լեյտենանտ Ն. Յա. Բևրևկչյանը և նրա ջոկատի ռազմիկները։ Միայն երկու օրում՝ ապրիլի 16-ին և 17-ին առաջավոր գծից սանիտարական գումարտակ էր հասցվել 344 վիրավոր։ Դրժվարին և քրտնաջան աշխատանք էին կատարում սանիտարներ Կլավա Սավինկովան, սերժանտ Ալեքսանդրա Շմատկոն (կոմունիստ), կարմիրբրանակավոր Մուշեղ Հովսեփյանը, բժշկական ծառայության լեյտենանտ Օնիկ Սուքիասյանը, դինվորական ֆելդշեր Հարությունյանը, մնացած բոլոր բժշ-

---

33 Նույն տեղում, էջ 604։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 600—602։

կա-սանիտարական աշխատողները։ Իրենց նվիրական աշխատանքով նրանք միայն այդ օրերին փրկեցին հարյուրավոր ռազմիկների կյանքը։

Դիվիզիայի երկու ամսյա այդ մարտերը Օդերի հենակետում բարձր է գնահատել 16-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գվարդիայի գեներալ-մայոր Դոբրովոլսկին։ Այդ օրերին, ապրիլի 7-ին, նա գրել է, որ հենակետում դիվիզիան իր բնագծերը պաշտպանել է բացառիկ հաջողությամբ, խիզախորեն և հերոսաբար։ Միայն ապրիլի 3-ին թշնամու դեմ մղված ծանր մարտում ցուցաբերած քաջագործությունների համար դիվիզիայի ռազմիկներից 150 հոգի ներկայացված են կառավարական շքանշանի և մեդալի, 7 հոգի՝ Խորհրդային Միության հերոսի կոչման։ Հենակետի պաշտպանության 52 օրում դիվիզիան ոչնչացրել է թշնամու 2200 զինվոր և սպա, 35 ռազմասայլ տարբեր ռազմամթերքով, 20 հաստոցավոր գնդացիր, 27 ձևռքի գնդացիր, հակատանկային 6 հրանոթ, 6 ականանետ և այլ տեսակի շատ զենքեր[36]։ Հետախուզական նպատակով միայն մի գրոհի ժամանակ նա վերցրել է 8 գերի, որոնց ավյալներով պարզվել է, թե ինչ ուժեր կան կորպուսի և դիվիզիայի դիմաց[37]։

Բազմաթիվ են Օդերի հենակետում թշնամու դեմ մղած դժվարին մարտերում հերոսական սխրանքներ կատարող թամանցիները։ Հիշատակենք նրանցից միայն մի քանիսին, որոնք պարգևատրվել են մարտական կարմիր դրոշի և Փառքի I աստիճանի շքանշանով։

390-րդ գնդի 2-րդ գումարտակի հրամանատարն էր մայոր Գուրգեն Մնացականի Բադալյանը։ Նա կոմունիստական կուսակցության անդամ էր։ Կարմիր բանակ էր զորակոչվել Բաքվից։

Ապրիլի 3-ի վաղ առավոտյան սկսելով գրոհը, հակառակորդը թափանցել էր հարևան 400-րդ գնդի գումարտակի

---

36 Боевой путь..., էջ 520։

37 Նույն տեղում։

պաշտպանության գիծը։ Համարձակ տեղաշարժումով Գ. Բադալյանը իր գումարտակով փակում է Թշնամու նահանջի ճանապարհը և զենքի բոլոր միջոցներով հարվածում նրան։ Միայն այստեղ նրա գումարտակը ոչնչացնում է 115 ֆաշիստ։ Ապրիլի 14-ին ուժային հետախուզության նպատակով մայոր Գ. Բադալյանը մեկ վաշտով ճեղքում է Թշնամու ամրացված պաշտպանության գիծը, մտնում նրա դասավորության մեջ և գրավում 3 խրամատ, ամրանում այնտեղ։ Ապրիլի 16-ին սրընթաց գրոհով, գնդի մյուս գումարտակների հետ միասին, գրավում է Բուշմյուլե բնակավայրը։ Երբ Թշնամին անցնում է հարձակման՝ հետ վերցնելու այդ բնակավայրը, հանդիպում է նրա գումարտակի հակահարվածին։ Այստեղ ոչնչացվում է Թշնամու 350 զինվոր և սպա, շարքից հանվում 3 տանկ և 4 ինքնագնաց հրանոթ[38]։ Այդ խիզախության համար մայոր Գ. Մ. Բադալյանը պարգևատրվում է մարտական կարմիր դրոշի շքանշանով։

Հենակետ իջնելու երկրորդ օրը, փետրվարի 16-ին 526-րդ գնդի գնդացրային վաշտը և գնդացրորդ ավագ սերժանտ Սրապիոն Ասատուրի Կարապետյանի գնդացրի անձնակազմը դեռ նոր էին ամրանում խրամատում, Թշնամին գրոհի եկավ։ Անձնակազմը այդ գրոհին դիմավորեց կազմ ու պատրաստ։ Թշնամուն մոտ թողնելով մինչև 50 մետր, Ս. Կարապետյանը սկսեց գնդացրի կրակահերթը, մեծ վնաս պատճառեց ֆաշիստներին։ Նրանք հետ փախան և թողնելին 2 գնդացիր։ Օգտագործելով դրանք, նա շարունակեց կրակը։ Միայն այս մարտում քաջ թամանցին ոչնչացրեց մինչև 60 ֆաշիստ։ Գործելով նույնպիսի քաջությամբ, Ս. Կարապետյանի գնդացրի անձնակազմը ապրիլի 3-ի մարտում գնդացրի ուղիղ նշանառությամբ ոչնչացրեց ավելի քան 80 ֆաշիստ, իսկ միայն ինքը՝ 30[39]։ Բարձր գնահատվեց ավագ սերժանտ Ս. Կարապետյանի այդ խիզախությունը։ Նա պարգևատրը

---

38 Боевой путь..., էջ 605—606։

39 Նույն տեղում, էջ 607—608։

վեց մարտական կարմիր դրոշի շքանշանով։ Նա 1921 թ. ծնված է։ Զորակոչվել է էջմիածնի շրջանի ներքին Խաթունարխի գյուղից։

526-րդ գնդի 9-րդ վաշտի գնդացրի անձնակազմը, որի հրամանատարն էր ավագ սերժանտ Սուրեն Մովսեսի Ամյանը, գործում էր համարձակ և հաշվենկատ։ Ապրիլի 14-ի հարձակման ժամանակ Ս. Ամյանն իր հաշվարկով առաջինն է գրոհի գնում և մտնում թշնամու խրամատները։ Ձեռնամարտում նա ոչնչացնում է 4 և գերի վերցնում 8 ֆաշիստի։ Դրանից հետո նա գործի է դնում իր գնդացիրը և ոչնչացնում ևս 12 հիտլերական։ Շուտով ֆաշիստներն անցնում են հակագրոհի։ Նորից սկսում է գործել Ս. Ամյանի գնդացիրը։ Թշնամուն հուժկու հարվածում էին նաև վաշտի մյուս ռազմիկները։ Թշնամու գրոհը նորից հետ է մղվում։ Միայն այս մարտում Ս. Ամյանը ոչնչացնում է 16 և գերում 8 ֆաշիստ[40]։ Այդ բոլորի համար նա պարգևատրվել է մարտական կարմիր դրոշի շքանշանով։ Նա կոմունիստական կուսակցության անդամ է, ծնվել է 1924 թ.։ Կարմիր բանակ է զորակոչվել Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի Ղուշչի գյուղից։

Հենակետի պաշտպանությունն ապահովելու համար թշնամու շարունակվող կրակի տակ, մեծ քաջագործություններ էին կատարում դիվիզիայի սակրավորները։ Մեր զորամասերը հենակետ իջեցնելուց հետո, համարյա ամեն գիշեր սակրավորները զինամթերք ու սննդամթերք էին փոխադրում Օդերի ձախ ափը և այնտեղից վիրավորներ բերում աջ ափը։

Գետի անցման ժամանակ նավակը վնասվում է և իր վրա գտնվող վիրավոր զինվորներով խորտակման վտանգի առաջ է կանգնում։ Սակայն սակրավոր ծֆրեյտոր Վարազդատ Մակարի Կուլիկյանը իրեն նետում է սառցակալած ջուրը և նավակը տանում դեպի ափը, փրկում վիրավորնե-

---

40 Տես նույն տեղում, էջ 608—609։

րին։ Միայն երեք գիշերվա ընթացքում Վ. Կուլիկյանն իր դասակով մեր զորամասերի պաշտպանական գծի առջև տեղադրում է 1200 հակահետևակային և 400 հակատանկային ականներ մեր զինվորների առաջ գնալու համար ականազերծում է երկու անցում, չվախենալով թշնամու ուժեղ կրակից[41]։ Այդ բոլորի համար նա պարգևատրվում է Փառքի I աստիճանի շքանշանով։ Վ. Կուլիկյանը կոմունիստական կուսակցության անդամ է, ծնված Վրացական ԽՍՀ Ծալքիի շրջանի Ղզլքիլիսա գյուղում, 1921 թ.։

Քաջաբար էր գործում նաև կոմերիտական սակրավոր, հեթհեթյոտր Բերոր Պետրոսի Սերոբյանը։ Մարտերի ընթ պահին, առաջավոր գծում նա իր դասակով 250 հակատանկային և 420 հակահետևակային ականներ է դնում, փակելով թշնամու ճանապարհը։ Ապրիլի 14-ին նա ակտիվ կերպով մասնակցում է խրամատում բռնկված ձեռնամարտերին և սպանում 2 ֆաշիստ։ Թշնամու ուժեղ կրակի տակ բաց է անում 2 ականային և փշալարային անցում, որով մեր հեծելակը առաջ է շարժվում։ Այդ քաջագործությունների համար Բ. Սերոբյանը պարգևատրվում է Փառքի առաջին աստիճանի շքանշանով[42]։ Նա 1924 թ. ծնված է։ Զորակոչվել է Վրաստանի ԽՍՀ Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղից։

Հենակետում եղած երկու ամսում, դիվիզիայի մյուս զորամասերի հետ միասին, մարտական մեծ սխրանքներ կատարեց 526-րդ գունդը։ Նրա հրամանատարն էր գնդապետ Բորիս Եֆիմովիչ Ուլանովսկին, իսկ քաղաքական գծով տեղակալը՝ մայոր Պապիկ Նավասարդի Ավալյանը, որը ծանր վիրավորվեց ապրիլի 14-ի մարտում և երկու օր հետո մահացավ։

1945 թ. ապրիլի 22-ին Բ. Ե. Ուլանովսկու պարգևատրման թերթիկում գնդապետ Ն. Սաֆարյանը գրել է, որ նրա ղեկավարությամբ գունդը հենակետի դիմաց

41 Боевой путь..., էջ 609—610։

42 Նույն տեղում, էջ 610։

պայմաններում գերազանց կերպով կատարել է իր առջև դրված մարտական բոլոր խնդիրները։ Ապրիլի 14-ին մեկ դումարտակի ուժով գունդը կատարել է ուժային հետախուզություն, ճեղքել հակառակորդի պաշտպանության գիծը և գրավել երեք խրամատ, ոչնչացրել Բշնամու 380, գերել 40 զինվոր և սպա։ Այդ հետախուզությունը կարևոր ավյալներ է բերել ինչպես դիվիզիայի, նույնպես և վերադաս հրամանատարության համար և արժանացել բարձր գնահատականի։

Ապրիլի 16-ի հարձակման ժամանակ գունդը Ուլանովսկու զինավարությամբ հետ է մղել Բշնամու մի քանի հակագրոհները, նրան պատճառելով մարդկային և ռազմական տեխնիկայի մեծ վնասներ։ Նա ինքն էր գտնվում առաջավոր շարքերում և անձնական օրինակով ոգևորում ռազմիկներին։ Միայն այդ օրը գունդը ոչնչացրել է Բշնամու ավելի քան 200 զինվոր և սպա, շարքից հանել 4 ինքնագնաց հրանոթ, 19 գնդացիր և այլ զինքեր։ Գունդը գրավել է Հոհենտալիմուլն բնակավայրը և Յշեցշնովի հյուսիսային մասը[43]։ Գնդի այդ սխրանքների համար նրա հրամանատար գնդապետ Բ. Ե. Ուլանովսկին պարգևատրվել է մարտական Կարմիր դրոշի շքանշանով։ Նա ԽՄԿԿ անդամ է, 1907 թ. ծնված։ Կադրային զինվորական։ Զորակոչվել էր Պոլտավայի մարզի Լուբնի բնակավայրից։

Հարկ եմ համարում նշել, որ երբ ապրիլի 14-ին առաջյան ծանր վերքից 16-ին մահացավ նրա քաղաքական գծով տեղակալ մայոր Պ. Ավալյանը, քաղբաժնի կողմից նա գտնվում էր այդ գնդում։ Դիվիզիայի հրամանատարի գծով տեղակալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանը ինձ կանչեց հեռախոսի մոտ և հաղորդեց հրամանը, որ պետք է մնամ այդ գնդում որպես գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ։ Եվ սկսվեց իմ ծառայությունը նոր պաշտոնում, գնդապետ Բ. Ե. Ուլանովսկու հետ։ Անցած մարտերից ես ար-

---

43 Боевой путь..., էջ 615։

դեն լավ գիտեի նրան՝ որպես ռազմական հարուստ գիտելիքներ ունեցող, խելոք և համարձակ, անվախ և բարձր կուլտուրայի տեր հրամանատարի։ Իսկ առաջիկա մարտերում, երբ արդեն գործում էի նրա հետ միասին, ավելի ու ավելի համոզվեցի դրանում։ Ֆրանկֆուրտի և Բեռլինի մարտերում գնդապետ Բ. Ե. Ուլանովսկու ղեկավարությամբ 526-րդ գունդը կատարեց մարտական նորանոր սխրագործություններ[44]։

Օդերի հենակետի երկու ամսյա ծանր մարտերում հերոսաբար էր գործում 526-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Պ. Ն. Ավալյանը։ Գունդը հենակետ իջնելու առաջին իսկ օրվանից նա մշտապես գտնվում էր առաջավոր գծում՝ զինվորների ու ստորաբաժանումների հրամանատարների մոտ։ Մարտերի ժամանակ իր անձնական օրինակով խրախուսում նրանց, ատելություն սերմանում թշնամու նկատմամբ։ Մարտի ժամանակ տեսնելով գնդի 8-րդ վաշտի ծանր վիճակը, մայոր Պ. Ավալյանը հայտնվում է այնտեղ, կազմակերպում հակահարվածը և կարգավորում վիճակը։ Այդ մարտում վաշտը ոչնչացնում է մինչև 20 ֆաշիստ։

45 թ. ապրիլի 14-ին, երբ 526-րդ գունդը պետք է անցներ հարձակման, մայոր Պ. Ավալյանը լինում է բոլոր գումարտակներում և օգնում հրամանատարներին, զրուցում ռազմիկների հետ։ Իսկ երբ սկսվեց գրոհը, «Առաջ, հանուն հայրենիքի» կոչելով, նա առաջինն է բարձրանում։ Պ. Ավալյանին հետևում են բոլոր ռազմիկները։ ...Դա նրա վերջին մարտն էր[45]։ Նա ծանր վիրավորվում է և երկու օրից հետո մահանում։ Քաջարի մայոր Պ. Ավալյանը հետմահու պար-

---

44 Երբ դիվիզիան վերադարձավ Գերմանիայից, գնդապետ Բ. Ե. Ուլանովսկին փոխադրվեց այլ զորամաս։ Ծառայում էր էշմիածնի ամրացված շրջանում, որպես շտաբի պետ։ Դժբախտաբար հետո նրա հետ զազարեցին կապերը։

45 Боевой путь..., էջ 645—646։

դևատրվում է Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով։

Դիվիզիան շարունակում էր ծանր մարտերը հենակետում Բշնամու պաշտպանության ճեղքվածքն ընդարձակելու ձեռք բերված առաջին հաջողություններն ամրապնդելու համար։

3. ՄԱՍՆԱԳՅՈՒՂՅՈՒՆԸ ՕԴԵՐԻ ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ԳՐԱՎՄԱՆԸ. ԲԵՌԼԻՆԻ ԳՐՈՀԸ

Սկսվել էր գարունը։ Զգալի չափով բարելավվել էին եղանակները։ Բնությունը զարթոնք էր ապրում։ Ամենուրեք կանաչել էին դաշտերն ու անտառները։

Բնության այդ գեղեցկության պայմաններում պատրաստվում էին ռազմական մեծ գործողություններ, մեծ ճակատամարտեր։ Հերոսական Կարմիր բանակն արդեն պատրաստ էր վերջին ու վճռական գրոհին Բեռլինի վրա։ Մոտենում էին ժողովուրդներին ահռելի մարդկային ու նյութական վնասներ պատճառած, նրանց ամենակատաղի թշնամի հիտլերյան պետության և բանակի գլխովին ջախջախման օրը։ Բոլորս ապրում էինք և ուրախանում այդ մտքով։ Մեղանից շատերը ընկան այդ նվիրական նպատակի իրականացման անմիջական նախօրյակին՝ Բեռլինի մատույցներում և նրա փողոցներում։ Իրենց կյանքի գնով նրանք ապահովեցին մեր մեծ հաղթանակը։

Ֆաշիստական հրամանատարությունը, մոբիլիզացնելով իր վերջին բոլոր ուժերն ու հնարավորությունը, ձգտում էր կործանումից փրկություն գտնել։ Ինչպես պատերազմի նախորդ էտապներում, նույնպես և այժմ գերմանական հրամանատարությունը իր գլխավոր ուշադրությունը կենտրոնացրել էր արևելյան ռազմաճակատի վրա։ Մեր հարձակման նախօրյակին, 1945 թ. ապրիլի կեսերին, այս ռազմաճակատում նա կենտրոնացրել էր 214 դիվիզիա, 14 բրիգադ։ Այդ դիվիզիաներից 34-ը տանկային էին, 15-ը՝ մեքենայաց-

ված[46]: Օդերից մինչև Բեռլին Թշնամին ստեղծել էր պաշտպանության բազմաշերտ հզոր գծեր: Բոլոր քաղաքները և մյուս բնակավայրերը վեր էին ածվել պաշտպանության ամուր հենակետի: Այդ բոլորին զուգընթաց մեծ չափով ուժեղացել էր ֆաշիստական պրապագանդան բնակչության շրջանում, որի նպատակն էր խաբել բնակչությանը և նրա մեջ սարսափ ու տագնապ բորբոքել Կարմիր բանակի՝ այսպես կոչված դաժանությունների մասին: Հիտլերականները նույնիսկ փորձեցին հաշտության լեզու գտնել արևմտյան մեր դաշնակիցների հետ և Բեռլինի ճանապարհը բաց անել նրանց համար, որին, ի հարկե, մեծ ախորժակով ձգտում էին վերջիններս: Բայց Կարմիր բանակի հաղթական հարձակումը այդ փորձը նույնպես ձախողեց:

Բեռլինի գրոհի գլխավոր ուղղության վրա կանգնած էին մարշալ Գ. Կ. Ժուկովի հրամանատարությամբ գործող բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերը, որոնք, ինչպես նշեցինք Օդերի ձախ ափին գրավել և ամրապնդել էին մի շարք կարևոր հենակետեր: Նրանց հետ այդ գրոհին պիտք է մասնակցեին նաև ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը՝ մարշալ Ի. Ս. Կոնևի հրամանատարությամբ և բելոռուսական ռազմաճակատի զորքերը՝ մարշալ Կ. Կ. Ռոկոսովսկու հրամանատարությամբ:

Ապրիլի 16-ի լուսաբացին բելոռուսական առաջին ռազմաճակատում թշնամու դիրքերի վրա տեղային մեր հրանոթների հուժկու համազարկերը: Միայն այս ռազմաճակատում գործում էր տարբեր տրամաչափի 20 հազար հրանոթ, այդ թվում 1500 «կատյուշաներ» և մեծ քանակությամբ ականանետներ, ավելի քան 1000 զենիթային հրանոթ: Մեկ ժամից ավելի նրանք հուժկու կրակ էին տեղում թշնամու դիրքերի և պաշտպանական հանգույցների վրա: Դրան զուգորդեց ռազմաճակատի 3000-ի չափ տարբեր հզորության

---

[46] Великая Отечественная война Советского Союза *1941—1945*», краткая история, *էջ 490*:

տանկերի առաջընթացը, որոնց հետևից շարժվում էր հետևակը: Միաժամանակ նախօրոք ստեղծված անցումներով մեր զորքերը շարունակում էին փոխադրվել Օդերի ձախ ափը:

Բշնամու շարքերում մեծ խուճապ առաջացրեցին մարշալ Գ. Կ. Ժուկովի հրամանով մեր հարյուրավոր հզոր լուսարձակներից նրա դիրքերի վրա ուղղված լույսերը, որոնց ներքո առաջ էին շարժվում մեր տանկերը, ապա հետևակը: Այդ լույսերի կուրացնող ազդեցությունը այնքան ուժեղ էր, որ ֆաշիստական բանակի հրամանատարությունը առաջին պահին չկարողացավ կողմնորոշվել՝ դրանք նոր զենք են, թե սովորական լույս: Նույնիսկ առանձին գեներալներ բացձր հրամանատարությանը շտապ զեկուցեցին, որ խորհրդային բանակը օգտագործում է զենքի ինչ որ նոր տեսակ:

Ծավալվեց հուժկու հարձակում ֆաշիստական դիրքերի վրա: Բոցավառվում էին երկինքն ու գետինը: Առաջին շրջանում հանկարծակի գալով, թշնամին խուճապի մատնվեց, որը կարճ տևեց: Այնուհետև նա սկսեց կատաղի դիմադրություն: Կոտրելով այդ դիմադրությունը, մեր տանկերը և նրանց հետևող հետևակային զորամասերը առաջ էին շարժվում: Թշնամուն օդից հարվածում էին մեր ինքնաթիռները, որոնց թիվը միայն այս ռազմաճակատում հասնում էր 3000-ի: Իսկ Բեռլինի գրոհին մասնակցած բոլոր երեք ռազմաճակատները միասին ունեին 42 հազար հրանոթ և ականանետ, 6250 տանկ և ինքնագնաց հրանոթ: 7500 մարտական ինքնաթիռ[47]: Այդ երեք ռազմաճակատի զորքերի թիվը հասնում էր 2.500 հազարի (թիկունքային զորամասերի հետ միասին)[48]: Անձնակազմի քանակով մեր զորքերը թշնամուն գերազանցում էին 2,5, հրանոթներով՝ 4,2, տանկերով և ինքնագնաց հրանոթներով՝ 4,1 և ինքնաթիռներով՝ 2,8 անգամ: Այդ հզոր տեխնիկան 300 կիլոմետր ճակատով իր հուժկու կրակն էր թափում թշնամու դիրքերի վրա:

---

47 Նույն տեղում, էջ 495:

48 Նույն տեղում:

Կոտրելով ֆաշիստական բանակի կատաղի դիմադրությունը, մեր զորքերը հաղթականորեն առաջ էին շարժվում դեպի Բեռլին։

Հարձակման առաջին օրը նրանք առաջ ընթացան 7 կիլոմետր։ Շուտով 8-րդ գվարդիական բանակի զորքերը դրավեցին Զեելովյան բարձունքները։ Այն հնարավորություն տվեց ավելի ուժեղացնելու մեր դրոհը դեպի Բեռլին։

4-5 օրում բելոռուսական առաջին և ուկրաինական առաջին ռազմաճակատների առաջավոր բանակներն արդեն հասել էին Բեռլինին, որոնք ապրիլի 25-ին նրա հյուսիս-արևմտյան մասում հանդիպեցին միմյանց և ավարտեցին ֆաշիստական մայրաքաղաքի շրջապատումը։ Այժմ սկսվեցին այնտեղ գտնվող այդ բանակի ջախջախման մարտական հզոր գործողությունները։ Այդ օրերին բելոռուսական երկրորդ ռազմաճակատի զորքերը, ռազմաճակատի հյուսիսային հատվածում նույնպես մեծ հաջողությամբ առաջ էին շարժվել և իրագործում այնտեղ դիմադրություն ցույց տվող ֆաշիստական զորքերի ջախջախումը։

Այսպիսով, այդ երեք ռազմաճակատների հաջող մարտական գործողությունները անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին արագությամբ ոչնչացնելու Բեռլինում և նրա հարավ-արևելքում շրջապատված ֆաշիստական բանակի պլեսովին ջախջախման համար։ Այդ տեղի ունեցավ մեկ շաբաթվա ընթացքում՝ ապրիլի 26-ից մայիսի 2-ը։

Բեռլինում շրջապատված ֆաշիստական բանակի ոչնչացման մարտական գործողություններին զուգընթաց, ապրիլի 16-ից մինչև 23-ը համառ մարտեր էին տեղի ունենում Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքի համար։ Այդ քաղաքի հյուսիսից ու հարավից ճեղքելով Բշնամու պաշտպանության գծերը, ինչպես նշեցինք, մեր զորքերը մի քանի օրում արդեն հասել էին Բեռլինին։ Սակայն, որպես մեր զորքերի թիկունքում կարևոր սարատեգիական կետ, Բշնամին այդ քաղաքը

պահում էր իր ձեռքում և կատաղի պայքարում նրա համար: Այստեղ էին գտնվում ֆաշիստական մի քանի դիվիզիա և մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա:

Ֆրանկֆուրտի համար Բշնամու դեմ մարտնչում էին բելոռուսական ռազմաճակատի ուժերից մի քանի դիվիզիա, այդ թվում նաև 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան:

Ինչպես տեսանք ապրիլի 16-ին, երբ սկսվեց գրոհը դեպի Բեռլին, հարձակման առաջին իսկ պահին դիվիզիայի զորամասերը, կոտրելով հակառակորդի ուժեղ դիմադրությունը, ճեղքեցին նրա պաշտպանությունը և առաջ ընթացան:

Սակայն Ցշեցշնով բնակավայրում Բշնամին մեր առաջընթացը կանգնեցնում է: Նա շատ ուժեղ դիմադրում էր: Այդ բնակավայրի համար չորս օր շարունակվում են կատաղի մարտերը: 10 տանկի պաշտպանությամբ նրա հետևակը գրոհի է անցնում: Աներեր կերպով մնալով իրենց դիրքերում, Թամանցիները հակահարված են տալիս նրանց: Ապրիլի 18-ին մարտի դաշտում հակառակորդը թողնում է իր զինվորների և սպանների 150 դիակ և մեկ վնասված տանկ[49]: Հաջորդ օրը նա նորից է գրոհի անցնում, բայց նորից հետ է շպրտվում: Եվ այսպես մի քանի անգամ: Շարունակելով հակագրոհները, Թամանցիները ապրիլի 18-ին և 19-ին համբուղջությամբ գրավում են Ցշեցշնով բնակավայրը, որը ֆրանկֆուրտի պաշտպանության շատ կարևոր հանգույցն էր: Դրա համար էլ Բշնամին բոլոր ուժերով դիմադրում էր: Այդ չորսօրյա մարտերում մեր դիվիզիայի հատվածում նա կորցրեց 1600 զինվոր և սպա, 48 գնդացիր, 8 ականանետային և 3 հրանոթային մարտկոց, 2 տանկ և ինքնագնաց հրանոթ, գերի թողեց 300 մարդ[50]: Մարտի դաշտում թողեց մեծ թվով ռազմական տեխնիկա:

Այդ ծանր մարտում Թամանցիները նույնպես ունեցան զգալի կորուստներ, զոհվածներ՝ 175, վիրավորներ՝ 603

---

49 Боевой путь..., էջ 603:

50 Նույն տեղում, էջ 606:

մարդ[51]։ Քիչ չէին նաև ռազմական տեխնիկայի կորուստները։

Թշնամուն հետապնդելիս անվտանգ կերպով կարելի էր առաջ շարժվել միայն այն խրամատներով, որոնցով նա հետ էր քաշվել։ Իսկ դրանք բավականին նեղ ուղիներ էին և դանդաղացնում էին մեր արագ առաջընթացը։ Ով փորձում էր դուրս գալ այդ խրամատներից, ընկնում էր թշնամու ականապատված դաշտը և վնասվում։ Այդ ձևով վնասվեցին մեր ռազմիկներից շատերը։

Ականապատված այդ դաշտերը վնասազերծելու համար թշնամու կրակի տակ հայրենանվեր գործ կատարեցին դիվիզիայի սակրավորները։ Նրանք բացեցին մի շարք անցուղիներ, որոնցով արագ կերպով առաջ էին գնում մեր ռազմիկները, հետապնդելով նահանջող հակառակորդին։ Սակայն աջ թևում, Ֆրանկֆուրտի կողմի անտառի եզրից թշնամին հրանոթային և գնդացրային ուղիղ նշանառությամբ հարվածում էր առաջ շարժվող մեր մարտակարգերին։ Թշնամու ականի բեկորով հերոսաբար ընկան մեր ռազմիկներից շատերը, այդ թվում 526-րդ գնդի 3-րդ գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, կապիտան, երիտասարդ բանաստեղծ Արսեն Հովհաննիսյանը։ Նույն ականի բեկորով զոհվեց ռազմիկ Արմեն Սարգսյանը, ծանր կոնտուզիա ստացան 526-րդ գնդի ադիտատոր, կապիտան Ռաֆիկ Սարոյանը և սույն տողերի հեղինակը։

Շուտով դիվիզիան հրաման ստացավ փոխել հարձակման ուղղությունը և թեքվել դեպի աջ, մասնակցել Ֆրանկֆուրտի գրավմանը։ Նա իր մարտական դիրքերը հանձնեց նույն օրը հենակետ իջած 33-րդ բանակի այլ միավորումներին, որոնք շարունակեցին հարձակումը դեպի Բեռլին։

Ֆրանկֆուրտում շրջապատված գերմանական զորքերը ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս։ Ապրիլի 16-ից մինչև 22-ը համառ մարտեր տեղի ունեցան այդ քաղաքի համար։ Թշնամին նպատակ ուներ իր ձեռքում պահելով ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այդ քաղաքը՝

---

51 Նույն տեղում, էջ 604։

մեկ կողմից թիկունքից սպառնալիք ստեղծել առաջ անցած մեր զորքերի համար, մյուս կողմից՝ այստեղ զբաղեցնել ռազմաճակատի մեր զորքերի մի մասը, դրանով իսկ թուլացնել մեր գրոհը դեպի Բեռլին։

Ֆրանկֆուրտը լիովին շրջապատված էր։ Մեր բարձր հրամանատարության հրամանով միայն նրա արևմտյան մասից դեպի Բեռլին տանող ճանապարհն էր բաց թողնված։ Այդ արված էր նրա համար, որպեսզի քաղաքում շրջապատված ֆաշիստական զորքերը փախուստի ճանապարհ ունենան, դուրս գան բաց դաշտ, ուր գտնվում էին մեր համապատասխան զորամիավորումները։ Այստեղ թշնամուն ջախջախելն ավելի հեշտ էր և կապված էր ավելի քիչ զոհերի հետ։

Մեկ շաբաթվա համառ մարտերի ընթացքում մեր զորքերը աստիճանաբար սեղմում էին թշնամու օղակումը։ Նրա ուժերի մի մասը հեռանում էր քաղաքից և ոչնչացվում նրա մատույցներում, իսկ մյուս մասը շարունակում էր դիմադրությունը քաղաքի փողոցներում։

Ինչպես տեսանք, 89-րդ Թամանյան դիվիզիան Ֆրանկֆուրտի վրա գրոհում էր նրա հարավային կողմից։

Ապրիլի 17-ին դիվիզիայի զորամասերը հարձակման անցան Ֆրանկֆուրտի վրա։ Քաղաքի ծայրամասում նախօրոք պատրաստված ամրություններից, շենքերից և այլ դիրքերից թշնամին ուժգին կրակ էր տեղում հարձակվող մեր զորամասերի վրա։ Իր հերթին հակառակորդի վրա ուժեղ կրակ էին թափում մեր հրետանին և ականանետները։ Շավալվնցին ուժեղ մարտեր։

Ձախ թևից հարձակվում էր գնդապետ Ուրալովսկու հրամանատարությամբ գործող 526-րդ գունդը։ Կոտրելով հակառակորդի դիմադրությունը և հետ չշպրտելով նրան, գնդի զորամասերը հասել էին Լոսով-Ֆրանկֆուրտ խճուղուն։ Շուտով կապիտան Ա. Աթոյանի և մայոր Ս. Մարգարյանի գումարտակները, առաջ շարժվելով, գրավում են երկու կարևոր բարձունքներ և այնտեղից կրակ տեղում թշնամու վրա։ Առաջ ընթացող ստորաբաժանումներում էին գտնվում

գնդի կուսակցական բյուրոյի քարտուղար կապիտան Ս. Բա-
դալովը, ագիտատոր, կապիտան Ռ. Սարոյանը, կոմերիտա-
կան կազմակերպիչ, լեյտենանտ Զ. Ղազարյանը, հատուկ
բաժնի աշխատակից, կապիտան Ա. Դավթյանը և ուրիշներ:
Զինքը ձեռքին նրանք մարտնչում էին թշնամու դեմ և իրենց
բոլշևիկյան ագիտացիայով ոգևորում քաջարի ռազմիկնե-
րին: Այստեղ էր գտնվում նաև սույն տողերի հեղինակը՝
գնդի հրամանատարի քաղաքական գծով նոր տեղակալը:

Այդ հարձակման ժամանակ գլխից մահացու վերք է
ստանում 3-րդ դումարտակի հրամանատար, անցած բոլոր
մարտերում իր քաջագործություններով աչքի ընկած կո-
մունիստ մայոր Ս. Մարգարյանը:

Ֆրանկֆուրտի գրոհի ընթացքում մեր ռազմիկները կա-
տարեցին նորանոր հերոսական սխրանքներ: Կոմունիստ, կար-
միրբանակային Ս. Մամյանը իր մարտական ընկերների հետ
միասին հարձակման առաջին իսկ րոպեներին հասավ թշնամու
խրամատները: Մարտի բռնվելով և նռնակ նետելով, նա
սպանեց 3 ֆաշիստի: Իսկ կոմերիտական կազմակերպիչ, լեյ-
տենանտ Վ. Թադևոսյանը ոչնչացրեց 7 ֆաշիստ, դերից
3-ին: Կոմունիստ գնդացրորդ, ավագ սերժանտ Չաքիրյանը
իր դիպուկ կրակով շարքից հանեց 17 ֆաշիստի: Կարմիր-
բանակային Գևորգյանկովը գնդացրային կրակով պաշտպա-
նելով մեր հետևակի առաջընթացը, միայն այդ մարտի ըն-
թացքում ոչնչացրեց 50 հիտլերական: Սերժանտներ Ա. Հով-
հաննիսյանը, Ի. Ավգուստովիչը, Ն. Բերյուխինը և շարքային
Վ. Մալչանովը իրենց ականներով ոչնչացրին թշնամու 19
կրակակետ: Նիշպահարն էր գործում կապավոր Մկրտում-
յանը: Մարտի ծնժ պահին, հակառակորդի ուժեղ կրակի տակ
նա 7 անգամ վերականգնեց հեռախոսային կապի գիծը մեր
առաջապահումների միջև: Նույնպիսի խիզախությամբ էին
գործում կապավորներ Ս. Թալաքալյանը, Ն. Բուրմանյանը,
Ս. Գրիգորյանը և ուրիշներ: Կոմունիստ գնդացրորդ Ա. Խա-
չատրյանն այդ մարտում ոչնչացրեց 15 ֆաշիստ:

Աջ թևում իր գրոհն էր սկսել գնդապետ Ի. Լևչենկոյի 390-րդ գունդը[52], որը նույնպես զրավից մի շարք կարևոր դիրքեր։ Ակտիվ էր գործում լեյտենանտ Ս. Աղաջանյանի վաշտը, որն ընթանում էր բոլորից առաջ։ Այդ մարտում Ս. Աղաջանյանը հերոսաբար զոհվում է։

Թշնամու կատաղի դիմադրությանը հանդիպեց մայոր Մելքումովի գումարտակը։ Մելքումովը մահացու վերք է ստանում։ Նրան փոխարինում է կապիտան Ա. Զաքարյանը, որը նույնպես հերոսաբար զոհվում է։ Իրենց զոհված հրամանատարների ու ընկերների համար թշնամուց վրեժ լուծելու ցասումով գնդի ռազմիկները շարունակում էին գրոհը, ֆաշիստներին հասցնելով մեծ վնասներ։

Այդ մարտում թշնամուն ուժգին հարվածներ հասցրեց կապիտան Արտ. Պողոսյանի վաշտը, որը իր մարտական սխրանքներով աչքի էր ընկել նախորդ մարտերում։ Վաշտի հրամանատարը մշտապես լինում էր այնտեղ, ուր դրությունը ծանր էր և իր խելամիտ հրամաններով ու անձնական օրինակով ապահովում հաջողությունը։

Գնդապետ Ֆ. Շապավալովի հրամանատարությամբ գործող 400-րդ գունդը իր հարձակումը ծավալում էր կենտրոնից։ Առաջ ընթանալով, նա նույնպես սիրացել էր մի շարք կարևոր բնագծերի։

Բայց առջևում դեռևս մի խոշոր բարձունք կար, ուր ամրացված ֆաշիստները իրենց ուժեղ կրակով խանգարում էին գնդի առաջընթացը։ Գունդը ընթացքից մարտի բռնվեց համառորեն դիմադրող թշնամու հետ։ Անհրաժեշտ էր հաղթահարել այդ դիմադրությունը, ճեղքել ֆաշիստների պաշտպանության գիծը Ֆրանկֆուրտի անմիջական մատույցներում, սիրանալ բարձունքին և ապահովել մեր զորամասերի հետագա առաջխաղացումը։ Այդ դժվարին խնդրի կատա-

---

52 Այդ գնդի հրամանատար փոխգնդապետ Ե. Կարապետյանը Ռուսկի Բրուդի մարտերում վիրավորվել էր և բուժումը դեռ շարունակում էր հոսպիտալում։

րումը գնդապետ Ֆ. Շապավալովը հանձնարարում է մայոր Հրանտ Բաբայանի գումարտակին, այն գումարտակին, որը նախորդ բոլոր մարտերում իր խնդիրները հաջողությամբ էր կատարել։ Մանրազնին ծանոթանալով տեղանքին և հետախուզության միջոցով պարզելով հակառակորդի կրակային կետերի դասավորությունը, Հ. Բաբայանը կարճ ժամանակամիջոցում նախապատրաստում է գումարտակի գրոհը Բշնամու դիրքերի վրա։ Յուրաքանչյուր վաշտ և դասակ, յուրաքանչյուր ռազմիկ գիտեր իր խնդիրը տվյալ գրոհի ժամանակ։

Ժամանված ժամին գումարտակը բարձրանում է գրոհի։ Նրա հարձակումը պաշտպանության տակ են առնում գնդի ամբողջ հրետանին և ականանետային սոորաբաժանումները։ Բշնամու դիրքերը պատել էին ծխով ու կրակով։ Չնայած դրան, նա շարունակում էր պատասխան կրակը։ Թամանցինների անընդհատ համազարկերի տակ, գնալով, այդ կրակը նվազում էր։ Մայոր Հ. Բաբայանի գումարտակը առաջ էր շարժվում։ Ճեղքելով Բշնամու պաշտպանության բազմաշերտ գիծը, գումարտակի սոորաբաժանումները սևպաձև մտնում են ֆաշիստական մարտակարգերի մեջ և արագությամբ ընդարձակում այդ ճեղքվածքը։ Բշնամու շարքերում սկսվում է խուճապը։ Օգտվելով դրանից, գումարտակը ավելի ու ավելի է ծավալում իր սրընթաց գրոհը։ Մեծ զոհեր տալով, Բշնամին դուրս է շպրտվում իր դիրքերից։ Նրա կորուստների թիվը հասնում էր 600-ի, որի մեծ մասը սպանվածներ էին։ Բացի դրանից, գումարտակը վերցրեց 47 գերի։ Մարտի դաշտում թափված էր Բշնամու մեծ թվով ռազմական տեխնիկա՝ հրանոթներ, ականանետներ, գնդացիրներ, հրացաններ և այլն[53]։

Այդ դժվարին մարտում Հ. Բաբայանի գումարտակը նույնպես ունենում է կորուստներ՝ զոհվածներ և վիրավորներ։ Վիրավորների թվում էր նաև գումարտակի քաջարի

---

53 Боевой путь..., էջ 659։

հրամանատար մայոր Հ. Բաբայանը: Բայց քանի դեռ ուժ ուներ, վիրավոր վիճակում նա շարունակում էր ղեկավարել գումարտակի մարտական գործողությունները: Իսկ երբ այլևս հնարավոր չէր մնալ մարտակարգերում, նրան փոխադրում են հոսպիտալ: Գումարտակի մարտական գործողությունները շարունակում են ղեկավարել նախ նրա շտաբի պետ կապիտան Մ. Բարլոյանը, ապա կապիտան Հ. Անոյանը, որոնք հաջողությամբ կատարում են իրենց վստահված այդ գործը: Այդ քաջագործությունների համար մայոր Հ. Գ. Բաբայանը արժանանում է Խորհրդային Միության հերոսի կոչման[54]: Նա դիվիզիայի 9-րդ հերոսն էր:

Այսպիսով, այն բարձունքը, որը փակում էր թամանցիների գրոհը դեպի Ֆրանկֆուրտ, մայոր Հ. Բաբայանի գումարտակի հաղթական գրոհի շնորհիվ, արդեն մեր ձեռքում էր: Այդ հաջողությունը հնարավորություն տվեց 400-րդ գընդին և դիվիզիայի մյուս զորամասերին, առանց մեծ կորուստների, գրավել ավելի հարմար դիրքեր և դեպի Ֆրանկֆուրտ հարձակումը ծավալել այնտեղից:

Կորցրած դիրքերը վերականգնելու նպատակով, գումարտակի ձախ թևում շուտով թշնամին անցնում է հակահարձակման: Նորից բռնվում են ուժեղ մարտեր, որոնց ընթացքում ֆաշիստները հետ են շպրտվում: Այս անգամ մարտի դաշտում թշնամին թողել էր 200-ի չափ դիակներ, մի քանի տանկեր և ռազմական այլ տեխնիկա:

Դիվիզիայի գրաված բնագծում մեկ շաբաթվա ընթացքում կրկնվեցին այդպիսի մի շարք գրոհներ և հակագրոհներ: Նրանք տևում էին ունենում համարյա ամեն օր, ըստ որում, օրական մի քանի անգամ:

Եվ չնայած այդ բոլորին, թամանցիները հաստատ կերպով ամրացել էին գրաված դիրքերում և նախապատրաստվում վերջին գրոհին Ֆրանկֆուրտի վրա:

Այդ գրոհն սկսվեց ապրիլի 21-ին և ավարտվեց հաղ-

---

54 Նույն տեղում, էջ 658—659:

բանակով։ Կոտրելով Բշնամու կատաղի դիմադրությունը, դիվիզիայի զորամասերը 22-ին մտան Ֆրանկֆուրտ։ Հաջորդ օրը այն ամբողջովին մաքրեցին Բշնամուց։ Այսպիսով ռազմաճակատի մյուս դիվիզիաների հետ միասին, 89-րդ դիվիզիան գլխովին ջախջախեց Ֆրանկֆուրտի ֆաշիստական զորախմբավորումը և տիրացավ այդ քաղաքին։

Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը, ինչպես միշտ, այս անգամ ևս անդադրում հետևում էր ծավալված այդ ուժեղ մարտերին և իր խելամիտ հրամաններով ապահովում զորամասերի հաջողությունները։

Հարձակման միայն վերջին օրը դիվիզիայի զորամասերը ոչնչացրին ավելի քան 250 և գերեցին մոտ 500 ֆաշիստական զինվոր և սպա։ Իսկ ամբողջ շաբաթվա ընթացքում Ֆրանկֆուրտի համար մղած մարտերում Բամանցիների հարվածներով Բշնամու մարդկային կորուստները կազմեցին ավելի քան 1500։ Վերցվեց զգալի չափով ռազմավար՝ երկու գնացք՝ բեռնված զենքով և ռազմապաշարով, տարբեր տրամաչափի 37 հրանոթ, 18 զենիթային սարքավորում, մեծ քանակությամբ ականանետներ, 185 ավտոմեքենա, 13 ռադիոկայան, 61 գնդացիր և այլն։

Ֆրանկֆուրտի համար մղած մարտական գործողությունների շնորհիվ դիվիզիան արժանացավ Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալությանը։ Նրա հարյուրավոր ռազմիկներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով և մեդալներով։

* * *

Ֆրանկֆուրտի գրավումից հետո Բամանյան դիվիզիան հրաման ստացավ անմիջապես շարժվել դեպի Բեռլին։ Առանց դադարի նրա զորամասերը ուղղություն են վերցնում դեպի ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաքը։ Բոլորս ապրում էինք մեծ ցնծություն, քանի որ մեզ բախտ էր վիճակվել մասնակցելու ֆաշիստական բանակի ջախջախման

վերջին հերոսամարտերին, այն էլ նրա մայրաքաղաքում: Միաժամանակ բոլորս լցված էինք անսահման վրիժառությամբ: Չէ որ դա այն քաղաքն էր, ուր մշակվել էին մեր մեծ սոցիալիստական հայրենիքի վրա հարձակվելու զավթողական պլանները, որտեղից ֆաշիստական ղորքերը հրամաններ էին ստանում իրագործելու դրանք: Հայ Յամանցիների ցասումն ավելի էր ուժեղացել նաև այն պատճառով, որ 1915 թվականին Թուրքերի կողմից իրագործված հայկական գենոցիդը սանձազերծվել և խրախուսվել էր Բեռլինից:

Այդ օրերին դիվիզիայի մարտիկները հաճախ էին ընթերցում դիվիզիայի ռազմիկ, բանաստեղծ Արշալույս Սարոյանի «Դեպի Բեռլին» բանաստեղծությունը, որը տպագրվել էր «Կարմիր զինվոր» թերթի դեռևս 1945 թ. փետրվարի 27-ի համարում:

Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

Մենք գնում ենք դեպի արևմուտք, դեպի Բեռլին,
Որ բարձրացնենք այնտեղ դրոշն հաղթանակի,
Որ դատարկենք հուր վրեժի բաժակը լի,
Դյուցազնական անծիր սրտից մեր բանակի:
Մեր ոտքերի տակ գեմանական հողն է դողում,
Որ ծածկվել է նենգ թշնամու դիակներով,
Անտառներն են գլուխները լուռ խոնարհում,
Երբ անցնում են զորագնդերը մեր հաղթող:

Ապրիլի 23-ից մինչև 25-ը առաջ գնալով, դիվիզիան արդեն մոտեցել էր քաղաքին: Այդ օրերին նա մի քանի անգամ մարտերի մեջ էր մտել նահանջող ֆաշիստական զորքերի և անտառներում մեկուսացված առանձին խմբավորումների հետ, հաղթանակով դուրս գալով մարտերից:

Բեռլինի արևելյան հեռավոր մատույցներում ապրիլի 25-ին դիվիզիան հրաման է ստանում փոխել շարժման ուղղությունը և գնալ դեպի հյուսիս-արևմուտք, մտնել քա-

ղաքը հյուսիսից գրոհող 3-րդ հարվածային բանակի մեջ, բանակ, որի հրամանատարն էր գեներալ-գնդապետ Վ. Մ. Կուզնեցովը։ Ապրիլի 28-ին, Բեռլինից հյուսիս Յյուլդորֆ բնակավայրի մոտ դիվիզիան հասավ այդ պանծալի բանակին, մտավ նրա կազմի մեջ և մյուս դիվիզիաների հետ միասին ծավալեց գրոհը Բեռլինի վրա։ Դա անսահման մեծ վստահություն էր, որին արժանացել էր մեր ազգային դիվիզիան։ Եվ մեզանից յուրաքանչյուրը լցված էր բուռն կամքով ու մարտական կորովով՝ արդարացնելու այդ վստահությունը։

Ինչպես հայտնի է, Բեռլինը աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկն է։ Նրա սահմանները ձգվում են արևելքից արևմուտք՝ ավելի քան 40, իսկ հարավից հյուսիս՝ մոտ 30 կիլոմետր։ Պատերազմի նախօրյակին նրա բնակչության թիվը մոտ 4,5 միլիոն էր։ Իսկ մեր զորքերի գրոհի ժամանակ այնտեղ մնացել էր մոտ 3 միլիոն բնակիչ և կար մեկ միլիոնի հասնող կայազոր, որը կատաղաբար պաշտպանում էր քաղաքը։

Այդ հսկա քաղաքը ֆաշիստների կողմից վեր էր ածվել պաշտպանության հզոր հանգույցի։ Դեռևս պատերազմի նախօրյակին և նրա ժամանակ քաղաքի տարբեր մասերում կառուցվել էին մի շարք մեծ ամրոցներ, որոնք հագեցված էին ժամանակակից բազմապիսի ռազմական տեխնիկայով։ Քաղաքի համարյա բոլոր կարևոր շենքերը, փողոցներն ու հրապարակները վեր էին ածվել պաշտպանական կետերի։ Շատ թաղամասերում մոլեգնում էին հրդեհներ, որոնք առաջացել էին մեր ու մեր դաշնակիցների սավառնակների ու հրանոթների հարվածներից։ Ռմբակոծությունների հետևանքով բազմաթիվ շենքեր փուլ էին եկել։ Բացի դրանից փողոցներում առաջացել էին մեծ-մեծ փոսեր, քանդվել էին Շպրե գետի կամուրջները։

Այդ բոլորի հետևանքով խիստ դժվարացել էր մեր հարձակվող զորքերի վիճակը։ Ինչպես այն ժամանակ մեր ռազմիկները պատկերավոր ասում էին, Բեռլինի փողոցները և

հրապարակները սեղմվել, նեղացել են մեր զորքերի հարձակողական գործողությունների համար։ Հնարավոր չէր լայն ճակատով հարձակվել։

Ուղիղ նշանառությամբ հարվածող մեր հրանոթները և տանկերը դժվարանում էին արագ տեղաշարժվել։ Առանց հետևակի նրանք ի վիճակի չէին հաջող մարտական գործողություններ վարել։ Նման պայմաններում հետևակը նույնպես չէր կարող առանց տանկերի ու հրանոթների հաջող մարտական գործողություններ վարել։ Այդպիսի խոշոր քաղաքում ծավալված փողոցային մարտերի առանձնահատկությունները հաշվի առնելով, մանավանդ որ նախորդ մարտերից մեր զորքերը արդեն այդպիսի հարուստ փորձ ունեին, հարձակումն իրագործվում էր գրոհային մանր խմբերով՝ դասակներով, վաշտերով և համեմատաբար քիչ ավելի մեծ գրոհային ջոկատներով՝ գումարտակներով, որոնք ապահովված էին անհրաժեշտ քանակությամբ տանկերով և հրետանիով։ Ըստ որում, այդ մարտերում մեծ դեր էր վերապահված սակրավորներին։ Այն, ինչ դժվարանում էին անել հրետանին և տանկերը, նրանց օգնում էին սակրավորները՝ պայթեցնելով թշնամու համապատասխան ամրությունները և հենակետերը։ Նրանք այդ անում էին հետևակի կրակային պաշտպանության ներքո։

Թշնամու դիմադրությունը արագ կերպով կոտրելու նպատակով, դեռևս ապրիլի 25-ին մեր 2000 ռմբակոծիչ ինքնաթիռները հազարավոր տոննա ռումբ էին թափել ֆաշիստական մայրաքաղաքի կենտրոնական մասի վրա։ Նույնը շարունակվեց նաև հաջորդ օրերին։ Ինչպես նշեցինք, նույն օրը բելոռուսական առաջին և ուկրաինական առաջին ռազմաճակատների զորքերի Բեռլինի հյուսիս-արևմուտքում միացել էին և ավարտել քաղաքի շրջապատումը։ Այժմ սկսված էր նրանում գտնվող ֆաշիստների բանակի ջախջախումը։

Գեներալ-գնդապետ Վ. Մ. Կուզնեցովի հրամանատարությամբ գործող երրորդ հարվածային բանակը ապրիլի 21-ից մարտեր էր մղում Բեռլինի մատույցներում և ապա՝ փողոց-

ներում: Նա իր գրոհը ծավալել էր առաջին բելոռուսական ռազմաճակատի աջ թևից՝ Բեռլինի հյուսիսային կողմից: Մեկ շաբաթվա համառ մարտերի ընթացքում այդ բանակի քաջարի զորքերը, կոտրելով հակառակորդի դիմադրությունը, խոշոր հաջողություններ էին հասել:

Ապրիլի 28-ին, երբ ուժեղ մարտեր էին գնում Ֆաշիստական մայրաքաղաքի փողոցներում, 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան արդեն երրորդ հարվածային բանակի կազմում, մասնակցում էր այդ մարտերին:

Փողոցային մարտերը հաջողությամբ վարելու համար դիվիզիայի բոլոր դնդերում և հատուկ ստորաբաժանումներում նույնպես ստեղծվել էին գրոհային խմբեր և ջոկատներ: Բացի դիվիզիայի հրետանային և ականանետային ստորաբաժանումներից, բանակի հրամանատարության հրամանով գրոհային այդ խմբերին ու ջոկատներին ամրացվել էին տանկային և հրանոթային այլ ստորաբաժանումներ: Նրանք լրիվ կերպով պատրաստ էին փողոցային մարտերին: Այստեղ մեծ չափով օգնեց կերչի փողոցային մարտերի փորձը:

Դիվիզիայի զորաղնդերն ապրիլի 28-ի լույս 29-ի գիշերը իրենց առաջին մարտական գործողություններն սկսեցին Բեռլինի Վեդդինգ և Ոհլսդորֆ-Օստ բաղաբային շրջաններում: 390-րդ գունդը մարտեր էր մղում դիվիզիայի ձախ թևում, 526-րդ գունդը՝ կենտրոնում, իսկ 400-րդ գունդը՝ աջ թևում:

Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանն անդադրում հետևում էր գնդերի և մյուս բոլոր ստորաբաժանումների մարտական գործողություններին: Շատ հաճախ նա լինում էր գնդերում, գրոհային խմբերում ու ջոկատներում, իր խիզախությամբ և խելամիտ հրամաններով օգնում նրանց հաջողությունների ծավալմանը: Մարտնչող գրոհային խմբերի մարտակարգերում էին նաև դիվիզիայի բոլոր կուսակցական-քաղաքական աշխատողները՝ քաղբաժնի պետ, փոխգնդապետ Ն. Դավիդովը, նրա տեղակալ մայոր

Մ. Բայազովը, կապիտան Հ. Աղաջանովը, քաղաքային հրահանգիչներ մայորներ Հ. Շահվերդյանը, Ղ. Դալլաքյանը, Մ. Կապուտինը, Վ. Լիխանովը, կապիտան Ն. Կարովկինը, «Կարմիր զինվոր» թերթի խմբագիր, մայոր Ս. Նալբանդյանը, աշխատակիցներ կապիտան Գ. Ղուկասյանը, ավագ լեյտենանտ Հ. Հովակիմյանը, լեյտենանտ Ա. Սարոյանը, գրնդերի և հատուկ նշանակության ստորաբաժանումների հրամանատարների քաղաքական գծով տեղակալներ մայոր Գ. Հարությունյանը, փոխգնդապետ Ն. Մելիքումյանը, փոխգնդապետ Ֆ. Շիֆաննիկոն, մայորներ Ա. Հակոբյանը, Բ. Բաբայանը, Հ. Դեվորգյանը, Բ. Հարությունյանը, Վ. Բայբուրդյանը և շատ ուրիշներ։ Իրենց անձնական օրինակով և բոլշևիկյան խոսքով ստորաբաժանումների հրամանատարների հետ միասին, նրանք ռազմիկներին ոգևորում էին նորանոր սխրանքների։

Այստեղ ևս հերոսաբար էին մարտնչում զորքի բոլոր տեսակները՝ հետևակայինները, հրետանավորները, տանկիստները, սակրավորները, հետախույզները, կապավորները, բժշկա-սանիտարական աշխատողները։ Հաստակ ու ամուր փոխգործողություններ մեջ մտնելով երրորդ հարվածային բանակի միավորումների հետ, Թամանյան դիվիզիան առաջ էր շարժվում դեպի Բեռլինի կենտրոնական մասը։ Առաջին երկու օրում՝ ապրիլի 29-ին և 30-ին նա արդեն գրավել էր մի քանի թաղամաս, մեծ վնասներ հասցնելով դիմադրող ֆաշիստական զորքերին։ Ապրիլի 29-ին 390-րդ գնդի գումարտակներից մեկը, մայոր Գ. Բադալյանի հրամանատարությամբ, հասել էր Ռևդիդենշտրասե փողոցին։

526-րդ գնդի առաջին գումարտակը, որի հրամանատարն էր կապիտան Գ. Ս. Աբրահամյանը, գործելով բացառիկ մտածված ու համարձակ, գրոհով գրավում է մի թաղամաս, ուր հակառակորդը համառ կերպով դիմադրում էր։ Գ. Աբրահամյանը մշտապես գտնվելով մարտակարգերում, նրանց ամենադժվարին հատվածներում, իր անձնական օրինակով զինվորներին ոգևորում էր։ Խիզախ կերպով շարունակելով հարձակումը։ Առանց մեծ զոհերի, գումարտակը

գրավում է երկու թաղամաս և երկու փողոց։ Նա ակտիվ կերպով մասնակցում է ամրոցների համար մղված մարտերին՝ ոչնչացնում է 45 և գերում 238 ֆաշիստական գինվոր և սպա[55] ։ Գումարտակի այդ գործողության համար նրա հրամանատար Գ. Աբրահամյանը պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով։

Քաղաքի մետրոյի կայարանի շրջանում համառ մարտեր էին գնում։ Ուժեղ կրակով թշնամին փակել էր առաջ շարժվելու ուղիները։ Անհրաժեշտ էր ճնշել այդ դիմադրությունը։ Նույն գնդի 2-րդ գումարտակի հրամանատար մայոր Ա. Աթոյանը խնդրում է մեր հրանոթային ստորաբաժանման օգնությունը և անմիջապես ստանում այն։ Թշնամու դիմադրությունը ճնշվում է։ Սկսվում է գումարտակի հարձակումը, որի ռազմիկները առաջ շարժվելով, առաջինն են մտնում մետրոյի կայարանը։ Հարձակվողների առաջին շարքերում էր գումարտակի հրամանատարը։ Այդ մարտերում գումարտակը ոչնչացնում է թշնամու մոտ երեք վաշտ, 11 հաստոցավոր գնդացիր, 23 ձևոքի գնդացիր, գերում թշնամու 38 գինվոր[56]։ Գումարտակի այդ քաջագործությունների համար նրա հրամանատար Ա. Աթոյանը պարգևատրվում է մարտական Կարմիր դրոշի շքանշանով։

Վերոհիշյալ երկու գումարտակները գրավեցին էլեկտրոտեխնիկական խոշոր գործարանը, որի ավտոմատ սարքավորումների մի մասը գեռևս չէին դադարել աշխատելուց։

Ապրիլի 29-ին հրրորդ հարվածային բանակի մեր հատևան 150-րդ և 171-րդ դիվիզիաների գնդերն արդեն ընդհատակ մոտեցել էին Ռայխստագի շենքին։ Ծավալվել էին մարտերը Ռայխստագի գրավման և նրա վրա հաղթանակի դրոշը բարձրացնելու համար։ Այդ մասին նույն օրը իմացան մեր դիվիզիայի բոլոր ռազմիկները։ Ուրախալի ու բերկրալի լուրն էլ ավելի բարձրացրեց թշամանցիների մարտական տրամադրությունը։ Չէ որ Ռայխստագի վրա հաղթանակի դրոշը

---

55 Боевой путь..., էջ 642—643։

56 Նույն տեղում, էջ 666—667։

բարձրացնելու էր այն պանծալի բանակը, որի կազմում էր գտնվում նաև մեր դիվիզիան: Դա հայրենասիրական մեծ փառք ու պատիվ էր: Նրանք շարունակեցին ավելի ուժգին մարտերը թշնամու ջախջախումը արագացնելու համար:

Բեռլինի համար հերոսաբար էր մարտնչում Թամանյան դիվիզիայի ամբողջ անձնակազմը՝ շարքային մարտիկից սկսած մինչև նրա պանծալի հրամանատարը: Հիշատակենք միայն մի քանի փաստ:

Դեպի Բեռլինի կենտրոնը տանող մի փողոցի համար ուժեղ մարտեր էին գնում: Դիմացի բազմահարկ շենքից տեղում էր հակառակորդի գնդացրային ուժեղ կրակը: Նրա պատուհաններից ֆաշիստները մեր տանկերի և զինվորների վրա նռնակներ էին թափում: Մասնավորապես մեծ վնաս էին պատճառում «Պանցեր Ֆաուստ» տեսակի զենքերը: Մեր քաջարի հրետանավորներ Ս. Այվազյանը, Ա. Վարդանյանը, Ս. Սահակյանը, Վ. Պոնոմարյովը իրենց հրանոթների դիպուկ համազարկերով շուտով քար ու քանդ արեցին այդ շենքը և ոչնչացրին նրանում գտնվող ֆաշիստական կրակակետերը: Այդ մարտերում աչքի բնկավ քաջարի գնդացրորդ Ա. Նիկողոսյանը: Բարձրանալով մեր ձեռքում գտնվող շենքի հինգերորդ հարկը, այնտեղից գնդացրային իր դիպուկ կրակով նա հարվածում էր դիմացի շենքի պատուհաններին, ոչնչացնելով շատ ֆաշիստների: Երբ լռեցին ֆաշիստների կրակակետերը, մեր տանկերը, հրետանին և հետևակը առաջ շարժվեցին: Շուտով ամբողջ փողոցը մեր ձեռքում էր: Թամանցիներն ավելի էին մոտեցել Բեռլինի կենտրոնին:

Մարտի ինչ պահին մի խումբ հիտլերականներ թափանցել էին մեր ստորաբաժանումներից մեկի մարտակարգերը: Այդ իսկ պատճառով մարտը ծավալելու հնարավորություն չկար: Ստեղծված էր սպառնալից վիճակ: Կուսկազմակերպիչ Խ. Բաբայանը, առանց խուճապի, վերցնելով նռնակները, անմիջապես հարձակվում է գերմանական զինվորների վրա: Մեկը մյուսի հետևից նա 5 նռնակ է նետում ֆաշիստների վրա: Նրա դիպուկ հարվածներից 7-ը սպանվում են, իսկ մյուսնե-

րը դիմում փախուստի։ Հետապնդելով փախչող ֆաշիստներին, մեր զինվորները գրավում են մի կարևոր շենք։

Փողոցային մարտերից մեկի ժամանակ մի խումբ դերմանացիներ հանկարծակի դուրս վազեցին մոտակա շենքից և հարձակվեցին առաջ շարժվող մեր մարտիկների վրա։ Նկատելով այդ, կոմերիտական կազմակերպիչ Մ. Կիրակոսյանը գրոհում է ֆաշիստների վրա։ Բռնկվում է ձեռնամարտ, որի ընթացքում Մ. Կիրակոսյանը 2 ֆաշիստի սպանում է, իսկ երրորդը դիմում է փախուստի։

Հարմար դիրք գրավելով Ռամլեշտրասե փողոցի խոշոր շենքերից մեկում, ֆաշիստական ծանր գնդացիրը անընդհատ կրակ էր տեղում առաջ շարժվող 526-րդ գնդի գրոհային ջոկատների վրա։ Մեր մարտիկներից մի քանիսը վիրավորվեցին և զոհվեցին։

Բշնամու կրակը առանձնապես ուժեղ էր տեղում կապիտան Հուսիկ Պետրոսյանի գրոհային խմբի ուղղությամբ։ Այդ պայմաններում անհնարին էր առաջ ընթանալ։ Վաշտի հրամանատար, քաջարի կապիտան Հ. Պետրոսյանը համարձակ վճիռ է ընդունում։ Նախապես ծանոթանալով դեպի ֆաշիստների ձեռքում գտնվող շենքը տանող անցումներին, մի քանի ռազմիկներով նա զգուշությամբ անցնում է այդ շենքի հակառակ կողմը և այնտեղից հանկարծակի գրոհում շենքում գտնվող ֆաշիստների վրա։ Ֆաշիստները ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, բայց Հ. Պետրոսյանն իր քաջերով հաղթում է։ Բշնամու գնդացրային կրակակետը և նրա ամբողջ անձնակազմը ոչնչացված էր։ Մեր գրոհային ջոկատը շարունակեց առաջ ընթանալ, նոր մարտերի բռնվելով մյուս փողոցներում։

Ապրիլի 30-ին դիվիզիայի զորագնդերը հասել էին Ռայխստագից ոչ հեռու գտնվող Հումբոլդ-Հայն այգուն և մարտեր էին մղում նրա ծառուղիներում ու մերձակա թաղամասերում։ Այդ այգում էին գտնվում պատերազմի նախօրյակին՝ 1939 թ. կառուցված երկու խոշոր ամրոցները։ Դրանք երկաթ-բետոնից կառուցված 4 հարկանի հսկա

շենքեր էին, որոնց պատերի հաստությունը, ինչպես պարզվեց հետո, ավելի քան 4 մետր էր։ Նրանց տանիքում տեղադրված էին երկփողանի զենիթային խոշոր հրանոթներ, պատուհանները սարքավորված էին մետաղյա գրահով և հարմարեցված հրանոթային, գնդացրային ու ավտոմատային կրակի համար։ Այդ ամրոցները հագեցված էին ժամանակակից ռազմական հզոր տեխնիկայով և պաշտպանական բոլոր միջոցներով։ Նրանց կայազորի անձնակազմը ավելի քան 5000 էր, որի մեջ կային մեծ թվով բարձրաստիճան հրամանատարներ։ Այնտեղ էին պատսպարված նաև քաղաքի որոշ զեկավար գործիչներ։

Դիվիզիան մարտական խնդիր էր ստացել գրավել այդ ամրոցները։ Դա դժվարին մի խնդիր էր, որը սակայն թամանցիները կատարեցին մեծ հաջողությամբ։ Ապրիլի 30-ից մինչև մայիսի 2-ի կեսօրը համառ մարտեր տեղի ունեցան այդ ամրոցների համար։ Ունենալով հարմար դիրք, զենքի բոլոր միջոցներով հակառակորդը ուժեղ դիմադրում էր։

Ավելորդ զոհերից խուսափելու նպատակով, դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը գրնդերին հրամայել էր շրջապատել ամրոցները և նրանց հարվածել հզոր հրանոթներով՝ ուղիղ նշանառությամբ։

Մայիսի 1-ի գիշերը դիվիզիայի զորամասերը ավարտեցին դրանց շրջապատումը։

Երկու օր անընդհատ դիվիզիայի և նրան հատկացված լրացուցիչ հրանոթային զորամասերի հրանոթներն ու կրակային միջոցները հուժկու կրակ էին տեղում ամրոցների վրա։ Ճիշտ է, այդ կրակից նրանց հաստ պատերը չէին քանդվում, բայց, ինչպես պարզվեց հետո, ներսում գտնվող դիվերսիոններից շատերը ծանր կոնտուզիա էին ստացել և դուրս եկել շարքից։ Իսկ պատուհաններին հասցված մեր հրանոթների ու գնդացիրների դիպուկ կրակները մարդկային մեծ վնասներ էին պատճառել ներսում գտնվողներին։

Բացի հրանոթային համազարկերից, գեներալ Ն. Սաֆարյանը որոշից օգտագործել նաև սակրավորներին՝ ամ-

ղոցների հիմքերը պայթեցնելու համար։ Նրա հրամանով ապրիլի 30-ի գիշերը սակրավոր դումարտակի ռազմիկները՝ Քերոբ Սերոբյանը, Վարազդատ Կուլիկյանը, Սավադ Խաչատրյանը, Նիկոլայ Վաթերյանը, Գերասիմ Հակոբյանը և ուրիշներ ամրոցի պատերի տակ տեղադրեցին մոտ 1000 կգ պայթուցիկ նյութ և մայիսի 1-ի լուսադեմին այն պայթեցրին։ Տեղի ունեցավ հուժկու պայթյուն, որից ցնցվեց ամբողջ շրջապատը, բայց ամրոցի պատերը կանգուն մնացին։ Արտաքուստ թվում էր, որ ոչինչ չի եղել։ Մինչդեռ այդ հզոր պայթյունից ամրոցի ներսում զոհվել, վիրավորվել կամ կանաուղիա էին սառցել հարյուրավոր ֆաշիստներ։ Այդ պայթյունը բարոյապես ավելի էր լքել դողդող ֆաշիստներին։ Եվ չնայած դրան, նրանք շարունակում էին դիմադրել։

Ապրիլի 30-ի ուշ երեկոյան հայտնի դարձավ, որ մեր հարևան դիվիզիայի զորամասերը գրավել են Ռայխստագի շենքը և քաջարի ռազմիկներ Միխայիլ Եգորովն ու Միլիտոն Կանտարիան հաղթանակի դրոշն են բարձրացրել նրա վրա։ Այդ լուրը կայծակային արագությամբ տարածվեց դիվիզիայի բոլոր զորամասերում ու ստորաբաժանումներում։ Ռազմիկների ուրախությանը չափ ու սահման չկար։ Անձնուրաց խիզախությամբ ու նոր թափով նրանք շարունակում էին վերջին գրոհը։

Գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով ամրոցների վրա և շարունակելով հարվածել նրանց, դիվիզիայի զորամասերը միաժամանակ համառ մարտեր էին մղում մոտակա փողոցներում և թաղամասերում։

Թշնամու դեմ հերոսաբար էին մարտնչում մայոր Հ. Սիմոնյանի գումարտակի ռազմիկները։ Ամրոցից ոչ հեռու գտնվող եկեղեցու կողմից և նրա շրջակա շենքերից թշնամին դիմադրում էր և իր ուժեղ կրակով խանգարում գումարտակի առաջընթացը։ Հ. Սիմոնյանի հրամանով գումարտակի ռազմիկները գրոհում են ֆաշիստներին և նրանց գուրս շպրտում ամուր հենակետ հանդիսացող եկեղեցուց ու նրա մոտակա շենքերից։ Շուտով նրանք հասնում են եր-

կաթգծին, որը կարևոր դիրք ուներ ամրոցի վրա գրոհելու համար։ Այդ մարտերում աչքի են ընկնում դումարտակի ռազմիկներ Հ. Ավետիսյանը, Ա. Կիրակոսյանը, Բ. Ավետիսյանը, Ժ. Ասատրյանը, Ա. Ոսկանյանը, Լ. Սահակյանը և ուրիշներ։

Թշնամուն անվրեպ հարվածներ էին հասցնում խիզախ կապիտան Հ. Անոյանի ռազմիկները, լեյտենանտ Ս. Մադանցյանի, կապիտաններ Կ. Կարապետյանի, Վ. Սթեփյանի, մայորներ Բ. Խառատյանի, Բ. Բաբայանի և ուրիշների հրանոթային մարտկոցները։

Ապրիլի 30-ին և մայիսի 1-ին 390-րդ և 400-րդ գնդերը, ծավալելով հարձակումը, Թշնամուն հետ էին շպրտել Շուշտարասն և էկղերցիրշտարասե փողոցներից, իսկ 526-րդ գունդը գրավել էր մի շարք այլ խոշոր փողոցներ։

Թշնամու պաշարված ամրոցները անհուսալի վիճակի մեջ էին։ Քանի դնում, մեր հրանոթային ու ականանետային համազարկերը ուժեղանում էին։

Մայիսի 2-ի առավոտյան խոշոր ամրոցի պատուհաններից մեկում ֆաշիստները սպիտակ դրոշ կախեցին։ Պարզ էր, որ նրանք ցանկանում էին դադարեցնել կրակը, բայց թե ինչպիսի պայմաններով, հայտնի չէր։ Պետք էր ուղարկել բանագնացներ։ Դիվիզիայի մայոր Ն. Սաֆարյանն այդ գործը հանձնարարեց 400-րդ գնդի թարգմանիչ կապիտան Ռեալինին և ավագ լեյտենանտ Հ. Եսայանին։ Նրանք ֆաշիստական ամրոցի հրամանատարին ներկայացրին 89-րդ դիվիզիայի հրամանատարի առաջարկները, որոնց իմաստն այն էր, որ պետք է անվերապահ կերպով զենքը վայր դնել, որ միայն այդ դեպքում կապահովվի ամրոցների կայազորի անվտանգությունը։

Նույն օրը ժամը 2-ին ամրոցների կայազորները համաձայնվում են անձնատուր լինել։ Նրանց հրամանատարությունը և անձնակազմը զենքը վայր դնելով, սկսեցին դուրս գալ և շարքի կանգնել փողոցում։ Ամրոցների մուտքերը փակված էին ավազով լցված արկղների բազմաշերտ դասա-

վորությամբ և միայն մի նեղ անցք էր թողնված, որտեղից գերիները դուրս էին գալիս հազիվ մեկ շարքով: Կայազորի անձնատուր լինելու արարողությունը բավականին երկար տևեց, մինչև ուշ երեկո: Գերիները ամրոցներից դուրս էին գալիս գլխիկոր և շարքի կանգնում: Այդ շարքերը առանձին խմբերով, զինվորական ռազմիկների հսկողությամբ, ուղարկվում էին գերիների համար սահմանված հատուկ վայրերը: Փրկության բոլոր հույսերից զրկվելով, ֆաշիստական զինվորներն ու հրամանատարները, որոնք գոռոզությամբ աշխարհին հայտարարել էին 1941 թ. նոյեմբերին Մոսկվայի փողոցներով անցնելու իրենց ձգտումների մասին, այժմ իրենց մայրաքաղաքում քայլում էին որպես Կարմիր բանակի գերիներ: Նվ այսպես, Մոսկվա մտնելու նրանց գոռոզամիտ հոխորտանքները մնացին երազանք, իսկ Կարմիր բանակն արդեն Բեռլինում էր:

Ֆաշիստական «անհաղթ» բանակը ծնկի էր չոքել: Նրան հաղթել էր հերոսական Կարմիր բանակը: Քաղաքի բնակչությանը, որը կրակը դադարեցնելուց հետո նկուղներից ու պաշտպանական այլ վայրերից դուրս էր թափվել փողոցները, տեսնում էր թե ուր էր հասել և ինչ էր դարձել հիտլերյան բանակը, ուր էին հասցրել ֆաշիստական կարգերը իրենց և իրենց երկիրը: Բնակիչներից շատերի դունատ ու սովահար հայացքներից պարզ երևում էր, որ ֆաշիստներն իրենց խաբել են ...նրանցից շատերի այդ հայացքներում նույնիսկ ատելության կրակ կար երկիրը և ժողովրդին այդ վիճակին հասցրած ֆաշիստների նկատմամբ: Հետաքրքիր է, որ նկուղներից դուրս եկածներից ամանք ներկայանում էին մեր ռազմիկներին և ցույց տալիս իրենց փաստաթղթերը, որ իրենք գերմանական կոմունիստական կուսակցության անդամներ են: Այդպիսիները խիստ ստուգվում և հաշվի էին առնվում՝ հետագայում օգտագործելու Բեռլինի քաղաքացիական բնակչության մեջ աշխատանք կատարելու համար:

Մայիսի 2-ի ուշ երեկոյան, երբ ավարտվեց գերիների ընդունումը, գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը բարձր հրամա-

նատարությանը զեկուցեց, որ Թշնամուն մարդկային ու տեխնիկայի մեծ կորուստներ պատճառելուց բացի, դիվիզիան միայն այդ ամրոցներից գերել է 5000 գինվոր և սպա, ոչնչացված է 42 գնդացրային կրակակետ, 7 հակատանկային հրանոթ, 1 տանկ, 2 ինքնագնաց հրանոթ[57]։ Բացի դրանից, Բեռլինի համար մղած մարտերում դիվիզիան վերցրել էր մեծ քանակությամբ ռազմական ավար 285 ավտոմեքենա, 19 տարբեր տրամաչափի հրանոթներ, 600 ավտոմատ, 2850 հրացան, ռազմամթերքի 9 մեծ պահեստ, 1400 հեծանիվ, 1 երկաթուղային էշելոն[58]։

Հերոսական Կարմիր բանակի հուժկու հարվածների տակ մայիսի 2-ին գինքը վայր դրեց Բեռլինի ամբողջ կայազորը։

Գերագույն Գլխավոր հրամանատարության նույն օրվա հրամանում ասված էր.

«Սովետական Միության մարշալ Ժուկովի հրամանատարությամբ գործող բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերը, Սովետական Միության մարշալ Կոնևի հրամանատարությամբ գործող ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի աջակցությամբ փողոցային համառ մարտերից հետո ավարտեցին գերմանական զորքերի բեռլինյան խմբի ջախջախումը և այսօր, մայիսի 2-ին լիովին տիրեցին գերմանական իմպերիալիզմի կենտրոն և գերմանական ագրեսայի մայրաքաղաք Բեռլին քաղաքը։

Քաղաքը պաշտպանող Բեռլինի պաշտպանության պետ, հրետանու գեներալ Վեյդլինգի և նրա շտաբի գլխավորությամբ, այսօր ժամը 15-ին, դադարեցրեց դիմադրությունը, ցած դրեց գինքը և գերի հանձնվեց»[59]։

Խորհրդային ժողովրդի, նրա պետության ու հերոսական Կարմիր բանակի այդ պատմական հաղթանակը մեր պանծալի մայրաքաղաք Մոսկվան նշանավորեց 323 հրանոթի հրետանային 24 համազարկով։

---

57 Боевой путь..., էջ 636։

58 Նույն տեղում։

59 «Կարմիր գինվոր», 1945 թ., մայիսի 2։

Գերագույն Գլխավոր հրամանատարության 1945 թ. մայիսի 2-ի հրամանում հիշատակված էին բոլոր այն բանակների, կորպուսների ու դիվիզիաների հրամանատարների ազգանունները, որոնք մասնակցել էին Բեռլինի գրավմանը: Դրանց թվում էր նաև 9-րդ Թամանյան հայկական դիվիզիայի հրամանատար, գնդապետ Ն. Գ. Սաֆարյանի ազգանունը:

Բեռլինի գրավումը՝ դա ֆաշիստական պետության ու նրա բանակի պարտությունն էր ու ջախջախումը:

Սակայն դեռևս պատերազմը չէր ավարտվել: Առանձին տեղերում, մասնավորապես Չեխոսլովակիայի տերիտորիայում, ֆաշիստական զորքերի խոշոր խմբավորումները շարունակում էին դիմադրություն ցույց տալ: Հարկավոր էր դրանց նույնպես գլխովին ջախջախել: Այդպես էլ եղավ: Մայիսի 2-ից մինչև 9-ը մեր զորքերը շարունակեցին ֆաշիստական բանակի այդ խմբավորումների ոչնչացումը:

Բեռլինի գրավման հերոսամարտերին ակտիվ մասնակցություն ունենալու համար 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. մայիսի 23-ի հրամանագրով պարգևատրվեց Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանով, դառնալով նոսակի շքանշանակիր: Նրա մարտական դրոշի վրա փայլում էին Կարմիր աստղի, մարտական Կարմիր դրոշի ու Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանները:

Բեռլինի փողոցային մարտերում 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի մարտական սխրանքների բարձր գնահատականը տրված է 38-րդ կորպուսի հրամանատար, գնդապետ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս Տերեշկովի 1945 թ. մայիսի 13-ին ստորագրված պարգևաթերթիկում, որը գրված էր դիվիզիայի հրամանատար գնդապետ Ն. Գ. Սաֆարյանի մասին: Դիվիզիան գործում էր այդ կորպուսի կազմում:

Հարկ եմ համարում այն մեջ բերել առանց կրճատման:

«89-րդ հրաձգային դիվիզիան, գնդապետ Սաֆար-

յանի հրամանատարությամբ, Ֆրանկֆուրտ քաղաքի համար մղված համառ մարտերից հետո և միջանկյալ տարածքներում կատարելով 150 կիլոմետր երթ, ընթացքից մարտական խնդիր է ստանում անցնել գրոհի Բեռլինի վրա:

Հաղթահարելով հակառակորդի կատաղի դիմադրությունը փողոցային մարտերում և նրան հասցնելով մարդկային ուժի և տեխնիկայի հսկայական կորուստ, դիվիզիայի զորամասերը հմուտ կերպով գրոհելով արգելակները, հաճառորեն առաջ ընթացան, գրավելով Թաղամաս Թաղամասից հետևից Բեռլին քաղաքում:

Դիվիզիայի զորամասերի համարձակ գործողություններով խախտվեց գերմանացիների կազմակերպված պաշտպանությունը: Մտածված անցումային տեղաշարժման շնորհիվ Հումբլոդ-Հայն այդում գերմանական ամբողջը մեկուսացվեց, իսկ նրա կայազորը ամբողջությամբ անձնատուր եղավ:

Շնորհիվ հետևակի և զորքի մյուս տեսակների մտածված փոխգործողությունների և ստեղծված գրոհային խմբերի հաջող մարտերի, դիվիզիան, գեներալ-մայոր Սաֆարյանի հրամանատարությամբ, 4-օրյա համառ մարտերում հաջողությամբ կատարից իր առջև դրված խնդիրները: Դիվիզիայի այդ մարտերի ընթացքում ոչնչացվել է գերմանական 297 դիվիզիոր և սպա, տարբեր տրամաչափի 9 հրանոթ, 2 տանկ, վերցված է 5128 գերի և մեծ ռազմավար:

Բեռլին քաղաքի գրոհի բարդ պայմաններում մարտի մտածված կազմակերպման համար ընկ. Սաֆարյանն արժանի է շքանշանով պարգևատրվելու»[60]:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1945 թ. մայիսի 29-ի հրամանագրով գեներալ-մայոր Ն. Դ. Սաֆարյանը պարգևատրվում է Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանով[61]:

Դիվիզիայի այդ հաջողությունները պայմանավորված էին ոչ միայն ամբողջ անձնակազմի վառ հայրենասիրու-

---

58 Боевой путь..., էջ 649—650:

61 Նույն տեղում:

թյամբ, այլև նրա հրամատարության, մասնավորապես հայ ժողովրդի պանծալի զավակ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարական տաղանդով, խելացի ու մտածված հրամաններով, անձնական քաջագործություններով։ Նրան մեծ չափով օգնում էին դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Երվանդ Դավիդովը, հրետանու պետ, գնդապետ Խաչիկ Պայազետյանը, կապի ծառայության պետ գնդապետ Միսակ Սարգսյանը, Սակրավորային ծառայության պետ, գնդապետ Նիկոլայ Ադամյանը։

Դիվիզիայի հաջողությունների գլխավոր գրավականը հանդիսացել է նրա քաղաքական ապարատի, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների, բոլոր կոմունիստների ու կոմերիտականների եռանդուն գործունեությունը, ամենածանր մարտերում նրանց անձնական օրինակը, հերոսական սխրանքները։

Թշնամու դեմ մղված մարտերում դիվիզիայի քաղբաժնի, գնդերի ու գումարտակների կուսակցական-քաղաքական աշխատողներ փոխգնդապետներ Ն. Մեժլումյանը, Ֆ. Շիֆոննկոն, Մ. Բայազովը, մայորներ Գ. Կարապետյանը, Ն. Շահվերդյանը, Ղ. Դալլաքյանը, Գ. Հարությունյանը Պ. Ավալյանը, Ս. Նալբանդյանը, Ա. Հակոբյանը, Գ. Ղուկասյանը, Ռ. Հակոբյանը, Մ. Հակոբյանը, կապիտաններ Ռ. Սարոյանը, Ս. Բադալովը, Ս. Թանգյանը, Հ. Գևորգյանը, Վ. Բայբուրթյանը, Հ. Աղաջանովը, Բ. Հարությունյանը, Բ. Բաբայանը և շատ ուրիշներ իրենց աշխատանքով ու անձնական օրինակով ոգևորում էին ռազմիկներին, օգնում ստորաբաժանումների հրամանատարությանը՝ հաջողությամբ կատարելու մարտական խնդիրները։ Մեծ աշխատանք էր կատարում դիվիզիայի «Կարմիր վինովոր» թերթը։

Օպերատիվ և մտածված էին գործում գնդերի հրամանատարները, նրանց շտաբները։ Շտաբային աշխատողներից առանձնապես աչքի էին ընկնում փոխգնդապետ Ի. Պեշչանսկին, գնդապետ Մ. Ռևսինը, մայորներ Ա. Վարդապետովը, Ալանակյանը, Պ. Բոշնաղյանը, Օգանովը, Ա. Գրիգոր-

յանը և ուրիշներ։ Անձնվիրաբար էին գործում դիվիզիայի և նրա գնդերի բժշկա-սանիտարական աշխատողները՝ փոխգնդապետ Բ. Մելքումյանը, կապիտաններ Հ. Սահակյանը, Վ. Աղիդյանը, Խ. Մխիթարյանը, Ս. Ջորանյանը, և ուրիշներ։ Նվիրվածությամբ էին աշխատում դիվիզիայի թիկունքի բոլոր ստորաբաժանումները, որոնց ղեկավարում էր դիվիզիայի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալ գնդապետ Ա. Չիլինգարյանը։

Լինելով ազգային, 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան իր կազմով միաժամանակ ինտերնացիոնալ էր։ Նրա հիմնական կազմը հայեր էին, բայց կային նաև ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, վրացիներ և խորհրդային մյուս ժողովրդների զավակներ։ Ծանր մարտերից հետո դիվիզիան հաճախ էր ստանում համալրումներ այդ ժողովուրդների զավակներից։ Նրանց միջև հաստատված էին մարտական անխախտ կապեր և իրար փոխադարձ օգնում էին ամենադժվարին պայմաններում։ Նրանք բարձր էին պահում ամբողջ խորհրդային ժողովրդի մարտական ավանդույթները։ Ուստի դիվիզիայի հաջողությունների գործում կարևոր դեր է խաղացել խորհրդային ժողովուրդների բարեկամությունը և եղբայրությունը։

Դիվիզիան, նրա ամբողջ անձնակազմը սերտ կապերի մեջ էր թիկունքի հետ, որը արտահայտվում էր ինչպես պատվիրակությունների փոխադարձ այցելություններով, ժողովրդի անունից ուղարկված նամակներով և դրանց պատասխաններով, թիկունքից ուղարկվող նվեր-ծանրոցներով, այնպես էլ հարազատների միջև տեղի ունեցած նամակագրություններով։ Թիկունքից ստացվող յուրաքանչյուր նամակ մեծ իրազարձություն էր ամեն ռազմիկի կյանքում։

Ինչպես ֆաշիստական հորդաների դեմ մարտնչած ամեն մի դիվիզիայի, այնպես էլ 89-րդ Թամանյան հայկական դիվիզիայի մարտական ուղին հեշտ ու հանգիստ չի

եղել։ Նա սերտորեն կապված էր մահու ու կենաց ծանր մարտերի, բազմաթիվ դժվարությունների հաղթահարման հետ։ Այդ մարտերում մեծ վնասներ պատճառելով հակառակորդին, դիվիզիան նույնպես ունեցել է մեծ թվով զոհեր, թանկագին կորուստներ։ Հանուն Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանման, հանուն մեր մեծ հաղթանակի, իրենց կյանքը զոհաբերել են դիվիզիայի շատ ռազմիկներ։ Դրանց թվումն են գնդապետներ Ա. Վասիլյանը, Գ. Բելբուլյանը, Մ. Տիննակին, մայորներ Գ. Իսախանյանը, Մ. Խաչանյանը, Գ. Ավալյանը, Ս. Մարգարովը, Ս. Խանջյանը, Ս. Բազդասարյանը, կապիտաններ Ա. Հովհաննիսյանը, Գ. Զոհրաբյանը, Դանիելինը, Հ. Ազաջանյանը, Խորհրդային Միության հերոսներ Հ. Ավետիսյանը, Ս. Առաքելյանը, Զ. Կարախանյանը և ուրիշներ, որոնց միշտ երիտասարդ կհիշի հայ ժողովուրդը։ Դրա վառ արտահայտությունն է պատերազմում զոհվածների հիշատակին հանրապետության շատ ու շատ բնակավայրերում կառուցված հուշարձան-կոթողները։ Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել։

Ահա այդպիսի մարտական ուղի է անցել 89-րդ Թամանյան հայկական հրաձգային դիվիզիան։

Դա փառքով պսակված մարտական ուղի է։

4. ՀԱՂԹԱՐՇԱՎ ՄԻՆՉԵՎ ԷԼԲԱ

Մայիսի 2-ի լույս 3-ի գիշերը, երբ արդեն Բեռլինում դադարել էին մարտական գործողությունները, սահմանելով ուժեղ պահակային ծառայություն, դիվիզիայի ռազմիկները հանգստանում էին։ Երկարատև մարտերից նրանք խիստ հոգնած էին և հանգստի մեծ կարիք էին զգում։ Սակայն այն կարճ տևեց։ Մի քանի ժամ հետո, լուսադեմին հրաման եղավ պատրաստվել մարտական երթի։

Առավոտյան ժամը 5-ին դիվիզիայի զորագնդերը և մյուս առորաբաժանումները Բեռլինի փողոցներով սկսեցին շարժվել դեպի արևմուտք։ Մի քանի ժամ անընդհատ անցնում

էինք այդ մեծ քաղաքի փողոցներով, որոնցից շատերը լցված էին ամբոխոծությունների հետևանքով քանդված շենքերի փլատակներով։ Քաղաքը համարյա ամբողջովին ավերված էր։ Երբ արդեն լուսա էր, փողոցներում կար մեծ թվով բնակչություն։

Ուրախ տրամադրությամբ և մարտական երգերով մեր թամանցիներն անցնում էին այդ փողոցներով։ Դնդերի շարքերի առջևից գնում էին նրանց փողային նվագախմբերը։ Երբ դադարում էր ռազմիկների երգը, նրանց հաջորդում էին փողային նվագախմբերը՝ իրենց քայլերգներով։ Շատ հաճախ էլ նվագում էր դիվիզիայի աղդային գործիքների նվագախումբը՝ նշանավոր քառ նվագող ավագ սերժանտ Աշոտ Գասպարովի ղեկավարությամբ։ Այս խումբը նվագում էր հայկական և խորհրդային մյուս ժողովուրդների ստեղծագործությունները, որոնց փողոցներում կուտակված բնակչությունը լսում էր անսովոր հետաքրքրությամբ։

Շարքերը որտեղ կանգ էին առնում կարճատև հանգստի, այնտեղ ծավալվում էին հայկական, վրացական, ռուսական և ուկրաինական երգերն ու պարերը։ Չէ որ մեր դիվիզիան լինելով աղգային, ինչպես տեսանք, միաժամանակ իր կազմով ինտերնացիոնալ էր։ Նրա շարքերում զգալի թվով խորհրդային մյուս աղգերի զավակներ կային, որոնք դիվիզիայի հետ միասին Կովկասյան նախալեռներից մարտերով հասել էին մինչև Բեռլին։ Անխախտելի մտերմություն և հարգանություն էր ստեղծվել դիվիզիայի շարքերում գրտնվող խորհրդային տարբեր աղգերի զավակների միջև։ Այդ մտերմությունը կոփվել էր ֆաշիզմի դեմ մղած հերոսամարտերում։

Դիվիզիայի ռազմիկները խրոխտությամբ ու հաղթողի ավյունով Բեռլինի փողոցներում պարում էին քոչարի։ Հայկական նվագով ու պարով թամանցիների ոտքերի համաչափ հարվածներով թնդում էին ֆաշիստական մայրաքաղաքի փողոցները։

Այդ պարերի մասին տպավորիչ է գրել դիվիզիայի բա-

նաստեղծ (այդպես էինք անվանում նրան), լեյտենանտ Արշալույս Սարոյանը իր «Հազիանակի պարը» բանաստեղծության մեջ, որը տպագրվեց «Կարմիր զինվոր» թերթի 1945 թ. օգոստոսի 3-ի համարում: Ահա մի փոքրիկ հատված այդ բանաստեղծությունից.

Ծող դղրդա մեր թափի տակ սալահատակը Բեռլինի,
Ուստա Կարոն փչից դուռնան, Սամվելն առավ փոքրիկ դափը,
Խփից դհոլ, կտրիճները մեղմ ժպտալով շրջան մտան:
Ու մի քանի վայրկյան հետո պարը դարձավ ավելի մեծ,
Անցնող, դարձող հայերն եկան, կիսաշրջանը բոլորից:
Ինդում էին ծափ ու ծիծաղ, մի նոր թափով մոլեգնային:

Շարժվելով դեպի հարավ-արևմուտք, մայիսի 7-ին դիվիզիայի զորամասերը, ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին, Վիտենբերգ խոշոր քաղաքի մոտ արդեն հասել էին Էլբա գետին: Հրաման էր ստացվել նրանից այն կողմը չգնալ: Բեռլինից մինչև Էլբա անցնող ճանապարհին, որով դիվիզիայի զորամասերը շարժվում էին մարտական երթով, տարբեր տեղերում հանդիպեցինք անտառներում թափառող ֆաշիստական զորքերի մի քանի խմբերի, որոնք առանց դիմադրության գերի էին հանձնվում: Այստեղ գերիների թիվը հասավ մի քանի հարյուրի:

Մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը, երբ ռազմիկները հանդրստանում էին, ռադիոն հաղորդեց ֆաշիստական Գերմանիայի կապիտուլյացիայի, նրա լիակատար պարտության մասին: Այդ բաղձալի լուրը կայծակի արագությամբ տարածվեց դիվիզիայի բոլոր սաորաբաժանումներում: Գիշերով ամենուրեք ինդացին հայկական պարն ու երգը: Անսահման էր բոլորի ուրախությունը: Նրանք գրկախառնվում, համբուրվում էին: Շատերն արտասվում էին ուրախության հուզմունքից: Չէ որ խորհրդային ժողովուրդը, նրա հերոսական Կարմիր բանակը, հարազատ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռք էր բերել համաշխարհ-

ային-պատմական հաղթանակ։ Գլխովին ջախջախված էր ամբողջ աշխարհի ագահասիր մարդկության ամենավտանգավոր թշնամին՝ Գերմանիայի ֆաշիստական պետությունը և նրա վայրագ բանակը։

Այդ պատմական հաղթանակը մեր սոցիալիստական պետության ոչ միայն ռազմական, այլ քաղաքական, տնտեսական ու բարոյական հաղթանակն էր, խորհրդային բազմազգ ժողովրդի փայլուն քննությունը։ Ինչպես գրել է Վ. Ի. Լենինը, «պատերազմում հաղթում է նա, ով ավելի շատ ուժի աղբյուրներ, ավելի շատ դիմացկունություն ունի ժողովրդական զանգվածում»[62]։

Հաղթանակի գործում ընդգծելով բարոյական գործոնի մեծ նշանակությունը, 1920 թ. մեծ առաջնորդը գրել է. «ամեն տեսակի պատերազմում հաղթանակը վերջին հաշվով պայմանավորվում է այն մասսաների ոգու վիճակով, որոնք ռազմի դաշտում թափում են իրենց արյունը։ Համոզմունքը պատերազմի արդարացիության նկատմամբ, իրենց եղբայրների բարօրության համար, իրենց կյանքը զոհաբերելու անհրաժեշտության գիտակցությունը բարձրացնում է պինվորների ոգին ու նրանց ստիպում անասելի դժվարություններ կրել»[63]։

Մայիսի 9-ը սահմանվեց հաղթանակի օր։ Նույն օրը, էլբայի ափին, անտառի կանաչով ու ծաղիկներով զորպատված բացատում դիվիզիայի ամբողջ անձնակազմը մեծ հաղթանակի առթիվ հավաքվել էր միտինգի։ Դաշտի կենտրոնում սակրավորները տախտակից պատրաստել էին բարձրադիր ամբիոն։ Այնտեղ էին գտնվում 38-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Տերեշկովը, 89-րդ Բամանյան հայկական դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը, քաղբաժնի պետ, փոխգնդապետ Ե. Դավիդովը և դիվիզիայի մյուս ղեկավար աշխատողները։

62 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, Հայպետհրատ, Երևան, 1951, էջ 75։

63 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, Հայպետհրատ, Երևան, 1952, էջ 154։

Միտինգը բաց է անում գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը և խոսքը տալիս է գեներալ-լեյտենանտ Տերեշկովին։

Նա խոսում է գերմանական ֆաշիզմի դեմ Խորհրդային Միության, նրա հերոսական բանակի և բոլոր հակաֆաշիստական ուժերի տարած պատմական հաղթանակի, դրա համաշխարհային-պատմական նշանակության մասին։ Նա հատկապես ընդգծում է, որ այդ հաղթանակի գործում մեծ դեր է խաղացել Խորհրդային Միության ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու համագործակցությունը, նրանց անխախտ դաշինքը, որ այդ հաղթանակին հասնելու համար խորհրդային յուրաքանչյուր ժողովուրդ, այդ թվում նաև հայ ժողովուրդը, արել է առավելագույնը։ Դրա գեղեցիկ օրինակն է այն փաստը, որ 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան պանծալի Կարմիր բանակի շարքերում կովկասյան նախալեռներից մարտերով հասել է մինչև Բեռլին և ակտիվ կերպով մասնակցել նրա գրավմանը, իսկ այսօր հաղթանակի տոնը կատարում է տապալված ֆաշիստական Գերմանիայի կենտրոնում՝ Էլբայի ափին։ Գեներալ Տերեշկովը նշեց, որ հայ թամանցիները Բեռլինի համար մղած մարտերում ցուցաբերել են նորանոր սխրանքներ, որի համար դիվիզիան արժանացել է Գերագույն Գլխավոր հրամանատարության բարձր գնահատականին։

Կորպուսի հրամանատարության անունից մեր մեծ հաղթանակի օրը նա շնորհավորեց դիվիզիայի ամբողջ անձնակազմին։

Վերջում գեներալ-լեյտենանտ Տերեշկովը ասաց, որ մեծ հաղթանակը մենք ձեռք ենք բերել մեծ թվով զոհերի գնով, մեր մարտական ընկերների, եղբայրների ու հարազատների կյանքի գնով, որոնց հիշատակը մենք պետք է վառ պահենք։ Նա առաջարկեց հինգ րոպե աչ ծնկին չոքելով, հարգել հանուն մեծ հաղթանակի զոհվածների հիշատակը։

Հազարավոր մարդիկ ծնկի են չոքում, լսվում է զինվորական նվագախմբերի սգո մեղեդին։ Հուզիչ էր իրադրությունը։ Համարյա բոլորը արտասվում էին։ Խոր լռության



Ա. Մ. Հակոբյան



Գնդապետ Ս. Զաքիյան



Գնդապետ Ա. Սարգսյան



Գնդապետ Ա. Վասիլյան

ՀՀ ԳԱԱ Գրադարանների
համակարգման կենտրոն



Գեներալ-մայոր Ն. Սաֆարյան



Գնդապետ Գ. Հակոբյան




Գնդապետ Խ. Պայազետյան



Գնդապետ Մ. Սարգսյան



Գնդապետ Ի. Պաշանակի



Գնդապետ Գ. Բլբուլյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽԱՆԱՄԱՑԻՆ ՀԱՅԴԱՐԱՆ



Դիվիզիայի բաղադմնի աշխատողները՝ քաղբաժնի պետ Ե. Դավիդովի (կենտրոնում) հետ



Մայորներ Ա. Հակոբյան, Պ. Հովնաթյան, կանգնած՝ կապիտան Ռ. Սարոյան



Խորհրդային Միության հերոս Հ. Ավետիսյան



Խորհրդային Միության հերոս
Ս. Առաքելյան




Խորհրդային Միության հերոս
Ջ. Կարախանյան



Խորհրդային Միության հերոս
Խ. Խաչատրյան



Խորհրդային Միության հերոս
Հ. Մկրտչյան





Խորհրդային Միության հերոս
Ս. Բաղդասարյան



Խորհրդային Միության հերոս
Ա. Հարությունյան




Խորհրդային Միության հերոս
Հ. Հարոյան



Խորհրդային Միության հերոս
Վ. Ռոստոմյան



Փառքի երեք շքանշանի ասպետ
Ս. Սևոյան



Փառքի երեք շքանշանի ասպետ
Գ. Ոսկանյան



Փառքի երեք շքանշանի ասպետ
Ի. Եարախաչյան



Փառքի երեք շքանշանի ասպետ
Ա. Մելքումյան


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳԱՆ



Փառքի կրնք շքանշանի ասպետ
Վ. Կուլիկյան



Փառքի կրնք շքանշանի ասպետ
Ք. Ավետյան



Կապիտան Ի. Հակոբյան և մայոր Հ. Սիմոնյան



Փառքի երեք շքանշանի ասպետ
Ա. Սահինյան



Գնդապետ Գ. Ալթամյան



Կապիտան Ս. Սարգսյան և ավագ լեյտենանտ Ա. Հարությունյան

ՀՀ ՊՆ ԱՌԱՋԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Մայոր Ս. Մարգարյան



Կապիտան Ս. Մանասյան




Մայոր Ս. Բադդասարյան



Կապիտան Խ. Միրոյան



526-րդ գնդի մի խումբ սպաներ



Մայոր Բ. Խաչատյան, լեյտենանտ Վ. Շահվերդյան և բուժ. քույր Օֆելյան



Փոխգնդապետ Ռ. Մկրտումյան



Մայոր Վ. Ադիլյան



Մայոր Հ. Սահակյան



Փոխգնդապետ Գ. Սարգսյան



Մայոր Մ. Խաչանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ




Մայոր Ա. Բաղդասարյան



Մայոր Պ. Ավալյան




Ավագ լեյտենանտ Խ. Բարսեղյան




Կապիտան Հ. Անոյան



Գումարտակների հրամանատարներ՝ (ձախից-աջ) Հ. Սիմոնյան Հ. Բաբայան, Գ. Բադալյան, Ա. Աթոյան




Կապավորներ Բ. Ավետյան և Ա. Բաղդասարյան



Գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը դիվիզիայի կապի դասմարտակի մի խումբ վետերանների հետ (1960 թ.)



Դիվիզիայի մի խումբ սպաներ և կուսակցական-քաղաքական աշխատողներ գնդապետ-մայոր Ն. Սաֆարյանի հետ (Երևան, 1960 թ.)



Դիվիզիայի սպանանեանների մեկն իր անձնակազմով, որը Կովկասյան նախալեռներից հասել է մինչև Բևռլին և մեծ վնաս պատճառել թշնամուն։



Գնդապետ Գ. Հակոբյան



Փոխգնդապետ Մ. Հակոբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԽՈՑՄԱՆՆԵՐԻ
ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Մայոր Խ. Մխիթարյան




Կապիտան Ս. Զորանյան



Մայոր Ս. Գևորգյան



Կապիտան Բ. Պողոսյան



Օդերի հենակետում: Մարտերի դադարի պահին



526-րդ գնդի շտաբի անձնակազմը գնդի հրամանատար գնդապետ Պ. Ուլյանովսկու հետ

ՀՍՍՌ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱՐԱՆ ՈՐԴԻՔԱՆ



Լեյտենանտ Տ. Շավարշյան



Ավագ Ա. Բաբասյան




Ավագ լեյտենանտ Կ. Հունանյան



Ավագ սերժանտ Ս. Թամաքալյան



Բուժ. քույր Մ. Հեքիմյան



Ավագ սերժանտ Ա. Քոչարյան


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ



Հաղթարշավ դեպի Էլբա



Մի տեսարան հաղթանակի օրվա՝ 1945 թ. մայիսի 9-ի առթիվ
Էլբայի ափին տեղի ունեցած միտինգից



89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի հիշատակին կառուցված հուշարձանը Սևաստոպոլում։

մեջ նրանց աչքերից վայր էին գլորվում արցունքի կաթիլները։ Միախառնվել էին ձեռք բերված մեծ հաղթանակի առթիվ ուրախ հուզմունքի և այդ հաղթանակի ճանապարհին ընկած մարտական ընկերների կորուստն ու ցավը հիշեցնող արցունքները։

Այնուհետև խոսում է դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Ն. Սաֆարյանը։ Նրա դեմքը կրում էր երկարատև ծանր մարտերի հետևանքով առաջացած խորը հոգնածության դրոշմը, որը բնավ չէր ազդել նրա մարտական ոգու ու խրոխտության վրա։

Իր բովանդակալից ելույթում սիրելի գեներալը նշեց, որ գերմանական իմպերիալիզմը և ֆաշիզմը եղել են բոլոր ժողովուրդների, ինչպես նաև հայ ժողովրդի կատաղի թշնամին։ Այդ թշնամու դեմ մղած հերոսամարտերում թամանցիները պատվով կատարեցին իրենց հայրենասիրական պարտքը, բարձր պահեցին մեր դիվիզիայի ու գնդերի մարտական դրոշները, դրանք հասցնելով մինչև Բեռլին և Էլբա։ Նա հիշատակեց դիվիզիայի բազմաթիվ ռազմիկների անուններ, որոնք դաժան մարտերում ցուցաբերած իրենց սխրանքներով բարձր են պահել հայ ժողովրդի մարտական սովորույթները, ոսկե էջեր գրել Խորհրդային Հայրենիքի համար մղած սրբազան պատերազմի պատմության մեջ։

Հաղթանակի օրը նշելուց հետո, ինչպես մյուս բոլոր դորամասերին, նույնպես և 89-րդ Թամանյան դիվիզիային առաջադրանք էր տրված կատարել կայազորային ծառայություն, հետևել գրաված վայրերում համապատասխան կարգ ու կանոն հաստատելուն և լիկվիդացնել դեռևս անտառներում թափառող ֆաշիստական բանակի մնացորդները։ Կարճատև հանգստից հետո միաժամանակ պետք էր ձեռնամուխ լինել մարտական-քաղաքական ուսուցմանը, Հայրենական մեծ պատերազմի փորձի ուսումնասիրությանը։ Այդպես էլ եղավ։ Դիվիզիան շարունակեց իր առջև դրված խնդիրների կատարումը։

1945 թ. հունիսի 15-ին Էլբայի ափից 89-րդ Թամանյան

հայկական դիվիզիան իր մայր ժողովրդին նամակ-զեկուցագիր ուղարկեց։

Նամակը նախօրոք ընթերցվել և քննարկվել էր բոլոր դնդերում, բոլոր ստորաբաժանումներում, արժանանալով ընդհանուր հավանության։ Նրա տակ ստորագրել էր դիվիզիայի ամբողջ անձնակազմը։ Այն հրապարակվեց դիվիզիայի «Կարմիր դինվոր» թերթում։

Այդ նամակ-զեկուցագիրը դիվիզիայի անցած մարտական ուղու հիմնական հանրագումարն էր։ Այնտեղ ասված էր.

«Մեր թանկագին մայրեր ու հայրեր, կանայք ու երեխաներ, քույրեր ու եղբայրներ.

Իրականացավ մեծագույնը։ Հաղթանակի արևը վառ կերպով շողում է մեր սքանչելի Հայրենիքի վրա։ Պատմական հաղթության օրը... հազար հրանոթի որոտը հաղորդեց ամբողջ մարդկությանը, որ պատերազմի ժամանակաշրջանը վերջացավ, սկսվեց խաղաղ զարգացման ժամանակաշրջանը։

Մեր արդար գործը հաղթանակեց։ Խորհրդային ժողովուրդը և նրա հերոսական Կարմիր բանակը, բոլշևիկների պանծալի կուսակցության ղեկավարությամբ պատվով պաշտպանեցին մեր Հայրենիքի անկախությունը և լիակատար հաղթանակ տարան գերմանական արյունարբու և գիշատիչ իմպերիալիզմի դեմ։

...Դուք պահանջում էիք մեզանից՝ անվախ առաջ գնալ, կանգ չառնել ոչ մի դժվարության առջև, համարձակորեն խորտակել ֆաշիստական բոլոր ամրությունները, ջախջախել թշնամու տեխնիկան ու կենդանի ուժը։

Մենք հողին հավասարեցրինք մեր ճանապարհին ընկած բոլոր արգելքները, խորտակեցինք թշնամու ամրություններ Թամանի կռիվներում, Կերչ, Սևաստոպոլ քաղաքների համար մղած մարտերում, փառապանծ ուղի անցանք Վիսլայից մինչև Օդեր, գրոհեցինք հակառակորդի վերջին ամ-

րությունները Ֆրանկֆուրտում Օդերի վրա և հենց Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում։

Այնուհետև նամակում ամփոփված են պատերազմի ընթացքում դիվիզիայի մարտական գործողությունների հիմնական արդյունքները։ Կովկասից մինչև Էլբայի ափերը անցնելով սխրանքներով լի ավելի քան 3700 կիլոմետր փառավոր մարտական ուղի, դիվիզիան ֆաշիստներից ազատագրել է ավելի քան 900 բնակավայր, այդ թվում Մալգոբեկ, Թաման, Լենհաստանի Կոշմին, Դլուտով, Կորշով քաղաքները և շատ այլ բնակավայրեր, մասնակցել է Նովոռոսիյսկ, Կերչ, Սևաստոպոլ, Վարշավա, Կալիշ և այլ քաղաքների ազատագրմանը։ Պատերազմի ընթացքում դիվիզիան ոչնչացրել է թշնամու ավելի քան 9000 և գերել 11000 զինվոր ու սպա, շարքից հանել 148 տանկ և ինքնագնաց հրանոթ, ավելի քան 300 դաշտային հրանոթ, որպես ռազմական ավար վերցրել տարբեր տրամաչափի 154 հրանոթ, 983 գնդացիր, 5600 հրացան, 1160 ավտոմեքենա և այլն։

Մարտերում ցուցաբերած արիության և խիզախության համար դիվիզիայի ռազմիկներից 7333-ը պարգևատրվել են կառավարական շքանշաններով և մեդալներով, ըստ որում դրանց մեծ մասը՝ մի շարք շքանշաններով և մեդալներով։ Դիվիզիայի շարքերում աճել են Խորհրդային Միության 9 հերոս և փառքի III, II ու I աստիճանի շքանշանի 6 ասպետ[64]։

Ահա այդպիսի մարտական ուղի է անցել եռյակի շքանշանակիր 89-րդ Թամանյան դիվիզիան։ Սակայն այդ ուղին հեշտ ու հանգիստ չի եղել։ Ինչպես տեսանք, նա անցել է բազմաթիվ դժվարությունների ու ծանր մարտերի միջով։ Այդ մարտերում մարդկային ու տեխնիկայի մեծ վնասներ պատճառելով թշնամուն, Թամանյան դիվիզիան ևս ունեցել է կորուստներ։ Հանուն մեր մեծ հաղթանակի, հերոսաբար իրենց կյանքը զոհաբերել են դիվիզիայի շատ ռազմիկներ։ Դրանց թվում են գնդապետներ Ա. Վասիլյանը, Գ. Բլբուլ-

---

64 Боевой путь..., էջ 667—674։

յանը, Ս. Տինսկին, մայորներ Խաչանյանը, Մ. Խաչանյանը, Պ. Ավալյանը, Ս. Մարգարյանը, Ս. Խանջյանը, Ս. Բաղդասարյանը, կապիտաններ Ա. Հովհաննիսյանը, Գ. Զոհրաբյանը, Շ. Օհանյանը, Հ. Աղաջանյանը, Մ. Լևինը, Ի. Դավիդովը, Խորհրդային Միության հերոսներ, ավագ սերժանտներ Հ. Ավետիսյանը, Ս. Առաքելյանը, Զ. Կարախանյանը, շարքայիններ Ա. Հարությունյանը, Ղ. Սիմոնյանը, Ա. Մաքսիմչուկը և շատ ու շատ ուրիշներ, որոնց հիշատակը երախտապարտ հայ ժողովուրդը միշտ վառ կպահի իր սրտում:

Հայ ժողովրդին ուղղած նամակում թամանցիները գրում էին, որ «իր շարքերում դիվիզիան դաստիարակել է հազարավոր առաջավոր մարդիկ, որոնց սրտերը լեցուն են հրաշալի սովետական հայրենասիրությամբ, այն ազնիվ զգացմունքով, որը հաղթահարեց մահը անձնազոհ մարտերում: Մեր շարքերում մենք դաստիարակել ենք 4.638 բոլշևիկներ, որոնք չեն խնայել իրենց արյունն ու կյանքը հանուն հայրենիքի:

...Մենք տուն կվերադառնանք որպես հաղթողներ, կոփված մարտերի հրի ու ծխի մեջ առնականացած դաժան ու երկարատև պայքարում, կյանքի իմաստությունը սովորած, լեցուն անսահման սիրով դեպի մեր հայրենիքը, մեր սովետական կարգերը: Ձեզ հետ միասին մենք կկառուցենք մեր երջանիկ սոցիալիստական կյանքը»[65]:

1945 թ. հունիսի 23-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը օրենք ընդունեց գործող բանակի անձնակազմի ավագ հասակների զորացրման մասին: Այդ օրենքի համաձայն դիվիզիայի հազարավոր ռազմիկներ զորացրվեցին: Նրանք անցան խաղաղ շինարարական աշխատանքի՝ մեր սոցիալիստական շինարարության տարբեր բնագավառներում:

Նույն թվականի օգոստոս-սեպտեմբերին դիվիզիան Գերմանիայից վերադարձավ Հայաստան: Մայր ժողովուրդը

---

65 Նույն տեղում:

քաջարի ռազմիկներին դիմավորեց անսահման հրճվանքով։

Ավելի քան 10 տարի, մինչև 1956 թվականի կեսերին, 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան շարունակում էր կատարելագործել անձնակազմի ռազմա-քաղաքական գիտելիքները, ուսումնասիրել Հայրենական մեծ պատերազմի բազմահարուստ փորձը և ժամանակակից ռազմական տեխնիկան։ Այդ գործում ևս նա հասավ բարձր ցուցանիշների։ Անդրկովկասի զինվորական օկրուգի զորքերը ռազմա-տակտիկական պարապմունքների և տեսչական սուուգումների ժամանակ դիվիզիան մի քանի անգամ գրավել է առաջին տեղերից մեկը, արժանանալով բարձր հրամանատարության շնորհակալություններին։ Այդ տարիների ընթացքում դիվիզիայի շարքերում դաստիարակվել, ռազմական գործին տիրապետել, տարբեր մասնագիտություններ ձեռք բերել և ապա խաղաղ շինարարական աշխատանքի են վերադարձել տասնյակ հազարավոր թամանցիներ։ Ռազմա-քաղաքական ուսուցման զուգընթաց, դիվիզիայի զորամասերը, մեծ օգնություն էին ցույց տալիս հանրապետության աշխատավորությանը՝ ժողովրդատնտեսական պլանների կատարման գործում։

Այդ տարիներին գեներալ Ն. Գ. Սաֆարյանից հետո, 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատարներ են եղել Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկած անվանի գեներալներ Հայկ Մարտիրոսյանը, Խորհրդային Միության հերոս Ասքանազ Կարապետյանը, Սերգեյ Միանսարովը։ Նրանք մեծ աշխատանք են կատարել խաղաղ պայմաններում դիվիզիայի ձեռք բերած հաջողությունների բնագավառում։

Խորհրդային Միության զինված ուժերի կրճատման օրենքի համաձայն մի շարք դիվիզիաների հետ միասին 1956 թվականին դադարեց գոյություն ունենալ նաև 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան։ Նրա անձնակազմի մեծ մասը զորացրվեց, իսկ մյուս մասը իր ծառայությունը շարունակեց այլ զորամասերում։

Զորացրվելուց հետո դիվիզիայի շարքերից մեծ թվով

ռազմիկներ ակտիվ ղեկավար աշխատանք են կատարել խորհրդային-կուսակցական, գիտության ու կուլտուրայի, առողջապահության և ժողովրդական տնտեսության բոլոր ասպարեզներում։ Ամեն մի թամանցի իր աշխատանքի բնագավառում ամեն ինչ արել է օգնելու մեր հանրապետության տնտեսական ու կուլտուրական զարգացմանը, նրա բարգավաճմանը։ Դրանց թվումն են Ն. Մեժլումյանը, Դ. Դանիելյանը, Խ. Պայազատյանը, Ֆ. Շիֆոնննկոն, Ն. Շահվերդյանը, Գ. Հարությունյանը, Ղ. Դալլաքյանը, Ա. Նալբանդյանը, Գ. Կարապետյանը, Դ. Ղուկասյանը, Ա. Սարոյանը, Հ. Հովակիմյանը, Մ. Բադալյանը, Մ. Սարգսյանը, Հ. Ադամյանը, Ա. Ջիլինգարյանը, Պ. Պեշչունսկին, Մ. Բոշնաղյանը, Բ. Մելքումյանը, Խ. Մխիթարյանը, Հ. Սահակյանը, Ալանակյանը, Մ. Ղազարյանը, Թևոսյանը, Վ. Բայբուրդյանը և շատ ու շատ ուրիշներ։ Նրանց մի զգալի մասը այժմ մեր շարքերում չի։ Բնական օրենքով հեռացել է մեզանից։ Փառք բոլոր թամանցիներին՝ թե մահացածներին և թե ողջերին։

Այսպիսով իր գոյության 15 տարիների, մասնավորապես 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, 89-րդ Թամանյան հայկական դիվիզիան, հերոսական Կարմիր բանակի շարքերում փառքի էջեր ստեղծեց մեր սոցիալիստական մեծ հայրենիքի պաշտպանության համար մղված պայքարի պատմության մեջ։ Դրանք անմոռաց էջեր են։

38-ՐԴ ՀՐԱԶԴԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿԱՐԾԻՔԸ 89-ՐԴ ԹԱՄԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԶԴԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ

15 մայիսի 1945 թ.

89-րդ Թամանյան Կարմրադրոշ, Կարմիր Աստղի շքանշանակիր դիվիզիան իր ազգային կազմով հայկական է, ձևավորվել է 12. 41-02. 42 թ. Երևանում, Հայկական ԽՍՀ։

Համառ մարտական և քաղաքական ուսուցման մեջ դի-

վիզիայի զինվորները և սպաները կարճ ժամանակամիջոցում կատարելապես տիրապետել են մարտի հիմնական ձևերին և 08. 08. 42 թ. սկսում են ակտիվ մարտական գործողությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում։

Դիվիզիան անցել է դժվարագույն մարտական ուղի։ Կովկասի պաշտպանությունը ներխուժած ֆաշիստական հորդաներից (08. 42 թ.—12. 42 թ.), հարձակումը Հյուսիսային Կովկասում և ֆաշիստական օկուպացիայից հարյուրավոր բնակելի կետերի և քաղաքների ազատագրումը (01. 42—02. 43), ակտիվ հարձակողական կռիվները Թամանյան թերակղզու մաքրման համար և գերմանոֆաշիստական Թամանյան խմբավորման ջախջախումը (09. 43 թ.—10. 43), համառ կռիվները Բշնամու դեմ Ղրիմի մաքրման համար, որոնք ավարտվեցին Ղրիմում գերմանա-ֆաշիստական օկուպանտների լիակատար պարտությամբ։

Բշնամու դեմ դիվիզիայի մարտերի յուրաքանչյուր շրջանը հագեցված է նրա զինվորների և սպաների մասսայական հերոսություններով, հաղթանակի նկատմամբ նրանց անհողդողդ վճռականությամբ։

Մարտերը Թամանի և Ղրիմի մաքրման համար դիվիզիայի մարտական պատմության մեջ կմտնեն որպես նրա զինվորների ու սպաների հայրենասիրական բռնկման, հերոսության և փառքի ամենապայծառ էջեր։

18-րդ բանակի կազմում 16. 9. 43 թ. 89-րդ հրաձգային Թամանյան դիվիզիան մասնակցել է գերմանացիների ուժեղ ամրացված և բազմաշերտ ամրություններ ճեղքմանը Նեբերջևսկայայա, Սախրնայա Գոլովկա լեռան (Նովոռոսիյսկից հյուսիս) հատվածում։

Թամանի համար հարձակողական մարտերում դիվիզիան հաղթահարել է նախորոք պատրաստած, ինժեներական առումով խիստ ամուր յոթը պաշտպանական գծերը, Բշնամուն հասցնելով մարդկային և տեխնիկայի անդառնալի կորուստներ։

Վերխներեականսկիի համար մղված մարտերում, որտեղ հակառակորդը համառ կերպով փորձում էր ձեռքից բաց չթողնել Նովոռոսիյսկից հետո իր երկրորդ ամրացված գիծը, հատկապես ցայտուն կերպով դրսևորեց դիվիզիայի ռազմիկների ու սպաների աճող մարտական վարպետությունը և վճռականությունը, որը հասցրեց հաղթանակի։

Այդ միջանկյալ հատվածում, որը գերմանացիներն անվանում էին «Զիգֆրիդի» գիծ, դիվիզիան իր ուսերին տարավ մարտական խնդրի գլխավոր ծանրությունը։ Իր ճակատում ունենալով 73-րդ հետևակային դիվիզիայի ուժեղացված զորամասերը, դիվիզիայի զորամասերը բևային հարվածներով հարկադրում են հակառակորդին՝ շրջապատումից խուսափելու նպատակով մեկը մյուսի հետևից թողնել հենակետը։

Վճռական ուղղությամբ թափանցելով հակառակորդի պաշտպանության մեջ, 89-րդ հրկ դիվիզիան, գործելով աջ և ձախ հարևանների հետ նպաստում է հետագա հարվածներ հասցնել նրա պաշտպանական հանգույցներին և կազմալուծել պաշտպանությունը։

Շարունակելով գրոհային ջոկատների սրընթաց գրոհները հակառակորդի թևերում, դիվիզիան վերջնական կոտրում է հակառակորդի՝ դիմադրելու կարողությունը և կարճ, բայց վճռական գրոհով 19. 09. 43 թ. ճեղքում է գերմանական պաշտպանության ուժեղ ամրացված երկրորդ բնագիծը և տիրում Վերխներեականսկի քաղաքին՝ գերմանացիների պաշտպանության կարևոր հանգույցին Թամանյան թևակըղզում։

Հենակետը հակառակորդից մաքրելու համար մարտերը Թամանյան թևակղզում 89-րդ հրկ դիվիզիան ավարտում է հաջող հարձակողական գործողություններով Կիզիլդաշյան և Բուգազյան լիմանների ափերին։ Խելամիտ և վճռական գործողությունների շնորհիվ, դիվիզիան իր գրոհային ջոկատներով հաղթահարել է թշնամական կրակի ծխածածկույթը և դուրս եկել հակառակորդի թևերը, իսկ հետո 3. 10.

43 թ. գրոհով ճեղքել գերմանացիների պաշտպանությունը այդ ուժեղ ամրացված և նախորոք պատրաստված բնագծում։

Թամանյան թևրակղզու մարտերում (16. 09-ից մինչև 4. 10. 43 թ.) 89-րդ հրվ դիվիզիան հակառակորդին հասցրել է կենդանի ուժի և տեխնիկայի անդառնալի կորուստներ՝ ոչնչացվել է մինչև 1150 զինվոր և սպա, գերվել է 180 գերմանական զինվոր և սպա, ոչնչացվել է տարբեր տրամաչափի 42 հրանոթ, 76 գնդացիր, 18 ականանետ, 52 ավտոմեքենա զինամթերքի բեռներով և շատ ուրիշ տեխնիկա։

Ռազմավար է վերցվել՝ տարբեր տրամաչափի հրանոթներ-26, ձեռքի գնդացիրներ-42, ականանետներ-20, ռազմամթերքի, վառելիքի և սննդի-անասնակերի պահեստ-10։

Գերմանա-ֆաշիստական զորքերից Թամանյան թևրակղզու մաքրման հաջող գործողությունների համար Գերագույն Գլխավոր հրամանատարության 9. 10. 43 հրամանով դիվիզիային շնորհվել է «Թամանյան» անվանակոչումը։

16-րդ հրաձգային կորպուսի կազմում դիվիզիան 23. 01. 44 թ. ճեղքում է հակառակորդի պաշտպանությունը Կերչ քաղաքի արևելյան մատույցներում, մղելով ծանր, արյունահեղ մարտեր համառ դիմադրող կայազորի դեմ քաղաքի փողոցների հենակետերում։

Թամանյան թևրակղզու մարտերում կուտակելով հարուստ փորձ, դիվիզիան խելամիտ տեղաշարժերով և զորհայիս խմբերի վճռական գործողություններով հակառակորդից գրավում է Յաղամասը-Յաղամասի հետևից և առաջին օրվա վերջում ներում է քաղաքի կարևորագույն հենակետերին-հայի գործարանին, պահածոների գործարանին, նավամատույցին և ընթացքից ճեղքում գերմանական պաշտպանությունը Կերչ քաղաքի միջով անցնող երկաթուղային գծի հատվածում։

Քաղաքի համար մղած փողոցային մարտերում դիվիզիայի ստորաբաժանումները, զինվորները և սպաները ցույց տվեցին անգերազանցելի հերոսություններ, խիզախություն-

ների և քաջությունների օրինակներ։ Միայն մեկ օրվա, 27. 01. 44թ., ընթացքում դիվիզիան հետ է մղել հակառակորդի՝ տանկերով և ինքնագնաց հրանոթներով պաշտպանվող հետևակի 16 հակագրոհները։

Կերչ քաղաքում 5 օրյա հարձակողական մարտերում 89-րդ հրվ դիվիզիան հակառակորդին հասցրել է կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ։ Քաղաքի գրավված փողոցներում, ուր դիվիզիան մարտեր էր մղում, հաշվվել է թշնամական ավելի քան 700 դիակ։ Դիվիզիայի զորամասերը ոչնչացրել են՝ 33 գնդացիր և շրջափակել գնդացրային 10 դզօտ, ոչնչացրել են 33 ավտոմեքենա՝ զինվորներով և բեռներով, 16 հրանոթ և ականանետ, ճնշել են 8 ականանետային, 3 հրանոթային մարտկոցի և 9 գնդացրային կետերի կրակը։

Կերչի պաշտպանական գնագծում գերմանական զորքերի պաշտպանությունը ճեղքելու կռիվներում մարտական խնդիրների օրինակելի կատարման և ամբողջ անձնակազմի ցուցաբերած քաջագործությունների համար 89-րդ հրվ դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. ապրիլի 24-ի հրամանագրով պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով։

Ղրիմը գերմանա-ֆաշիստական աղտեությունից մաքրելու համար մարտական գործողությունների աճող տեմպերով դիվիզիան մասնակցել է հակառակորդի դեմ կռիվներին Սևաստոպոլի պաշտպանական մատույցներում։

3-րդ լեռնահրաձգային կորպուսի կազմում 07. 05. 44 թ. դիվիզիան մասնակցել է ուժեղ ամրացված երկաթ-բետոնե և ինժեներային արգելափակոցների պաշտպանական գծի ճեղքմանը Դորնայա լեռան մատույցներում։

Կռիվները Դորնայա լեռան գրավման համար դիվիզիայի մարտական պատմության մեջ կմտնեն որպես ամբողջ անձնակազմի մարտական ուսուցման և հերոսությունների՝ անառիկ համարվող գերմանական պաշտպանության այդ կարևոր հենակետի, գրոհի փայլուն օրինակ։

Գործելով գրոհային ջոկատներով և գրոհային-մեկուսացնող խմբերով, դիվիզիայի զորամասերը, հաղթահարելով թշնամու կրակի ծխածածկույթը և լեռան թեք լանջերը, բախանցեցին հակառակորդի պաշտպանությունը։ Գրոհի առաջին օրվա վերջում առաջավոր ջոկատները դուրս եկան հյուսիսային թևքույթները, իսկ հաջորդ օրը հիմնական ուժերով լիովին տիրացան Դորնայա լեռան։

Սևաստոպոլի պաշտպանական գծի մատույցներում 5 օրվա մարտերի ընթացքում դիվիզիան հակառակորդին հասցրել է մարդկային ուժի և տեխնիկայի հետևյալ կորուստները. սպանված և վիրավորված զինվորներ և սպաներ-1905, տարբեր տրամաչափի հրանոթներ-95, ականանետներ-39, գնդացիրներ-99, ավտոմեքենա-410։ Դերի է վերցված 2589 զինվոր և սպա։ Ռազմամթերք է վերցված՝ տարբեր տրամաչափի հրանոթներ-114, ականանետներ-29, գնդացիրներ-191, ավտոմեքենա-970, մոտոցիկլ-160, հրացաններ և ավտոմատներ 2500, ռազմամթերք, զինդի և անասնակերի պահեստներ-4։

Ղրիմը գերմանա-ֆաշիստական օկուպանտներից մաքրելու հաջող գործողությունների համար 89-րդ հրաձգային դիվիզիան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով։

1944 թ. մայիսից մինչև դեկտեմբերը դիվիզիան, սկզբում Ղրիմում, ապա Լյուբլինի (Լեհաստան) շրջանում համալրվում է անձնակազմով և զբաղվում զորամասերի համար մարտական ուսուցմամբ, պատրաստվելով նոր կռիվների գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ։

14. 01. 45 թ. 89-րդ հրաձգային Թամանյան, Կարմրադրոշ, Կարմիր աստղի շքանշանակիր դիվիզիան 1-ին բելոռուսական ռազմաճակատի 33-րդ բանակի 16-րդ հրաձգային կորպուսի կազմում մասնակցում է հակառակորդի ուժեղ ամրացված դիրքերի հեղթմանը Վիսլա գետի Պուլավյան հենակետում։

Հարձակվելով սկզբում բանակի զորքերի երկրորդ, ապա

առաջին էշելոնում, դիվիզիայի զորամասերը մարտեր են մղում անտառներում առանձին հենակետերում գերմանացիների շրջապատված խմբավորումների ոչնչացման համար։

Գերմանացիների խմբավորումների, որոնց անձնակազմի թիվը հասնում էր մինչև 6000-ի, ոչնչացման համար առանձնապես ուժեղ կռիվներ տեղի ունեցան 17. 01—19. 01. 45 թ. Ռուսկի-Բրուդի անտառում, որտեղ դիվիզիան մեկ գնդով (390-րդ հգ), 531 հրետանային գնդի 2-րդ դիվիզիոնի և 1-ին մարտկոցի պաշտպանությամբ գլխավին ջախջախեց համառորեն դիմադրող հակառակորդին։ Միայն մեկ օրվա՝ 18. 01. 45 թ. ընթացքում 390-րդ հրաձգային գունդը հետ է մղել 7 տանկով և 12 ինքնագնաց հրանոթով պաշտպանվող հակառակորդի կատաղի 8 գրոհը։

Անցնելով վճռական գրոհի, 390-րդ հրաձգային գունդը կատրում է հակառակորդի դիմադրության հնարավորությունը։ Մարտի դաշտում հակառակորդը թողնում է իր զինվորների և սպանների մինչև 1800 դիակ։ Հրանոթային կրակից այրվել և ջարդվել են 750 ավտոմեքենա տարբեր բեռներով (գլխավորապես զորամասերի և միավորումների շտաբների ավտոմեքենաներն էին), 18 ինքնագնաց հրանոթ, 5 տանկ, 22 քարշակ, ավելի քան 600 սայլ։ Գերի է վերցված գերմանական ավելի քան 500 զինվոր և սպա, ռազմական ավար է վերցված՝ ավտոմեքենա-900, մոտոցիկլ-80, տարբեր տրամաչափի հրանոթներ-50, տարբեր բեռներով սայլեր-1000, ձիեր-1200 և շատ ուրիշ ռազմական գույք։

Շրջապատված գերմանա-ֆաշիստական զորքերի խմբավորումների լիկվիդացման հետագա կռիվներում Դլուտով, Կարշնև, Միխալուվ-1, Միխալուվ-2, Միխալուվ-3, Միխալուվ-4, Կոշմին, Բարխլին, Պոմերցիգ, Շախտենխագեն, Մենսով բնակավայրերի շրջաններում դիվիզիայի զորամասերը հակառակորդին հասցնում են նոր հարվածներ, ոչնչացնելով և գերելով շրջապատված խմբավորումների հիմնական ուժերը։

Լեհաստանի տերիտորիայում և Գերմանիայի սահման-

ներում գերմանացիների հենակետերի դիմադրող կայազորների լիկվիդացման կռիվներում (մինչև դիվիզիայի հասնելը Օդեր գետը), չհաշված մարտերը Ռուսկի Բրուդում, 89-րդ հրկ դիվիզիան ոչնչացրել է հակառակորդի ավելի քան 2000 զինվոր և սպա, գերել մինչև 500 հիտլերական։

Շարունակելով հակառակորդի սրընթաց հետապնդումը, 89-րդ հրկ դիվիզիան 400-րդ և 526-րդ գնդերով անցնում է Օդեր գետի ձախ ափը և Շվեդիցից արևմուտք գտնվող հենակետում ընդունում ամուր պաշտպանություն։ Դիվիզիայի պաշտպանած հենակետը ճակատով 2,5 կիլոմետր էր, խորությամբ՝ 800 մետրից-1,5 կիլոմետր։ Ճահճոտ տեղանքը պաշտպանության բացառիկ ծանր պայմաններ էր ստեղծել անձնակազմի համար։ Հենակետի աջ թևում զինվորները և սպաները հարկադրված էին անընդհատ գտնվել ջրում, անդամ պայմաններ չունենալով, որպեսզի չորացնեն իրենց հագուստները։

Եվ չնայած պաշտպանության համար բացառիկ ծանր պայմաններին, դժվարին պաշտպանության 52 օրում 89-րդ հրկ դիվիզիան հետ է մղել հակառակորդի 14 հակագրոհները, և 2 ընդհանուր հարձակումները, որոնց նպատակն էր մեր պաշտպանվող զորամասերին լցնել Օդեր գետը։

Հատկապես հերոսության և խիզախության ուժեղ մարտեր են ծավալվել 16. 03 և 03. 04. 45 թ., երբ դիվիզիայի զորամասերը ձեռնամարտերում անողոքաբար ջախջախեցին իրենց դիրքերը լցված հիտլերականներին և կայուն կերպով պաշտպանեցին այդ դիրքերը։

16. 03. 45 թ. կռվում երկու գնդերով դիվիզիան ձախ թևում հետ է մղում 11 տանկի և 6 ինքնագնաց հրանոթի պաշտպանությամբ հակառակորդի 4 գումարտակի հարձակումը։ Այդ կռվում 89-րդ հրկ դիվիզիայի զորամասերը ոչնչացրել են 350 հիտլերական և հակառակորդի 3 տանկ, 1 ինքնագնաց հրանոթ։

04. 03. 45 թ. հակառակորդը ամբողջ ճակատով ձեռնարկելով ընդհանուր հարձակում, նրան հաջողվում է ուժե-

րի որոշ մասով թափանցել 89-րդ հայկական դիվիզիայի մարտակարգերը «պլատֆ»-ի հարավային մասում: Դիվիզիայի անձնակազմը, որը զինված էր մարտական առաջավոր փորձով և կոփված գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ երկարատև մարտերում, օգտագործելով իր զենքի ամբողջ ուժը, հաջողությամբ հետ է մղում թշնամական բոլոր գրոհները և ձեռնամարտերում հակառակորդին հասցնում կենդանի ուժի և տեխնիկայի անդառնալի կորուստներ:

Իր բնագծերի հաջող բացառիկ քաջարի և հերոսական պաշտպանության համար թշնամու դեմ 03. 04. 45 թ. պայքարում դիվիզիայում շքանշաններով և մեդալներով պարգևատրման են ներկայացվել 150 մարդ, Խորհրդային Միության հերոսի կոչման՝ 7 մարդ:

Հենակետի պաշտպանության 52 օրում դիվիզիայի զորամասերը ոչնչացրել են հակառակորդի 2200 զինվոր և սպա, 35 սայլ տարբեր բեռներով, 20 հաստոցավոր գնդացիր, 27 ձեռքի գնդացիր, 6 հակատանկային հրանոթ, 6 ականանետ և շատ ուրիշ զենքեր ու ռազմական ունեցվածք:

14. 04. 45 թ. հրկ դիվիզիան իր ձախ թևում ձեռնարկում է հակառակորդի առաջին խրամատների գրավման մասնակի գործողություն, որը հետո վեր է ածվում ընդհանուր հարձակողական մարտերի գերմանա-ֆաշիստական ուժեղ ամրացված, խորը, շերտավորված ամրությունների ճեղքման համար Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքի մատույցներում:

16. 04. 45 թ. դիվիզիան հաջողությամբ ճեղքում է հակառակորդի պաշտպանությունը հենակետի ամբողջ հակատում, հաղթահարելով կրակային ուժեղ դիմադրությունը և 10 տանկով և 12 ինքնագնաց հրանոթով պաշտպանվող հետևակի բազմիցս գրոհները, մարտերով 23. 04. 45 թ. գրավում է Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը:

Ջախջախելով Ֆրանկֆուրտը պաշտպանող գերմանական խմբավորումը, դիվիզիայի զորամասերը դեպի են վերց-

նում հակառակորդի 500 զինվոր և սպա, մարտերում ոչնչացնում ավելի քան 250 հիտլերական։

Ռազմավար է վերցվել՝ երթուղային 2 էշելոն, 18 պահեստ ռազմական տարբեր գույքով և կենսամթերքներով, 185 ավտոմեքենա, 85 մոտոցիկլ, տարբեր սիստեմի 13 ռացիա, տարբեր տրամաչափի 37 հրանոթ, 18 զենիթային սարքավորում, 61 գնդացիր և ավելի քան 12000 արկ։

Շարունակելով հակառակորդի սրընթաց հետապնդումը դեպի հարավ-արևմուտք, 89-րդ հայկական դիվիզիան 24. 04. 45 թ. ընթացքում կոտրել է գերմանացիների համառ դիմադրությունը Օդեր-Շպրե ջրանցքի անմիջական մատույցներում՝ Բրենտհաենշտալի շրջանում, գերել մինչև 200 զինվոր և սպա, ոչնչացրել մինչև 300 հիտլերական։

45 թ. ապրիլի 29-ից 89 հրկ դիվիզիայի զորամասերը հակառակորդի դեմ համառ մարտեր են սկսում Բեռլին քաղաքում։

Գործելով գրոհային ջոկատներով, դիվիզիան շենքը շենքի, թաղամասը թաղամասի հետևից գրավելով, հաղթանակ է ձեռք բերում ֆաշիստական օկուպանտների դեմ նրանց սեփական որջում։

Գրոհային ջոկատների համարձակ տեղաշարժերով և լավ կազմակերպված ու ներդաշնակ գործողություններով, դիվիզիան հաջողությամբ մեկուսացնում է ուժեղ ամրացված հենակետը՝ Հումբոլդ Հայն այգու ամրոցը։ Հակառակորդին դնելով աննկանելի վիճակի մեջ, դիվիզիայի զորամասերը ամրոցի կայազորին՝ թվով 3000—5000 մարդ, հարկադրում են դադարեցնել դիմադրությունը և զենքը վայր դնել։

1945 թ. մայիսի 2-ի օրը Թամանյան դիվիզիայի մարտական պատմության մեջ կմտնի որպես նրա պատմության ամենաուժեղ և պայծառ էջը։ Այդ օրը 89-րդ հրկ դիվիզիայի մարտական գործողությունները պսակվեցին խորհրդային զենքի լիակատար հաղթանակով ատելի թշնամու դեմ։ Դի-

վիպիայի զորամասերը գերի վերցրին գերմանական 5112 զինվոր և սպա և շատ ռազմավար։

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում ռազմական գործողություններր սկսելու պահից՝ 42 թ. օգոստոսի 8-ից մինչև 45 թ. մայիսի 8-ը, դիվիզիայի զորամասերն անցել են 7250 կիլոմետր, որից 3640 կիլոմետրը համատ մարտերով։

Այդ ժամանակամիջոցում դիվիզիան ֆաշիստական օկուպացիայից ազատագրել է 900 բնակելի կետ և 30 քաղաք։

Արյունահեղ մարտերում ոչնչացվել է հակառակորդի 10.863 զինվոր և սպա, տանկեր և ինքնագնաց հրանոթներ-32, տարբեր տրամաչափի հրանոթներ-169, գնդացիրներ-289, ականանետներ-163, ինքնաթիռներ-6, ավտոմեքենաներ-1160, բացի դրանից, ավտոմեքենաներ զրահով-85, տանկեր-22, զրահամեքենաներ-2, բեռներով սայլեր-635։

Այդ ժամանակամիջոցում գերի է վերցված գերմանական 9591 զինվոր և սպա և հետևյալ ռազմավարը՝ տանկեր-15, տարբեր տրամաչափի հրանոթներ-227, գնդացիրներ-444, ականանետներ-49, ավտոմեքենաներ-2149, մոտոցիկլներ-685, հեծանիվներ-1400, բեռներով սայլեր-1000, ձիեր-1200, երկաթուղային էշելոններ-10, տարբեր պահեստներ-41, ավելի քան 120.000 արկ։

Ռազմական գործողությունների ժամանակ դիվիզիայում խորհրդային Միության շքանշաններով պարգևատրվել է 11430 մարդ, որից կորպուսների, բանակների և ռազմաճակատների հրամաններով՝ 1495, դիվիզիայի հրամաններով՝ 5090 մարդ, գնդերի հրամաններով՝ 4845 մարդ։

Առ 14. 05. 45 թ. դիվիզիայի անձնակազմի 3918 մարդուց խորհրդային Միության շքանշաններով և մեդալներով պարգևատրված են 3830 մարդ, որից շքանշաններով՝ 2680 մարդ և մեդալներով՝ 1150 մարդ։

Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրերով Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 8 մարդու։

38-րդ հրաձգային կորպուսի
հրամանատար, գեներալ-լեյտենանտ
Տերեշկով*

38-ՐԴ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ 89-ՐԴ ԹԱՄԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՕԴԵՐԻ ՀԵՆԱԿԵՏԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՌԼԻՆԻ ԳՐՈՀԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

21 հունիսի 1945 թ.

89-րդ Կարմրադրոշ, Կուտուզովի և Կարմիր աստղի շքանշանակիր Թամանյան հրաձգային դիվիզիան երկու ամսվա ընթացքում պաշտպանություն էր դրավել Օդեր գետի արևմտյան ափին՝ Ֆրանկֆուրտ քաղաքի շրջանում։

Հենակետը իրենից ներկայացնում էր երկու քառակուսի կիլոմետր։ Այդ ընթացքում գերմանացիները գործադրել են մինչև 17 կատաղի հակագրոհ, խնդիր ունենալով դիվիզիային լցնել Օդերի մեջ։

89-րդ հայկական դիվիզիայի դինվորները, սերժանտները, սպաները հերոսական, կայուն և խելացի կերպով ոչ միայն հետ են մղել հակառակորդի բոլոր հակագրոհները, այլև նրան հասցրել ծանր կորուստներ։

Ապրիլի 16-ին կորպուսի կազմում դիվիզիան անցավ վճռական հարձակման, խնդիր ունենալով գրոհով տիրապետել Ֆրանկֆուրտ քաղաքին։ Վեցօրյա համառ մարտերում դիվիզիան կոտրեց գերմանացիների դիմադրությունը և ապրիլի 23-ի առավոտյան ժամը 8-ին լիովին տիրապետեց Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքին։

Այդ մարտերում դիվիզիայի անձնակազմը ցուցաբերեց բացառիկ հերոսություն, խիզախություն և համառություն։

---

* Боевой путь армянской таманской стрелковой дивизии *1942—1945*, Сборник документов и материалов, Ереван, *1985*, էջ *650—660*։

Ֆրանկֆուրտի գրավումից հետո, կորպուսի կազմում, դիվիզիան փոխադրվեց Բեռլինի մատույցները և ապրիլի 28-ից մինչև մայիսի 2-ը արյունահեղ մարտերում, մյուս միավորումների հետ միասին, կտրեց թշնամու համառ ու կատաղի դիմադրությունը և տիրապետեց Բեռլինին։

Դիվիզիայի անձնակազմը անմիջականորեն մասնակցելով Բեռլինի հերոսական գրոհին, ցուցաբերեց բացառիկ խիզախություն, համարձակություն և կարողություն։

Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Սաֆարյանը մտածված և համառ կերպով ղեկավարեց դիվիզիան։ Դիվիզիայի քաղաքական բաժնի պետ փոխգնդապետ Դավիդովը խելացի կերպով պլանավորեց և ճիշտ կազմակերպեց կուսակցական-քաղաքական աշխատանքը, ինքը անձամբ գրտնըվում էր մարտակարգերում։

Դիվիզիայի զինվորները, սերժանտները, սպաներն իրենց պսակեցին փառքով և գրեցին նոր, պայծառ էջ Կարմիր բանակի և հերոսական հայ ժողովրդի պատմության մեջ։

Նշելով դիվիզիայի փառավոր մարտական գործերը, նրա հրամանատարության՝ հանձինս գեներալ-մայոր Սաֆարյանի և փոխգնդապետ Դավիդովի, հրետանու պետ, փոխգնդապետ Պայաղատյանի, շտաբի պետ, փոխգնդապետ Բելաուսովի, հաղորդում ենք ձեզ՝ մեր մարտական ընկերներին ռուսական մեծ շնորհակալություն, հպարտանում ենք ձեզնով՝ որպես սովետական մեծ ժողովրդի հավատարիմ և քաջարի զավակների և սրտանց ցանկանում ենք բազմապատկել մարտական հաջողությունները խաղաղ կյանքի ասպարեզում։

38-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ, խորհրդային Միության հերոս Տերեշկով

38-րդ հկ բաղաժնի պետ գնդապետ Պետրով

38-րդ հհ շտաբի գնդապետ Կոնովալով**

** Боевой путь армянской таманской стрелковой дивизии 1942—1945 гг., сборник документов и материалов, Ереван, 1985, էջեր 675—676։

89-ՐԴ ԹԱՄԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԶԴԱՅԻՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԱՎԱՐՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

15 հունիսի 1945 թ.

Մեր թանկագին մայրեր ու հայրեր, կանայք ու երեխաներ, քույրեր ու եղբայրներ։

Իրականացավ մեծագույնը։ Հաղթանակի արևը վառ կերպով շողում է մեր սքանչելի Հայրենիքի վրա։ Պատմական հաղթության օրը-1945 թ. մայիսի 9-ին գլխավոր հրամանատարի հրամանով հազար հրանոթի որոտը հաղորդեց ամբողջ մարդկությանը, որ պատերազմի ժամանակաշրջանը վերջացավ, սկսվեց խաղաղ զարգացման ժամանակաշրջանը։

Մեր արդար գործը հաղթանակեց։ Սովետական ժողովուրդը և նրա հերոսական Կարմիր բանակը բոլշևիկների պանծալի պարտիայի ղեկավարությամբ պատվով պաշտպանեցին մեր Հայրենիքի անկախությունն ու լիակատար հաղթանակ տարան գերմանական արյունարբու և գիշատիչ իմպերիալիզմի դեմ։

Մեր ստորաբաժանումը[66], *կազմավորված Հարազատ Երևանում, կռվի մտավ Թերեքի ափերին, երբ մահացու վտանգ էր կախված երկրի վրա. երբ անբարտավան թշնամին ձգտում էր դեպի Գրոզնի և Բաքու, «ոչ մի քայլ հետ»,— ասվեց մեզ։ Մյուս դիվիզիաների հետ միասին մենք կանգնեցինք որպես անխորտակելի պատնեշ։ Հակառակորդի առաջխաղացումը դադարեցվեց, և հերոսական Կարմիր բանակը ազատեց հայ ժողովրդին ստրկացումից և ոչնչացումից։*

Մեր ստորաբաժանումն անցավ 3700 կիլոմետր դաժան պայքարի ուղի, սկսած Կովկասի նախալեռներից մինչև էլբայի ափերը, անողոքաբար ջախջախելով իր ճանապարհին թշնամու հրոսակախմբերը։

Մահացու գոտեմարտի ծանր օրերին, երբ ոտքի ոտքը

---

66 Նամակի հեղինակները նկատի ունեն դիվիզիան։

կախված էր Սովետական Կովկասի վրա, դուք՝ Հայաստանի բանվորներդ, կոլխոզնիկներդ, ու ինտելիգենցիան, դիմեցիք մեզ, հայ ռազմիկներիս, հուզիչ նամակ-կոչով։

«Սովետական Հայրենիքի քաջ պաշտպաններ, մեր Հայրենիքը հզոր է Սովետական ժողովուրդների բարեկամությամբ։ Մեր ավագ եղբոր ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, եղբայրական ժողովուրդների զավակների հետ ձեռք-ձեռքի տված՝ կռվեցեք թշնամու դեմ։ Ամրապնդեցեք անխորտակելի բարեկամությունն ու եղբայրությունը ֆրոնտում հիշեցեք, որ այդ եղբայրության, ժողովուրդների բարեկամության մեջ է մեր հզոր Հայրենիքի՝ Սովետական Միության անպարտելիությունը։

Պողպատյա խիստ կարգապահությամբ ամրապնդեցեք Կարմիր բանակի ուժը։ Տիրապետեցեք ժամանակակից ռազմական տեխնիկային։ Սրբությամբ և առանց հապաղման կատարեցեք ձեր հրամանատարների ու պետերի հրամանները։ Դրանումն է մեր հաղթանակի երաշխիքը»։

Մենք հուզմունքով կարդացինք այդ նամակը և երդվեցինք պատվով ու արժանավայելորեն կատարել մեր պարտքը։

Բազմազգ է մեր Սովետական ժողովուրդը։ Բազմազգ է և նրա Կարմիր բանակը։ Սովետական բոլոր ժողովուրդների զավակների հետ ձեռք-ձեռքի, գլխավորությամբ ռուս մեծ ժողովրդի, որը ամենից ավելի է զոհեր բերել Հայրենիքի զոհասեղանին և որը իր ուսերի վրա կրել է պատերազմի գլխավոր ծանրությունը, մենք համատեղ ռազմական սխրագործություններով և մեր արդար գործի համար թափված արյամբ ամրապնդեցինք Սովետական ժողովուրդների մարտական մեծ բարեկամությունը, ճակատամարտերում պաշտպանեցինք մեր Հայրենիքի պատիվն ու ազատությունը, վերադարձրինք մեր սովետական ժողովուրդին խաղաղ կյանքի և ստեղծագործության երջանկությունը։

Պատերազմի փորձությունը ակներևորեն համոզեց հայ ժողովրդին, այդ թվում և հայ ռազմիկներին, որ մի միայն

ռուս մեծ ժողովրդի հզոր աջակցությունը պահպանեց Հայաստանի պետական անկախությունը և փրկեց հայ ժողովրդին գերմանա-ֆաշիստական արշավանքի սարսափներից, հարվածից ու ֆիզիկական ոչնչացումից։

Դուք պահանջում էիք՝ մեր հողից դուրս շպրտել գերմանական կատաղած գազանին։

Ամբողջ Կարմիր բանակի հետ միասին պատվով կատարեցինք այդ առաջադրանքը։ 1944 թվին մեր Հայրենիքը ամբողջովին ազատագրվեց գերմանա ֆաշիստական զավթիչներից։

Ձեր նամակում դուք պահանջում էիք մեզանից՝ անվախ առաջ գնալ, կանգ չառնել ոչ մի դժվարության առջև, համարձակորեն խորտակել ֆաշիստական բոլոր ամրությունները, ջախջախել թշնամու տեխնիկան և կենդանի ուժը։

Մենք հողին հավասարեցրինք մեր ճանապարհին ընկած բոլոր արգելքները, խորտակեցինք թշնամու զորեղ ամրությունները Թամանի կռիվներում, Կերչ, Սևաստոպոլ քաղաքների համար մղած համառ մարտերում, փառապանծ ուղի անցանք Վիսլայից մինչև Օդեր, գրոհեցինք հակառակորդի վերջին ամրությունները Օդերի Ֆրանկֆուրտում և հենց Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում։

Մեր կանայք, քույրերն ու ծնողները պահանջում էին մեզանից՝ ազատագրել գերմանացիների կողմից ստրկության տարված Սովետական Միության խաղաղ բնակչությանը։

Մենք մեր մարտական ճանապարհին տասնյակ հազարավոր սովետական մարդկանց ազատագրեցինք գերմանական ստրկությունից։

Դուք կոչում էիք մեզ՝ ցույց տալ, որ արժանի ենք մեր ժողովրդին, բազմապատկել մեր զենքի ուժը, մեր ռազմական քաջությունը, էլ ավելի կոփել մեր սրտերը։

Մեր ստորաբաժանման մարտիկները՝ սերժանտներն ու սպաները, կոփվեցին գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղած մարտերում, սովորեցին ինչպես հարկն է ատել

Թշնամուն, ցուցաբերեցին մեծ կազմակերպվածություն և կռվելու ունակություն։

Խոր հավատը դեպի մեր արդար գործը, հավատարմությունը ժողովրդին, բացառիկ նվիրվածությունն ու սերը դեպի Հայրենիքը, դեպի Լենինի պարտիան բազմապատկեցին մեր ուժը և նորանոր հերոսական սխրագործությունների մղեցին մեզ։

Կուբանի համար մղած բացառիկ թեժ մարտերի օրերին Սովետական Միության հերոս Հ. Ավետիսյանը՝ իր ժողովրդի արժանի զավակը, առաջ նետվեց և իր մարմնով ծածկեց հակառակորդի դզոտի ամբրազուրը։ Մեր ստորաբաժանման առաջապահական հերոսները՝ Սովետական Միության հերոսները՝ Ս. Առաքելյանը, Ջ. Կարախանյանը, Ս. Բազդասարյանը, Խ. Խաչատրյանը, Վ. Ռոստոմյանը, Ա. Հարությունյանը, Հ. Մկրտչյանը,—Կուբանի, Թամանի, Ղրիմի և ռուսական փառքի քաղաք՝ Սևաստոպոլի համար մղված մարտերում անթառամ փառքով ծածկեցին իրենց անունները։ Նրանցից շատերը այդ փառքը տարան բոլոր փորձությունների միջով և մասնակից եղան հաղթանակի կարմիր դրոշը Բևռլինի վրա բարձրացնելուն։

Սկսած 1942 թ. օդոստոսից, ստորաբաժանումը դաժան մարտերում աղատագրել է ավելի քան 900 բնակավայր, Մալգոբեկ, Թաման, Կոշտին, Դլուտուլ քաղաքները, մասնակցել է Նովոռոսիյսկ, Կերչ, Սևաստոպոլ քաղաքների ազատագրմանը։

Կատարելով մեր սրբազան պարտքը, մենք քաջարի Կարմիր բանակի հետ միասին հետապնդեցինք և ջարդեցինք անարգ թշնամուն մինչև նրա վերջնական ջախջախումը։ Կարմիր բանակի ձմեռային հարձակման ժամանակ՝ 1945 թվի հունվարի 14-ից, մեր ստորաբաժանումը հետապընդելով հակառակորդին և իր ճանապարհին ոչնչացնելով գերմանական զորքերի առանձին խմբավորումներ, գրավեց գերմանական Շվեհիկ և Ռամպիտց բնակավայրերը, փետրվարի 6-ին դուրս եկավ Օդեր գետը, առանց կանգ առ-

նելու բռնանցեց այն, գրավելով նրա արևմտյան ափին հենակետ մեկ կիլոմետր լայնությամբ և 700 մետր խորությամբ։

Երկու ամիս մենք պահեցինք մեր զորքերի այդ ամենափոքր հենակետը Օդերի վրա՝ Ֆրանկֆուրտ քաղաքից երեք կիլոմետր հարավ։ Բազմաթիվ հակագրոհներով հակառակորդը մտադրվում էր Օդեր գետը նետել մեր ստորաբաժանումները և վերացնել հենակետը։ Չնայած ճահճոտ տեղանքին և Օդերի վրայով կամրջի բացակայությանը, բացառիկ դժվար պայմաններում, շնորհիվ մեր ստորաբաժանման անձնակազմի կայունության, համառության և արիության, նրա բարձր կազմակերպվածության և զգոնության՝ 60 օրում, առանց բացառության ետ մղվեցին հակառակորդի բոլոր 27 կատաղի հակագրոհները։

Հենակետը ոչ միայն պահպանվեց, այլև հետո ընդարձակվեց, որը հնարավորություն տվեց նրա վրա կենտրոնացնել նրա զգալի ուժերը, ճեղքել գերմանացիների պաշտպանությունը, գրավել Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը և ձգտել դեպի Բեռլին։

Բելոռուսական 1-ին ֆրոնտի զորքերի հրամանատար, Սովետական Միության մարշալ ընկեր Ժուկովը մեծագույն վստահություն ցույց տվեց մեր ստորաբաժանմանը։ Մենք ուրիշ ստորաբաժանումների թվում ստացանք մարտական հրաման՝ գրոհի գնալ Բեռլինի վրա։ Մեզ մեծ պատիվ բաժին ընկավ-մասնակցել այդ վճռական կռվին՝ հիտլերյան Գերմանիայի մայրաքաղաք, գերմանական իմպերիալիզմի կենտրոն և գերմանական ագրեսիայի օջախ՝ Բեռլին քաղաքը մտնելու համար։ Մենք արշավեցինք Բեռլինի վրա, հիշելով, որ այդ վերջին գրոհին մեզ հետ միասին գնում է ամբողջ հայ ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդները։

Գրավելով թաղամաս-թաղամասի հետևից, մենք, Գերմանիայի մայրաքաղաքի կենտրոնական մասում՝ Վեդդինգի շրջանում, հասանք երկու ամրոցի և հարկադրեցինք գերմա-

նական կայազորներին՝ ըվով ավելի քան 5000 զինվորի և սպայի, դերի հանձնվել։

Հայ ժողովուրդը կարող է հպարտանալ, որ նրա զավակները՝ Սովետական Միության եղբայրական ժողովուրդների զավակների հետ միասին ավարտեցին գերմանական զորքերի Բեռլինյան խմբավորման ջախջախումը, ամբողջովին տիրեցին Բեռլին քաղաքը և հաղթության դրոշը բարձրացրին նրա վրա։

Պատերազմի ժամանակամիջոցում ստորաբաժանումը ոչնչացրել է հակառակորդի ավելի քան 9000 զինվոր և սպա, խփել ու ոչնչացրել է թշնամու 148 տանկ ու ինքնագնաց հրանոթ և ավելի քան 300 դաշտային հրանոթ, գերի է վերցրել 11000 գերմանական զինվոր ու սպա։ Գրավել է ռազմապարտ՝ 154 տարբեր տրամաչափի հրանոթ, 383 գնդացիր, 5000 հրացան և ավտոմատ, 1160 ավտոմեքենա և այլն։

Մարտական գերազանց գործողությունների, արիության և խիզախության համար, որ ցուցաբերել են գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղած մարտերում, մեր ստորաբաժանման 7333 մարտիկ, սերժանտ և սպա ստացել են կառավարական պարգև։ Կարմիրբանակայիններ Ապրեսյանը և Գրիգորյանը, ավագ Հայրապետյանը, սպաներ Սիմոնյանը, Բադալյանը, Իլմախլյանը, Մանուկյանը և շատ ուրիշներ ունեն հնգական և ավելի կառավարական պարգևներ։

Հայրենական մեծ պատերազմի ճակատամարտերի դաշտերում ստորաբաժանման ամբողջ անձնակազմը բարձր պահեց սովետական զինվորի պատիվը, հայ ռազմիկի պատիվը և կատարեց մարտական բոլոր առաջադրանքները։ Այդպես եղավ Բամանում, որի համար ստորաբաժանումը արժանացավ «Բամանյան» կոչմանը։ Այդպես եղավ Կերչում, որի համար նա պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։ Այդպես եղավ Սևաստոպոլում, որի համար նա արժանացավ ավելի բարձր կառավարական պարգևի-Կարմիր դրոշի շքանշանի։ Այդպես եղավ Օդերի Ֆրանկֆուրտի համար մղած մարտերում, երբ ստորաբաժանումը Օդերի արևմտյան ափե

փոքր հենակետից ճեղքից գերմանացիների ուժեղ և խորը էշելոնացված պաշտպանությունը, որը ծածկում էր Բեռլինի հեռավոր մատույցները և գրավեց Գերմանիայի խոշորագույն քաղաքներից մեկը՝ Օդերի Ֆրանկֆուրտը։ Դրա համար զորամիավորումը պարգևատրվեց Կուտուզովի II աստիճանի շքանշանով։

Մարտնչելով հանուն մեր հայրենիքի, Հայրենական մեծ պատերազմի տարիներին մենք սպառազինության, ռազմամթերքի, հագուստի և սննդի պակաս չզգացինք։ Մեր թիկունքը ամեն ինչ տվեց ֆրոնտի համար, հաղթանակի համար։ Ամբողջ սովետական ժողովուրդը այդ թվում նաև հայ ժողովուրդը, պատվով կատարեց իր պարտքը, պատերազմի առաջին իսկ օրից ձգտելով մի նվիրական նպատակի-թշնամու ջախջախմանը, մեր սովետական հայրենիքի ազատության և անկախության պաշտպանությանը։ Ձեր աշխատանքային հերոսությունը նոր սխրագործություններ ոգևորեց մեր ռազմիկներին։ Յուրաքանչյուր հայ ռազմիկ գիտեր, որ, ջախջախելով հակառակորդին Կուբանի դաշտերում, Ղրիմում, Լհհաստանում և Գերմանիայում, նա պաշտպանում է իր մեծ հայրենիքը—Սովետական Միությունը, իր հարազատ հողը-Սովետական Հայաստանը։

Մեղանից յուրաքանչյուրը գիտեր, որ ճակատի որ մասում էլ կռվենք գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ, մենք կռվում ենք հանուն մեր հարազատ Հայաստանի գոյության, հանուն նրա փրկության ու ազատության։

Դուք դրում էիք. «Մենք սպասում ենք այն բախտավոր օրվան, երբ դուք փառքով պսակված տուն կվերադառնաք և մեր սքանչելի հայրենիքը-Հայաստանն իր մայրական գիրկը կառնի Ձեզ՝ իր քաջ զավակներին»։

Մենք արեցինք այն ամենը, ինչ մեղանից էր կախված, որպեսզի մի-միայն հաղթանակով տուն, հարազատ Հայաստան վերադառնանք։ Մեղնից յուրաքանչյուրը գիտեր, որ Ճանապարհը դեպի մեր սքանչելի Երևանը, դեպի Արարատի դաշտավայրը, դեպի հարազատ Սևանը ձգված է Բեռլինի

վրայով, որ վերադարձը դեպի հայրենիք Բեռլինի վրայով մեծ, պատմական տոն կլինի հայ ժողովրդի համար։

Յուրաքանչյուր հայ ռազմիկի սրտում մարտերի ժամանակ անմար ապրում և ոգեշնչում էր Գևորգ Մարզպետունու հերոսական երդումը— «Երդվում եմ,— ասում էր նա,— երդվում եմ հայրենյացս արևով, որ այլևս չեմ վերադառնա իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնի իմ ծածկի տակ, մինչև վերջին թշնամուն իմ Հայրենիքից դուրս չհալածեմ»։

Յուրաքանչյուր հայ ռազմիկ մահացու գոտեմարտի էր գնում թշնամու դեմ, արհամարհելով և հաղթահարելով մահը, որպեսզի փառքով ու պատվով կատարի հայ ժողովրդի պատվերը— վերադառնա տուն, մայր հայրենիքի սրբազան գիրկը միմիայն հաղթանակով։

Մեր մեծ տոնախմբության օրը վրա հասավ։ Թշնամին ջախջախված է, հաղթանակը ձեռք է բերված։ Այսօր մենք հպարտությամբ զեկուցում ենք, որ հայ ժողովրդի առաջադրանքը մենք պատվով կատարեցինք։

Հայ ժողովուրդը վաղուց ի վեր բախտավորությունը որոնել է աղատության, խաղաղության և աշխատանքի մեջ, դավերգել է դրանց իր հազարամյա սքանչելի «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպում։

Այդ մեծ բախտավորության համար էր կռվում Կարմիր բանակը և հայ ռազմիկները նրա շարքերում։ Այդ ազատությունն ու բախտավորությունը մենք պաշտպանեցինք կատաղի ճակատամարտերի կրակի մեջ և հաղթեցինք։

Շնորհավորում ենք ձեզ բոլորիդ մեծագույն հաղթանակի ու բախտավորության առթիվ և ցանկանում ենք նորանոր հաջողություններ ձեր խաղաղ և ստեղծագործական աշխատանքում։

Մենք կվերադառնանք, և դուք կհիանաք մեր քաջարի ռազմիկներով։

Իր շարքերում ստորաբաժանումը դաստիարակել է հազարավոր առաջավոր մարդիկ, որոնց սրտերը լեփ լեցուն են

հրաշալի սովետական հայրենասիրությամբ, այն ազնիվ ղգացմունքով, որը հաղթահարեց մահը անձնազոհ մարտերում։ Մեր շարքերում մենք դաստիրակել ենք 4. 638 բոլշևիկներ, որոնք չեն խնայել իրենց արյունն ու կյանքը հանուն Հայրենիքի, հանուն Լենինի պարտիայի մեծ գործի։ Մենք տուն կվերադառնանք որպես հաղթողներ, կոփված մարտերի հրի ու ծխի մեջ, ամենականացած դաժան ու երկարատև պայքարում, կյանքի իմաստությունը սովորած, լեցուն անսահման սիրով դեպի մեր Հայրենիքը, մեր սովետական կարգերը։ Ձեզ հետ միասին մենք կկառուցենք մեր երջանիկ սոցիալիստական կյանքը։

Հավերժ փառք և անմար հիշատակ հերոսներին՝ գնդապետ Ս. Զաքիյանին, գնդապետ Վասիլյանին, գնդապետ Բլբուլյանին, մայոր Պ. Ավալյանին, մայոր Ս. Մարգարովին, մայոր Մ. Խաչանյանին, մայոր Ս. Բաղդասարյանին, մայոր Ս. Խանջյանին, մայոր Իսախանյանին, Սովետական Միության հերոսներ Հ. Ալեխիսյանին, Ս. Առաքելյանին, Ջ. Կարապետյանին, որոնք զոհվեցին մեր Հայրենիքի ազատության և անկախության համար մղված պայքարում։

Սովետական ժողովրդի թշնամու դեմ տարած մեծագույն հաղթանակի տոնախմբության օրերին մենք լի ենք ուրախության և հպարտության զգացմունքով, մեր սովետական մեծ Հայրենիքի համար, մեր ժողովրդի՝ հաղթող ժողովրդի համար, մեր հերոսական Կարմիր բանակի համար։

*Նամակի տակ ստորագրել են ստորաբաժանման բոլոր մարտիկները, սերժանտներն ու սպաները****

*** «Կարմիր զինվոր», 15 հունիսի 1945։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 5

Գլուխ առաջին. *Դիվիզիայի ձևավորումը և մարտական ուսուցումը* 10

Գլուխ երկրորդ. *Դիվիզիայի մասնակցությունը Կովկասի համար մղված մարտերին* 37

1. *Պաշտպանական մարտերը* 37

2. *Հարձակողական մարտերը* 67

3. *Թամանյան թերակղզու ազատագրումը* 90

Գլուխ երրորդ. *Ղրիմի հերոսամարտերում* 120

1. *Հանուն Կերչի* 120

2. *Սևաստոպոլի ազատագրման համար* 181

Գլուխ չորրորդ. *Պատերազմի վերջին ճակատամարտում* . . 224

1. *Լեհաստանի ազատագրման մարտերում* . . . 224

2. *Մարտերը Գերմանիայում. Օդերի հենակետը* . . 259

3. *Մասնակցությունը Օդերի Ֆրանկֆուրտի դրավմանը. Բեռլինի գրոհը* 287

4. *Հաղթարշավ մինչև Էլբա* 316

ԱՐՇԱՎԻՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԼԵՌՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԲՆՒԼԻՆ-ԷԼՐԱ

Հրատ. խմբագիր Վ. Ջ. Ստեփանյան

Նկարչական ձևավորումը Կ. Կ. Դաֆթարյանի

Տեխ. խմբագիր Զ. Հ. Սարգսյան

Սրբագրիչ Մ. Գ. Բլեյան

ИБ № 1772

Հանձնված է շարվածքի 23. 02. 90 թ.։ Ստորագրված է տպագրության 23. 01. 91 թ.։ Չափը 84×108 1/32։ Թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական» բարձր տպագրություն։ Պայմ. 19,11 մամ., տպագր. 22+15 թ. ներդիր մամուլ։ Ներկ. մամուլ 19,11։ Հրատ.-հաշվարկ. 16,35 մամուլ։ Տպաքանակ 1000։ Հրատ. № 7821 Պատ. № 84։ Գինը 3 ռ. 35 կ.։

Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։

Издательство АН Армении, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24 г.

Հայաստանի ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։

Типография Издательства АН Армении, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.

3 п. 35 ц.:

L 258 15

A II
82499